ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՄԱՅԻՍ 2012

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Կանչվել են նոր Յոթանասունականներ, Նախագահող Եպիսկոպոսություն և Սփոփող Միության Գերագույն Նախագահություն

© ELSPETH YOUNG, ՉՊԱՏՄԱՑԱԾ

Սկսեց լուսանալ, Էլսփեթ Յանգ

«Երբ որ շաբաթն անցավ, Մարիամ Մագդաղենացին և Հակոբի մայրը Մարիամը և Սաղոմեն խունկեր առան, որ գան նորան օծեն։ Եվ միաշաբաթի առավոտանց շատ կանուխ արեգակը ծագելիս գալիս են գերեզմանը» (Մարկոս 16.1–2)։

Բովանդակություն մայիս 2012

Հատոր 13• Համար 2

2 182-րդ ամենամյա համաժողովի ամփոփում

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

4 Կրկին հավաքվելով
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

6 Եվ մի փոքր երեխա կառաջնորդի նրանց
Նախագահ Բոյդ Կ. Փաքեր

10 Սովորեցնել մեր երեխաներին հասկանալ
Չերիլ Ա. Էսպլին

13 Դարձի գալ դեպի Նրա ավետարանը Նրա Եկեղեցու միջոցով
Երեց Դոնալդ Լ. Հոլստրոմ

16 Նա իսկապես սիրում է մեզ
Երեց Փոլ Ե. Քոլիքեր

19 Զոհաբերություն
Երեց Դալլին Հ. Օուքս

23 Բարձունքներ, որ պետք է հաղթահարել
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

27 Եկեղեցու պաշտոնյաների հաստատումը
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

29 Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվությունը, 2011թ.
Ռոբերտ Վ. Քանթվել

30 Վիճակագրական հաշվետվություն, 2011թ.
Բրուք Պ. Հեյլս

31 Այգու մշակները
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

34 Ուշքի գալով և դառնալով հոգեպես ինքնավստահ. հաղորդությունը, տաճարը և ծառայության մեջ զոհաբերելը
Երեց Ռոբերտ Դ. Հեյզ՝

37 Հավատք, տոկունություն, կայացում՝ ուղերձ միայնակ ծնողներին
Երեց Դեյվիդ Ս. Բաքսթեր

39 Մնալ Տիրոջ տարածքում
Երեց Ուլիսես Սոարես

41 Հավատքի երգին համահունչ
Երեց Քվենթին Լ. Քուք

45 Ինչպես ստանալ հայտնություն և ոգեշնչում ձեր անձնական կյանքի համար
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

48 Երկնքի զորությունները
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

52 Հասնել իրական աճի
Եպիսկոպոս Ռիչարդ Ս. Էդգլի

55 Սիարոնյան Քահանայություն. Վեր կացեք և օգտագործեք Աստծո զորությունը
Աղրիան Օչոա

58 Քահանայության ծառայության *ինչու* հարցը
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

62 Ուխտ կապած ընտանիքներ
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

66 Պատրաստակամ և արժանի լինել ծառայելու
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

70 Ողորմածները ողորմություն են գտնում
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

77 Շնորհակալություն Աստծուն
Երեց Ռասսել Մ. Նելսոն

80 Հատուկ դասեր
Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ

83 Մարգարեների տեսիլքը Սփոփող Միության մասին՝ հավատք, ընտանիք, սփոփանք
Ջուլի Բ. Բեք

86 Քրիստոսի վարդապետությունը
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

90 Կյանքի մրցավազք
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

94 Ազատման զորությունը
Երեց Լ. Թոմ Փերի

97 Որպեսզի կորածները գտնվեն
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

101 Ունենալ գործելու տեսիլք
Երեց Օ. Վինսենթ Հալեք

103 Միայն արդարության սկզբունքների հիման վրա
Երեց Լարրի Յ. Վիլսոն

106 Արդյո՞ք դա արժեր
Երեց Դեյվիդ Ֆ. Էվանս

109 Սուրբ պահել
Երեց Փոլ Բ. Փարիեր

111 Ի՞նչ է իմ մասին մտածում Քրիստոսը
Երեց Նիլ Լ. Անդերսեն

115 Փակելով այս համաժողովը
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ

117 Վեր կացեք և շողացեք
Էնն Մ. Դիբ

120 Ուսում փնտրեք. դուք աշխատանք ունեք կատարելու
Մերի Ն. Քուք

123 Այժմ է բարձրանալու և շողալու ժամանակը
Էլեյն Ս. Դալտոն

126 Հավատացեք, հնազանդվեք և համբերեք
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

72 Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

130 Նրանք խոսեցին մեզ հետ. դարձնելով համաժողովը մեր կյանքի մասը

132 Համաժողովի պատմությունների ցուցիչ

133 Մեր ժամանակների ուսմունքները

133 Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

134 Եկեղեցու նորությունները

182-րդ ամենամյա գերագույն համաժողովի ամփոփում

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏ, 31 ՄԱՐՏԻ, 2012, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացող աղոթք՝ Երեց Ջոն Բ. Դիքսոն: Փակող աղոթք՝ Երեց Վիլֆորդ Վ. Անդերսեն: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի; երգեհոնահարներ՝ Էնդրյու Անսվորթ և Քլեյ Քրիչենսեն. "High on the Mountain Top," *Hymns,* no. 5; "Praise the Lord with Heart and Voice," *Hymns,* no. 73; "You Can Make the Pathway Bright," *Hymns,* no. 228, arr. Wilberg, unpublished; "How Firm a Foundation," *Hymns,* no. 85; "Love Is Spoken Here," *Children's Songbook,* 190–91, arr. Cardon, unpublished; "Redeemer of Israel," *Hymns,* no. 6, arr. Wilberg, pub. Hinshaw:

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿ, 31 ՄԱՐՏԻ, 2012, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացող աղոթք՝ Երեց Վիլիամ Ռ. Վոքեր: Փակող աղոթք՝ Երեց Բրուս Ա. Քարլսոն: Երաժշտություն՝ միացյալ երգչախումբ Պրովոյի Միսիոներների Ուսուցման Կենտրոնից, խմբավարներ՝ Դուգլաս Բրենչլի և Ռայան Էգեթ; երգեհոնահար՝ Բոննի Գուդլիֆ. "Glory to God on High," *Hymns,* no. 67, arr. Manookin, pub. Jackman; "Lead, Kindly Light," *Hymns,* no. 97, arr. Wilberg, pub. Jackman; "Called to Serve," *Hymns,* no. 249; "Praise to the Man," *Hymns,* no. 27, arr. Wilberg, pub. Jackman:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈ, 31 ՄԱՐՏԻ, 2012, ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացող աղոթք՝ Երեց Յուն Հվան Չոյի: Փակող աղոթք՝ Երեց Լարի Ռ. Լորենս: Երաժշտություն՝ քահանայության երգչախումբ Սոլթ Լեյք համալսարանի ինստիտուտներից, խմբավարներ՝ Հալ Վ. Ռոմրել, Քրեյգ Ալլեն և Դեննիս Նորդֆելթ; երգեհոնահար՝ Ռիչարդ Էլիոթ. "Jesus, Savior, Pilot Me," *Hymns,* no. 104, arr. Longhurst, pub. Jackman; "Carry On," *Hymns,* no. 255, arr. Durham, pub. Jackman; "Ye Elders of Israel," *Hymns,* no. 319; "Dear to the Heart of the Shepherd," *Hymns,* no. 221, arr. Beebe, pub. Larice:

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏ, 1 ԱՊՐԻԼԻ, 2012, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացող աղոթք՝ Երեց Բրենթ Հ. Նիլսոն: Փակող աղոթք՝ Երեց Փեր Գ. Մալմ: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝ Մաք Վիլբերգ; երգեհոնահարներ՝ Քլեյ Քրիչենսեն և Ռիչարդ Էլիոթ. "Come, Ye Children of the Lord," *Hymns,* no. 58; "Praise to the Lord, the Almighty," *Hymns,* no. 72, arr. Wilberg, pub. Oxford; "Teach Me to Walk in the Light," *Hymns,* no. 304, arr. Wilberg, unpublished; "Rejoice, the Lord Is King!" *Hymns,* no. 66; "Let Us Oft Speak Kind Words," *Hymns,* no. 232, arr. Wilberg, unpublished; "Come, Thou Fount of Every Blessing," *Hymns* (1948), no. 70, arr. Wilberg, pub. Oxford:

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿ, 1 ԱՊՐԻԼԻ, 2012, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացող աղոթք՝ Երեց Վ. Քրեյգ Ցվիք: Փակող աղոթք՝ Երեց Ջահրո Մազագարդի: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի; երգեհոնահարներ՝ Լինդա Մարգեթս և Բոննի Գուդլիֆ. "On This Day of Joy and Gladness," *Hymns,* no. 64, arr. Murphy, unpublished; "Come unto Jesus," *Hymns,* no. 117, arr. Murphy, unpublished; "Hope of Israel," *Hymns,* no. 259; "I Need Thee Every Hour," *Hymns,* no. 98, arr. Wilberg, unpublished:

ԿԻՐԱԿԻ ԵՐԵԿՈ, 24 ՄԱՐՏԻ, 2012, ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Էլեյն Ս. Դալտոն: Բացող աղոթք՝ Էբիգեյլ Փինեգար: Փակող աղոթք՝ Քեթի Էլիզաբեթ Գարֆ: Երաժշտություն՝ Երիտասարդ Կանանց երգչախումբ Յուտայի Ամերիքն Ֆորք ցցերից, խմբավար՝ Մերիլի Վեբ; երգեհոնահար՝ Բոննի Գուդլիֆ. "Come, Ye Children of the Lord," *Hymns,* no. 58, arr. Wilberg, pub. Jackman; "As Zion's Youth in Latter Days," *Hymns,* no. 256, arr. Kasen, pub. Jackman; "I Feel My Savior's Love," *Children's Songbook,* 74–75, "Beautiful Savior," *Children's Songbook,* 62–63, medley arr. Webb, unpublished (cello: Daphne O'Rullian); "High on the Mountain Top," *Hymns,* no. 5:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Տարբեր լեզուներով գերագույն համաժողովի ելույթները մատչելի են conference.lds.org կայքում: Ընտրեք լեզուն: Սովորաբար համաժողովից հետո երկու ամիսների ընթացքում աուդիո ձայնագրությունները մատչելի են բաշխման կենտրոններում:

ՏՆԱՅԻՆ ԵՎ ԱՅՑԵԼՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐ

Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար խնդրում ենք ընտրեք այն ելույթը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում այցելում եք:

ԿԱՋՄԻ ՎՐԱ

Առջևում՝ լուսանկար Դերեկ Իսրաելսենի կողմից: Ետևում՝ լուսանկար Քոդի Բելլի կողմից:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

Տեսարաններ գերագույն համաժողովից Սոլթ Լեյք Սիթիում՝ Քրեյգ Դայմոնդի, Վոլդեն Ս. Անդերսենի, Ջոն Լյուքի, Մեթյու Ռեյերի, Քրիստինա Սմիթի, Քոդի Բելլի, Լես Նիլսոնի, Վեստոն Քոլտոնի, Սարա Ջենսենի, Դերեկ Իսրաելսենի, Սքոթ Դեյվիսի, Քրիսթի Ջորդանի և Ռենդի Քոլիերի կողմից; Ալբանիայում՝ Ռեբեկա Էթկինի կողմից; Արգենտինայում՝ Մարիանո Գեբրիել Քաթիլլոյի կողմից; Բրազիլիայում՝ Լորենի Ֆոչետոյի և Սանդրա Ռոզադոսի կողմից; Անգլիայում՝ Ջոն Քրեբսի կողմից; Ֆրանսիայում՝ Սեբաստիեն Մոնդասի կողմից; Գուամում՝ Սյուզան Անդերսենի կողմից; Գվատեմալայում՝ Ջորդան Ֆրենսիսի կողմից; Այդահոյում, ԱՄՆ՝ Լյուք Ֆիլիպսի կողմից; Հնդկաստանում՝ Մարգարեթ Էլիոթի կողմից; Մինեսոտայում, ԱՄՆ՝ Ռոնդա Հարիսի կողմից; Ռուսաստանից՝ Էնդրյու Սեմենովի կողմից:



ՄԱՅԻՍ 2012 ՀԱՏ. 13 Հ. 2
ԼԻԱՀՈՆԱ 10485 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ջոզեֆ Բ. Վիրթլին, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քուենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Փոլ Բ. Փիփեր
Խորհրդատուներ. Քեյթ Ռ. Էդվարդս, Քրիստոֆել Գոլդեն Կրտս., Փեր Գ. Մալմ

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Լ. Ֆրիշկնեխթ
Խմբագրական տնօրեն. Վինսենթ Ա. Վոն
Գրաֆիկայի տնօրեն. Ալլան Ռ. Լոյբորգ

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն
Գլխավոր խմբագրի օգնականներ. Ջենիֆեր Լ. Գրինվուդ, Ադամ Ս. Օլսոն
Համախմբագրեր. Սյուզան Բարթթ, Ռայան Քար
Խմբագրական կազմ. Բրիթանի Բիթլ, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լառեն Պորտեր Գանտ, Քերի Կաստեն, Ջենիֆեր Մեդի, Լիա Մակ-Քանահան, Մելիսա Մերիլ, Մայքլ Ռ. Մորիս, Սալի Ջ. Օդեկիրկ, Ջոշուա Ջ. Փերկի, Չադ Ե. Փարես, Յան Փինբորոու, Փոլ Վանդենբերգ, Մարիսա Ա. Վիդիսոն, Մելիսսա Զենտենս

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի գծով տնօրեն. Սքոթ Վան Քեմփեն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Գլխավոր դիզայներներ. Ս. Քիմբալ Բոթ, Քոլին Հինքլի, Էրիկ Պ. Ջոնսեն, Սքոթ Մ. Մուլ
Հրատարակչության կազմ. Քոլեթ Նեբեկեր Օն, Քոննի Բոթորփ Բրիջ, Հովարդ Գ. Բրաուն, Ջուլի Բարդեթ, Բրայան Վ. Գիջի, Քեթլին Հովարդ, Դենիս Քըրբի, Ջինի Ջ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Ռաֆերթի
Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ
Բաշխման տնօրեն. Էվան Լարսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար կապվեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոնի կամ ծխի/ճյուղի ղեկավարի հետ:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona,* Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլգարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թայերեն, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատվիերեն, լեհերեն, լիտվերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոերեն, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների:)

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և նկարները կարելի է պատճենահանել առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: May 2012 Vol. 13 No. 2. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send address changes to Salt Lake Distribution Center, Church Magazines, PO Box 26368, Salt Lake City, UT 84126-0368.

ԽՈՍՆԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Անդերսեն, Նիլ Լ., 111
Բալլարդ, Մ. Ռասսել, 97
Բաքսթեր, Դեյվիդ Ս., 37
Բեք, Ջուլի Բ., 83
Բեդնար, Դեյվիդ Ա., 48
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 86
Քուք, Մերի Ն., 120
Քուք, Քվենթին Լ., 41
Դալտոն, Էլեյն Ս., 123
Դիբ, Էնն Մ., 117
Էդգլի, Ռիչարդ Ս., 52
Էսփլին, Չերիլ Ա., 10
Էվանս, Դեյվիդ Ֆ., 106
Այրինգ, Հենրի Բ., 23, 62
Հալեք, Օ. Վինսենթ, 101
Հեյլս, Ռոբերտ Դ., 34
Հոլսթրոմ, Դոնալդ Լ., 13
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 31
Քոլիքեր, Փոլ Ի., 16
Մոնսոն, Թոմաս Ս., 4, 66, 90, 115, 126
Նելսոն, Ռասսել Մ., 77
Օուքս, Դալլին Հ., 19
Օչոա, Ադրիան, 55
Փաքեր, Բոյդ Ք., 6
Փերի, Լ. Թոմ, 94
Փայփեր, Փոլ Բ., 109
Ռասբենդ, Ռոնալդ Ա., 80
Սքոթ, Ռիչարդ Գ., 45
Սոարես, Ուլիսես, 39
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 27, 58, 70
Վիլսոն, Լարի Յ., 103

ԹԵՄԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ազատում, 94
Ակտիվացում, 52, 55, 106
Ահարոնյան Քահանայություն, 55
Ամուսնություն, 6, 97
Աշակերտություն, 101, 111
Ապաշխարություն, 70
Առաջնահերթություններ, 97
Առաքինություն, 123
Ավետարան, 13
Արդարակեցություն, 48
Արժանավորություն, 55
Գերագույն համաժողով, 4
Գիտելիք, 120
Դարձ, 13
Եկեղեցու աճ, 4
Եկեղեցու կազմակերպություն, 13
Երախտագիտություն, 4, 77
Երեխաներ, 6, 10
Զոհաբերություն, 19
Ընտանիք, 6, 16, 37, 41, 62, 70, 83, 97, 115
Ընտրություն, 39, 103
Ինքնապահովում, 34
Իշխանություն, 48, 86
Ծառայություն, 19, 34, 37, 58, 66, 83
Ծնողներ, 6, 37, 103
Կրթություն, 120
Հաղորդություն, 34
Հայտնություն, 45
Հաշմանդամություն, 80
Հավատք, 23, 37, 41, 83, 111, 126
Հարություն, 90
Հեռանկար, 90
Հիսուս Քրիստոս, 19, 23, 31, 39, 77, 86, 90, 111
Հնազանդություն, 39, 126
Ձախորդություն, 4, 23, 80, 94, 115
Մահ, 90
Մայրություն, 37, 120
Մարգարեներ, 83, 86
Միայնակ ծնողներ, 37
Միսիոներական աշխատանք, 16, 19, 101, 106
Մորմոնի Գիրք, 41, 94
Ներում, 31, 70
Ոգեշնչում, 45, 109
Ողորմածություն, 70
Ուխտեր, 39, 62
Ուսուցում, 10
Չափանիշներ, 117, 123
Պարտավորություն, 66
Սեր, 16, 106
Սուրբ Հոգի, 10, 45, 58, 101, 109, 115
Սուրբ գրություններ, 41
Սրբություն, 109
Սփոփող Միություն, 83
Տաճարային աշխատանք, 19, 34, 62
Տեսիլք, 101
Տոկունություն, 126
Ցանկասիրություն, 31, 77
Փրկության ծրագիր, 13, 77, 80, 90
Քահանայություն, 48, 52, 55, 58, 62, 66, 103
Քաջություն, 117
Քավություն, 19, 31
Օրինակ, 16, 39, 55, 117, 123

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Կրկին հավաքվելով

Մեր Երկնային Հայրը մտածում է մեզանից յուրաքանչյուրի և մեր կարիքների մասին: Թող մենք լցված լինենք Նրա Հոգով, մինչ մասնակցում ենք այս համաժողովին:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մինչ մենք կրկին հավաքվել ենք Եկեղեցու գերագույն համաժողովին, ես ողջունում եմ ձեզ և արտահայտում իմ սերը ձեր հանդեպ: Մենք հանդիպում ենք վեց ամիսը մեկ, որպեսզի ամրացնենք միմյանց, խրախուսենք, սփոփանք պարգևենք և հավատք կառուցենք: Մենք այստեղ սովորելու համար ենք: Ձեր մեջ կան մարդիկ, ովքեր պատասխաններ են փնտրում հարցերին և խնդիրներին, որոնց հանդիպել են կյանքում: Մյուսները տառապում են հիասթափություններից կամ կորուստներից: Յուրաքանչյուրը կարող է լուսավորվել, բարձրացվել և մխիթարվել, զգալով Տիրոջ Հոգին:

Եթե կա փոփոխությունների կարիք, որ պետք է կատարեք ձեր կյանքում, թող որ դուք խրախուսանք և քաջություն գտնեք դա անելու, լսելով ոգեշնչված խոսքերը, որոնք կասվեն: Թող մեզանից յուրաքանչյուրը որոշի նորացնել իր կյանքը, որպեսզի մենք լինենք մեր Երկնային Հոր արժանի որդիները և դուստրերը: Թող որ մենք շարունակենք դիմակայել չարիքին, որտեղ էլ որ այն լինի:

Որքան օրհնված ենք մենք, որ եկել ենք երկիր այս ժամանակ՝ աշխարհի երկար պատմության այս հրաշալի ժամանակ: Մենք չենք կարող բոլորս միասին լինել մեկ տանիքի տակ, սակայն այժմ մենք հնարավորություն ունենք մասնակցելու այս համաժողովին հեռուստատեսության, ռադիոյի, կաբելային հաղորդակցման, արբանյակային հեռարձակման և համացանցի, անգամ շարժական սարքերի շնորհիվ: Մենք հավաքվում ենք մեկ հոգու նման, խոսելով տարբեր լեզուներով, ապրելով տարբեր երկրներում, սակայն բոլորս պատկանում ենք մեկ հավատքի, մեկ վարդապետության և մեկ նպատակի:

182 տարի առաջ փոքր սկիզբ ունենալով, մեր ներկայությունը այժմ ողջ աշխարհով մեկ է: Այս մեծ գործը, որի մեջ մենք ներգրավված ենք, կշարունակի առաջ գնալ, փոխելով և օրհնելով կյանքեր, ինչպես այժմ: Ամբողջ աշխարհում չկա ոչ մի ուժ, ոչ մի պատճառ, որը կարող է կանգնեցնել Աստծո աշխատանքը: Անկախ նրանից, թե ինչ կլինի, այս մեծ աշխատանքը առաջ կընթանա:

Դուք հիշում եք Մարգարե Ջոզեֆ Սմիթի մարգարեական խոսքերը. «Ոչ մի անսուրբ ձեռք չի կարող կանգնեցնել աշխատանքը առաջ գնալուց. Հալածանքներ կմոլեգնեն, ամբոխներ կմիանան, բանակներ կհավաքվեն, կործանումներ կլինեն, սակայն Աստծո ճշմարտությունը առաջ կգնա համարձակ, ազնվաբարո և անկախ, մինչև որ թափանցի ամեն մայրցամաք, ամեն կլիմայական շրջան, տարածվի բոլոր երկրներով և հնչի ամեն ականջի մեջ, մինչև որ Աստծո նպատակները չիրականանան և Մեծ Եհովան ասի, որ աշխատանքը կատարված է»:[1]

Այսօր աշխարհում շատ բան կա, որ դժվար է և բարդ, իմ քույրեր և եղբայրներ, սակայն կա նաև շատ բան, ինչ բարի է և վեհացնող: Ինչպես հռչակում է մեր հավատո տասներեքերրոդ հանգանակը. «Եթե մի բան առաքինի է, գեղեցիկ, բարեհամբավ, գովեստի արժանի,– մենք ձգտում ենք այդ ամենին»: Թող որ մենք միշտ շարունակենք անել դա:

Ես շնորհակալություն եմ հայտնում ձեզ ձեր հավատքի և նվիրվածության համար ավետարանին: Ես շնորհակալ եմ ծառայության համար, որը դուք կատարում եք ձեր ծխերում, ճյուղերում, ցցերում և շրջաններում: Այդ ծառայությունն է, որ թույլ է տալիս Տիրոջը իրականացնել երկրի վրա Իր նպատակներից շատերը:

Ես իմ շնորհակալությունն եմ հայտնում իմ հանդեպ ձեր բարության համար, որտեղ էլ որ ես լինում եմ: Ես շնորհակալ եմ ինձ համար ասվող ձեր աղոթքների համար: Ես զգում եմ այդ աղոթքները և մեծապես երախտապարտ եմ:

Այժմ, իմ եղբայրներ և քույրեր, մենք պետք է ուսուցանվենք և ոգեշնչվենք: Շատ ուղերձներ կինչեն հաջորդ երկու օրվա ընթացքում: Ես կարող եմ հավատացնել ձեզ, որ այն տղամարդիկ և կանայք, ովքեր կդիմեն ձեզ իրենց խոսքով, իրենց ուղերձները պատրաստելիս փնտրել են երկնային օգնությունը և ուղղությունը: Նրանք ոգեշնչվել են այն ամենի համար, ինչով կկիսվեն մեզ հետ:

Մեր Երկնային Հայրը մտածում է մեզանից յուրաքանչյուրի և մեր կարիքների մասին: Թող մենք լցված լինենք Նրա Հոգով, մինչ մասնակցում ենք այս համաժողովին: Սա է իմ անկեղծ աղոթքը մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 444.

Նախագահ Բոյդ Կ. Փաքեր
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Եվ մի փոքր երեխա կառաջնորդի նրանց

Ամուսիններն ու կանայք պետք է հասկանան, որ իրենց առաջին կոչումը, որից նրանք երբեք չեն ազատվի, միմյանց և ապա իրենց երեխաների հանդեպ է:

Տարիներ առաջ, մի ցուրտ գիշեր երկաթուղային կայարանում, իմ վագոնի պատուհանը կամաց թխկացրեցին: Այնտեղ կանգնած էր մի ցրտահարված երեխա՝ հագին հին շապիկ, այտուցված ծնոտը կեղտոտ լաթով փաթաթած: Նրա գլուխը պատված էր քոսով: Նրա ձեռքին ժանգոտված թիթեղյա ման էր և գդալ, որից երևում էր, որ նա որբ մուրացկան է: Երբ փորձում էի բացել պատուհանը, որ նրան փող տայի, գնացքը սկսեց շարժվել:

Ես երբեք չեմ մոռանա այդ սովահար փոքրիկ տղային՝ կանգնած ցրտին, ձեռքին բռնած դատարկ ամանը: Ոչ էլ կմոռանամ որքան անօգնական էի ինձ զգում, երբ գնացքը սկսեց շարժվել և հեռանալ, իսկ նա մնաց կառամատույցին կանգնած:

Մի քանի տարի անց Սասկոյում, որը բարձրադիր քաղաք է Պերուի Անդերում, Երեց Ա. Թեոդոր Թաթլը և ես հաղորդության ժողով էինք անցկացնում երկար նեղ սենյակում, որի դուռը բացվում էր դեպի փողոց: Երեկո էր և երբ Երեց Թաթլը ելույթ էր ունենում, մոտ վեց տարեկան մի փոքր տղա հայտնվեց դռների մեջ: Նրա հագին մինչև ծնկները հասնող մաշված շապիկ էր:

Ձախ կողմում մի փոքր սեղանի վրա ապսեով դրված էր հաղորդության հացը: Այդ քաղցած փողոցի որբուկը տեսնելով հացը, փոքր քայլերով դանդաղ պատի երկայնքով սկսեց մոտենալ: Նա գրեթե սեղանի մոտ էր, երբ շարքից մի կին տեսավ նրան: Գլխի խիստ շարժումով նա տղային դուրս վռնդեց: Ես ներքուստ խռովվեցի:

Մի փոքր անց փոքրիկ տղան վերադարձավ: Նա պատին սեղմված մոտենում էր՝ նայելով մեկ հացին, մեկ ինձ: Երբ նա հասավ այն կետին, որտեղից այդ կինը կարող էր տեսնել նրան, ես պարզեցի ձեռքերս, և նա վազելով եկավ ինձ մոտ: Ես նրան նստեցրի ծնկներիս:

Ապա, ասես խորդանշական ձևով, ես նրան նստեցրի Երեց Թաթլի աթոռին: Փակող աղոթքից հետո այդ սովահար փոքրիկ տղան դուրս նետվեց դեպի գիշերվա մթությունը:

Երբ տուն վերադարձա, Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալին պատմեցի այդ դեպքի մասին: Նա խորապես հուզվեց և ինձ ասաց. «Դու քո ծնկների վրա էիր դրել մի ազգ»: Նա մի քանի անգամ ինձ ասաց. «Այդ փորձառությունը շատ ավելի խորը իմաստ ունի, որը դու հետո կհասկանաս»:

Ես մոտ 100 անգամ այցելել եմ Լատինական Ամերիկայի երկրներ, և ամեն անգամ փնտրում էի այդ փոքր տղային մարդկանց մեջ: Այժմ ես գիտեմ, թե ինչ ի նկատի ուներ Նախագահ Քիմբալը:

Ես հանդիպեցի ցրտից դողացող մեկ ուրիշ տղայի Սոլթ Լեյք Սիթիում: Ձմեռային ցուրտ գիշեր էր: Մենք դուրս էինք եկել հյուրանոցում տեղի ունեցած Սուրբ Ծննդյան ընթրիքից: Փողոցի ծայրից վազելով եկան վեց կամ ութ աղմկոտ տղաներ: Նրանք բոլորն էլ պետք է տանը լինեին, ոչ թե ցրտին դրսում:

Տղաներից մեկը վերարկու չուներ: Նա անընդհատ ցատկոտում էր, որպեսզի շատ չմրսեր: Նա անհետացավ փողոցի նրբանցքում, գնալով անկասկած մի փոքր խղճուկ բնակարան, որտեղ իր անկողնում չուներ բավականաչափ ծածկոցներ տաքանալու համար:

Գիշերը, երբ ծածկվում եմ վերմակով, աղոթում եմ նրանց համար, ովքեր տաք անկողին չունեն:

Ես Ճապոնիայի Օսակայում էի, երբ Երկրորդ Համաշխարհայինն ավարտվեց: Քաղաքը քանդուքար էր, փողոցներում ամենուր թափված էին քարեր ու աղբ, ռումբերից առաջացած փոսեր կային: Թեպետ ծառերի մեծ մասը վնասվել էր, մի քանիսը դեռևս կանգուն էին կոտրտված ճյուղերով ու ճեղքված բներով, որոնք քաջություն էին ունեցել տերևներով մի քանի շյուղեր արձակել:

Մի փոքրիկ աղջնակ, հագին մաշված գունավոր կիմանո, թխկենու դեղին տերևների փունջ էր հավաքում: Այդ փոքրիկը կարծես անտեղյակ շուրջը տիրող ավերածություններից, մագլցում էր քարաբեկորների վրա՝ իր փնջին նոր տերևներ ավելացնելով: Նա գտել էր իր աշխարհում մնացած միակ գեղեցկությունը: Պետք է ասեմ, որ *նա* էր իր աշխարհի գեղեցիկ մասը: Նրա մասին մտածելիս հավատքս աճում է: Այդ աղջնակը հույսի մարմնացում էր:

Մորմոնն ուսուցանել է, որ «փոքր երեխաները կենդանի են Քրիստոսով»[1] և ապաշխարելու կարիք չունեն:

Անցյալ դարի սկզբներին երկու միսիոներներ էին ծառայում Միացյալ Նահանգների հարավային լեռներում: Մի օր սարի գագաթից նրանք տեսան, որ հեռվում մարդիկ են հավաքվել: Միսիոներները հազվադեպ էին քարոզելու նման հնարավորություն ունենում, այնպես որ նրանք իջան ներքև՝ հովիտ:

Փոքր տղա էր խեղդվել և թաղում պետք է լիներ: Նրա ծնողները սպասում էին, որ քահանան գար և «խոսք ասեր» իրենց որդու համար: Միսիոներները մի փոքր հեռու կանգնած էին, երբ շրջիկ քահանան դառնալով դեպի սգացող հայրը և մայրը, սկսեց իր քարոզը: Եթե ծնողները ակնկալում էին սփոփանք ստանալ այդ հանդերձով մարդուց, նրանք պետք է հուսահատվեին:

Նա խիստ հանդիմանեց նրանց, որ տղային չէին մկրտել: Նրանք մկրտությունը հետաձգել էին ամեն անգամ մի պատճառով, իսկ այժմ արդեն ուշ էր: Նա շատ կտրուկ ասաց նրանց, որ այդ տղան գնացել է դժոխք, իրենց մեղքով: Նրանք պետք է մեղադրվեին իրենց երեխայի անվերջ տանջանքի համար:

Երբ քարոզն ավարտվեց և գերեզմանը ծածկվեց, երեցները մոտեցան վշտահար ծնողներին: «Մենք Տիրոջ ծառաներն ենք,- ասացին մորը,- և ձեզ ուղերձ ունենք հաղորդելու»: Հեծկլտացող ծնողները լսում էին, ինչպես երկու երեցները կարդացին հայտնություններից և իրենց վկայությունը բերեցին կենդանիների և մահացածների փրկագնման բանալիների վերականգնման մասին:

Ես ինչ-որ տեղ կարեկցում եմ այդ քարոզչին: Նա գործում էր իր ունեցած լույսի և գիտելիքի համաձայն: Բայց կա ավելին, որ նա պետք է կարողանար առաջարկել: Դա ավետարանի լիությունն է:

Երեցները եկան որպես սփոփողներ, ուսուցիչներ, Տիրոջ ծառաներ, որպես Հիսուս Քրիստոսի ավետարանի լիազորված սպասավորներ:

Այդ երեխաները, որոնց մասին

ես խոսեցի, ներկայացնում են մեր Երկնային Հոր բոլոր զավակներին: «Ահա որդիքը Տիրոջ ժառանգությունն են . . . երանի այն մարդին որ իր կապարճը նորանցով լցրեց»:[2]

Կյանքի ստեղծումը մեծ պատասխանատվություն է ամուսնացած զույգի համար: Արժանի և պատասխանատու ծնող լինելը մահկանացու կյանքի մարտահրավերն է: Ոչ տղամարդը, ոչ էլ կինը չեն կարող միայնակ երեխաներ ունենալ: Նախասահմանված է, որ երեխաները պետք է ունենան երկու ծնող՝ և հայր և մայր, և դա չի կարող փոխարինվել ոչ մի այլ եղանակով կամ գործընթացով:

Տարիներ առաջ մի կին արտասվելով պատմեց ինձ, որ քոլեջում ուսանելիս իր ընկերոջ հետ միասին նա լուրջ սխալ էր կատարել: Ընկերը պայմանավորվել էր արհեստական վիժեցում կատարելու համար: Նրանք ժամանակին ավարտեցին ուսումը, ամուսնացան և մի քանի երեխաներ ունեցան: Այդ կինն ասաց ինձ, թե ինչպիսի տառապանք է զգում իր ընտանիքին, իր գեղեցիկ երեխաներին նայելիս, երբ մտքով տեսնում է այդ բացակայող երեխայի դատարկ տեղը:

Եթե այդ զույգը հասկանա և կիրառի Ավետարանը, նրանք կիմանան, որ այդ փորձառությունները և իրենց կեղեքող ցավը կարող են ջնջվել: Ոչ մի ցավ հարատև չի: Հեշտ չէ, և չի ենթադրվում, որ կյանքը պետք է հեշտ կամ արդար լինի: Ապաշխարությունը և տևական հույսը, որ գալիս է ներումից, միշտ կարժենան ջանքին:

Մեկ այլ երիտասարդ զույգ արտասվելով պատմեց ինձ, որ հենց նոր բժշկի մոտից են գալիս, որը նրանց ասել է, որ չեն կարող իրենց երեխաներն ունենալ: Նրանք հուզված էին այդ սրտակեղեք լուրից: Նրանք զարմացան, երբ ես ասացի, որ իրականում իրենք շատ բախտավոր են: Նրանց ապշեցրեց իմ խոսքը: Ես ասացի, որ նրանց վիճակը շատ ավելի լավ է, քան այն զույգերի, ովքեր կարող են դառնալ ծնող, սակայն հրաժարվում են և եսասիրաբար խուսափում են այդ պատասխանատվությունից:

Ես նրանց ասացի. «Առնվազն դուք ուզում եք երեխաներ, և այդ ցանկությունը ի օգուտ ձեզ կլինի և երկրային կյանքում և դրանից հետո, որովհետև այն կպարգևի հոգևոր և զգայական կայունություն: Վերջիվերջո, դուք շատ ավելի լավ վիճակում կլինեք, որովհետև դուք ցանկացել եք երեխաներ և չեք կարողացել ունենալ, ի տարբերություն նրանց, ովքեր կարողացել են, սակայն չեն ցանկացել երեխաներ ունենալ:

Կան մարդիկ, որ չեն ամուսնանում և մնում են առանց երեխաների: Որոշ կանայք կամ տղամարդիկ էլ, իրենց համար անցանկալի հանգամանքերում հայտնվելով, երեխաներին միայնակ են մեծացնում: Դրանք ժամանակավոր իրավիճակներ են: Եթե ոչ մահկանացու կյանքում, ապա հավերժության մեջ արդար իղձերն ու ցանկությունները կիրականանան:

«Եթե միայն այս կյանքումն ունինք հույս Քրիստոսի վրա, ամեն մարդկանցից ավելի ողորմելի ենք»:[3]

Եկեղեցու գործունեության հիմնական նպատակն է՝ տեսնել ամուսինը, կինը և իրենց երեխաները երջանիկ իրենց տանը, ավետարանի սկզբունքներով պաշտպանված, հավիտենական քահանայության ուխտերով ապահով կնքված: Ամուսիններն ու կանայք պետք է հասկանան, որ իրենց առաջին կոչումը, որից նրանք երբեք չեն ազատվի, միմյանց և ապա իրենց երեխաների հանդեպ է:

Ծնող լինելու մեծ հայտնագործություններից մեկն այն է, որ մենք մեր երեխաներից շատ ավելին ենք սովորում այն մասին, թե իրականում ինչն է ավելի կարևոր, քան երբևէ սովորել ենք մեր ծնողներից: Մենք հասկանում ենք Եսայիայի մարգարեության ճշմարտությունը, որ «մի փոքր երեխա կառաջնորդի նրանց»:[4]

Երուսաղեմում «Հիսուսն իր մոտ մի երեխա կանչելով, նրան կանգնեցրեց նրանց մեջտեղը.

Եվ ասաց. Ճշմարիտ ասում եմ ձեզ. եթե դարձ չգաք և չլինիք երեխաների նման, չեք մտնիլ երկնքի արքայությունը:

Արդ ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնե, նա է մեծ երկնքի արքայության մեջ»:[5]

«Հիսուսն ասաց. Թույլ տվեք այդ երեխաներին՝ և դրանց մի արգելեք ինձ մոտ գալ. որովհետև այդպիսիներին է երկնքի արքայությունը:

Եվ նրանց վրա ձեռք դրավ, և այնտեղից գնաց»:[6]

Մորմոնի Գրքում մենք կարդում ենք Նոր Աշխարհ Հիսուս Քրիստոսի այցելության մասին: Նա բժշկեց և օրհնեց մարդկանց և պատվիրեց, որ փոքր երեխաներին բերեն Իր մոտ:

Մորմոնը գրել է. «Նրանք բերեցին իրենց փոքր երեխաներին և դրեցին նրանց ներքև՝ գետնի վրա, նրա շուրջը, և Հիսուսը կանգնեց մեջտեղում. և բազմությունը ճանապարհ տվեց, մինչև նրանք բոլորը բերվեցին նրա մոտ»:[7]

Ապա Նա պատվիրեց մարդկանց ծնկի իջնել: Երեխաներով շրջապատված մեր Փրկիչը ծնկի իջավ և աղոթեց մեր Երկնային Հորը: Աղոթքից հետո Փրկիչն արտասվեց, և «նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, մեկ առ մեկ, և օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը:

Եվ երբ նա արեց այս, նա կրկին արտասվեց»:[8]

Ես կարող եմ հասկանալ երեխաների հանդեպ Փրկչի արտահայտած զգացմունքները: Դեռ շատ բան կա սովորելու, հետևելով Նրա օրինակին՝ ձգտելով աղոթել «այդ փոքրիկների»[9] համար, օրհնել և ուսուցանել նրանց:

Ես 11 երեխաներով ընտանիքի 10-րդ երեխան էի: Որքան գիտեմ, ոչ հայրս և ոչ էլ մայրս չեն ծառայել Եկեղեցու աչքի ընկնող պաշտոնում:

Նրանք հավատարմորեն ծառայել են որպես ծնող իրենց ամենակարևոր կոչման մեջ: Մեր հայրը ղեկավարել է մեր տունը արդարակեցության մեջ, երբեք չբարկանալով և չվախեցնելով: Եվ մեր հոր վառ օրինակը զորանում էր մեր մոր մեղմ խորհրդով: Ավետարանը հզոր ազդեցություն ունի Փաքերների ընտանիքից յուրաքանչյուրի կյանքում և մյուս սերնդի, մյուս, և մյուս, որքանով որ տեսել ենք:

Հուսով եմ, կորակվեմ որպես իմ հոր նման լավ մարդ: Նախքան Երկնային Հորից գովեստի խոսքեր լսելը, հուսով եմ նախ այդ խոսքերը կլսեմ իմ մահկանացու հորից:

Շատ անգամներ եմ մտածել, թե ինչու պետք է կանչվեի որպես Առաքյալ և ապա Տասներկուսի Քվորումի Նախագահ, չնայած որ դուրս եմ եկել մի ընտանիքից, որի հայրը կարող էր համարվել ոչ ակտիվ: Ես Տասներկուսի մեջ նման բնութագիր ունեցող միակ անդամը չեմ:

Ի վերջո, ես կարողացա տեսնել և հասկանալ, որ միգուցե այդ հանգամանքով էր պայմանավորված իմ կանչվելը: Եվ ես կարողացա հասկանալ, ինչու Եկեղեցու ողջ գործունեության մեջ մենք՝ ղեկավարներս, պետք է հնարավորություն տանք ծնողներին և երեխաներին, որպեսզի ընտանիքով միասին լինելու ժամանակ ունենան: Քահանայության ղեկավարները պետք է ուշադիր լինեն, որ Եկեղեցին դառնա օրհնություն ընտանիքի համար:

Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելու առումով կան բազմաթիվ բաներ, որ չեն կարող չափվել ըստ հաճախելիության թղթերում գրանցված թվերի: Մենք զբաղված ենք շենքերով, բյուջեներով, ծրագրերով և ընթացակարգերով: Այդ պատճառով, հնարավոր է, աչքից վրիպի Հիսուս Քրիստոսի ավետարանի բուն ոգին:

Շատ հաճախ ինձ մոտ են գալիս և ասում. «Նախագահ Փաքեր, լավ չէր լինի՞, եթե . . .»:

Ես սովորաբար ընդհատում եմ նրանց և ասում «ոչ», որովհետև կասկածում եմ, որ դրանից հետո նրանք կնշեն մի նոր միջոցառում կամ ծրագիր, որը կավելացնի ընտանիքի ժամանակային և ֆինանսական բեռը:

Ընտանիքի ժամանակը սուրբ ժամանակ է, և այն պետք է պաշտպանվի և հարգվի: Մենք հորդորում ենք մեր անդամներին՝ նվիրվածություն ցուցաբերել իրենց ընտանիքներին:

Երբ մենք ամուսնացանք, կինս և ես որոշեցինք, որ կընդունենք մեր երեխաներին՝ աշխարհ բերելով նրանց և մեծացնելով: Ժամանակի ընթացքում նրանք իրենց ընտանիքները կազմեցին:

Մեր ամուսնության ընթացքում երկու անգամ մեր երկու փոքր տղաների ծնվելու ժամանակ բժիշկը մեզ ասել է. «Չեմ կարծում, որ կկարողանաք պահել այս մեկին»:

Երկու անգամ էլ մենք ասել ենք, որ կտանք մեր կյանքը, միայն թե մեր փոքրիկը ապրի: Այդ առաջարկի ժամանակ մենք գիտակցել ենք, որ այդ նվիրվածությունը նման է այն զգացմունքին, որ Երկնային Հայրը տածում է յուրաքանչյուրիս հանդեպ: Ինչպիսի աստվածային միտք:

Այժմ մեր կյանքի մայրամուտին, Քույր Փաքերը և ես հասկանում ենք և վկայություն ունենք, որ ընտանիքները կարող են հավերժ լինել: Եթե հնազանդվենք պատվիրաններին և լիովին ապրենք ավետարանով, մենք կպաշտպանվենք և կօրհնվենք: Մեր զավակների, թոռների և ծոռների հետ մեր աղոթքն է, որ մեր աճող ընտանիքից յուրաքանչյուրն այդ նույն նվիրվածությունն ունենա այդ թանկագին փոքրիկների հանդեպ:

Հայրեր և մայրեր, երբ մյուս անգամ ձեր ձեռքերի մեջ առնեք նորածին մանկանը, կարող եք ներքին տեսիլք ունենալ կյանքի խորհուրդների և նպատակների մասին: Դուք ավելի լավ կհասկանաք, թե ինչու է Եկեղեցին հենց այսպիսին և ինչու է ընտանիքը հիմնական կազմակերպությունը ժամանակի և հավերժության մեջ: Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարիտ է, որ փրկագնման ծրագիրը, որը կոչվել է երջանկության ծրագիր, ընտանիքների համար ծրագիր է: Ես աղոթում եմ Տիրոջը, որ Եկեղեցու ընտանիքները օրհնվեն, ծնողները և զավակները, որ այս աշխատանքը առաջ ընթանա Հոր ծրագրով: Ես բերում եմ այս վկայությունը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մորոնի 8.12:
2. Սաղմոս ՃԻԷ.3, 5:
3. Ա Կորնթացիս ԺԵ.19:
4. Եսայիա ԺԱ.6:
5. Մատթեոս ԺԸ.2–4:
6. Մատթեոս ԺԹ.14–15:
7. 3 Նեփի 17.12:
8. 3 Նեփի 17.21–22:
9. 3 Նեփի 17.24:

Չերիլ Ա. Էսփլին
Երեխաների խմբի գերագույն նախագահության երկրորդ խորհրդական

Սովորեցնել մեր երեխաներին հասկանալ

Մեր երեխաներին հասկանալ ուսուցանելը ավելին է, քան տեղեկություն տալը: Դա նշանակում է օգնել մեր երեխաներին ընդունել վարդապետությունը իրենց սրտում:

Տարիների հետ կյանքիս շատ մանրամասներ դառնում են ավելի ու ավելի աղոտ, սակայն որոշ հուշեր, որոնք առավել պայծառ են մնում, մեր երեխաներից յուրաքանչյուրի ծննդի հետ են կապված: Երկինքն այնքան մոտ էր թվում, և եթե ես փորձեի, կարող էի գրեթե զգալ պատկառանքի և հրաշքի այն նույն ապրումները, որոնք ունենում էի ամեն անգամ, երբ այդ թանկարժեք մանուկներից մեկը դրվում էր իմ ձեռքերի մեջ:

Մեր «զավակները Տիրոջ ժառանգությունն են» (Սաղմոս 127.3): Նա ճանաչում և սիրում է յուրաքանչյուրին կատարյալ սիրով (տես Մորոնի 8.17): Ինչպիսի սուրբ պարտականություն է, որը Երկնային Հայրը հանձնարարում է մեզ՝ ծնողներիս, որ Նրա գործընկերը լինենք, օգնելով Իր ընտրյալ հոգիներին դառնալ այն, ինչ Նա գիտի, որ կարող են դառնալ:

Մեր երեխաներին մեծացնելու այս աստվածային արտոնությունը շատ ավելի մեծ պատասխանատվություն է, որը մենք չենք կարող իրականացնել միայնակ՝ առանց Տիրոջ օգնության: Նա հստակ գիտի, թե ինչ իմանալու կարիք ունեն մեր երեխաները, ինչ պետք է անեն և ինչ պետք է դառնան՝ Նրա ներկայություն վերադառնալու համար: Նա մայրերին և հայրերին տալիս է որոշակի հրահանգում և ուղղություն սուրբ գրությունների, Իր մարգարեների և Սուրբ Հոգու միջոցով:

Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով վերջին օրերի հայտնության մեջ Տերը հրահանգում է ծնողներին ուսուցանել իրենց զավակներին *հասկանալ* ապաշխարության, Քրիստոսի հանդեպ հավատքի, մկրտության և Սուրբ Հոգու պարգևի վարդապետության մասին: Ուշադրություն դարձրեք, որ Տերը չի ասում, որ մենք պետք է պարզապես «ուսուցանենք վարդապետությունը»: Նա հրահանգում է ուսուցանել մեր երեխաներին «*հասկանալ* վարդապետությունը» (տես ՎԿՈՒ 68.25, 28; շեշտադրումն ավելացված է):

Սաղմոսում մենք կարդում ենք. «Իմաստուն արա ինձ, որ քո օրենքը պահեմ և նորան կատարեմ բոլոր սրտով » (Սաղմոս 119.34):

Մեր երեխաներին հասկանալ ուսուցանելը ավելին է, քան տեղեկություն տալը: Դա նշանակում է օգնել մեր երեխաներին ընդունել վարդապետությունը իրենց սրտում, որպեսզի այն դառնա իրենց էության մասը և արտացոլվի իրենց վերաբերմունքի և պահվածքի մեջ ողջ կյանքի ընթացքում:

Նեփին սովորեցրել է, որ Սուրբ Հոգու դերն է հասցնել ճշմարտությունը «մարդկանց զավակների սրտերը» (2 Նեփի 33.1): Որպես ծնողներ մեր դերը նրանում է, որ անենք այն, ինչ կարող ենք, ստեղծելու համար այնպիսի միջավայր, որտեղ մեր երեխաները կարող են զգալ Հոգու ազդեցությունը, ապա օգնել նրանց հասկանալ այն, ինչ զգում են:

Ես հիշում եմ մի հեռախոսազանգ տարիներ առաջ մեր դստեր Միշելից: Հուզված նա ասաց. «Մամ, ես նոր մի աներևակայելի փորձառություն ունեցա Էշլիի հետ»: Էշլին նրա դուստրն էր, որն այդ ժամանակ հինգ տարեկան էր: Միշելը պատմեց, ինչպես էր ողջ առավոտ անդադար վեճ տիրում Էշլիի և երեքամյա Էնդրյուի միջև՝ մեկը չէր կիսվում, մյուսը խփում էր: Օգնելուց հետո նրանց լուծել վեճը Միշելը գնաց տեսնելու, թե արդյոք ամենինչ կարգին է փոքրիկի հետ:

Շուտով Էշլին զայրացած վազելով եկավ և ասաց, որ Էնդրյուն չի կիսվում: Միշելը Էշլիին հիշեցրեց այն որոշման մասին, որ կայացրել էին ընտանեկան երեկոյին՝ ավելի բարի լինել միմյանց նկատմամբ:

Նա հարցրեց Էշլիին, թե մի գուցե նա աղոթեր և խնդրեր Երկնային Հոր օգնությունը, սակայն Էշլին, շատ զայրացած, պատասխանեց. «Ոչ»: Երբ հարցրեց, թե արդյոք Էշլին հավատում էր, որ Երկնային Հայրը կպատասխաներ աղոթքին, Էշլին ասաց, որ չգիտի: Նրա մայրը խնդրեց իրենց փորձել, մեղմ

բռնելով նրա ձեռքերը և նրա հետ ծնկի իջնելով;

Միշելն առաջարկեց Էշլիին խնդրել Երկնային Հորը օգնել Էնդրյուին կիսվել, իսկ իրեն՝ լինել բարի: Այն միտքը, որ Երկնային Հայրը կարող էր օգնել իր փոքր եղբորը կիսվել խաղալիքով երևիթե հետաքրքրեց Էշլիին, և նա սկսեց աղոթել, նախ խնդրելով Երկնային Հորը օգնել Էնդրյուին կիսվել: Երբ նա խնդրեց Նրան օգնել իրեն լինել բարի, նա սկսեց լաց լինել: Էշլին ավարտեց աղոթքը և պահեց գլուխը, դնելով մոր ուսին: Միշելը գրկեց նրան և հարցրեց, թե ինչու է նա լաց լինում: Էշլին ասաց, որ չգիտի:

Նրա մայրն ասաց. «Կարծում եմ, գիտեմ, թե ինչու ես դու լաց լինում: Դու լավ զգացում ունե՞ս ներսում»: Էշլին գլխով արեց և մայրը շարունակեց. «Դա Հոգին է, որ օգնում է քեզ զգալ այդպես: Այդպես Երկնային Հայրն ասում է քեզ, որ սիրում է և կօգնի քեզ»:

Նա հարցրեց Էշլիին, թե արդյոք նա հավատում էր, որ Երկնային Հայրը կարող էր օգնել իրեն: Իր փոքրիկ աչքերով, լցված արցունքներով, Էշլին ասաց, որ հավատում էր դրան:

Երբեմն մեր երեխաներին սովորեցնելու առավել զորեղ եղանակ է ուսուցանելը նրանց այն ենթատեքստում, որի մեջ են նրանք այդ պահին: Այդ պահերը ինքնաբուխ և չպլանավորված են, և տեղի են ունենում ընտանեկան կյանքի նորմալ ընթացքի ժամանակ: Դրանք գալիս և գնում են արագ, այնպես որ մենք պետք է զգոն լինենք և հասկանանք, երբ է եկել ուսուցման պահը, երբ երեխաները գալիս են մեզ մոտ մի հարցով կամ մտահոգությամբ, երբ խնդիրներ ունեն իրենց եղբայրների և քույրերի կամ ընկերների հետ, երբ նրանք կարիք ունեն սանձելու իրենց զայրույթը, երբ սխալ են կատարում կամ պետք է որոշում կայացնեն: (Տես *Teaching, No Greater Call: A Resource Guide for Gospel Teaching* [1999], 140–41; *Marriage and Family Relations Instructor's Manual* [2000], 61:)

Եթե մենք պատրաստ ենք և թույլ ենք տալիս, որ Հոգին ուղղորդի մեզ այդ իրավիճակներում, մեր երեխաները կուսուցանվեն ավելի մեծ արդյունավետությամբ և կստանան ավելի խորը հասկացողություն:

Նույնքան կարևոր են ուսուցման պահերը, որոնք գալիս են, երբ մենք լավ մտածված պլանավորում ենք կանոնավոր միջոցառումները, ինչպիսին են՝ ընտանեկան աղոթքը,

սուրբ գրությունների ուսումնասիրությունը, ընտանեկան երեկոն և ընտանեկան այլ միջոցառումները:

Ուսուցման ցանկացած իրավիճակում սովորելու և հասկանալու ողջ ընթացքը լավագույնս սնուցվում է ջերմության և սիրո մթնոլորտում, որտեղ ներկա է Հոգին:

Իր երեխաների ութ տարեկանը բոլորելուց մոտ երկու ամիս առաջ մի հայր ամեն շաբաթ ժամանակ էր հատկացնում նրանց մկրտությանը պատրաստելու համար: Նրա դուստրն ասաց, որ երբ եկավ իր հերթը, հայրը նրան մի ամսագիր տվեց և նրանք միասին՝ միայն երկուսով, նստեցին և քննարկեցին ու կիսվեցին ավետարանի սկզբունքների մասին իրենց զգացումներով: Հայրը խնդրեց նրան մի նկար նկարել: Այն ցույց էր տալիս նախաերկրային գոյությունը, այս երկրային կյանքը և յուրաքանչյուր քայլը, որը նա պետք է կատարեր՝ Երկնային Հոր մոտ վերադառնալու և Նրա հետ ապրելու համար: Նա բերեց իր վկայությունը փրկության ծրագրի յուրաքանչյուր քայլի մասին, որը սովորեցրեց իրեն:

Երբ նրա դուստրը մեծանալով հիշում էր այդ փորձառությունը, ասում էր. «Ես երբեք չեմ մոռանա այն սերը, որ զգացի իմ հայրիկի կողմից, երբ նա ժամանակ էր անցկացնում ինձ հետ: . . . Ես հավատացած եմ, որ այդ փորձառությունն է հիմնական պատճառը, որ ես վկայություն ունեի ավետարանի մասին, երբ մկրտվում էի» (տես *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 129):

Հասկանալու համար ուսուցանումը վճռական և հետևողական ջանքեր է պահանջում: Այն պահանջում է ուսուցանում սկզբունքով և օրինակով, հատկապես, օգնելով մեր երեխաներին ապրել նրանով, ինչ սովորում են:

Նախագահ Հարոլդ Բ. Լին ուսուցանել է. «Առանց ավետարանի սկզբունքը գործի մեջ զգալու . . . ավելի դժվար է հավատալ այդ սկզբունքին» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 121):

Ես սկսել եմ սովորել աղոթել, ծնկի իջնելով իմ ընտանիքի հետ

ընտանեկան աղոթքի ժամանակ: Ես սովորել եմ աղոթքի լեզուն, երբ լսել եմ իմ աղոթող ծնողներին և երբ նրանք օգնել են ինձ ասել իմ առաջին աղոթքները: Ես սովորել եմ, որ կարող եմ խոսել Երկնային Հոր հետ և ուղղություն խնդրել:

Ամեն առավոտ, առանց բացառության, իմ մայրը և հայրը նախաճաշից առաջ հավաքում էին մեզ խոհանոցի սեղանի մոտ և մենք ծնկի էինք իջնում ընտանեկան աղոթք ասելու: Ամեն անգամ ուտելուց առաջ մենք աղոթում էինք: Երեկոյան անկողին մտնելուց առաջ մենք միասին ծնկի էինք իջնում հյուրասենյակում և փակում օրը ընտանեկան աղոթքով:

Թեև շատ բան կար, որ ես չէի հասկանում աղոթքի մասին, երբ երեխա էի, այն դարձավ իմ կյանքի մասը և մնաց ինձ հետ: Ես դեռ շարունակում եմ սովորել և աղոթքի զորության մասին իմ հասկացողությունը դեռ շարունակում է աճել:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասել է. «Մենք բոլորս հասկանում ենք, որ ավետարանի ուղերձի հաջողությունը կախված է նրանից, որ այն ուսուցանվի, ապա հասկացվի, ապա կիրառվի կյանքում այնպես, որպեսզի դրա երջանկության և փրկության խոստումը կարողանա իրականանալ» (“Teaching and Learning in the Church” [worldwide leadership training meeting, Feb. 10, 2007], *Liahona,* June 2007, 57):

Ավետարանի վարդապետությունները լիարժեք հասկանալ սովորելը կյանքի տևողություն ունեցող գործընթաց է և գալիս է «տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ, մի քիչ այնտեղ» (2 Նեփի 28.30): Երբ երեխաները սովորում և գործում են իրենց սովորածի համաձայն, նրանց հասկացողությունը խորանում է, որը տանում է ավելի խորը սովորելուն, գործելուն, և անգամ ավելի մեծ և տևական հասկացողության:

Մենք կարող ենք իմանալ, որ երեխաները սկսում են հասկանալ վարդապետությունը, երբ տեսնում ենք, թե ինչպես է այն արտահայտվում նրանց վերաբերմունքի և արարքների մեջ՝ առանց արտաքին սպառնալիքների կամ հատուցումների: Երբ մեր երեխաները սովորում են հասկանալ վարդապետությունները, նրանք դառնում են ավելի ինքնուրույն և ավելի պատասխանատու: Նրանք դառնում են ընտանիքի խնդիրների լուծումների մասը և դրական ներդրում են կատարում մեր տան միջավայրին և մեր ընտանիքի հաջողությանը:

Մենք կուսուցանենք մեր երեխաներին հասկանալ, եթե օգտվենք ուսուցման ամեն առիթից, հրավիրենք Հոգին, օրինակ լինենք և օգնենք նրանց ապրել նրանով, ինչ իրենք սովորում են:

Երբ մենք նայում ենք փոքրիկ մանկան աչքերին, հիշում ենք երգի խոսքերը.

Զավակն եմ ես Աստծո,
Մեծ կարիքներ ունեմ,
Օգնիր Իր խոսքը հասկանալ,
Քանի դեռ շատ ուշ չէ:

Առաջնորդիր, քայլիր ինձ հետ,
Որ ուղին գտնեմ,
Սովորեցրու ինչ անել,
Որ մի օր Քեզ հասնեմ:
«Զավակն եմ Աստծո» *Hymns,* no. 301; շեշտադրումն ավելացված է)

Թող որ մենք անենք այդպես: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմ
Յոթանասունի Նախագահությունից

Դարձի գալ դեպի Նրա ավետարանը Նրա Եկեղեցու միջոցով

Եկեղեցու նպատակն է՝ օգնել մեզ ապրել ըստ ավետարանի:

Ես սիրում եմ Հիսուս Քրիստոսի ավետարանը *և* Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Երբեմն մենք օգտագործում ենք *ավետարան* և *Եկեղեցի* բառերը միմյանց փոխարեն, բայց դրանք նույնը չեն: Ինչևէ, դրանք փոխկապակցված են և մենք երկուսի կարիքն էլ ունենք:

Ավետարանն Աստծո ծրագիրն է, որով մեզ, որպես զավակներ տրված է իրավունք ստանալ բոլորն ինչ Հայրն ունի (տես ՎևՈւ 84.38): Սա կոչվում է հավերժական կյանք և նկարագրվում է որպես «Աստծո բոլոր պարգևներից մեծագույնը» (ՎևՈւ 14.7): Ծրագրի էական մասն է կազմում մեր երկրային փորձառությունը, ժամանակ՝ զարգացնելու հավատք (տես Մորոնի 7.26), ապաշխարելու (տես Մոսիա 3.12) և հաշտվելու Աստծո հետ (տես Հակոբ 4.11):

Մեր մահկանացու թուլությունները և «հակադրությունը բոլոր բաներում» (2 Նեփի 2.11) այս կյանքը դարձնում են շատ դժվար, և քանի որ մենք չէինք կարողանա մաքրել մեր սեփական մեղքերը, հարկավոր էր Փրկիչ: Երբ Էլոհիմը՝ Հավերժական Աստվածը և Հայրը բոլոր մեր հոգիների, ներկայացրեց փրկության Իր ծրագիրը, կար մեկը մեր մեջ, ով ասաց. «Ահա ես, ինձ ուղարկիր» (Աբրահամ 3.27): Նրա անունը Եհովա էր:

Ծնված լինելով Երկնային Հորից, ինչպես հոգեպես այնպես էլ ֆիզիկապես, Նա ուներ աշխարհին հաղթելու ամենակարողությունը: Ծնված լինելով երկրային մորից, նա ենթակա էր ցավի և մահկանացու տառապանքի: Մեծ Եհովան նաև կոչվեց Հիսուս և լրացուցիչ տրվեց Քրիստոս անունը, նշանակելով Մեսիա կամ Օծյալ: Նրա մեծագույն նվաճումը Քավությունն էր, որի միջոցով Հիսուս Քրիստոսը «իջավ բոլոր բաներից ներքև» (ՎևՈւ 88.6), հնարավոր դարձնելով Իր կողմից մեզանից յուրաքանչյուրի համար փրկագին վճարելը:

Եկեղեցին հիմնադրվեց Հիսուս Քրիստոսի կողմից Իր երկրային ծառայության ընթացքում «կառուցված լինելով առաքյալների և մարգարեների հիմքի վրա» (Եփեսացիս Բ.20): Ժամանակների լրիվության այս տնտեսությունում (ՎևՈւ 128.18), Տերը մեկ անգամ ևս վերականգնեց այն, ինչ մի ժամանակ եղել էր, առանձնապես ասելով Մարգարե Ջոզեֆ Սմիթին. «Ես մի եկեղեցի կհաստատեմ քո ձեռքով» (ՎևՈՒ 31.7): Թե՛ նախկինում, թե՛ ներկայում Հիսուս Քրիստոսը Իր Եկեղեցու գլուխն է, երկրի վրա ներկայացված լինելով առաքելական իշխանություն կրող մարգարեների կողմից:

Սա սքանչելի Եկեղեցի է: Նրա կազմակերպությունը, արդյունավետությունը և կատարյալ բարությունը հարգվում են բոլորի կողմից, ովքեր անկեղծորեն ձգտում են հասկանալ այն: Երկեղեցին ունի ծրագրեր երեխաների, պատանիների, տղամարդկանց և կանանց համար: Այն ունի գեղեցիկ ժողովատներ, թվով ավելի քան 18000: Փառահեղ տաճարները, այժմ դառնալով ընդամենը 136, կետագծում են երկրագունդը, ևս 30-ը շինարարության փուլում են կամ հայտարարված: Ավելի քան 56000 երիտասարդից և ոչ այնքան երիտասարդներից բաղկացած լիաժամկետ միսիոներներ ծառայում են ավելի քան 150 երկրներում: Եկեղեցու համաշխարհային մարդասիրական աշխատանքը մեր անդամների առատաձեռնության հրաշալի արտացոլումն է: Մեր բարօրության համակարգը հոգ է տանում մեր անդամներին և օգնում ինքնապահովմանը մի ձևով, որի նմանը չկա որևէ տեղ: Այս Եկեղեցում մենք ունենք ոչ մասնագիտացած ղեկավարներ և Սրբերի մի համայնք, ովքեր հոժարեն ուշագրավ ձևով ծառայել միմյանց: Այս Եկեղեցու նման ոչ մի բան գոյություն չունի ողջ աշխարհում:

Երբ ես ծնվեցի, մեր ընտանիքն ապրում էր մի փոքրիկ խրճիթում Եկեղեցու պատմական ժողովատներից մեկի՝ Հոնոլուլուի

Թաբերնաքլի տարածքում: Այժմ ես ներողություն եմ խնդրում Նախագահող Եպիսկոպոսության իմ սիրելի ընկերներից, ովքեր վերահսկում են Եկեղեցու շենքերը, բայց երբ տղա էի, ես մագլցում էի վերևում և ներքևում մտնում այդ սեփականության ամեն մի մատնաչափը, սկսած ջրով լցված ջրավազանի հատակից մինչև ներսի տպավորիչ լուսավորությամբ ծայրաձողը: Մենք նույնիսկ կախվում էինք (Տարզանի նման) և ճոճվում հսկայական բանյանի ծառերի ճյուղերից, որոնք այդ տարածքում էին:

Եկեղեցին ամեն ինչ էր մեզ համար: Մենք գնում էինք շատ ժողովների, նույնիսկ ավելի շատ, քան այժմ ենք գնում: Մենք գնում էինք Երեխաների Միություն հինգշաբթի օրը կեսօրից հետո: Սփոփող Միության ժողովները երեքշաբթի առավոտյան էին: Պատանեկության համար համատեղ ժողովը չորեքշաբթի երեկոյան էր: Շաբաթ օրը ծխի միջոցառումների համար էր: Կիրակի օրը առավոտյան տղամարդիկ և պատանիները գնում էին քահանայության ժողովին: Կեսօրին մենք գնում էինք Կիրակնօրյա Դպրոց: Ապա երեկոյան մենք վերադառնում էինք հաղորդության ժողովին: Գնալով և գալով և ժողովներով, թվում էր մեր ժամանակը սպառվում էր Եկեղեցու միջոցառումներով ողջ կիրակի օրը և շաբաթվա օրերի մեծ մասը:

Եկեղեցին այդքան շատ սիրելով հանդերձ մանկության այդ օրերին էր, որ առաջին անգամ ես զգացի, որ կար նույնիսկ ավելի մեծ ինչ-որ բան: Ես հինգ տարեկան էի, երբ մի մեծ համաժողով տեղի ունեցավ Թաբերնաքլում: Մենք քայլեցինք մեր բնակատեղից նեղ ճանապարհով դեպի ներքև և անցանք փոքրիկ կամրջով, որը տանում էր դեպի վեհաշուք ժողովատունը և նստեցինք մեծ ժողովարանի մոտավորապես 10-րդ շարքում: Եկեղեցու Նախագահ Դեյվիդ Օ. Մակ-Քեյն էր նախագահում և խոսում այդ ժողովում: Ես չեմ հիշում որևէ բան նրա ասածներից, բայց վառ հիշում եմ այն, ինչ տեսա և զգացի: Նախագահ Մակ-Քեյը հագել էր բաց դեղին կոստյում և իր ալեհեր մազերով շատ հիասքանչ տեսք ուներ: Կոզիների ավանդույթով, նա կրում էր թարմ կարմիր ծաղիկների վզնոց: Երբ նա խոսում էր, ես բավականին ուժեղ և անձնական մի բան զգացի: Հետագայում ես հասկացա, որ զգում էի Սուրբ Հոգու ազդեցությունը: Մենք երգեցինք փակման օրհներգը:

Ով է Տիրոջ կողմից, Ո՞վ:
Այժմ է ժամանակը ցույց տալու:
Մենք հարցնում ենք աներկյուղ,
Ո՞վ է Տիրոջ կողմից, Ո՞վ:
(«Ո՞վ է Տիրոջ կողմից» *Hymns,* no. 260)

Երբ այդ խոսքերը երգվում էին մոտ 2000 մարդկանց կողմից, բայց թվում էր հարցն ուղղված էր հենց ինձ, ես ուզում էի կանգնել և ասել. «Ես եմ»:

Ոմանք դիտում են Եկեղեցում ակտիվ լինելը, որպես վերջնանպատակ: Այդտեղ վտանգ կա: Հնարավոր է ակտիվ լինել Եկեղեցում, բայց քիչ ակտիվ ավետարանում: Թույլ տվեք շեշտել. Եկեղեցում ակտիվ լինելը խիստ ցանկալի նպատակ է, սակայն դա բավարար չէ: Եկեղեցում ակտիվ լինելը մեր հոգևոր ցանկության արտաքին դրսևորումն է: Եթե մենք մասնակցում ենք մեր ժողովներին, կրում և կատարում Եկեղեցական պարտականություններ և ծառայում ուրիշներին, դա նկատվում է հասարակության կողմից:

Ի հակադրություն, ավետարանի տարրերը, սովորաբար, քիչ նկատելի և չափելու համար ավելի դժվար են, բայց հավերժական տեսակետից դրանք ավելի մեծ կարևորություն ունեն: Օրինակ՝ որքա՞ն հավատք մենք իրականում ունենք: Կամ որքա՞ն ապաշխարող ենք մենք: Կամ որքա՞ն իմաստ ունեն արարողությունները մեր կյանքում:

Որքանով ենք կենտրոնացած մեր ուխտերի վրա:

Ես կրկնում եմ. Մեզ պետք է ավետարանը *և* Եկեղեցին: Փաստորեն, Եկեղեցու նպատակն է օգնել մեզ ապրել ավետարանով: Մենք հաճախ զարմանում ենք. Ինչպե՞ս կարող է ինչ-որ մեկը լիովին ակտիվ լինել, երբ երիտասարդ էր, իսկ հետո պասսիվանալ, երբ մեծանում է: Ինչպե՞ս կարող է մարդ՝ չափահաս մարդը, որը կանոնավորապես հաճախել է և ծառայել, դադարել հաճախելուց: Ինչպե՞ս կարող է մարդը, ով հիասթափվել է ղեկավարից կամ որևէ այլ մարդուց, թույլ տալ, որ դա վերջ դնի իր Եկեղեցի հաճախելուն: Հավանաբար, պատճառն այն է, որ նրանք բավականաչափ դարձի չէին եկել ավետարանում՝ հավերժության բաներում:

Ես առաջարկում եմ երեք հիմնական ուղիներ, որպեսզի ավետարանը լինի մեր հիմքը.

1. *Խորացնենք մեր հասկացողությունը Աստվածության մասին:* Հաստատուն գիտելիքը Աստվածության երեք անդամների մասին և սերը նրանց հանդեպ պարտադիր է: Ուշադիր աղոթեք Հորը՝ Որդու անունով, և ուղղություն փնտրեք Սուրբ Հոգուց: Միավորելով աղոթքը մշտական ուսումնասիրության և խոնարհ խորհրդածության հետ, անընդհատ կկառուցենք հավատք առ Հիսուս Քրիստոս: «Քանզի ինչպե՞ս է մարդ ճանաչում իր տիրոջը. . . . որն օտար է նրան և հեռու է նրա սրտի մտքերից և խորհուրդներից» (Մոսիա 5.13):
2. *Կենտրոնացեք արարողությունների և ուխտերի վրա:* Եթե դեռ կան հիմնական արարողություններ, որ պետք է կատարվեն ձերկյանքում, վճռականությամբ ստացեք դրանցից յուրաքանչյուրը: Ապա մենք պետք է մեր ուխտերին հավատարիմ ապրելու կարգապահություն ստեղծենք՝ լիովին օգտագործելով հաղորդության ամենշաբաթյա պարգևը: Մեզանից շատերը կանոնավորապես չեն փոխվում դրա մաքրագործող զորությամբ, այդ արարողության սրբության հանդեպ մեր ակնածանքի բացակայության պատճառով:
3. *Միավորեք ավետարանը Եկեղեցու հետ:* Կենտրոնանալով ավետարանի վրա, Եկեղեցու օրհնություն լինելը մերկյանքում կշատանա, ոչ թե կքչանա: Երբ ամեն ժողովի մենք պատրաստված գանք «ուսում փնտրենք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով» (ՎևՈւ 88.118), Սուրբ Հոգին կլինի մեր ուսուցիչը: Եթե մենք գալիս ենք զվարճանալու, մենք հաճախ կհիասթափվենք: Մի անգամ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալին հարցրեցին. «Ի՞նչ եք անում դուք, երբ գտնվում եք մի ձանձրալի հաղորդության ժողովում»: Նա պատասխանեց. «Չգիտեմ: Երբեք չեմ եղել այդպիսի մի ժողովում» (quoted by Gene R. Cook, in Gerry Avant, "Learning Gospel Is Lifetime Pursuit," *Church News,* Mar. 24, 1990, 10):

Մեր կյանքում մենք պետք է ցանկանանք այն, ինչ պատահեց Տիրոջ Նոր Աշխարհ գալուց և Իր Եկեղեցին այնտեղ հիմնելուց հետո: Սուրբ գրություններն ասում են. «Եվ եղավ այնպես, նրանք [նշանակում է Նրա աշակերտները] առաջ գնացին Նեփիի ողջ ժողովրդի մեջ, և քարոզեցին Քրիստոսի ավետարանը ողջ ժողովրդին՝ երկրի երեսին. և նրանք դարձի եկան դեպի Տերը և միացվեցին Քրիստոսի եկեղեցուն, և այսպիսով, այդ սերնդի ժողովուրդն օրհնվեց՝ Հիսուսի խոսքերի համաձայն» (3 Նեփի 28.23):

Տերը կամենում է, որ Իր Եկեղեցու անդամները լիովին դարձի գան դեպի Իր ավետարանը: Դա միակ հաստատ ուղին է ունենալու հոգևոր ապահովություն այժմ և երջանկություն հավիտենության մեջ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Փոլ Ե. Քոլիքեր
Յոթանասունից

Նա իսկապես սիրում է մեզ

Ընտանիքի երկնային նմուշով ստեղծված օրինակի օգնությամբ մենք ավելի լիարժեքորեն ենք հասկանում, թե ինչպես է մեր Երկնային Հայրը իսկապես սիրում մեզանից յուրաքանչյուրին հավասարապես և լիարժեք ձևով:

Ես սիրում եմ լինել լիաժամկետ միսիոներների հետ: Նրանք լի են հավատքով, հույսով և իսկական գթությամբ: Նրանց միսիոներական փորձառությունը նման է մի փոքրիկ կյանքի փաթեթի, որ ունի 18–24 ամսվա տևողություն: Նրանք ժամանում են որպես հոգևոր մանուկներ, ովքեր լուրջ ցանկություն ունեն սովորել և հեռանալ որպես հասուն չափահասներ, կարծես, պատրաստ հաղթահարելու ցանկացած և բոլոր դժվարությունները, որոնք դրված են նրանց առջև: Ես նաև սիրում եմ նվիրված տարեց միսիոներներին, ովքեր լի են համբերությամբ, իմաստությամբ և մեղմ վստահությամբ: Նրանք կայունության և սիրո պարգև են հաղորդում իրենց շրջապատող երիտասարդ միսիոներների ջանքերին: Երիտասարդ միսիոներները և ավագ զույգերը միասին ներկայացնում են բարու հզոր, հաստատակամ ուժ, որը շատ մեծ ազդեցություն է ունենում իրենց և նրանց կյանքում, ում նրանք ծառայում են:

Վերջերս ես լսեցի այս հրաշալի երիտասարդ միսիոներներից երկուսին, երբ նրանք խոսում էին այդ օրը ունեցած իրենց փորձառությունների ու ջանքերի մասին: Այդ պահին, երբ նրանք խոսում էին այդ մասին, նրանք մտածում էին այն անհատների մասին, ում հանդիպել էին այդ օրը, որոնցից ոմանք մյուսներից ավելի պատրաստակամ էին գտնվել: Հաշվի առնելով հանգամանքները, նրանք հարցրեցին. «Ինչպե՞ս մենք կարող ենք օգնել յուրաքանչյուր անհատի Երկնային Հոր մասին ավելին իմանալու ցանկություն զարգացնել: Ինչպե՞ս ենք մենք օգնում նրանց զգալ Նրա Հոգին: Ինչպե՞ս մենք կարող ենք օգնել նրանց իմանալ, որ մենք սիրում ենք իրենց»:

Ես մտովի պատկերացրեցի այս երկու երիտասարդ տղամարդկանց երեք կամ չորս տարի իրենց միսիան ավարտելուց հետո: Ես պատկերացրեցի, որ նրանք գտել էին իրենց հավերժական զուգընկերներին և ծառայում էին երեցների քվորումում կամ ուսուցանում էին երիտասարդների մի խմբի: Այժմ, իրենց լսողների մասին մտածելու փոխարեն, նրանք տալիս էին նույն հարցերը իրենց քվորումի անդամների վերաբերյալ կամ երիտասարդ տղաների վերաբերյալ, ում նրանք լիազորված էին կրթել: Ես տեսա, թե ինչպես նրանց միսիոներական փորձառությունը կարող էր կիրառվել որպես օրինակ իրենց կյանքի մնացած մասում ուրիշներին կրթելիս: Երբ արդարակյաց աշակերտների այս բանակը վերադառնում է միսիայից աշխարհի տարբեր երկրներ, նրանք դառնում են Եկեղեցին վերականգնելու աշխատանքի հիմնական նվիրատուները:

Մորմոնի գրքի մարգարե Լեքին միգուցե այս միսիոներների նման խորհեց նույն հարցերի շուրջ, երբ լսեց իր որդիների պատասխանները իրեն տրված առաջնորդությունների և տեսիլքների վերաբերյալ. «Եվ այսպես Լամանը և Լեմուելը, լինելով ավագները, տրտնջում էին իրենց հոր դեմ: Եվ նրանք տրտնջում էին, որովհետև չգիտեին գործերն այն Աստծո, որը ստեղծել էր իրենց» (1 Նեփի 2.12):

Հավանաբար, մեզանից յուրաքանչյուրն էլ զգացել է այն հուսախաբությունը, որը Լեքին զգաց իր երկու ավագ որդիների հետ կապված: Երբ մենք հանդիպում ենք ճշմարիտ ճանապարհից հեռացող երեխայի, լսողի, ով դեռևս չի պարտավորվում ընդունել ավետարանը կամ հեռանկարներում չկողմնորոշվող երեցի, մեր սիրտը ցավում է նրանց համար, ճիշտ ինչպես Լեքիի սիրտը, և մենք հարցնում ենք՝ ինչպես ես կարող եմ օգնել նրանց զգալ և լսել Հոգին, որպեսզի նրանք չշեղվեն աշխարհիկ բաներով: Երկու սուրբ գրություններ են առանձնանում իմ մտքում, որոնք կարող են օգնել մեզ գտնել մեր ճանապարհը այս շեղումների մեջ և զգալ Աստծո սիրո զորությունը:

Նեփին հայտնում է մեզ սովորելու գաղտնիքը իր անձնական փորձառության միջոցով. «Ես Նեփիս, . . . ունենալով մեծ իղձեր՝ իմանալու Աստծո խորհուրդները, ուստի, ես կանչեցի առ Տերը. և ահա, նա այցելեց ինձ և այնպես փափկացրեց

իմ սիրտը, որ ես հավատացի այն բոլոր խոսքերին, որոնք ասվել էին հորս կողմից. այդ պատճառով ես չապստամբեցի նրա դեմ՝ իմ եղբայրների նման» (1 Նեփի 2.16):

Իմանալու ցանկություն արթնացնելը մեզ հոգևոր ունակություն է տալիս լսելու երկնքի ձայնը: Այդ ցանկությունը արթնացնելը և զարգացնելը յուրաքանչյուրիս՝ միսիոներների, ծնողների, ուսուցիչների, առաջնորդների և անդամների որոնումն ու պարտականությունն է: Երբ մենք զգում ենք, որ այդ ցանկությունը առաջանում է մեր սրտերում, մենք պատրաստվում ենք օգուտ քաղել երկրորդ սուրբ գրության ուսումնասիրությունից, որն ուզում եմ նշել:

1831թ. հունիսին, երբ կոչումներ էին տրվում վաղ շրջանի Եկեղեցու ղեկավարներին, Ջոզեֆին Սմիթին ասվեց, որ «Սատանան դրսում է երկրի վրա, և նա առաջ է գնում խափելով ազգերին»: Այս շեղող ազդեցությունը կասեցնելու համար, Տերն ասաց, որ մեզ կտա «մի օրինակ, բոլոր բաների համար, որպեսզի [մենք] չխափվենք» (ՎԱՈՒ 52.14):

Օրինակները ձևանմուշներ, առաջնորդություններ, կրկնվող քայլեր կամ ուղիներ են, որոնց մարդը հետևում է Աստծո նպատակներն իրականացնելու համար: Եթե մենք հետևենք դրանց, դրանք մեզ կպահեն խոնարհ, արթուն և ի վիճակի կլինենք տարբերելու Սուրբ Հոգու ձայնը այն ձայներից, որոնք մեզ շեղում և հեռացնում են: Այնուհետև Տերը հրահանգում է մեզ. «Նա, ով դողում է իմ զորության ներքո, ուժեղ պիտի դարձվի, և գովասանքի և իմաստության պտուղներ պիտի բերի, համաձայն հայտնությունների ու ճշմարտությունների, որոնք ես տվել եմ ձեզ» (ՎԱՈՒ 52.17):

Անկեղծ միտումով ասված խոնարհ աղոթքի օրինությունը թույլ է տալիս Սուրբ Հոգուն դիպչել մեր սրտին և օգնում է մեզ հիշել այն, ինչ մենք գիտեինք մինչև այս մահկանացու կյանքում ծնվելը: Երբ մենք ավելի պարզ ենք հասկանում մեզ համար նախատեսված մեր Երկնային Հոր ծրագիրը, մենք

սկսում ենք ընդունել մեր պարտականությունը՝ օգնելու ուրիշներին սովորել և հասկանալ Նրա ծրագիրը: Որպեսզի օգնենք ուրիշներին հիշել, առաջին հերթին մենք պետք է անձամբ ապրենք և կիրառենք ավետարանը մեր իսկ կյանքում: Երբ մենք իրականում ապրում ենք ավետարանով Տեր Հիսուս Քրիստոսի սովորեցրած օրինակի համաձայն, ուրիշներին օգնելու մեր ունակությունը մեծանում է: Հաջորդ փորձառությունը մի օրինակ է, թե ինչպես կարող է այս սկզբունքը աշխատել:

Երկու երիտասարդ միսիոներներ թակեցին մի դուռ, հուսալով գտնել մեկին, ով կընդուներ իրենց ուղերձը: Դուռը բացվեց և բավականին խոշոր մի տղամարդ բարևեց նրանց ոչ ընկերական ձայնով. «Կարծում եմ ասել եմ ձեզ, որ իմ դուռը կրկին չթակեք: Ես զգուշացրել էի ձեզ, որ եթե դուք երբևէ վերադառնաք, դա հաճելի փորձառություն չի լինի: Այժմ ինձ հանգիստ թողեք»: Նա շտապ փակեց դուռը:

Մինչ երեցները հեռանում էին, ավելի փորձառու ավագ միսիոները իր ձեռքը դրեց կրտսեր միսիոների ուսին, որ մխիթարեր և քաջալերեր նրան: Տղամարդը պատուհանից աննկատելիորեն նայում էր նրանց՝ համոզվելու համար, որ նրանք հասկացել էին իր ասածը: Նա միանգամայն ակնկալում էր տեսնել նրանց ծիծաղելիս և ծաղրելիս իր անբարյացակամ վերաբերմունքը ի պատասխան իրենց այցելության: Ինչևիցե, երբ նա տեսավ բարության արտահայտություն երկու միսիոներների միջև, նրա սիրտը անմիջապես փափկեց: Նա կրկին բացեց դուռը և խնդրեց միսիոներներին վերադառնալ և կիսել իրենց ուղերձը իր հետ:

Երբ մենք հնազանդվում ենք Աստծո կամքին և ապրում Նրա օրինակով, զգում ենք Նրա Հոգին: Փրկիչը սովորեցրել է. «Սորանով կգիտենան ամենքը թէ իմ աշակերտներն էք, եթէ իրար վերայ սէր ունենաք» (Հովհաննես ԺԳ.35): Իրար հանդեպ սեր ունենալու այս սկզբունքը Քրիստոսակենտրոն ունակություն զարգացնելը մեր մտածելու, խոսքի և վարքի մեջ հիմնարար դեր ունի Քրիստոսի աշակերտ և Նրա ավետարանի ուսուցիչներ դառնալու գործում:

Այսպիսի ցանկություն արթնացնելը պատրաստում է մեզ խոստացված օրինակներ փնտրելուն: Օրինակներ փնտրելը առաջնորդում է մեզ դեպի Քրիստոսի վարդապետությունը, ինչպես այն ուսուցանվել է Փրկչի և Նրա մարգարե առաջնորդների կողմից: Այս վարդապետության օրինակներից մեկը մինչև վերջ համբերելն է. «Եվ օրհնված են նրանք, ովքեր կջանան հաստատել իմ Սիոնն այդ օրը, քանզի նրանք

կունենան Սուրբ Հոգու պարգևն ու զորությունը. և եթե համբերեն մինչև վերջ, նրանք կբարձրացվեն վերջին օրը, և կփրկվեն Գառի հավիտենական արքայությունում» (1 Նեփի 13.37):

Ո՞րն է լավագույն եղանակը, որի միջոցով մենք կարող ենք վայելել Սուրբ Հոգու պարգևն ու զորությունը: Դա այն զորությունն է, որը գալիս է Հիսուս Քրիստոսի հավատարիմ աշակերտ լինելուց: Դա մեր *սեղն* է Նրա և մեր մերձավորների հանդեպ: Փրկիչն է, որ սահմանեց սիրո օրինակը, երբ սովորեցրեց մեզ. «Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք» (Հովհաննես ԺԳ.34):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հաստատել այս սկզբունքը, երբ ասել է. «Տիրոջը սիրելը պարզապես խորհուրդ չէ. այն պարզապես մաղթանք չէ: Այն պատվիրան է: . . . Աստծո սերը ամեն առքինության, ամեն բարության, բնավորության ամբողջ ուժի, ճիշտը գործելու ամբողջ հավատարմության հիմքն է» (“Words of the Living Prophet,” *Liahona,* Dec. 1996, 8):

Հոր ծրագրում ընտանիքի օրինակը նախատեսում է օգնել մեզ սովորել, կիրառել և հասկանալ սիրո զորությունը: Իմ սեփական ընտանիքի կազմավորման օրը իմ սիրելի Աննան ու ես գնացինք տաճար և ամուսնության ուխտի մեջ մտանք: Այդ օրը ես մտածում էի, թե այնքան շատ էի սիրում նրան, սակայն ես ընդամենը սկսում էի տեսնել սիրո սկիզբը: Մինչ մեր յուրաքանչյուր երեխան և թոռը մուտք էին գործում մեր կյանք, մեր սերն ընդլայնվում էր նրանցից յուրաքանչյուրին հավասարաչափ և լիարժեք սիրելու համար: Թվում է, թե սիրելու ունակության զարգացմանը վերջ չկա:

Մեր Երկնային Հոր սիրո զգացողությունը նման է երկնքի ձգողական դաշտին: Երբ մենք հեռացնում ենք շեղող բաները, որոնք մեզ ձգում են դեպի աշխարհ և գործածում ենք մեր ազատությունը Նրան փնտրելով, մենք բացում ենք մեր սրտերը երկնային ուժերի համար, որոնք ձգում են մեզ դեպի Նա: Նեփին նկարագրել է դրա ազդեցությունը «այն աստիճան, որ [նրա] մարմինը այրվում է» (2 Նեփի 4.21): Սիրո այս նույն զորությունը ստիպեց Ալմային երգել «քավիչ սիրո երգը» (Ալմա 5.26, տես նաև հատված 9): Այն այնպես էր դիպչել Մորմոնին, որ նա խորհուրդ տվեց մեզ «աղոթել [մեր] . . . սրտի որջ կորովով», որ մենք կարողանանք լցվել Նրա սիրով (Մորոնի 7.48):

Ժամանակակից և հին սուրբ գրությունները լի են Իր զավակների հանդեպ Երկնային Հոր հավերժական սիրո հիշեցումներով: Ես վստահ եմ, որ մեր Երկնային Հոր բազուկները շարունակ մեկնված են, նույնիսկ պատրաստ՝ գրկելու մեզանից յուրաքանչյուրին և ասելու յուրաքանչյուրին այդ մեղմ թափանցող ձայնով՝ «Ես սիրում եմ քեզ»:

Ընտանիքի երկնային նմուշով ստեղծված օրինակի օգնությամբ մենք ավելի լիարժեք ենք հասկանում, թե ինչպես է մեր Երկնային Հայրը իսկապես սիրում մեզանից յուրաքանչյուրին հավասարապես և լիարժեք ձևով: Ես վկայում եմ, որ դա ճիշտ է: Աստված գիտի և սիրում է մեզ: Նա տվել է մեզ Իր սուրբ վայրի տեսիլքը և կանչել է մարգարեների և առաքյալների, որ ուսուցանեն սկզբունքներն ու օրինակները, որոնք մեզ կվերադարձնեն Իր մոտ: Մինչ մենք ջանում ենք սովորելու ցանկություն արթնացնել մեր և ուրիշների մեջ, և մինչ մենք ապրում ենք համաձայն մեր հայտնաբերած օրինակների, մենք կմոտենանք Նրան: Ես վկայում եմ, որ Հիսուսը հենց Աստծո Որդին էր, մեր Օրինակը և մեր սիրելի Քավիչը, ինչը ես ասում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց Դալլին Հ. Օուքս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Զոհաբերություն

Տիրոջը և մեր մերձավորներին ծառայելու մեր պարտավորությունը ծառայության և զոհաբերության մեր կյանքերի ամենաճիշտ արտահայտությունն են:

Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերությունը կոչվել է «բոլոր իրադարձություններից ամենաանզուգականը՝ սկսած արարումից մինչև հավերժության անվերջ դարերը»:[1] Այդ զոհաբերությունը բոլոր մարգարեների կենտրոնական ուղերձն է: Այն խորհրդանշվել է կենդանիների զոհաբերություններով, որը նշանակված էր Մովսեսի օրենքով: Մարգարեներից մեկը հայտարարել է, որ դրանց ողջ իմաստը «մատնանշում էր դեպի այն մեծ և վերջին զոհաբերությունը. . . . Աստծո Որդու, այո, անսահման և հավերժական» (Ալմա 34.14): Հիսուս Քրիստոսը տարավ աներևակայելի տառապանք՝ Իրեն դարձնելով զոհ բոլորի մեղքերի համար: Այդ զոհաբերությունը մատուցեց ծայրաստիճան բարին՝ առանց բծի անարատ Գառին, ծայրաստիճան չարի համար՝ ողջ աշխարհի մեղքերի համար: Էլիզա Ռ. Սնոուի հիշարժան խոսքերում.

«Կյանքն իր տվեց Նա կամավոր,
Եվ արյունն իր անգին,
զոհվեց անմեղ,
Որ մեղավոր, աշխարհը մեր
փրկի»:[2]

Այդ զոհաբերությունը՝ Հիսուս Քրիստոսի Քավությունը, փրկության ծրագրի կենտրոնում է:

Հիսուս Քրիստոսի աներևակայելի տառապանքը վերջ դրեց արյուն հեղելու միջոցով զոհաբերությանը, բայց այն վերջ չդրեց զոհաբերության կարևորությանը ավետարանի ծրագրում: Մեր Փրկիչը մեզանից պահանջում է շարունակել զոհաբերություններ մատուցել, սակայն զոհաբերությունները, որոնք Նա այժմ է պատվիրում, այն է, որ մենք «մատուցենք որպես զոհաբերություն [Իր համար] կոտրված սիրտ և փշրված հոգի» (3 Նեփի 9.20): Նա նաև պատվիրում է յուրաքանչյուրիս սիրել և ծառայել միմյանց՝ հիմնականում մատուցել փոքրիկ նմանակումը Նրա սեփական զոհաբերության՝ զոհաբերելով մեր իսկ ժամանակը և եսասիրական առաջնահերթությունները: Մի ոգեշնչված օրհներգում մենք երգում ենք. «Զոհաբերությունը օրհնությունն է բերում երկնքի»:[3]

Ես կխոսեմ այս մահկանացու զոհաբերությունների մասին, որոնք Փրկիչը խնդրում է մեզ կատարել: Դրանք չեն ներառում զոհաբերությունները, որոնք մենք ստիպված ենք կատարում կամ գործողություններ, որոնք մենք գուցե դրդվում ենք ավելի շուտ անձնական առավելության, քան ծառայության կամ զոհաբերության համար (տես 2 Նեփի 26.29):

I.

Քրիստոնեական հավատքն ունի զոհաբերության պատմություն՝ ներառյալ մեծագույն զոհաբերությունը: Քրիստոնեության դարաշրջանի վաղ օրերին Հռոմը նահատակեց հազարավորների Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց հավատքի համար: Հետագա դարերում, երբ վարդապետական հակասությունները բաժանեցին քրիստոնյաներին, որոշ խմբեր հալածեցին և նույնիսկ մահվան ենթարկեցին մյուս խմբերի անդամներին: Մյուս քրիստոնյաների կողմից սպանված քրիստոնյաները քրիստոնեական հավատքի ամենաողբերգական նահատակներն են:

Շատ քրիստոնյաներ կամավոր զոհաբերություններ են կատարել Քրիստոսի հանդեպ հավատքից և Նրան ծառայելու ցանկությունից դրդված: Ոմանք ընտրել են նվիրաբերել իրենց ողջ չափահաս կյանքը Տիրոջ ծառայությանը: Այս ազնիվ խումբը ներառում է ավանդական քրիստոնեաների կուսակրոն հոգևորականներին և բողոքական հավատքների այն մարդկանց, ովքեր նվիրաբերել են ողջ իրենց կյանքը որպես քրիստոնեական միսիոներներ: Նրանց օրինակները դժվարին են և ոգեշնչող, բայց Քրիստոսին հավատացողների մեծ մասը ոչ սպասվում է և ոչ էլ կարող են նվիրաբերել իրենց ողջ կյանքը կրոնական ծառայության:

II.

Քրիստոսի հետևորդներից շատերի համար մեր զոհաբերությունները ներառում են այն, թե ինչ կարող ենք մենք անել ամենօրյա հիմքի վրա մեր սովորական անձնական կյանքում: Այդ փորձառության մեջ մենք չգիտենք որևէ խմբի, որոնց անդամներն անեին ավելի շատ զոհաբերություն, քան Վերջին Օրերի Սրբերը: Նրանց զոհաբերությունները, ձեր զոհաբերությունները, իմ սիրելի եղբայրներ և քույրեր, հակադրության մեջ են գտնվում անձնական կայացման

համար աշխարհիկ ծանոթ ձգտումներին:

Իմ առաջին օրինակները վերաբերում է մեր Մորմոն ռահվիրաներին: Նրանց կյանքերի, ընտանեկան հարաբերությունների, տների և հարմարավետության վիպերգական զոհաբերությունները վերականգված ավետարանի հիմքն են կազմում: Սառա Ռիչը խոսել է այն մասին, թե ինչն է դրդել այդ ռահվիրաներին, երբ նա պատմել է իր ամուսնու՝ Չարլզի միսիայի կանչվելը: «Սա իսկապես փորձության ժամանակ էր ինձ համար, ինչպես նաև ամուսնուս համար, բայց պարտականությունը կոչ էր անում մեզ բաժանվել որոշ ժամանակով և գիտենալով, որ մենք հնազանդվում էինք Տիրոջ կամքին, մենք զգում էինք, որ զոհաբերում ենք մեր սեփական զգացմունքները, որպեսզի օգնեինք իրականացնել գործը՝ . . . օգնելով երկրի վրա հաստատելու Աստծո Արքայությունը»:[4]

Այսօր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի ամենանկատելի ուժը նրա անդամների անձնուրաց ծառայությունն է և զոհաբերությունը: Նախքան մեր տաճարներից մեկի վերանվիրագործումը մի քրիստոնյա քահանա հարցրեց Նախագահ Գորդոն Բ. Հինքլիին, թե ինչու այն չի պարունակում խաչի քրիստոնեական հավատքի ամենասովորական խորհրդանիշի ոչ մի դրսևորում: Նախագահ Հինքլին պատասխանեց, որ *մեր* քրիստոնեական հավատքի խորհրդանիշը «մեր մարդկանց կյանքն է»:[5] Իսկապես, ծառայության և զոհաբերության մեր կյանքը Տիրոջը և մեր մերձավորին ծառայելու մեր պարտավորվածության ամենաճիշտ արտահայտությունն են:

III.

Մենք չունենք մասնագիտական կրթությամբ և աշխատավարձ ստացող հոգևորականություն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Արդյունքում ոչ մասնագետ անդամները, ովքեր կանչվում են ղեկավարելու և ծառայելու մեր համայնքներում, պետք է կրեն բազմաթիվ եկեղեցական ժողովների, ծրագրերի և միջոցառումների ողջ բեռը: Նրանք անում են դա ավելի քան 14,000 համայնքներում հենց միայն Միացյալ Նահանգներում և Կանադայում: Իհարկե մենք եզակի չենք ոչ մասնագիտացված անդամներ ունենալու տեսակետից, ովքեր ծառայում են որպես ուսուցիչներ և ոչ մասնագիտացված ղեկավարներ: Բայց ժամանակի քանակը, որը նվիրաբերվում է մեր անդամների կողմից միմյանց ուսուցանելու և ծառայելու համար՝ եզակիորեն մեծ է: Մեր ջանքերը մեր համայնքների յուրաքանչյուր ընտանիքին ամեն ամիս այցելելու և յուրաքանչյուր կին ամեն ամիս Սփոփող Միության կողմից այցելող ուսուցիչներ ունենալու դրա օրինակներն են: Մենք աշխարհում նման ոչ մի համեմատելի ծառայություն չգիտենք:

ՎՕՍ անզուգական ծառայության և զոհաբերության լավագույն հայտնի օրինակը մեր միսիոներների աշխատանքն է: Ներկայումս նրանք հաշվվում են ավելի քան 50000 երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք և ավելի քան 5000 չափահաս տղամարդիկ և կանայք: Նրանք նվիրում են վեց ամսից մինչև երկու տարի իրենց կյանքից՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը ուսուցանելու և մարդասիրական օգնություն ցույց տալու աշխարհի ավելի քան 160 երկրներում: Նրանց աշխատանքը միշտ ներառում է զոհաբերություն, ներառյալ տարիները, որ նրանք տրամադրում են Տիրոջ աշխատանքին և նաև կատարած զոհաբերությունները՝ նրանց օգնելու միջոցներ հայթհայելու համար:

Նրանք, ովքեր մնում են տանը, ծնողներն ու ընտանիքի մյուս անդամները, ևս զոհաբերում են՝ մնալով առանց իրենց ուղարկած միսիոներների ընկերակցության և ծառայության: Օրինակ՝ մի Բարազիլացի ստացավ միսիոներական կանչ, երբ նա աշխատում էր իր եղբայրներին և քույրերին պահելու՝ իր հոր և մոր մահից հետո: Բարձրագույն Իշխանավորներից մեկը նկարագրել է այդ երեխաների հանդիպումը խորհրդում, և որ նրանք մտաբերում էին, որ իրենց մահացած ծնողները նրանց սովորեցրել էին, որ իրենք պետք է միշտ պատրաստ լինեին ծառայելու Տիրոջը: Երիտասարդ տղամարդն ընդունեց իր միսիոներական կանչը և 16 տարեկան եղբայրը վերցրեց իր վրա ընտանիքին օգնելու համար աշխատելու պարտականությունը:[6] Մենք չգիտենք սրա նման որևէ այլ կամավոր ծառայություն և

զոհաբերություն աշխարհի որևէ այլ կազմակերպությունում:

Մեզ հաճախ հարցնում են. «Ինչպե՞ս եք համոզում ձեր երիտասարդներին և ձեր մեծահասակ անդամներին թողնել իրենց կրթությունը կամ իրենց պաշտոնաթող ազատ կյանքը զոհաբերելու այս ձևով: Ես լսել եմ շատերին այս բացատրությունը տալիս. «Իմանալով թե ինչ է արել իմ Փրկիչն ինձ համար՝ Նրա շնորհը իմ մեղքերի համար տառապելիս և մահն հաղթելիս, որպեսզի ես կարողանամ նորից ապրել, ես արտոնյալ եմ զգում կատարելու այս փոքրիկ զոհաբերությունը, որն ինձանից խնդրվում է կատարել Իր ծառայությունում: Ես ուզում եմ կիսվել այն հասկացողությամբ, որ Նա տվել է ինձ»: Ինչպե՞ս ենք համոզում Քրիստոսի այդպիսի հետևորդներին ծառայել: Ինչպես բացատրել է մարգարեներից մեկը. «Մենք [ուղղակի] խնդրում ենք նրանց»:[7]

Այլ զոհաբերություններ, որոնք առաջանում են միսիոներական ծառայությունից, նրանց զոհաբերություններն են, ովքեր գործում են միսիոներների ուսմունքների վրա հիմնվելով և դառնում Եկեղեցու անդամներ: Շատ նորադարձների համար այս զոհաբերությունները շատ կարևոր են, ներառյալ՝ ընկերներին և ընտանեկան կապերը կորցնելը:

Շատ տարիներ առաջ այս համաժողովը լսեց մի երիտասարդ մարդու մասին, ով գտել էր վերականգնված ավետարանը, երբ նա սովորում էր Միացյալ Նահանգներում:

Պացիշա, Գվատեմալա

Երբ նա պատրաստվում էր իր հայրենի երկիրը վերադառնալ, Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հարցրեց նրան, թե ինչ կպատահեր նրա հետ, երբ նա վերադառնար տուն որպես քրիստոնյա: «Ընտանիքս կհիասթափվի», պատասխանեց երիտասարդը: «Նրանք կարող է ինձ դուրս շպրտեն և ինձ մեռած համարեն: Ինչ վերաբերում է իմ ապագային և իմ կարիերային, բոլոր հնարավորությունները կարող է փակվեն իմ առջև»:

«Դուք հոժա՞ր եք վճարել այդպիսի մեծ գին ավետարանի համար», հարցրեց Նախագահ Հինքլին:

Արտասվելով երիտասարդ տղամարդը պատասխանեց. «Այն ճշմարիտ է այդպես չէ՞»: Երբ դա հաստատվեց, նա պատասխանեց. «Ուրեմն, մնացածն էլ ի՞նչ նշանակություն ունի»:[8] Դա զոհաբերության ոգին է մեր նոր անդամներից շատերի մեջ:

Ծառայության և զոհաբերության այլ օրինակներ են հայտնվում հավատարիմ անդամների կյանքում, ովքեր ծառայում են տաճարներում: Տաճարային ծառայությունը առանձնահատուկ է Վերջին Օրերի Սրբերի համար, բայց այսպիսի զոհաբերության կարևորությունը պետք է հասկանալի լինի բոլոր քրիստոնյաների համար: Վերջին Օրերի Սրբերը մենաստաններում ծառայելու ավանդություն չունեն, բայց այնուամենայնիվ, մենք կարող ենք հասկանալ և հարգել նրանց զոհաբերությունը, ում քրիստոնեական հավատքը դրդում է նրանց նվիրել իրենց կյանքը այդ կրոնական գործունեությանը:

Այս համաժողովում հենց մեկ տարի առաջ, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կիսվեց տաճարային ծառայության հետ կապված մի զոհաբերության օրինակով: Վերջին Օրերի Սրբերի ընտանիքի մի հավատարիմ հայր Խաղաղ օվկիանոսի մի հեռավոր կղզում վեց տարի կատարում էր ֆիզիկական ծանր աշխատանք այդ հեռու վայրում՝ վաստակելու անհրաժեշտ փողը Նոր Զելանդիայի Տաճարում իր կնոջը և 10 երեխաներին ամուսնության և հավերժության համար կնքման տանելու նպատակով: Նախագահ Մոնսոնը բացատրեց. «Նրանք, ովքեր հասկանում են հավերժական օրհնությունները, որոնք

գալիս են տաճարից, գիտեն, որ ոչ մի զոհաբերություն էլ խիստ մեծ չէ, ոչ մի գին խիստ ծանր չէ, ոչ մի պայքար խիստ դժվար չէ, որպեսզի ստանան այդ օրհնությունները»:[9]

Ես երախտապարտ եմ քրիստոնեական սիրո, ծառայության և զոհաբերության սքանչելի օրինակների համար, որոնք ես տեսել եմ Վերջին Օրերի Սրբերի մեջ: Ես տեսնում եմ, որ դուք կատարում եք ձեր Եկեղեցական կոչումները, հաճախ ժամանակի և միջոցների մեծ զոհաբերությամբ: Ես տեսնում եմ ձեր ծախսերով միսիայում ծառայելը: Ես տեսնում եմ ձեզ ձեր մասնագիտական հմտությունները զվարթորեն նվիրաբերելիս ձեր մերձավորների ծառայության համար: Ես տեսնում եմ անձնական ջանքերով աղքատների համար ձեր հոգ տանելը և Եկեղեցու բարօրության և մարդասիրական նվիրատվություններին օգնելը:[10] Այդպիսի օրինակները զորացնում են մեզ բոլորիս: Դրանք հիշեցնում են մեզ Փրկչի ուսմունքը: Բոլոր այս բաները հաստատվել են համազգային ուսումնասիրությունում, որը եզրակացրել է, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ակտիվ անդամները «կամավորական ծառայություն են կատարում և նվիրաբերում նշանակալիորեն ավելի շատ, քան միջին ամերիկացին, և նույնիսկ ավելի առատաձեռն են ժամանակի և փողի նվիրաբերման հարցում, քան Ամերիկայում կրոնասեր ժողովրդի բարձրագույն [20 տոկոսը]»:[11]

Նվիրատվության նման օրինակները զորացնում են մեզ բոլորիս: Դրանք հիշեցնում են մեզ Փրկչի ուսմունքի մասին.

«Եթե մէկը կամենում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանայ. . . .

Որովհետև ով որ իր անձը ուզէ ապրեցնել, կկորցնէ նորան, և ով որ իր անձը կորցնէ ինձ համար կգտնէ նորան» (Մատթեոս ԺԶ.24–25):

IV.

Հավանաբար, անձնուրաց ծառայության և զոհաբերության ամենածանոթ և ամենակարևոր օրինակները կատարվում են մեր

ընտանիքներում: Մայրերը նվիրվում են երեխաներ ունենալուն և նրանց դաստիարակելուն: Ամուսինները նվիրվում են իրենց կանանց և երեխաներին օգնելուն: Զոհաբերությունները, որոնք ներառում են հավերժորեն կարևոր ծառայություն մեր ընտանքներին, խիստ բազմաթիվ են և խիստ ծանոթ, որպեսզի կարիք լինի նշել:

Ես տեսնում եմ նաև անձնուրաց Վերջին Օրերի Սրբերի, ովքեր որդեգրում են երեխաներ, ներառյալ նրանց, ովքեր հատուկ կարիքներ ունեն և ձգտում են ապահովել որդեգրած երեխաներին հույսով և հնարավորություններով, որոնք մերժվել են նրանց ավելի վաղ հանգամանքներում: Ես տեսնում եմ ձեզ ընտանիքի անդամների և հարևանների մասին հոգալիս, ովքեր տառապում են ի ծնե թերություններից, մտավոր և ֆիզիկական հիվանդություններից և ծերանալու հետ կապված դժվարություններից:[12]

Ես հավատացած եմ, որ Վերջին Օրերի Սրբերը, ովքեր ցույց են տալիս անձնուրաց ծառայություն և զոհաբերություն՝ երկրպագելով մեր Փրկչին Նրան հետևելով, ավելի մեծ չափով են հարում հավերժական արժեքների, քան մարդկանց որևէ այլ խումբ: Վերջին Օրերի Սրբերը նայում են իրենց ժամանակի և միջոցների զոհաբերությունների վրա, որպես հավերժության համար իրենց կրթության և որակավորման մի մասի: Սա մի ճշմարտություն է, որը հայտնի է դարձվել *Հավատքի մասին դասախոսություններ* պարբերականում, որ «կրոնը, որը չի պահանջում բոլոր բաների զոհաբերությունը, երբեք չունի բավականաչափ ուժ առաջացնելու անհրաժեշտ հավատքը կյանքի և փրկության համար. . . . Այս զոհաբերության միջոցով է և միմիայն սրանով, որ Աստված կարգել է, որ մարդիկ պետք է հավերժական կյանք վայելեն»:[13]

Ճիշտ ինչպես Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերությունը փրկության ծրագրի կենտրոնում է, մենք՝ Քրիստոսի հետևորդներս, պետք է կատարենք մեր սեփական զոհաբերությունները, նախապատրաստվելու այն ճակատագրին, որը ծրագիրն ապահովում է մեզ համար:

Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո՝ Հավերժական Հոր Միածին Որդին է: Ես գիտեմ, որ Նրա քավող զոհաբերության շնորհիվ է, որ մենք ունենք համոզվածություն անմահության համար և հնարավորություն հավերժական կյանքի համար: Նա մեր Տերն է, մեր Փրկիչը, մեր Քավիչը և ես վկայում եմ Նրա մասին՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Bruce R. McConkie, *The Promised Messiah: The First Coming of Christ* (1981), 218.
2. «Ինչ մեծ է իմաստությունն ու սերը», *Օրհներգեր,* էջ19:
3. «Փառք տանք մարդուն», *Հիմներ և մանկական երգեր,* էջ 48:
4. Sarah Rich, in Richard E. Turley Jr. and Brittany A. Chapman, eds., *Women of Faith in the Latter Days: Volume 1, 1775–1820* (2011), 283.
5. Գորդոն Բ. Հինքլի «Մեր հավատքի խորհրդանիշը», *Լիահոնա*, ապր. 2005, 3:
6. Տես Harold G. Hillam, "Sacrifice in the Service," *Ensign,* Nov. 1995, 41–42:
7. Gordon B. Hinckley, "The Miracle of Faith," *Liahona,* July 2001, 84.
8. Gordon B. Hinckley, "It's True, Isn't It?" *Tambuli,* Oct. 1993, 3, 4; տես նաև Նիլ Լ. Անդերսեն, «Դա ճշմարիտ է այնպես չէ:՞ Ուրեմն էլ ինչ նշանակություն ունի» *Լիահոնա*, մայիս 2007, 74:
9. Թոմաս Ս. Մոնսոն, «Սուրբ տաճար՝ փարոս աշխարհին», *Liahona*, մայիս 2011, 91–92:
10. See, for example, Naomi Schaefer Riley, "What the Mormons Know about Welfare," *Wall Street Journal,* Feb. 18, 2012, A11.
11. Ram Cnaan and others, "Called to Serve: The Prosocial Behavior of Active Latter-day Saints" (draft), 16.
12. Ezra Taft Benson, "To the Single Adult Brethren of the Church," *Ensign,* May 1988, 53.
13. *Lectures on Faith* (1985), 69.

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Բարձունքներ, որ պետք է հաղթահարել

Եթե հավատք ունենք առ Հիսուս Քրիստոս, ինչպես դժվար ժամանակները, այնպես էլ հեշտ ժամանակները կյանքում կարող են օրհնություն լինել:

Ես լսել եմ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալին համաժողովի նիստին խնդրելիս, որ Աստված իրեն բարձունքներ տա, որ հաղթահարի: Նա ասաց. «Մեր առջևում մեծ մարտահրավերներ կան, հսկայական հնարավորություններ: Ես ընդունում եմ այդ հուզիչ հեռանկարը և ցանկություն եմ զգում Տիրոջն ասելու, խոնարհաբար. «Տուր ինձ այդ բարձունքը, տուր ինձ այդ մարտահրավերները»:[1]

Սիրտս թռթռում էր, գիտենալով, որ այդ մարտահրավերներից ու ձախորդություններից մի քանիսը նա արդեն տեսել էր: Ես ցանկություն էի զգում ավելի շատ նմանվել իրեն՝ Աստծո քաջարի ծառային: Այդպես, երբ մի գիշեր ես աղոթում էի, որպեսզի իմ քաջությունը փորձելու համար մի ստուգարք ունենամ: Ես վառ հիշողություն ունեմ այդ օրվա մասին: Երեկոյան ես ծնկի իջա իմ ննջասենյակում հավատքով, որից սիրտս ուզում էր պոռթկալ:

Մեկ երկու օր չանցած իմ աղոթքները պատասխանվեցին: Իմ կյանքի ամենադժվար փորձությունն անակնկալի բերեց և խոնարհեցրեց ինձ: Այն ինձ կրկնակի դաս եղավ: Առաջինը, ես հստակ ապացույց ունեի, որ Աստված լսել և պատասխանել է հավատքի իմ աղոթքին: Իսկ երկրորդը, ես սկսեցի գրել ուսուցողական մի ձեռնարկ, որը դեռևս շարունակում եմ, որպեսզի սովորեմ, թե ինչո՞ւ էի այդ երեկո այդպես համոզված, որ ձախորդությունից կգա մի օրհնություն, որն ուրիշ այլ գնով հնարավոր չէր լինի փոխհատուցել:

Ձախորդությունը, որ ինձ պատահեց վաղուց անցած այդ օրը, այժմ չնչին է թվում, նրա համեմատ, ինչ եկել է դրանից հետո՝ ինձ և իմ հարազատներին: Ձեզանից շատերն այժմ անցնում են ֆիզիկական, մտավոր և հուզական փորձություններ, որոնք ձեզ ստիպում են բացականչել, ինչպես Աստծո մի մեծ և հավատարիմ ծառա, որին լավ ճանաչել եմ: Նրա բուժքույրը սլել էր նրան իր ցավի մահճակալից բացականչելիս. «Ողջ կյանքս փորձել եմ լավը լինել, ինչո՞ւ է սա ինձ հետ պատահել»:

Գիտեք, թե Տերն այդ հարցին ինչպես պատասխանեց Ջոզեֆ Սմիթին, երբ բանտախուցում էր.

«Եվ եթե քեզ զցեն հորը կամ մարդասպանների ձեռքը, և մահվան դատավճիռն անցնի վրայովդ. եթե քեզ զցեն ջրանդունդը. եթե բարձրացող ալիքը դավ նյութի քո դեմ. եթե կատաղի քամիները դառնան քո թշնամին. եթե երկինքները մթնեն, և բոլոր տարրերը համախմբվեն՝ ճանապարհը խոչընդոտելու. և այդ ամենից բացի, եթե դժոխքի ծնոտները լայն բացեն երախը, որպեսզի քեզ կուլ տան, իմացիր, որդիս, որ այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգտի համար:

Մարդու Որդին իջել է այդ ամենից ցած: Մի՞թե դու ավելի մեծ ես, քան նա:

Հետևաբար, շարունակիր ճանապարհդ, և քահանայությունը կմնա քեզ հետ. քանզի նրանց սահմանները հաստատված են՝ նրանք չեն կարող անցնել այն: Քո օրերը հայտնի են, և քո տարիները չեն կրճատվի. հետևաբար, մի վախեցիր նրանից, ինչ կարող է անել մարդը, քանզի Աստված քեզ հետ կլինի հավիտյանս հավիտենից»:[2]

Ինձ թվում է չկա ավելի լավ պատասխան այն հարցին, թե ինչու են փորձությունները գալիս և թե ինչպես պետք է մենք արձագանքենք, քան հենց Իր Տիրոջ խոսքերը, որը մեզ համար անցել է ավելի սարսափելի փորձություններով, քան կարող ենք պատկերացնել:

Դուք հիշում եք նրա խոսքերը, երբ նա խորհուրդ տվեց, որ մենք պետք է իրեն հավատալով, ապաշխարենք.

«Հետևաբար, ես պատվիրում եմ քեզ՝ ապաշխարել,– ապաշխարիր, չլինի թե քեզ զարկեմ իմ բերանի գավազանով և իմ ցասումով և իմ բարկությամբ, և քո տառապանքները լինեն դառը,– որքան դառը, դու չգիտես, որքան սուր, դու չգիտես, այո, որքան ծանր՝ տանելու, դու չգիտես:

Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն.

Բայց, եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես.

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից

մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե ոգով,– և ես ցանկացա, որ գուցե չխմեմ դառը բաժակը և ընկրկեմ,–

Այնուամենայնիվ, փառք լինի Հորը, և ես ճաշակեցի ու ավարտեցի իմ նախապատրաստությունները մարդկանց զավակների համար»:[3]

Ես և դուք հավատք ունենք, որ փորձությունների միջով անցնելու և վեր բարձրանալու ուղին հավատալն է, որ կա «բալասան Գաղաադում»,[4] և որ Տերը խոստացել է. «Չեմ լքի քեզ»:[5] Դա այն է, ինչ մեզ ուսուցանեց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, որպեսզի օգնի մեզ և նրանց, ում մենք ճառայում ենք, միայնակ և հոգնեցուցիչ թվացող փորձությունների ժամանակ:[6]

Սակայն Նախագահ Մոնսոնը նաև իմաստուն ձևով ուսուցանել է, որ այդ խոստումների իրականության մեջ ժամանակ է պահանջվում, որ հավատքի հիմքը ձևավորվի: Ինձ պես դուք էլ հնարավոր է տեսած լինեք այդ հիմքի կարիքը ինչ-որ մեկի մահճակալի մոտ, որ պատրաստվում է դադարել մինչև վերջ համբերելու պայքարը: Եթե հավատքի հիմքը չի ձևավորվում մեր սրտում, ապա համբերելու ուժը կփշրվի:

Այսօրվա իմ նպատակն է նկարագրել այն, ինչ ես գիտեմ նրա մասին, թե ինչպես մենք կարող ենք դնել այդ անսասան հիմքը: Ես դա անում եմ մեծ խոնարհությամբ՝ երկու նպատակով: Նախ՝ այն, ինչ կասեմ, կարող է հուսալքել նրանց, ովքեր մաքառում են մեծ ձախորդությունների հետևանքով և զգում են, որ իրենց հավատքի հիմքը փշրվում է: Եվ երկրորդը՝ ես գիտեմ, որ իմ առջև երբևէ հայտնի ավելի մեծ ստուգարքներ են ընկած մինչև կյանքի վերջը: Ուստի, դեղատոմսը, որ առաջարկում եմ ձեզ, դեռևս պետք է ապացուցվի իմ անձնական կյանքում մինչև վերջ իմ համբերելով:

Երիտասարդ տարիքում ես աշխատում էի մի կապալառուի հետ, որը նոր առաձնատների համար հենարաններ ու հիմքեր էր կառուցում: Ամռան շոգին ծանր աշխատանք էր հողն այնպիսի տեսքով փորել, որը հնարավորություն կտար բետոնե հենարան կառուցել: Մեքենաներ չկային: Մենք աշխատում էինք քլունգով ու բահով: Շենքերի համար դիմացկուն հենարաններ կառուցելն այդ ժամանակ ծանր աշխատանք էր:

Այն պահանջում էր համբերություն: Հենարանի բետոնը լցնելուց հետո մենք սպասում էինք մինչև կարծրանա: Չնայած, որ շատ էինք ցանկանում, որ աշխատանքն արագ ընթանա, նախքան եզրապատերը հեռացնելը մենք նաև սպասում էինք, որ հիմքի բետոնը նույնպես կարծրանա:

Եվ նոր շինարարի համար ավելի տպավորիչ էր եզրապատերի ներսում մետաղյա ամրանների հոգնեցուցիչ և ժամանակատար աշխատանքը, որը պատրաստի հիմքին ամրություն էր տալիս:

Նմանատիպ ձևով, մեր հավատքի հիմքի համար պետք է զգուշությամբ հիմք նախապատրաստվի, որը կդիմանա յուրաքանչյուրիս կյանքում փչող փոթորիկներին: Հավատքի հիմքի այդ ամուր ելակետը անձնական շիտակությունն է:

Հետևողականորեն ճիշտը ընտրելը, ամեն անգամ, երբ մեր առջև ընտրություն է ծառանում, մեր հավատքի տակ ամուր հիմք է կառուցում: Այն կարող է սկսել մանկությունից, քանի որ յուրաքանչյուր հոգի ծնվելուց ստացել է Քրիստոսի Հոգու ազատ պարգևը: Հոգու շնորհիվ մենք կարող ենք իմանալ, երբ անում ենք մի բան, որը ճիշտ է Աստծո առաջ, և երբ անում ենք մի բան, որը սխալ է Նրա աչքին:

Այդ ընտրությունները, որոնք շատ օրեր կարող են հարյուրավոր լինել, ամուր հիմք են նախապատրաստում, որի վրա կառուցվում է մեր հավատքի շինությունը: Մետաղական շրջանակը, որի շուրջ լցվում է մեր հավատքի էությունը, Հիսուս Քրիստոսի ավետարանն է, իր բոլոր ուխտերով, արարողություններով և սկզբունքներով:

Տևական հավատքի բանալիներից մեկը անհրաժեշտ բուժիչ ժամանակը ճիշտ գնահատելն է: Ահա թե ինչու ես իմաստուն չէի,

որ այդքան շուտ իմ կյանքում աղոթում էի, որ ինձ տրվի ավելի մեծ բարձունքներ և ավելի մեծ ստուգարքներ, որ հաղթահարեմ:

Այդ բուժումը չի գալիս ինքնաբերաբար, ժամանակի հետ, այլ ժամանակ է պահանջում: Տարիք առնելը միայն հարցը չի լուծում: Լուծումը Աստծուն և մերձավորներին ծառայելն է՝ հետևողականորեն, սրտով և հոգով լի, որը ճշմարտության վկայությունը վերածում է անկոտրում հոգևոր ուժի:

Այժմ ցանկանում եմ քաջալերել նրանց, ովքեր դժվար փորձությունների մեջ են, ովքեր զգացում ունեն, թե անախորժությունների հարձակումների ներքո իրենց հավատքը մարում է: Անախորժությունն իրենով կարող է ամրապնդվելու և, ի վերջո, անսասան հավատք ձեռք բերելու ձեր ուղին լինել: Մորմոնի Գրքում Մորմոնի որդի Մորոնին մեզ պատմել է, թե ինչպես կարող է այդ օրհնությունն իրականանալ: Նա ուսուցանում է պարզ և քաղցր ճշմարտությունը, որ հավատքի մի ոստի վրա աշխատելն անգամ Աստծուն թույլ է տալիս աճեցնել այն.

«Եվ այժմ, ես՝ Մորոնիս, կկամենայի որոշ բան խոսել այս բաների վերաբերյալ. ես կկամենայի ցույց տալ աշխարհին, որ հավատքը բաներ են, որոնց համար հույս ունենք և չենք տեսնում. ուստի, մի վիճեք, եթե դուք չեք տեսնում, քանզի նախքան ձեր հավատքի փորձությունը, դուք վկայություն չեք ստանում:

Քանզի հավատքով էր, որ Քրիստոսն իրեն ցույց տվեց մեր հայրերին մեռելներից հարություն առնելուց հետո. և նա իրեն ցույց չտվեց նրանց, մինչև նրանք հավատք չունեցան առ նա. ուստի, անպայման անհրաժեշտ էր, որ ոմանք հավատք ունենային առ նա, քանի որ նա իրեն ցույց չէր տվել աշխարհին:

Բայց մարդկանց հավատքի պատճառով նա իրեն ցույց տվեց աշխարհին, և փառավորեց Հոր անունը, և պատրաստեց մի ուղի, որպեսզի դրա միջոցով մյուսները երկնային պարգևի ճաշակողներ լինեին, որպեսզի նրանք հուսային այն բաների համար, որոնք նրանք չէին տեսել:

Ուստի, դուք նույնպես կարող եք հույս ունենալ և այդ պարգևի ճաշակողներ լինել, եթե միայն հավատք ունենաք»:[7]

Հավատքի այդ մասնիկը, որը ամենաարժեքավորն է, և որը դուք պետք է պահպանեք և օգտագործեք ինչ աստիճանի, որ կարող եք, հավատքն է առ Տեր Հիսուս Քրիստոս: Մորոնին ուսուցանել է այդ հավատքի ուժի մասին հետևյալ ձևով. «Եվ ոչ էլ երբևէ որևէ մեկը հրաշքներ է գործել, նախքան իր հավատքը. ուստի, նրանք առաջինը հավատացին Աստծո Որդուն»:[8]

Ես զրուցել եմ մի կնոջ հետ, որը ստացել էր աներևակայելի կորուստներին դիմանալու բավականաչափ ուժի հրաշքը պարզապես կարողանալով անվերջ կրկնել այս խոսքերը. «Գիտեմ, Քավիչս ապրում է»:[9] Այդ հավատքը և վկայության այդ խոսքերը դեռևս այնտեղ է՝ մշուշում, որը ստվերել է, սակայն չի ջնջել նրա մանկության հիշողությունները:

Ինձ ապշեցրել է մեկ այլ կին, որը ներել էր մի մարդու, որը տարիներ շարունակ իրեն վատություն էր արել: Ես զարմացած հարցրեցի, թե ինչու է նա ընտրել ներել և մոռանալ տարիների ոխակալ վիրավորանքը:

Նա հանգիստ ասաց. «Դա ամենադժվար բանն էր, որ երբևէ ես արել եմ, սակայն ես պարզապես զգում էի, որ պետք է անեմ դա: Այնպես որ ներեցի»: Նրա հավատքը, որ եթե ների ուրիշներին, ապա Փրկիչը կների իրեն, նրան նախապատրաստեց խաղաղության զգացումով և հույսով, երբ իր չապաշխարած թշնամուն ներելուց մի քանի ամիս անց նա դիմավորեց մահվանը:

Նա հարցրեց ինձ. «Երբ գնամ երկինք, ինչպիսի՞ն կլինի այն»:

Ես ասացի. «Տեսնելով հավատք գործադրելու և ներելու քո ունակությունը, պարզապես գիտեմ, որ դա կլինի հրաշալի տունդարձ»:

Մեկ այլ քաջալերանքի խոսք ունեմ նրանց համար, ովքեր մտահոգված են, թե արդյոք նրանց հավատքն առ Հիսուս Քրիստոս բավական կլինի, որպեսզի նրանք լավ համբերեն մինչև վերջ: Ես օրհնված եմ եղել ճանաչելու ձեզանից ոմանց, ովքեր հիմա լսում են, երբ դուք երիտասարդ էիք, կենսունակ, որ ձեզ ավելի շատ էր տրված, քան ձեր շրջապատի մարդկանցից շատերին, այնուամենայնիվ, դուք ընտրեցիք անել այն, ինչ Փրկիչը կաներ: Ձեր առատությունից դուք գտաք

Սան Պաուլո, Բրազիլիա

ուղիներ՝ օգնելու և հոգալու նրանց մասին, ում դուք այլ դեպքում կանտեսեիք, բարձրից կնայեիք ձեր կյանքում:

Երբ ծանր փորձությունները գան, լավ համբերելու հավատքը տեղում կլինի, որը ձևավորվել է աննկատ, այն ժամանակ, երբ գործել եք Քրիստոսի մաքուր սիրով՝ ծառայելով և ներելով մյուսներին, ինչպես որ Փրկիչը կաներ: Դուք հավատքի հիմք եք կառուցել սիրելով, ինչպես Փրկիչը սիրեց, և Նրա համար ծառայելով: Նրա հանդեպ ձեր հավատքն առաջնորդեց գթության գործերի, որը հույս կբերի ձեզ:

Հավատքի հիմքը ամրացնելը երբեք ուշ չէ: Միշտ էլ ժամանակ կա: Փրկչի հանդեպ հավատքով դուք կարող եք ապաշխարել և ներում խնդրել: Կա մեկը, ում կարող եք ներել: Կա մեկը, ում կարող եք շնորհակալություն հայտնել: Կա մեկը, ում կարող եք ծառայել և բարձրացնել: Դուք կարող եք դա անել, որտեղ էլ լինեք և որքան էլ միայնակ կամ մեկուսի զգաք:

Ես չեմ կարող խոստանալ, որ այս կյանքում ձեր ձախորդությունները կվերջանան: Ես չեմ կարող ձեզ հավաստիացնել, որ ձեր փորձությունները ձեզ փոքր կթվան: Կյանքի փորձությունների բնութագիրներից մեկն այն է, որ նրանք կարծես դանդաղեցնում են ժամանակը, իսկ հետո, կարծես, գրեթե կանգնեցնում:

Դրա համար կան պատճառներ: Այդ պատճառներն իմանալը կարող է շատ մխիթարություն չտան, բայց ձեզ կարող են համբերության զգացում պարգևել: Այդ պատճառները գալիս են այս մեկ փաստից. Իրենց կատարյալ սիրուց ելնելով, Երկնային Հայրը և Փրկիչը ցանկանում են, որ դուք պատրաստ լինեք Նրանց հետ ընտանիքներով հավերժ ապրելու: Այնտեղ կարող են լինել միայն նրանք, ովքեր կատարելապես մաքրվել են Հիսուս Քրիստոսի Քավությամբ:

Իմ մայրը մոտ տաս տարի պայքարել է քաղցկեղի դեմ: Նրա փորձությունների թվում էին բուժումները, վիրահատությունները և, ի վերջո, մահճակալին գամվելը:

Հիշում եմ, թե ինչպես հայրս ասաց, երբ նայում էր մայրիկիս վերջին շունչը տալիս. «Փոքրիկ աղջիկը գնաց տուն հանգստանալու»:

Նրա թաղման խոսնակներից մեկը Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն էր: Հարգանքի տուրքի խոսքերից մեկը, որ հիշում եմ, մոտավորապես այսպես էր. «Ձեզանից ոմանք գուցե մտածեն, որ Միլդրեդն այդքան ժամանակ տառապեց, որովհետև ինչ-որ սխալ էր կատարել, որի համար պետք է չարչարվեր»: Ապա նա ասաց. «Ո՛չ, դա այն պատճառով էր, որ Աստված պարզապես ցանկանում էր նրան մի քիչ էլ հոկելով լավացնել»: Ես հիշում եմ այդ ժամանակ մտածեցի. «Եթե այդքան լավ կինը այդքան հոկվելու կարիք ուներ, ի՞նչ է ինձ սպասվում»:

Եթե հավատք ունենք առ Հիսուս Քրիստոս, ինչպես դժվար ժամանակները, այնպես էլ հեշտ ժամանակները կյանքում կարող են օրհնություն լինել: Բոլոր պայմաններում մենք կարող ենք ընտրել ճիշտը Հոգու առաջնորդությամբ: Մենք ունենք Հիսուս Քրիստոսի ավետարանը, որը եթե ընտրենք, կձևավորի և կառաջնորդի մեր կյանքը: Եվ մարգարեների հետ, որոնք հայտնում են փրկության ծրագրում մեր տեղը, մենք կարող ենք ապրել կատարյալ հույսով և խաղաղության զգացումով: Եվ մենք երբեք կարիք չունենք մտածելու, եր միայնակ ենք կամ սիրված չենք Տիրոջ ծառայության մեջ: Մենք կարող ենք զգալ Աստծո սերը դրա համար: Փրկիչը մեզ խոստացել է, որ հրեշտակները կլինեն մեր ձախ կողմում և մեր աջ կողմում, որպեսզի մեզ բարձրացնեն:[10] Եվ Նա միշտ հավատարիմ է իր խոսքին:

Ես վկայում եմ, որ Հայր Աստվածն ապրում է, և որ Նրա Սիրելի Որդին մեր Քավիչն է: Սուրբ Հոգին հաստատում է ճշմարտությունը այս համաժողովի ժամանակ և կրկին կհաստատի, եթե դուք փնտրեք, երբ լսեք, և ավելի ուշ, երբ դուք ուսումնասիրեք այստեղ գտնվող Տիրոջ լիազորված ծառաների ուղերձները: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Տիրոջ մարգարեն է ողջ աշխարհի համար: Տերը հոգում է ձեր մասին: Հայր Աստվածն ապրում է: Նրա Սիրելի Որդին, Հիսուս Քրիստոսը, մեր Քավիչն է: Նրա սերը հաստատուն է: Ես վկայում եմ այդ մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Spencer W. Kimball, “Give Me This Mountain,” *Ensign,* Nov. 1979, 79.
2. Վարդապետություն և Ուխտեր 122.7–9:
3. Վարդապետություն և Ուխտեր 19.15–19:
4. Երեմիա 46:
5. Հեսու Ա.5:
6. Տես Thomas S. Monson, “Look to God and Live,” *Ensign,* May 1998, 52–54:
7. Եթեր 12.6–9:
8. Եթեր 12.18:
9. «Գիտեմ ապրում է Փրկիչն իմ», *Հիմներ և մանկական երգեր,* էջ 38:
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.88:

Ներկայացրեց Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատումը

Առաջարկվում են հաստատման Թոմաս Սպենսեր Մոնսոնը որպես մարգարե, տեսանող և հայտնող, և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ; Հենրի Բեննիոն Այրինգը որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆը որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, կարող են քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Բոյդ Քեննեթ Փաքերը որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, և հետևյալ անձինք որպես այդ քվորումի անդամներ՝ Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն և Նիլ Լ. Անդերսեն:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդականները և Տասներկու Առաքյալները որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, արտահայտեք նույն կերպ:

Երեց Սթիվեն Ե. Մնոուն ազատվել է Յոթանասունի Քվորումների Նախագահության անդամի պաշտոնից:

Ովքեր կարող են միանալ մեզ և երախտագիտություն հայտնել, խնդրում ենք, քվեարկել:

Առաջարկվում է հաստատման Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզը որպես Յոթանասունի ՔվորումներիՆախագահության անդամ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Դե՞մ:

Առաջարկվում է երախտագիտության քվեով ազատել Երեց ալդ Կոսեին և Գարի. Սթիվենսոնին որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամներ:

Բոլորն ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Տարիների հավատարիմ և արդյունավետ ծառայությունից հետո, առաջարկվում է ազատել Եպիսկոպոս Հ. Դեյվիդ Բրրթընին, Ռիչարդ Ս. Էդգլիին և Քեյթ Բ. Մաքմալինին որպես Նախագահող Եպիսկոպոսություն և նշանակել նրանց պատվավոր Բարձրագույն Իշխանավորներ:

Ովքեր կարող են միանալ մեզ երախտագիտության քվեով, խնդրում ենք արտահայտել դա:

Առաջարկվում է ազատել հետևյալ Տարածքային Յոթանասունականներին 2012թ. մայիսի 1-ից.

Ռիչարդ Կ. Ահաղջի, Կլիմատո Ս. Ալմեյդա, Ֆեռնանդո Ջ. Դ. Առաուջո, Մերվին Տ. Բրինկերհոֆ, Մարիո Լ. Կարլոս, Ռաֆայել Ի. Կաստրո, Դեյվիդ Լ. Քուք, Սեզար Ա. Դավիլա, Մոսիա Ս. Դելգադո, Լուիս Գ. Դուարտե, Խուան Ա. Էթչգարեյ,

Սթեֆեն Լ. Ֆլաքիջեր, Ջ. Ռոջեր Ֆլաման, Ռոբերտ . Գեյ, Միգել Հիդալգո, Գարիթ Ս. Հիլ, Դեյվիդ Ջ. Հոար, Դեյվիդ Հ. Ինգրեմ, Տեցուջի Իշի, Կապումբա Թ. Կոլա, Գլենդոն Լայընս, Ռ. Բրուս Մերել, Էնրիկ Ջ. Մոնտոյա, Դենիել Ա. Մորենո, Ադեսինա Ջ. Օլուկանի, Գամալիել Օսորնո, Պատրիկ Հ. Փրայս, Մարկոս Ա. Պրիետո, Պաուլո Ռ. Պուերտա, Կարլոս Ֆ. Ռիվաս, Ա. Ռիկարդո Սանտանա, Ֆաբիան Լ. Սինամբան, Նատա Ս. Տոբիաս, Սթենլի Վան, Փերի Մ. Վեբ, Ռիչարդ Վ, Վիլեր, Սքոթ Դ. Վայթինգ:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս եղբայրների հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում է անկեղծ երախտագիտության քվերով ազատել Քույրեր Ջուլի Բ. Բեքին, Միլվիա Հ. Ալրեդին և Բարբարա Թոմսոնին որպես Սփոփող Միության գերագույն նախագահություն:

Նմանապես մենք ազատում ենք Սփոփող Միության գերագույն խորհրդի անդամներին:

Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս քույրերին իրենց գերազանց ծառայության և նվիրման համար, խնդրում ենք արտահայտել դա:

Առաջարկվում են հաստատման որպես Յոթանասունի Առաջին Քվորումի նոր անդամներ՝ Քրեյգ Ա. Քարդոնը, Սթենլի Գ. Էլիսը, Լարի Էքո Հոքը, Ռոբերտ . Գեյը և Սքոթ Դ. Վայթինգը:

Ովքեր կողմ են, խնդրում ենք, քվեարկել:

Ովքեր դեմ են, նույն նշանով:

Առաջարկվում են հաստատման Գարի . Սթիվենսոնը որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահող Եպիսկոպոս, ալդ Կոսեն որպես Առաջին Խորհրդական և Դին Մայրոն Դեյվիսը որպես Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք, քվեարկել:

Դե՞մ:

Առաջարկվում են հաստատման հետևյալ անձինք որպես նոր Տարածքային Յոթանասունականներ՝

Պեդրո Ու. Ադուրու, Դեսլեֆ Հ. Ադլեր, Էնջել Հ. Ալարկոն,

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Դե՞մ:

Առաջարկվում են հաստատման Լինդա Քյար Բրրթրնը որպես Սփոփող Միության գերագույն նախագահ, Քերոլ Մանզել Սթենսը որպես առաջին խորհրդական և Լինդա Շեֆիլդ Ռիվսը որպես երկրորդ խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանավորները, Տարածքային Յոթանասունականները, և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Նախագահ Մոնսոն, մինչ այժմ իմ դիտարկումներով, քվեարկությունը համաժողովների կենտրոնում անցավ միաձայն:

Եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր հաստատող ձայնի և ձեր մշտական հավատքի, նվիրման և աղոթքների համար:

Մենք հրավիրում ենք նոր կանչված Գերագույն Իշխանավորներին և Սփոփող Միության գերագույն նախագահությանը առաջ գալ և զբաղեցնել իրենց տեղերը բեմահարթակում: ■

Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2011թ.

Ներկայացրեց Ռոբերտ Վ. Քանթվելը
Եկեղեցու աուդիտի բաժնի գլխավոր տնօրեն

Ուղղված է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությանը

Հարգելի Եղբայրներ, ինչպես ասվում է Վարդապետություն և Ուխտերի 120-րդ բաժնում տրված հայտնության մեջ, Եկեղեցու ֆոնդերի ծախսերը թույլատրում է Տասանորդների տնօրինման խորհուրդը: Այդ խորհուրդը կազմված է Առաջին Նախագահությունից, Տասներկու Առաքյալների Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից:

Այս խորհուրդն է հաստատում Եկեղեցու բաժինների և գործունեության բյուջեները: Եկեղեցու բաժինները ծախսում են ֆոնդերը ըստ հաստատված բյուջեների և համաձայն Եկեղեցու քաղաքականությանը ու ընթացակարգերի:

Եկեղեցու աուդիտի բաժնին թույլատրված է օգտագործել այն բոլոր տվյալներն ու համակարգերը, որոնք անհրաժեշտ են ֆոնդերի անդորրագրերի, ծախսերի, ինչպես նաև Եկեղեցու ունեցվածքի պահպանման ուղղությամբ՝ համապատասխան վերահսկողությունը գնահատելու համար: Եկեղեցու աուդիտի բաժինը գործում է Եկեղեցու մյուս բաժիններից և գործունեությունից անկախ, աշխատակազմը բաղկացած է հավաստագրյալ հանրային հաշվապահներից, ներքին հավաստագրյալ հաշվեստուգիչներից, հավաստագրյալ տեղեկատու համակարգերի հաշվեստուգիչներից և որակավորում ունեցող ու փորձառու այլ մասնագետներից:

Հիմնվելով կատարված հաշվեստուգումների վրա, Եկեղեցու աուդիտի բաժինն այն կարծիքին է, որ բոլոր նյութական հարցերին առնչվող 2011թ. ստացված նվիրատվությունները, կատարված ծախսերը և Եկեղեցու նյութական ունեցվածքը գրանցվել և տնօրինվել են համապատասխան հաշվապահական գործառնությունների, հաստատված բյուջեի և Եկեղեցու քաղաքականության և ընթացակարգերի համաձայն:

Հարգանքով ներկայացրեց,
Եկեղեցու աուդիտի բաժին
Ռոբերտ Վ. Քանթվել
Գլխավոր տնօրեն ■

Վիճակագրական հաշվետվություն, 2011թ.

Ներկայացրեց Բրուք Պ. Հեյլսը
Առաջին Նախագահության Քարտուղար

Հզիտություն Եկեղեցու անդամների, Առաջին Նախագահությունը հրապարակել է Եկեղեցու աճի և կարգավիճակի վերաբերյալ հետևյալ վիճակագրական հաշվետվությունը՝ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Եկեղեցու միավորներ

Ցցեր	2946
Միսիաներ	340
Շրջաններ	608
Ծխեր և ճյուղեր	28784

Եկեղեցու անդամների թիվը

Անդամների ընդհանուր թիվը	14441346
2011թ. Եկեղեցում գրանցված նոր երեխաներ	119917
2011թ. մկրտված նորադարձներ	281312

Միսիոներներ

Լիաժամկետ միսիոներներ	55410
Եկեղեցու ծառայության մեջ գտնվող միսիոներներ	22299

Տաճարներ

2011թ. նվիրագործված տաճարներ (Սան Սալվադոր Էլ Սալվադոր և Քվեցալթենդանգո Գվատեմալա)	2
2011թ. վերանվիրագործված տաճարներ (Ատլանտա Ջորջիա)	1
Գործող տաճարներ	136

Եկեղեցու նախկին Բարձրագույն Իշխանություններ և այլոք, ովքեր մահացել են անցյալ տարվա ապրիլի գերագույն համաժողովից հետո

Երեցներ Մերիոն Դ. Հենքս, Ջեկ Հ. Գոսլինդ Կրուս., Մոնթե Ջ. Բրաու, Ռոնալդ Ի. Փոլման, Քեյթ Վ. Վիլքոքս և *Հարոլ Գ. Հիլամ*՝ բոլորն էլ Յոթանասունի Քվորումների նախկին անդամներ; *Քույր Ջոյ Ֆ. Էվանս* և *Չիկո Ն. Օկասակի*՝ Սփոփող Միության գերագույն նախագահության նախկին խորհրդականներ; *Քույր Նորմա Վոլոյ Սոնթագ*՝ պատվավոր Յոթանասունի նախկին անդամ Երեց Ֆիլիպ Տ. Սոնթագի կինը; *Քույր Լիոլա Ջորջ*՝ Յոթանասունի նախկին անդամ Երեց Լլոյդ Պ. Ջորջի այրին, *Քույր Արգելիա Վիլանուեվա դե Ալվարեզ*՝ Յոթանասունի նախկին անդամ, Երեց Լինո Ալվարեզի կինը; և *Եղբայր Վենդել Մ. Սմոթ Կրուս.*՝ Թաբերնաքլի երգչախմբի նախկին տնօրեն: ■

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Այգու մշակները

Խնդրում ենք լսեք Սուրբ Հոգու հուշումներին, որոնք ասում են հենց այժմ, հենց այս պահին, որ դուք պետք է ընդունեք Տեր Հիսուս Քրիստոսի քավող պարգևը:

Առաջին Նախագահության հենց նոր հայտարարած կոչումների և ազատումների լույսի ներքո ես կկամենայի խոսել բոլորի համար՝ ասելով, որ մենք կհիշենք և կսիրենք միշտ նրանց, ովքեր այնքան հավատարմորեն ծառայել են, ճիշտ ինչպես որ մենք անմիջապես սիրում և ողջունում ենք նրանց, ովքեր եկել են տարբեր պաշտոններում ծառայելու այժմ: Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ձեզ բոլորիդ:

Ես ցանկանում եմ խոսել Փրկչի առակի մասին, որում մի տանուտեր «առավօտանց կանուխ դուրս եկավ իր այգու համար մշակներ բռնելու»: Առաջին խմբին առավոտյան ժամը 6.00-ից աշխատեցնելուց հետո նա վերադարձավ առավոտյան ժամը 9.00-ին, կեսօրին՝ ժամը 12.00-ին և կեսօրից հետո՝ ժամը 3.00- ին, որպեսզի ավելի շատ մշակներ վարձեր, քանի որ բերքահավաքի անհետաձգելիությունը մեծանում էր: Սուրբ գիրքն ասում է, նա ետ եկավ վերջին անգամ «ժամը տասնեմեկերորդին մոտ» (մոտավորապես երեկոյան ժամը 5-ին) և վարձեց վերջին խմբին: Ապա հենց մեկ ժամ անց, բոլոր մշակները հավաքվեցին ստանալու իրենց օրական աշխատավարձը: Զարմանալիորեն բոլորը ստացան *նույն* աշխատավարձը, չնայած աշխատած ժամերի տարբերությանը: Նրանք, ովքեր վարձվել էին առաջինը, անմիջապես զայրացան, ասելով. «Այդ յետինները մեկ ժամ գործեցին, եւ դորանց մեզ հետ հաւասար արիր, որ օրի ծանրութիւնը եւ տաքութիւնը քաշեցինք»:[1] Գուցե կարդալով այս առակը, այդ մշակների նման դուք էլ եք զգացել, որ այդտեղ անարդարություն կար: Թույլ տվեք հակիրճ խոսել այդ մտահոգության վերաբերյալ:

Նախնառաջ կարևոր է նշել, որ *ոչ մեկին* անազնվորեն չվերաբերվեցին այստեղ: Առաջին մշակները համաձայնվեցին ողջ օրվա աշխատավարձին և ստացան այն: Բացի այդ կարող եմ պատկերացնել, թե նրանք որքան երախտապարտ էին, որ աշխատանք ստացան: Փրկչի ժամանակներում միջին հաշվով մարդն ու իր ընտանիքը չէին կարող գործել ավելի, քան ապրել նրանով, ինչ վաստակում էին տվյալ օրը: Եթե դուք չէիք աշխատել կամ հող մշակել, ձուկ որսացել կամ էլ վաճառել, դուք, հավանաբար, ուտելիք չէիք ունենա: Քանի որ աշխատուժի առաջարկն ավելի շատ էր, քան աշխատատեղերի պահանջարկը, այդ առավոտյան առաջինն ընտրված այս տղամարդիկ ամենահաջողակն էին ողջ աշխատուժի մեջ:

Իրականում, եթե որևէ կարեկցանքի արժանի մարդիկ կային, դա առաջինը նրանք էին, ովքեր *չէին* ընտրվել, ովքեր նույնպես կարիք ունեին բերաններ կերակրելու և հագուստներ ապահովելու: Բախտը կարծես երբեք չէր ժպտում նրանցից մի քանիսին: Տանուտերի յուրաքանչյուր այցի ժամանակ նրանք միշտ տեսնում էին, թե ինչպես մեկ ուրիշն էր ընտրվում:

Բայց հենց օրվա ավարտին մոտ, տանուտերը վերադարձավ զարմանալիորեն հինգերորդ անգամ տասնմեկերորդ ժամի նշանավոր առաջարկով: Մշակներից այս վերջինները և ամենահուսահատվածները լսելով միայն, որ իրենց հետ ազնվորեն կվարվեն, ընդունեցին աշխատանքն առանց նույնիսկ իմանալու աշխատավարձը, իմանալով, որ *ինչ-որ բանը* ավելի լավ է, քան ոչ մի բանը, որն այն էր, ինչ նրանք մինչև այդ ունեցել էին: Հետո, երբ նրանք հավաքվեցին իրենց վճարը ստանալու, նրանք ապշահար եղան՝ ստանալով նույնը, ինչպես բոլոր մյուսները: Նրանք պետք է որ մեծ ակնածանքով լցվեին և անչափ շատ երախտապարտ լինեին: Իհարկե, երբեք այդպիսի կարեկցանք ցույց չէր տրվել բոլոր իրենց աշխատած օրերում:

Պատմության այս ըմբռնմամբ է, որ առաջին մշակների տրտնջալը պետք է հասկացվի: Ինչպես առակի տանուտերն ասաց նրանց (և ես միայն թեթևակիորեն եմ ձևափոխում). «Ընկերներ, ես անազնիվ չեմ եղել ձեր հանդեպ: Դուք համաձայնվեցիք օրավարձին, դա լավ աշխատավարձ էր: Դուք երջանիկ էիք աշխատանք ստանալու համար, և ես էլ շատ գոհ եմ ձեր ծառայությունից: Դուք լիովին վճարվել եք: Վերցրեք վճարը և վայելեք օրհնությունը: Ինչ վերաբերում է մյուսներին, *անկասկած, ես կարող եմ իմ փողի հետ վարվել ինչպես կկամենամ»:* Ապա այս սուր հարցը ուղղված նրանց բոլոր ժամանակներում, ովքեր կարիք ունի լսելու այն. «*Ինչո՞ւ պետք է* դուք *նախանձեք,*

որովհետև ես *նախընտրում եմ բարի լինել»:*

Եղբայրներ և քույրեր, մեր կյանքում կարող են լինել ժամանակներ, երբ ինչ-որ մեկը անսպասելի օրհնություն է ստանում կամ որևէ հատուկ հավանության է արժանանում: Կարո՞ղ եմ խնդրել ձեզ չվիրավորվել և իհարկե չնախանձել, երբ բախտը ժպտում է մեկ ուրիշին: Մեզանից չի պակասում, երբ մեկ ուրիշին ավելին է տրվում: Մենք մրցակցության մեջ չենք միմյանց հետ, տեսնելու թե ով է ամենահարուստը, ամենատաղանդավորը, ամենագեղեցիկը կամ ամենաօրհնվածը: Մրցակցությունը, որն *իրականում* առկա է, մրցակցությունն է մեղքի դեմ, և իհարկե, նախանձն ամենատարածված մեղքերից մեկն է:

Բացի այդ, նախանձը մի սխալ է, որն անընդհատ շարունակում է կրկնվել: Ակնհայտորեն, մենք մի քիչ տառապում ենք, երբ ինչ-որ *անհաջողություն* է պատահում *մեզ,* բայց նախանձը պահանջում է մեզանից տառապել բոլոր *հաջողությունների* համար, որոնք պատահում են մեր իմացած *ամեն մեկին:* Ինչպիսի պայծառ հեռանկար՝ շատ դժբախտ զգալ ամեն անգամ, երբ մեր շրջապատում ինչ-որ մեկը երջանիկ պահ է ապրում: Շատ ավելի նեղսրտություն կզգանք վերջում, երբ մենք տեսնենք, որ Աստված և արդար է և ողորմած, բոլոր Իրեն հետևողներին տալով «իր բոլոր ստացվածքները»,[2] ինչպես սուրբ գրությունն է ասում: Այսպիսով, դաս համար մեկ Տիրոջ այգուց՝ տենչալը, խռովելը կամ ուրիշներին վիրավորելը *չի* բարձրացնում *ձեր* դիրքը, ոչ էլ ինչ-որ մեկին նվաստացնելը բարելավում է ձեր ինքնագնահատականը: Այսպիսով, եղեք բարի և եղեք երախտապարտ, որ Աստված բարի է: Սա երջանիկ ապրելակերպ է:

Երկրորդ կետը, որ ես կկամենայի նշել այս առակից այն տխուր սխալն է, որը կարող են որոշ մարդիկ թույլ տալ, եթե նրանք հրաժարվում են ստանալ իրենց աշխատավարձի ստացականը օրվա *վերջում,* որովհետև նրանք անհանգստացած են եղել



որոշ բաների պատճառով, որոնք իրենց թվացել են խնդիրներ օրվա *սկզբում:* Այստեղ չի ասվում, որ ինչ-որ մեկը շպրտեց իր մետաղադրամները տանուտերի դեմքին և բարկացած հեռացավ առանց մի կոպեկի, բայց ենթադրում եմ, որ ինչ-որ մեկը գուցեև այդպես արած լինի:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, այն ինչ պատահեց այս պատմության մեջ ժամը 9.00-ին, կեսօրին կամ ժամը 3.00-ին կարևոր չէ, օրվա վերջում համընդհանուր առատաձեռն վճարի համեմատությամբ: Հավատքի բանաձևն է դիմանալ, շարունակել աշխատել, ձգտել ավարտին հասցնել և թույլ տալ, որ նախկին մտահոգությունը՝ իրական, թե մտացածին, փարատվի վերջնական պարգևի առատությամբ: Մի շարունակեք մտածել հին խնդիրների, կամ բողոքների մասին, ոչ ձեր հանդեպ, ոչ ձեր մերձավորի ոչ էլ նույնիսկ, ես կավելացնեի, այս ճշմարիտ և կենդանի Եկեղեցու հանդեպ: Ձեր կյանքի, ձեր մերձավորի կյանքի և Հիսուս Քրիստոսի ավետարանի փառահեղությունը ցույց կտրվի վերջին օրը, նույնիսկ, եթե սկզբում այդ փառահեղությունը միշտ չի, որ ճանաչվել է ամենքի կողմից: Այսպիսով, մի նեղսրտեք մի բանի մասին, որը պատահել է առավոտյան ժամը 9.00-ին, եթե Աստծո շնորհը փորձում է պարգևատրել ձեզ երեկոյան ժամը 6.00-ին, ինչպիսին էլ որ ձեր աշխատանքային պայմանները եղած լինեն օրվա ընթացքում:

Մենք սպառում ենք այնպիսի թանկարժեք զգացմունքային և հոգևոր կապիտալ՝ համառորեն փորփրելով հիշողության մեջ մանկության ժամանակ դաշնամուրի վրա նվագած մենահամերգի որևէ անդուր երաժշտական նոտա, կամ 20 տարի առաջ կողակցի ասած կամ արած ինչ-որ բան, որը մենք որոշել ենք պահել մեր գլխում ևս 20 տարի, կամ դեպք Եկեղեցու պատմությունից, որի միջոցով պարզվեց ոչ ավել, ոչ պակաս, որ մահկանացուները միշտ էլ կդժվարանան համապատասխանել իրենց առջև դրված անմահության չափանիշներին: Եթե նույնիսկ այդ դժգոհությունները ձեր մեջ չեն առաջացել, դրանք կարող են ձեզանով վերջանալ: Եվ որքան մեծ կլինի պարգևը այդ ներդրումի համար, երբ այգու Տերը կնայի ձեր աչքերի մեջ և բոլոր հաշիվները կկարգավորվեն մեր երկրային օրվա վերջում:

Որը և տանում է ինձ դեպի իմ երրորդ և վերջին հարցը: Այս առակը, ինչպես բոլոր առակները, իրականում մշակների կամ աշխատավարձերի վերաբերյալ չեն, ինչպես մյուսների դեպքում, որոնք ոչխարների և այծերի մասին չեն: Սա պատմություն է Աստծո բարության մասին, Նրա համբերության և ներողամտության և Տեր Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Սա պատմություն է առատաձեռնության և կարեկցանքի մասին: Սա պատմություն է շնորհքի մասին: Սա ընդգծում է այն միտքը, որ ես լսել եմ շատ տարիներ առաջ, որ հաստատ այն բանը, որիցԱստված ամենաշատն է բավականություն ստանում Աստված լինելուց՝ ողորմած լինելու հրճվանքն է, հատկապես նրանց հանդեպ, ովքեր չեն սպասում այդ և հաճախ զգում են, որ իրենք արժանի չեն դրան:

Ես չգիտեմ, թե ով է այս վիթխարի լսարանում այսօր կարիք զգում լսելու ներման ուղերձը, որը ներհատուկ է այս առակին, բայց

որքան էլ կարծում եք, որ ուշացել եք, որքան էլ կարծում եք, որ բաց եք թողել հնարավորությունները, որքան էլ որ շատ սխալներ գործած լինեք՝ ըստ ձեզ, կամ կարծում եք թե տաղանդներ չունեք, կամ տնից և ընտանիքից ու Աստծուց հեռացած եք զգում, ես վկայում եմ, որ դուք *չեք* հեռացել աստվածային սիրո հասանելիությունից: Ձեզ համար հնարավոր չէ սուզվել ավելի խորը, քան Քրիստոսի Քավության անսահման լույսն է շողում:

Եթե դուք դեռ մեր հավատքից չեք կամ մի ժամանակ մեր հետ եք եղել և չեք մնացել, ամեն դեպքում չկա մի բան, որ դուք արած լինեք, որը հնարավոր չլինի լուծել: Չկա խնդիր, որը դուք չկարողանաք հաղթահարել: Չկա երազանք, որ ժամանակներ անցնելուց հետո և հավերժության մեջ դեռ հնարավոր չլինի իրականացնել: Եթե նույնիսկ դուք զգում եք, որ կորած եք և տասնմեկերորդ ժամի վերջին մշակն եք, այգու Տերը դեռևս կանգնած նշան է անում ձեռքով՝ «Համարձակությունով մոտեցեք շնորհքի աթոռին»,[3] և ընկեք Իսրայելի Սուրբի ոտքերը: Եկեք և խրախճանք արեք Տիրոջ սեղանի մոտ «առանց փողի և առանց վճարի»:[4]

Ես հատկապես կոչ եմ անում ամուսիններին և հայրերին, քահանայություն կրողներին, ինչպես Լեքին է ասել. «Զարթնեք և բարձրացեք փոշուց և . . . տղամարդ եղեք»:[5] Ոչ միշտ, բայց հաճախ, տղամարդիկ են, որ ընտրում են չպատասխանել «եկեք միացեք շարքերին»[6] կոչին: Հաճախ կանայք և երեխաներն ավելի հոժարակամ են թվում: Եղբայրնե՛ր, գործի անցեք: Արեք դա հանուն ձեզ: Արեք դա հանուն նրանց, ովքեր սիրում են ձեզ և աղոթում են, որ դուք արձագանքեք: Արեք դա հանուն Տեր Հիսուս Քրիստոսի, որը վճարեց անսահման գին այն ապագայի համար, որ Նա կամենում է ձեզ համար:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ձեզանից նրանք, ովքեր օրհնվել են ավետարանով շատ տարիների ընթացքում, որովհետև դուք բավականին բախտավոր եք եղել այն վաղ գտնելու համար, ձեզանից նրանք, ովքեր եկել են դեպի ավետարանը աստիճանաբար և փուլերով ավելի ուշ, և ձեզանից նրանք՝ անդամներ և դեռ ոչ անդամներ, ովքեր դեռևս ետ են մնում, ձեզանից յուրաքանչյուրին, ձեզ բոլորիդ ես վկայում եմ Աստծո սիրո նորոգող զորության մասին և Նրա շնորհի հրաշքի մասին: *Նրա մտահոգությունը ձեր հավատքի համար է, որին դուք ի վերջո կհասնեք, ոչ թե օրվա ժամի համար, որի ընթացքում դուք ձեռք բերեցիք այն:*

Այսպիսով, եթե դուք ուխտեր եք կապել, պահեք դրանք: Եթե չեք կապել, կապեք: Եթե ուխտեր եք կապել և խախտել եք դրանք, ապաշխարեք և նորոգեք դրանք: *Երբեք* շատ ուշ չէ, քանի դեռ այգու Տերն ասում է՝ ժամանակ կա: Խնդրում ենք լսեք Սուրբ Հոգու հուշումներին, որոնք ասում են հենց այժմ, հենց այս պահին, որ դուք պետք է ընդունեք Տեր Հիսուս Քրիստոսի քավող պարգևը և Նրա գործին ընկերակցելու վայելքը: Մի հետաձգեք: Սկսում է ուշ լինել: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մատթեոս Ի.1–15:
2. Ղուկաս ԺԲ.44:
3. Եբրայեցիս Դ.16:
4. Եսայիա ԾԵ.1:
5. 2 Նեփի 1.14, 21:
6. “We Are All Enlisted,” *Hymns,* no. 250.

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորում

Ուշքի գալով. հաղորդությունը, տաճարը և ծառայության մեջ զոհաբերելը

Մենք դարձի ենք գալիս և դառնում հոգեպես ինքնավստահ, երբ աղոթքով ապրում ենք ըստ մեր ուխտերի:

Փրկիչը պատմեց Իր աշակերտներին մի որդու մասին, որը թողեց իր հարուստ հորը, գնաց մի օտար երկիր և վատնեց իր ժառանգությունը: Երբ սով սկսվեց, երիտասարդը ստանձնեց խոզերին կերակրելու համեստ աշխատանքը: Նա այնքան սոված էր, որ ուզում էր ուտել կերը, որը նախատեսված էր խոզերին կերակրելու համար:

Տնից հեռու, իր ուզած տեղից հեռու և իր թշվառ վիճակում, հավերժական կարևորության մի բան պատահեց այդ երիտասարդի կյանքում: Փրկչի խոսքերով՝ «նա ինքն իրան եկավ»:[1] Հիշելով, թե ով էր ինքը, հասկացավ թե ինչ էր կորցրել և սկսեց ցանկանալ իր հոր տանը մատչելի անհատույց օրհնությունները:

Մեր կյանքի ընթացքում՝ լինի խավարի ժամանակներ, մարտահրավեր, վիշտ թե մեղք, մենք կարող ենք զգալ Սուրբ Հոգու հիշեցումը մեզ, որ մենք իսկապես հոգատար Երկնային Հոր որդիներն ու դուստրերն ենք, ով սիրում է մեզ, և մենք գուցե փափագում ենք սրբազան օրհնություններ, որոնք միայն Նա կարող է տալ: Այսպիսի դեպքերում մենք պետք է *ուշքի գանք* և ետ դառնանք դեպի մեր Փրկչի սիրո լույսը:

Այս օրհնություններն իրապես պատկանում են Երկնային Հոր բոլոր զավակներին: Այդ օրհնությունները փափագելը, ներառյալ ուրախ և երջանիկ կյանքի օրհնությունը, Երկնային Հոր ծրագրի հիմնական մասն են կազմում յուրաքանչյուրիս համար: Ալմա Մարգարեն ուսուցանել է. «Նույնիսկ եթե դուք չեք կարող ավելին, քան ցանկանալ հավատալ, թույլ տվեք, որ այդ ցանկությունը գործի ձեր մեջ»:[2]

Երբ մեր հոգևոր ցանկություններն աճում են, մենք դառնում ենք հոգեպես ինքնավստահ: Ուրեմն, ինչպե՞ս այդ դեպքում օգնենք մյուսներին, ինքներս մեզ և մեր ընտանիքներին մեծացնել Փրկչին հետևելու և Նրա ավետարանով ապրելու մեր ցանկությունը: Ինչպե՞ս ենք զորացնում ապաշխարելու մեր ցանկությունները, դառնում արժանի և դիմանում մինչև վերջ: Ինչպե՞ս ենք օգնում մեր պատանիներին և երիտասարդ չափահասներին, որ նրանք թողնեն, որ այս ցանկությունները գործեն իրենց մեջ, մինչև նրանք դարձի գան և դառնան ճշմարիտ «սրբ[եր] Քրիստոսի քավության միջոցով»:[3]

Մենք դարձի ենք գալիս և դառնում հոգեպես ինքնավստահ, երբ աղոթքով ապրում ենք ըստ մեր ուխտերի՝ հաղորդությունը արժանավայել ճաշակելու միջոցով, տաճարային երաշխավորագրին արժանի լինելով և զոհաբերելով ուրիշներին ծառայելու համար:

Հաղորդությունից արժանավայել ճաշակելու համար, մենք հիշում ենք, որ նորոգում ենք ուխտը, որ կապել ենք մկրտության ժամանակ: Որպեսզի հաղորդությունը լինի հոգեպես սրբագործող փորձառություն ամեն շաբաթ, մենք պետք է նախապատրաստվենք *նախքան* հաղորդության ժողովի գալը: Մենք անում ենք այդ դիտավորյալ ետևում թողնելով մեր ամենօրյա աշխատանքը և հանգիստը, և հեռացնում աշխարհիկ մտքերն ու մտահոգությունները: Այդպիսով, մենք տեղ ենք բացում մեր մտքում
և սրտում Սուրբ Հոգու համար:

Այդ ժամանակ մենք պատրաստ ենք խորհելու Քավության մասին: Բացի ուղղակի մտածելուց Փրկչի տառապանքի և մահվան փաստերի մասին, մեր խորհրդածելն օգնում է մեզ ճանաչել, որ Փրկչի զոհաբերության միջոցով, մենք ունենք հույս, հնարավորություն և ուժ իրական, սրտառուչ փոփոխություններ

կատարելու մեր կյանքում:

Երգելով հաղորդության օրհներգը, մասնակցելով հաղորդության աղոթքներին և ճաշակելով Նրա մարմնի և արյան խորհրդանիշներից, մենք աղոթքով ներում ենք փնտրում մեր մեղքերի և թերությունների համար: Մենք մտածում ենք խոստումների մասին, որոնք տվել ենք և պահել նախորդ շաբաթվա ընթացքում և ստանձնում ենք առանձնահատուկ անձնական պարտավորություններ՝ հետևելու Փրկչին եկող շաբաթվա ընթացքում:

Ծնողներ և ղեկավարներ, դուք կարող եք օգնել պատանիներին զգալ հաղորդության անզուգական օրհնությունները՝ ապահովելով հատուկ հնարավորություններ նրանց համար, ուսումնասիրելու, քննարկելու և հայտնաբերելու Քավության առնչությունը իրենց կյանքի հետ: Թողեք, որ նրանք ինքնուրույն քննեն սուրբ գրությունները և միմյանց ուսուցանեն իրենց սեփական փորձառությունները:

Հայրերը, քահանայության առաջնորդները և քվորումի նախագահությունները հատուկ պատասխանատվություն են կրում՝ օգնելու Ահարոնյան Քահանայություն կրողներին լրջորեն պատրաստվել կատարելու հաղորդության իրենց սրբազան պարտականությունները: Այդ նախապատրաստությունն արվում է շաբաթվա ընթացքում ավետարանի չափանիշներով ապրելով: Երբ երիտասարդ տղամարդիկ պատրաստում են, օրհնում և փոխանցում են հաղորդությունը արժանավորությամբ և ակնածանքով, նրանք տառացիորեն հետևում են Փրկչի Վերջին Ընթրիքի[4] օրինակին և դառնում Նրա նման:

Ես վկայում եմ, որ հաղորդությունը տալիս է մեզ հնարավորություն *ուշքի գալու* և զգալու «սրտի հզոր փոփոխություն»,[5] հիշելու, թե ով ենք մենք և թե ինչ ենք մենք ամենաշատը ցանկանում: Երբ նորոգում ենք պատվիրանները պահելու ուխտը, մենք ձեռք ենք բերում Սուրբ Հոգու ընկերակցությունը՝ առաջնորդելու մեզ ետ՝ դեպի մեր Երկնային Հոր ներկայությունը: Զարմանալի չէ, որ մեզ պատվիրվել է «հաճախ հավաքվել ճաշակելու հացից և [ջրից]»[6] և ճաշակել հաղորդությունից մեր հոգիների համար:[7]

Բացի հաղորդությունից, Երկնային Հոր մոտ վերադառնալու մեր ցանկությունները մեծանում են, երբ արժանի ենք ապրում, որպեսզի ձեռք բերենք տաճարային երաշխավորագիր: Մենք արժանի ենք դառնում՝ մշտապես և հաստատակամորեն հնազանդվելով պատվիրաններին: Այս հնազանդությունը սկսվում է մանկությունից և ուժեղանում է Ահարոնյան Քահանայությունում և Երիտասարդ Կանաց մոտ փորձառությունների միջոցով՝ նախապատրաստության տարիներին: Ապա, հուսով ենք քահանաները և Դափնիները նպատակներ են դնում և հատուկ պատրաստվում՝ օժտում և կնքում ստանալու տաճարում:

Որո՞նք են երաշխավորագիր ունեցողների չափանիշները: Սաղմոսողը հիշեցնում է մեզ.

«Ո՞վ վեր կգնայ Տիրոջ սարը, եւ ո՞վ կկանգնի նորա սրբութեան տեղումը:

Նա , որ սուրբ է ձեռքով եւ անարատ սրտով»:[8]

Տաճարային երաշխավորագիր ունենալու արժանավորությունը ուժ է տալիս մեզ պահելու մեր տաճարային ուխտերը: Ինչպե՞ս ենք մենք անձնապես ձեռք բերում այդ ուժը: Մենք ձգտում ենք ձեռք բերել վկայություն Երկնային Հոր, Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու, Քավության իրական լինելու և Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Վերականգման ճշմարտացիության մասին: Մենք հաստատում ենք մեր ղեկավարներին, մեր ընտանիքներին վերաբերվում բարությամբ, կանգնում որպես վկա Տիրոջ ճշմարիտ Եկեղեցու վերաբերյալ, հաճախում մեր Եկեղեցու ժողովներին, պատվում մեր ուխտերը, կատարում մեր ծնողական պարտավորությունները և ապրում առաքինի կյանքով: Դուք կարող եք ասել, որ նման է հնչում ուղղակի Վերջին Օրերի Սուրբ լինելուն: Դուք ճիշտ եք: Մեզ համար

տաճարային երաշխավորագիր կրելու չափանիշներին հասնելը խիստ դժվար չէ: Դա ուղղակի ըստ ավետարանի հավատարմորեն ապրելն է և մարգարեներին հետևելը:

Ապա, երբ օժտվում են որպես տաճարային երաշխավորագիր կրողներ, մենք հաստատում ենք Քրիստոսանման ապրելակերպի ձևաչափեր: Դրանք ներառում են հնազանդություն, պատվիրանները պահելու համար զոհաբերություններ կատարելը, սիրել միմյանց, լինել առաքինի մտքով և գործով և մեզ նվիրելը Աստծո արքայության կառուցմանը: Փրկչի Քավության միջոցով և հետևելով հավատարմության այս հիմնական ձևաչափերին, մենք ստանում ենք «զորություն բարձրից»[9] դիմակայելու կյանքի մարտահրավերներին: Մենք ավելի քան երբևէ ունենք այս աստվածային զորության կարիքը: Դա զորություն է, որ մենք ստանում ենք միայն տաճարային արարողությունների միջոցով: Ես վկայում եմ, որ այն զոհաբերությունները, որոնք մենք կատարում ենք տաճարային արարողություններ ստանալու համար, արժանի են ամեն ջանքի, որ մենք գործադրում ենք:

Երբ ավետարանով ապրելու մեր ցանկություններն աճում են, մենք, բնականաբար, ձգտում ենք ծառայել միմյանց: Փրկիչն ասել է Պետրոսին. «Դու երբոր դառնաս, եղբայրներիդ հաստատիր»:[10] Ես մեծ տպավորություն ստացա, որ այսօրվա պատանիները խորը ցանկություն ունեն ծառայելու և օրինելու ուրիշներին՝ այս աշխարհում փոփոխություն առաջ բերելու նպատակով: Նրանք նաև տենչում են այն ուրախությանը, որ իրենց ծառայությունն է բերում:

Այնուամենայնիվ, դժվար է պատանիների համար հասկանալ, թե ինչպես ներկա գործերը կպատրաստեն նրանց կամ կորակազրկեն նրանց ապագա ծառայության հնարավորություններից: Մենք բոլորս ունենք «հրամայական պարտականություն»[11] օգնելու մեր պատանիներին պատրաստվելու կյանքի տևողությամբ ծառայության՝ օգնելով նրանց դառնալ

ինքնավստահ: Բացի հոգևոր ինքնավստահությունից, որի մասին մենք քննարկում էինք, կա նաև ֆիզիկական ինքնապահովում, որը ներառում է միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո մասնագիտական կրթություն, կամ աշխատանքի հետ կապված ուսուցում, սովորելով աշխատել և ապրել մեր միջոցների սահմաններում: Այժմ խուսափելով պարտքից և խնայելով փող, մենք պատրաստվում ենք լիաժամկետ եկեղեցական ծառայության գալիք տարիների ընթացքում: Ֆիզիկական և հոգևոր ինքնապահովման նպատակն է՝ մեզ ավելի բարձր դիրքի վրա դնել, որպեսզի կարողանանք բարձրացնել կարիքի մեջ գտնվող ուրիշներին:

Արդյոք երիտասարդ ենք թե ծեր, այն ինչ անում ենք այսօր, որոշում է այն ծառայությունը, որը մենք կկարողանանք կատարել և վայելել վաղը: Ինչպես բանաստեղծն է մեզ հիշեցնում. «Բոլոր տխուր խոսքերից լեզվի կամ գրչի, ամենատխուրը սրանք են. «Կարող էր լինել»:[12] Եկեք չապրենք մեր կյանքը զղջումով այն բանի համար, որ մենք արեցինք կամ չարեցինք:

Սիրելի եղբայրներ և քույրեր, երիտասարդ տղամարդը, որի մասին խոսեց Փրկիչը, նա որին կոչում ենք անառակ որդի, *իսկապես տուն եկավ:* Նրա հայրը չէր մոռացել նրան, նրա հայրը սպասում էր նրան: Եվ «դեռ որ [որդին] հեռու էր, հայրը տեսավ նրան եւ գութը շարժեց. Եւ վազեց. . . . եւ համբուրեց նորան»:[13] Իր որդու վերադարձի առթիվ, նա հրամայեց պատմուճան բերել և մատանի դնել մատին և մսացու եզը մորթել,[14] հիշեցվում է, որ ոչ մի օրհնություն ետ չի պահվի, եթե մենք հավատարմորեն համբերենք մեր Երկնային Հոր մոտ տանող արահետով ետ քայլելով:

Նրա սիրով և Նրա Որդու սիրով իմ սրտում, ես կոչ եմ անում մեզանից յուրաքանչյուրին հետևել մեր հոգևոր ցանկություններին և *ուշքի գանք:* Եկեք հայելու մեջ ինքներս մեզ հետ զրուցենք և հարցնենք. «Որտե՞ղ եմ ես կանգնած՝ ապրելով ըստ իմ ուխտերի»: Մենք ճիշտ ուղու վրա ենք, եթե կարողանանք ասել. «Ես արժանավայել ճաշակում եմ հաղորդությունը ամեն շաբաթ, ես արժանի եմ տաճարային երաշխավորագիր կրել և տաճար գնալ, և ես զոհաբերում եմ ծառայելու և ուրիշներին օրհնելու համար»:

Ես կիսվում եմ իմ հատուկ վկայությամբ, որ Աստված այնպես է սիրում մեզանից յուրաքանչյուրին, որ նա տվեց իր միածին Որդուն»[15] մեր մեղքերը քավելու համար: Նա գիտի մեզ և սպասում է մեզ, նույնիսկ, երբ մենք շատ հեռու ենք: Երբ մենք գործենք ըստ մեր ցանկությունների և ուշքի գանք, մենք «կօղակվենք հավերժորեն նրա սիրո բազուկներում»:[16] Ես այսպես եմ վկայում մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ղուկաս ԺԵ.17:
2. Ալմա 32.27:
3. Մոսիա 3.19:
4. Տես Մատթեոս ԻԶ.17–28, Ղուկաս ԻԲ.1–20:
5. Ալմա 5.12, տես նաև Մոսիա 5.2, Ալմա 5.13–14:
6. Մորոնի 6.6:
7. Տես Մորոնի 4.3, Վարդապետություն և Ուխտեր 20.77:
8. Սաղմոս ԻԴ.3–4:
9. Վարդապետություն և Ուխտեր 95.8:
10. Ղուկաս ԻԲ.32:
11. Վարդապետություն և Ուխտեր123.11:
12. John Greenleaf Whittier, “Maud Muller,” *The Complete Poetical Works of Whittier* (1894), 48.
13. Ղուկաս ԺԵ.20:
14. Տես Ղուկաս ԺԵ.22–24:
15. Հովհաննես Գ.16:
16. 2 Նեփի 1.15:

Երեց Դեյվիդ Ս. Բաքսթեր
Յոթանասունի քվորումից

Հավատք, տոկունություն, կայացում՝ ուղերձ միայնակ ծնողներին

Դուք ձգտում եք մեծացնել ձեր երեխաներին արդարակեցությամբ և ճշմարտությամբ, իմանալով, որ չնայած դուք չեք կարողանա փոխել անցյալը, դուք կարող եք ձևավորել ապագան:

Իմ ուղերձը Եկեղեցու միայնակ ծնողներին է ուղղված, որոնցից մեծամասնությունը միայնակ մայրեր են, ձեզ՝ քաջարի կանայք, ովքեր կյանքի տարբեր հանգամանքների բերումով, գտնվում եք երեխաներ մեծացնելու և ինքնուրույն տուն պահելու վիճակում: Հավանաբար, դուք այրիացել եք կամ բաժանվել: Դուք գուցե հաղթահարում եք միայնակ ծնող լինելու մարտահարավերը ամուսնությունից դուրս սխալ քայլ կատարած լինելով, բայց այժմ ապրում եք ավետարանի սկզբունքների համաձայն՝ կարգավորելով ձեր կյանքը: Թող որ դուք օրինվեք, քանի որ խուսափում եք այն տեսակի ընկերակցությունից, որը կլիներ ձեր առաքինության և աշակերտության հաշվին: Դա կլիներ վճարելու խիստ բարձր գին:

Չնայած երբեմն գուցե ձեզ հուզել է ինչո՞ւ ես հարցը, ինչևէ կյանքի դժվարությունների միջոցով է, որ մենք աճում ենք դեպի աստվածություն, երբ մեր բնավորությունը ձևավորվում է նեղությունների հալոցում, երբ կյանքի իրադարձությունները տեղի են ունենում, մինչ Աստված հարգում է մարդու կամքի ազատությունը: Ինչպես մեկնաբանել է Երեց Նիլ Ա. Մաքսվելը, մենք չենք կարող հասկանալ բոլոր բաների պատճառները, որովհետև «մենք չունենք բոլոր փաստերը»:[1]

Ինչպիսին էլ որ լինեն ձեր հանգամանքները կամ պատճառները, դուք սքանչելի եք: Օրեցօր դուք դիմակայում եք կյանքի մաքառումներին, կատարելով աշխատանքը, որ միշտ նախատեսված է եղել երկուսի համար, բայց դուք ամբողջը միայնակ եք անում: Դուք պետք է լինեք և՛ հայր, և՛ մայր: Դուք պահում եք ձեր տունը, հետևում եք ձեր ընտանիքին, երբեմն պայքարում ծայրը ծայրին հասցնելու համար, և հրաշագործ ձևով դուք նույնիսկ գտնում եք ուղի, թե ինչպես լավագույնս ծառայեք Եկեղեցում: Դուք դաստիարակում եք ձեր երեխաներին: Դուք արտասվում եք և աղոթում նրանց հետ և նրանց համար: Դուք ցանկանում եք նրանց համար ամենալավը, բայց անհանգստանում ամեն գիշեր, որ ձեր լավագույնը գուցե երբեք բավականաչափ լավը չլինի:

Չնայած այնքան էլ չեմ ուզում խիստ անձնական լինել, ես հենց այդպիսի տան արդյունք եմ: Իմ մանկության մեծ մասը և պատանեկության տարիներին մայրս մեզ մեծացրել է ինքնուրույն աղքատիկ պայմաններում: Փողը զգուշորեն էր բաշխվում: Նա հաղթահարում էր ներքին միայնակությունը, երբեմն հուսահատվում աջակցության և ընկերակցության կարիքից: Սակայն, չնայած բոլոր այս բաներին մայրիկիս մեջ արժանապատվություն կար, հաստատակամության և շոտլանդական անխախտ տոկունության վիթխարի աղբյուր:

Բարեբախտաբար, նրա հետագա տարիներն ավելի օրհնված էին, քան սկիզբը: Նա ամուսնացել էր նորադարձ այրու հետ, նրանք կնքվել էին Անգլիայի Լոնդոնի Տաճարում և հետո կարճ ժամանակով ծառայել այնտեղ որպես արարողություն կատարողներ: Նրանք միասին էին եղել գրեթե քառորդ դար՝ երջանիկ, զոհ և կայացած մինչև մահանալը:

Եկեղեցում ձեզ նման շատ հիանալի կանայք կան ողջ աշխարհում, ովքեր դիմակայում են նմանատիպ հանգամանքների և ովքեր տարեցտարի դրսևորում են նույնպիսի ճկունություն:

Սա հենց այն չէ, ինչ դուք հույս ունեիք կամ ծրագրել էիք կամ ակնկալում էիք, երբ սկսեցիք գործի անցնել տարիներ առաջ: Ձեր ճամփորդությունը կյանքում անցել է հարվածներով, շեղումներով, տատանումներով և անսպասելի փոփոխություններով, մեծ մասամբ

կյանքի հետևանքով՝ ընկած աշխարհում, որը նախատեսված է լինել փորձության և ստուգարքի վայր:

Այդ ընթացքում դուք ձգտում եք մեծացնել ձեր երեխաներին արդարակեցությամբ և ճշմարտությամբ՝ իմանալով, որ չնայած դուք չեք կարող փոխել անցյալը, դու կարող եք ձևավորել ապագան: Ճանապարհի ընթացքում դուք ձեռք կբերեք փոխհատուցող օրհնություններ, նույնիսկ, եթե դրանք անմիջապես ակնհայտ չեն:

Ունենալով Աստծո օգնությունը, դուք չպետք է վախենաք ապագայի համար: Ձեր երեխաները կմեծանան և ձեզ օրհնյալ կկոչեն և նրանց բազմաթիվ ձեռքբերումներից յուրաքանչյուրը կլինի որպես հարգանքի տուրք ձեզ համար:

Խնդրում ենք երբեք ձեզ մի զգացեք Եկեղեցու անդամակցության մեջ որպես երկրորդական, ցածր կարգի, ինչ որ չափով ավելի քիչ լիազորված Տիրոջ օրհնությունների համար, քան մյուսները: Աստծո արքայությունում չկան երկրորդ կարգի քաղաքացիներ:

Մենք հուսով ենք, որ երբ դուք հաճախում եք ժողովներ և տեսնում կայացած և երջանիկ երևացող ընտանիքներ կամ լսում ինչ-որ մեկին ընտանիքի իդեալների մասին խոսելիս, դուք կլինեք ուրախ, որ մի այնպիսի Եկեղեցու մասն եք հանդիսանում, որը կենտրոնացած է ընտանիքների վրա և ուսուցանում է Երկնային Հոր ծրագրում Իր զավակների երջանկության համար դրանց կենտրոնական դերի մասին, որ աշխարհիկ աղետների և բարոյական անկման իրավիճակում, մենք ունենք վարդապետություն, իշխանություն, արարողություններ և ուխտեր, որոնք իսկապես պահում են լավագույն հույսը աշխարհի համար, ներառյալ ձեր երեխաների և ընտանիքների ապագա երջանկության համար, որոնք նրանք ստեղծելու են:

2006թ. Սփոփող Միության գերագույն ժողովի ժամանակ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին մտաբերեց մի փորձառություն, որը պատմել էր յոթ երեխա ունեցող մի ամուսնալուծված միայնակ մայր, որոնք 7-ից մինչև 16 տարեկան հասակի էին: Կինը դուրս էր եկել գնալու փողոցի մյուս կողմը՝ հարևանին ինչ-որ բան տալու: Նա ասել էր.

«Երբ ես շրջվեցի ետ դառնալու տուն, ես տեսա, որ իմ տունը լույսերով էր ողողված: Մտքումս հնչում էին երեխաներիս ձայները, երբ դուրս էի գալիս դռնից մի քանի րոպե առաջ: Նրանք ասում էին. «Մայրիկ, ի՞նչ ենք ուտելու ճաշին», «Կարո՞ղ ես ինձ գրադարան տանել», «Այսօր ինձ պաստառի համար թուղթ է հարկավոր»: Հոգնած և ուժասպառ, ես նայեցի այդ տանը և տեսա բոլոր սենյակների լույսերը վառ: Ես մտածեցի բոլոր այդ երեխաների մասին, ովքեր տանն էին և սպասում էին ինձ՝ բավարարելու իրենց կարիքները: Իմ բեռներն ավելի ծանր էին թվում, քան ես կարող էի դրանք տանել:

Հիշում եմ ինչպես արցունքների միջից նայեցի դեպի երկինք և ասացի. «Սիրելի Հայր, ես ուղղակի չեմ կարող դա անել այս երեկո: Ես շատ եմ հոգնած: Ես չեմ կարող դիմակայել դրան: Ես չեմ կարող գնալ տուն և միայնակ հոգ տանել բոլոր այդ երեխաներին: Կարելի՞ է, որ գամ Քո մոտ և մնամ Քո մոտ հենց մեկ գիշեր. . .»:

Ես իրականում չլսեցի պատասխանի խոսքերը, բայց ես դրանք լսեցի մտքումս: Պատասխանն էր. «Ոչ փոքրիկս, դու չես կարող ինձ մոտ գալ այժմ: . . . Բայց ես կարող եմ գալ քո մոտ»»:[2]

Կորդոբա, Արգենտինա

Շնորհակալություն ձեզ քույրեր, այն ամենի համար, որ դուք անում եք, ձեր ընտանիքը մեծացնելու և սիրառատ տուն պահելու համար, որտեղ կա բարություն, խաղաղություն և հնարավորություն:

Չնայած դուք հաճախ միայնակ եք զգում, իրականում դուք երբեք *լիովին* միայնակ չեք: Երբ առաջ եք շարժվում համբերությամբ և հավատքով, Նախախնամությունը կշարժվի ձեզ հետ. Երկինքը կշնորհի անհրաժեշտ օրհնությունները:

Ձեր հեռանկարը և կյանքի վերաբերյալ տեսակետը կփոխվի, երբ վար նայելու փոխարեն վեր նայեք:

Ձեզանից շատերն արդեն հայտնաբերել են այն մեծ կերպարանափոխող ճշմարտությունը, որ երբ ապրում եք ուրիշների բեռները բարձրացնելու համար, ձեր սեփական բեռները թեթևանում են: Չնայած հանգամանքները գուցե չեն փոխվել, ձեր վերաբերմունքն է փոխվում: Դուք կարողանում եք դիմակայել ձեր սեփական

փորձություններին ավելի մեծ հանդուրժողականությամբ, ավելի հասկացող սրտով և ավելի խորը երախտագիտությամբ այն բաների համար, որ ունեք, քան տենչալով այն բաներին, որոնք դեռ չունեք:

Դուք հայտնաբերել եք, որ երբ մենք մխիթարում ենք նրանց, ովքեր մխիթարության կարիք ունեն, մենք ևս մխիթարվում ենք, մեր բաժակը իսկապես «խիստ լիքն է» լինում (Սաղմոս ԻԳ.5):

Արդար ապրելու միջոցով դուք և ձեր երեխաները մի օր կվայելեք լիարժեք հավերժական ընտանիքի մասը լինելու օրհնությունները:

Անդամներ և ղեկավարներ, կա՞ն արդյոք ավելի շատ բաներ, որ դուք կկարողանայիք անել աջակցելու միայնակ ծնողով ընտանիքներին առանց նրանց դատապարտելու կամ քննադատելու: Կարո՞ղ եք դաստիարակել այս ընտանիքների երիտասարդներին, հատկապես օրինակ ծառայելով երիտասարդ տղամարդկանց համար, թե ինչ պետք է անեն լավ տղամարդիկ և թե ինչպես են ապրում լավ տղամարդիկ: Հայրերի բացակայության դեպքում արդյոք դուք ծառայո՞ւմ եք ընդօրինակման արժանի տիպարի օրինակ:

Այսպիսով, իհարկե կան միայնակ ընտանիքներ, որտեղ հայրն է միայնակ ծնողը: Եղբայրներ մենք աղոթում ենք նաև ձեզ համար և մեր հարգանքի տուրքն ենք վճարում ձեզ: Այս ուղերձը նաև ձեզ համար է:

Միայնակ ծնողներ, ես վկայում եմ, որ երբ դուք անում եք ձեր լավագույնը ամենադժվար մարդկային մարտահրավերների դեպքում, երկինքը կժպտա ձեզ: Իրականում դուք մենակ չեք: Թող Հիսուս Քրիստոսի քավիչ, սիրառատ զորությունը լուսավորի ձեր կյանքն այժմ և լցնի ձեզ հավերժական խոստման հույսով: Քաջացե՛ք: Ունեցեք հավատք և հույս: Մտածեք ներկայի մասին տոկունությամբ և նայեք ապագային վստահությամբ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Neal A. Maxwell, *Notwithstanding My Weakness* (1981), 68.
2. Գորդոն Բ. Հինքլի, «Նրա սիրո բազուկներում», *Լիահոնա*, Նոյ. 2006, 117:

Երեց Ուլիսես Սարես
Յոթանասունից

Մնալ Տիրոջ տարածքում

Մեր ամենօրյա հարցը պիտի լինի՝«Իմ գործերը ինձ դնում են Տիրոջ, թե՞ թշնամու տարածքում»:

Մի անգամ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Թույլ տվեք տալ մի հասարակ սահմանում, որի օգնությամբ դուք կարող եք գնահատել ընտրությունները, որոնց առջև կանգնում եք: Այն հեշտությամբ կարելի է հիշել. «Դուք չեք կարող ճիշտ լինել, երբ սխալ բան եք անում, դուք չեք կարող սխալ լինել, երբ ճիշտ բան եք անում» (“Pathways to Perfection,” *Liahona,* July 2002, 112): Նախագահ Մոնսոնի սահմանումը պարզ ու հասկանալի է: Այն աշխատում է այնպես, ինչպես աշխատում էր Լեքիին տրված Լիահոնան: Եթե մենք հավատք ենք ցուցաբերում և ջանասեր ենք Տիրոջ պատվիրանները պահելիս, մենք հեշտությամբ կգտնենք ճիշտ ուղին, որին պետք է հետևենք, հատկապես երբ մենք կանգնենք մեր ամենօրյա ընտրությունների առջև:

Պողոս Առաքյալը մեզ խորհուրդ է տալիս հոգու մեջ սերմ ցանելու կարևորության մասին և զգուշացնում, որ չսերմենք մարմնի մեջ: Նա ասել է.

«Մի խաբուիք. Աստուած չի ծաղրուիլ: Որովհետեւ ինչ որ մարդ սերմէ, այն էլ կինձէ.

իր մարմնի մէջ սերմողը մարմնիցն ապականութիւն կինձէ. եւ Հոգու մէջ սերմողը Հոգուցն յաւիտենական կեանք կինձէ:

Եւ չձանձրանանք բարին գործելուցը, որովհետեւ իր ժամանակին կինձենք՝ եթե չթուլանանք» (Գաղատացիս Զ.7–9):

Հոգու մեջ սերմել նշանակում է, որ մեր բոլոր մտքերը, խոսքերը և գործերը պետք է բարձրացնեն մեզ մեր երկնային ծնողների աստվածային մակարդակին: Սակայն սուրբ գրությունները մարմինը բնութագրում են որպես բնական մարդու ֆիզիկական կամ մարմնական էություն, որը թույլ է տալիս մարդկանց ընկնել կրքի, ցանկությունների, հակումների ազդեցության տակ և մղվում է մարմնի կողմից՝ Սուրբ Հոգու կողմից ոգեշնչում փնտրելու փոխարեն: Եթե մենք չզգուշանանք, այդ ազդեցությունները աշխարհի չարիքի ճնշման հետ միասին կարող են պատճառ դառնալ, որ մենք գործածենք գռեհիկ և անխոհեմ վարքագիծ, որը կարող է դառնալ մեր բնավորության մի մասը: Այդ վատ ազդեցություններից զերծ մնալու համար մենք պետք է հետևենք նրան, ինչ

Տերը կարգադրեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին շարունակաբար Հոգու մեջ սերմելու վերաբերյալ. «Ուստի, մի ձանձրացեք բարին գործելուց, քանզի դուք դնում եք հիմքը մի մեծ գործի: Եվ փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է» (ՎևՈՒ 64.33):

Մեր հոգին ամրացնելու համար պահանջվող բաներն են՝ «ամեն դառնութիւն եւ բարկութիւն եւ սրտմտութիւն եւ աղաղակ եւ հայհոյութիւն թող վեր առնուի [մեզանից]՝ ամեն չարութեան հետ» (Եփեսացիս Դ.31) և «իմաստուն եղեք ձեր փորձության օրերին. հանեք ձեզանից ամեն անմաքրություն» (Մորմոն 9.28):

Երբ մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, մենք սովորում ենք, որ Տիրոջ կողմից մեզ տրված խոստումները կախված են մեր հնազանդությունից և քաջալերում են արդար ապրելակերպ ունենալ: Այդ խոստումները պետք է սնուցեն մեր հոգին, բերելով մեզ հույս, քաջալերելով մեզ, որ չհուսահատվենք, նույնիսկ երբ մենք հանդիպում ենք մեր առօրյա դժվարություններին, ապրելով աշխարհում, որի էթիկական և բարոյական արժեքները վերանում են, դրանով դրդելով մարդկանց սերմել մարմնի մեջ նույնիսկ ավելի շատ: Սակայն, ինչպե՞ս կարող ենք մենք վստահ լինել, որ մեր ընտրությունները օգնում են մեզ սերմել Հոգու մեջ և ոչ թե մարմնի:

Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթը, կրկնելով իր նախապապի խորհուրդը, ասել է. «Գոյություն ունի ճշգրիտ որոշված սահմանագիծ Տիրոջ և դևի տարածքների միջև: Եթե դուք մնաք Տիրոջ սահմանագծի կողմում դուք կլինեք Նրա ազդեցության ներքո և չեք ունենա ցանկություն սխալ գործելու, բայց եթե դուք անցնեք սահմանագծի դևի կողմը մեկ մատնաչափ անգամ, դուք Փորձիչի իշխանության տակ կլինեք, և եթե նրան հաջողվի, դուք չեք կարողանա մտածել կամ նույնիսկ պատշաճորեն խորհրդածել, որովհետև դուք կորցրած կլինեք Տիրոջ Հոգին» (*Teachings of Presidents of the Church: George Albert Smith* [2011], 191):

Ուստի, մեր ամենօրյա հարցը պիտի լինի՝ «Իմ արարքները ինձ դնում են Տիրոջ, թե՞ թշնամու տարածքում»:

Մորմոն մարգարեն նախազգուշացրել է իր ժողովրդին բարին չարից տարբերելու ունակություն ունենալու կարևորության մասին.

«Ուստի, բոլոր բաները, որոնք բարի են, գալիս են Աստծուց. իսկ այն, ինչ չար է, գալիս է դևից. քանզի դևը թշնամի է Աստծուն, և շարունակ կռվում է նրա դեմ, և հրավիրում է ու հրապուրում ի մեղք, և շարունակ անելու այն, ինչ չար է:

Բայց ահա, այն, ինչ Աստծուց է, շարունակ հրավիրում և հրապուրում է անել բարիք» (Մորոնի 7.12–13):

Քրիստոսի Լույսը Սուրբ Հոգու ընկերակցության հետ միասին պետք է օգնի մեզ պարզել, թե արդյոք մեր ապրելակերպը մեզ դնում է Տիրոջ տարածքում, թե ոչ: Եթե մեր վերաբերմունքը լավն է, այն ոգեշնչված է Աստծո կողմից, քանի որ ամեն լավ բան գալիս է Աստծուց: Սակայն, եթե մեր վերաբերմունքը վատն է, մենք ներգործվում ենք թշնամու կողմից, քանի որ նա համոզում է մարդկանց չարիք գործել:

Աֆրիկայի մարդիկ հուզել են իմ սիրտը Տիրոջ տարածքում մնալու իրենց վճռականությամբ և ջանասիրությամբ: Նույնիսկ կյանքի դժվար պայմաններում նրանք, ովքեր ընդունում են առ Քրիստոս գալու հրավերը, լույս են դառնում աշխարհի համար: Մի քանի շաբաթ առաջ, մինչ այցելում էինք Հարավային Աֆրիկայի ճյուղերից մեկը, ես արտոնություն ունեցա ընկերակցելու երկու երիտասարդ քահանաների, նրանց եպիսկոպոսին և նրանց ցցի նախագահին, իրենց քվորումի քիչ-ակտիվ երիտասարդ տղամարդկանց այցելելիս: Ես մեծապես տպավորվել էի քաջությամբ ու համեստությամբ, որ այդ երկու քահանաները ցուցաբերեցին, մինչ նրանք հրավիրում էին քիչ-ակտիվ երիտասարդ տղամարդկանց վերադառնալ եկեղեցի: Մինչ նրանք խոսում էին այդ քիչ-ակտիվ երիտասարդ տղամարդկանց հետ, ես նկատեցի, որ նրանց դեմքերը արտացոլում էին Փրկչի լույսը և միևնույն ժամանակ լույսով լցնում բոլոր նրանց, ովքեր իրենց շուրջն էին: Նրանք կատարում էին իրենց պարտականությունը՝ սատարել թույլերին, բարձրացնել ընկած ձեռքերը և ամրացնել տկար ծնկները (ՎևՈ 81.5): Այդ երկու քահանաների վերաբերմունքը նրանց դնում էր Տիրոջ տարածքում և նրանք գործիք էին հանդիսանում Նրա ձեռքերում, հրավիրելով ուրիշներին անել նույնը:

Վարդապետություն և Ուխտեր 20.37-ում Տերն ուսուցանում է մեզ, թե ինչ է նշանակում սերմել Հոգու մեջ և ինչն է իրոք մեզ դնում Տիրոջ տարածքում, հետևյալ եղանակներով՝ մեզ խոնարհեցնելով Աստծո առաջ, առաջ գալով կոտրված սրտով և փշրված հոգով, վկայելով Եկեղեցու առաջ, որ մենք ճշմարտապես ապաշխարել ենք մեր բոլոր մեղքերից, մեզ վրա վերցնելով Հիսուս Քրիստոսի անունը, վճռականություն ունենալով ծառայել Նրան մինչև վերջ, մեր գործերով ցույց տալով, որ մենք ընդունել ենք Քրիստոսի Հոգին և մկրտությամբ ընդունվել ենք Նրա

Եկեղեցին: Այս ուխտերը պահելու մեր պատրաստակամությունը նախապատրաստում է մեզ ապրել Աստծո ներկայության մեջ որպես վեհացում ստացած էակներ: Այս ուխտերը հիշելը պետք է ուղղորդեն մեր վարքագիծը մեր հարաբերություններում ընտանիքում, այլ մարդկանց հետ մեր հաղորդակցվելում և հատկապես Փրկչի հետ մեր հարաբերություններում:

Հիսուս Քրիստոսը հաստատեց վարքագծի կատարյալ օրինակ, որի համաձայն մենք կարող ենք կառուցել մեր վերաբերմունքը, որ կարողանանք իրագործել այս սուրբ ուխտերը: Փրկիչը հեռացնում էր Իր կյանքից ցանկացած ազդեցություն, որը կարող էր շեղել Իր ուշադրությունը Իր աստվածային առաքելությունից, հատկապես այն ժամանակ, երբ փորձվում էր թշնամու կամ նրա հետևորդների կողմից, մինչ Նա ծառայում էր այստեղ երկրի վրա: Չնայած, որ Նա երբեք չմեղանչեց, Նա ուներ կոտրված սիրտ և փշրված հոգի, լի մեր Երկնային Հոր և բոլոր մարդկանց հանդեպ սիրով: Նա խոնարհեցրեց Իրեն մեր Երկնային Հոր առաջ, հրաժարվելով Իր սեփական կամքից, որ կատարի այն, ինչ Հայրը խնդրել էր Իրեն, դիմանալով բոլոր բաներին մինչև վերջ: Նույնիսկ ֆիզիկական և հոգևոր ծայրահեղ ցավի պահին, տանելով ողջ մարդկության մեղքերի բեռը իր ուսերին և արյունահոսելով Իր ծակոտիներից, Նա ասաց Հորը. «Բայց ոչ թե ինչ որ ես եմ կամենում, այլ ինչ որ դու» (Մարկոս ԺԴ.36):

Իմ աղոթքն է, եղբայրներ և քույրեր, մինչ մենք մտածում ենք մեր ուխտերի մասին, որ մենք, հետևելով Փրկչի օրինակին, կարողանանք դիմակայել «հակառակորդի կրակոտ նետերին» (1 Նեփի 15.24), որպեսզի մենք կարողանանք սերմել Հոգու մեջ և մնանք Տիրոջ տարածքում: Եկեք հիշենք Նախագահ Մոնսոնի սահմանումը. «Դուք չեք կարող ճիշտ լինել, երբ սխալ բան եք անում, դուք չեք կարող սխալ լինել, երբ ճիշտ բան եք անում»: Ես ասում եմ այս բաները Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորում

Հավատքի երգին համահունչ

Աստված սիրում է Իր բոլոր զավակներին: Նա ցանկանում է, որ բոլորը վերադառնան Իր մոտ: Նա ցանկանում է, որ ամեն ոք հավատքի սուրբ երգին համահունչ լինի:

Երբ Եկեղեցու Գերագույն Իշխանությունները հանդիպում են ողջ աշխարհի անդամների հետ, մենք անձնապես տեսնում ենք, թե ինչպես են Վերջին Օրերի Սրբերը բարու ուժ հանդիսանում: Շնորհակալություն այն ամենի համար, որ դուք անում եք բոլորի կյանքն օրհնելու համար:

Հասարակական գործերի հանձնարարականներ ունեցողներս խորապես գիտակցում ենք, որ շատ հասարակական կարծիք ստեղծողներ և լրագրողներ Միացյալ Նահանգներում և ողջ աշխարհում ավելի շատ հասարակական քննարկումներ են ծավալում Եկեղեցու և նրա անդամների մասին: Գործոնների յուրահատուկ համընկնումը զգալիորեն բարձրացրել է Եկեղեցու վարկանիշը:[1]

Շատերը, ովքեր գրել են Եկեղեցու մասին, անկեղծ ջանքեր են գործադրել հասկանալու մեր մարդկանց և մեր վարդապետությունը: Նրանք բարեկիրթ մոտեցում են ցուցաբերել և փորձել են օբյեկտիվ լինել, որի համար մենք երախտապարտ ենք:

Մենք նաև գիտակցում ենք, որ սուրբ բաների հետ շատերը ներդաշնակ չեն: Անցյալ դեկտեմբերին Անգլիայի գլխավոր Ռաբբի Լորդ Սակսը խոսելով Հռոմի կաթոլիկ առաջնորդների առջև Պոնտիֆիշալ Գրիգորյան համալսարանում, նշել է, թե որքան աշխարհիկ են դարձել աշխարհի որոշ մասեր: Նա ասել է, որ հիմնապատճառներից մեկը՝ «ագրեսիվ գիտական աթեիզմն է, որը ամենևին համահունչ չէ հավատքի երգին»:[2]

Մորմոնի Գրքի սկզբում տրված տեսիլքը կյանքի ծառի մասին Լեքիի մարգարեական երազն է:[3] Այս տեսիլքը հստակ ներկայացնում է հավատքի հետ կապված խնդիրները, որոնք առկա են այսօր, և այն մեծ բաժանումը, որ կա նրանց մեջ, ովքեր սիրում ու երկրպագում են Աստծուն և պատասխանատվություն են զգում Նրա հանդեպ, և նրանց միջև ովքեր, այդպիսին չեն: Լեքին նշում է, թե ինչն է կործանում հավատքը: Դա՝ հպարտությունն է, ինքնահավանությունը և անմտությունը: Նրանք հետաքրքրված են միայն այսպես կոչված աշխարհի

իմաստությամբ:[4] Մյուսները որոշ հետաքրքրություն են դրսևորում Աստծո հանդեպ, սակայն կորչում են խավարի ու մեղքի աշխարհիկ մշուշում:[5] Ոմանք ճաշակում են Աստծո սերը և Նրա խոսքը, սակայն ամաչում են իրենց ծաղրողների պատճառով և հեռանում են դեպի «արգելված ուղիներ»:[6]

Ի վերջո, կան այնպիսիք, ովքեր հավատքի երգի հետ համահունչ են: Դուք գիտեք, թե ով եք: Դուք սիրում եք Տիրոջը և Նրա ավետարանը, և շարունակաբար փորձում եք ապրել և կիսվել Նրա ուղերձով, հատկապես ձեր ընտանիքների հետ:[7] Դուք ներդաշնակ եք Հոգու հուշումներին, գիտակցում եք Աստծո խոսքի զորությունը, ձեր տներում կրոնական վարք եք դրսևորում, և ջանասիրաբար փորձում եք ապրել Քրիստոսանման կյանքով որպես Նրա աշակերտներ:

Մենք հասկանում ենք, թե որքան զբաղված եք դուք: Չունենալով վճարվող ծառայողներ, Եկեղեցու ծառայության պատասխանատվությունը ընկած է ձեզ վրա՝ նվիրված անդամներ: Մենք գիտենք, որ եպիսկոպոսության և ցցի նախագահությունների անդամների և շատ ուրիշների համար սովորական բան է նվիրված ծառայությանը երկար ժամեր տրամադրելը: Օժանդակների և քվորումների նախագահությունները օրինակ են ծառայում իրենց անձնուրաց զոհաբերությամբ: Այդ ծառայությունը և զոհաբերությունը հատուկ է բոլոր անդամներին, նրանց, ովքեր պահում են գործավարական գրառումներ, հավատարիմ տուն ունեն, այցելող ուսուցիչներ են և դասեր են վարում: Մենք երախտապարտ ենք նաև նրանց, ովքեր խիզախորեն ծառայում են որպես սկաուտների և երեխաների խմբերի ղեկավարներ: Մենք սիրում և գնահատում ենք ձեզ և ձեր աշխատանքը:

Մենք գիտենք, որ կան անդամներ, ովքեր այնքան էլ հետաքրքրված և հավատարիմ չեն Փրկչի որոշ ուսմունքներին: Մեր ցանկությունն է, որ այդ անդամները լիովին արթնանան ի հավատք՝ մեծացնեն իրենց ակտիվությունը և նվիրվածությունը: Աստված սիրում է Իր բոլոր զավակներին: Նա ցանկանում է, որ բոլորը վերադառնան Իր մոտ: Նա ցանկանում է, որ ամեն ոք լինի հավատքի սուրբ երգին համահունչ: Փրկչի Քավությունը պարգև է յուրաքանչյուրի համար:

Անհրաժեշտ է ուսուցանել և հասկացնել, որ մենք սիրում և հարգում ենք բոլոր մարդկանց, ում Լեքին է նկարագրել:[8] Հիշեք, մենք չէ, որ պետք է դատենք: Դատաստանը Տիրոջինն է:[9] Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հատկապես խնդրել է մեզ, որ «քաջություն ունենանք և մյուսներին չդատենք»:[10] Նա նաև խնդրել է հավատարիմ անդամներին *փրկել* նրանց, ովքեր ճաշակել են ավետարանի պտղից և ապա հեռացել, ինչպես նաև նրանց, ովքեր դեռևս չեն գտել անձուկ ու նեղ ճանապարհը: Մենք աղոթում ենք, որ նրանք բռնեն ձողից և ճաշակեն Աստծո սիրուց, որը կլցնի նրանց «հոգին[երը] չափազանց մեծ ուրախությամբ»:[11]

Չնայած որ Լեքիի տեսիլքը ներառում է բոլոր մարդկանց, վարդապետական կարևորագույն հասկացողությունը ընտանիքի հավերժական նշանակությունն է: «Ընտանիքը կարգված է Աստծուց: Դա ամենակարևոր միավորն է ժամանակի և հավերժության մեջ»:[12] Երբ Լեքին ճաշակեց կյանքի ծառի պտղից (Աստծո սիրուց), նա փափագեց, որ իր «ընտանիքն էլ ճաշակի դրանից»:[13]

Մեր մեծ ցանկությունն է՝մեծացնել մեր երեխաներին ճշմարտության և արդարակեցության մեջ: Սկզբունքներից մեկը, որը կօգնի մեզ իրագործել դա, այն է, որ չափից շատ չդատապարտենք վարքը, որը անմիտ է կամ ոչ խելամիտ, սակայն մեղսավոր չէ: Տարիներ առաջ, երբ մեր զավակները մեզ հետ էին ապրում, Երեց Դալլին Հ. Օուքսն ուսուցանեց, որ կարևոր է տարբերակել պատանեկան սխալները, որոնք պետք է շտկվեն, մեղքերից, որոնք պահանջում են պատիժ և ապաշխարություն:[14] Որտեղ իմաստության պակաս կա, մեր երեխաները պետք է ուսուցանվեն: Որտեղ մեղք կա, ապաշխարություն է անհրաժեշտ:[15] Դա շատ օգտակար խորհուրդ էր մեր ընտանիքի համար:

Տանը կրոնական սկզբունքներին հետամուտ լինելն օրհնում է ընտանիքը: Օրինակը հատկապես կարևոր է: Այն, թե ինչ *ենք* մենք անում այնքան բարձրաձայն է խոսում, որ մեր երեխաները գուցե չլսեն, թե ինչ ենք մենք խոսում: Երբ ես մոտ հինգ տարեկան էի, մայրս լուր ստացավ, որ իր եղայրը զոհվել է, երբ ռազմանավը, որի վրա ծառայում էր նա, Ճապոնիայի ափի մոտ ռմբակոծվել էր Երկրորդ Համաշխարհայինի ավարտին:[16] Դա աղետալի լուր էր

նրա համար: Նա անչափ հուզված գնաց իր ննջասենյակ: Մի փոքր անց ես գնացի նրա սենյակ, համոզվելու համար, որ նրա հետ ամեն ինչ կարգին է: Նա իր մահճակալի մոտ ծնկի իջած աղոթում էր: Ես խաղաղություն զգացի, որովհետև նա ուսուցանել էր ինձ աղոթել և սիրել Տիրոջը: Դա այն օրինակն էր, որ նա միշտ ծառայել էր ինձ համար: Երբ մայրերն ու հայրերն աղոթում են երեխաների հետ ավելի կարևոր է, քան որևէ այլ օրինակ:

Ուղերձը, ծառայությունը և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Քավությունը մեր ընտանիքի ծրագրի հիմնական մասն են: Ոչ մի սուրբ գրություն ավելի լավ չի բնորոշի մեր հավատքը, որքան 2 Նեփի 25.26-ը. «Եվ մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին, և մենք գրում ենք մեր մարգարեությունների համաձայն, որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»:

Լեքիի տեսիլքի հիմնական նախադրյալներից մեկն այն է, որ հավատարիմ անդամները պետք է ամուր կառչեն երկաթե ձողից, որպեսզի մնան դեպի կյանքի ծառ տանող ուղիղ ու նեղ ուղու վրա: Անդամների համար կարևոր է՝ կարդալ, խորհել և ուսումնասիրել սուրբ գրությունները:[17]

Մորմոնի Գիրքը կարևոր նշանակություն ունի:[18] Իհարկե, միշտ կլինեն այնպիսիք, ովքեր կթերագնահատեն այս սուրբ գրքի կարևորությունը կամ անգամ կնսեմացնեն այն: Ոմանք հումորով են դա արտահայտել: Նախքան միսիայում ծառայելը, իմ համալսարանի պրոֆեսորը մեջբերեց Մարկ Տվեյնի սահմանումը, որ եթե Մորմոնի Գրքից հանվեր «Եվ եղավ այնպես» արտահայտությունը, այն «կվերածվեր բրոշյուրի»:[19]

Մի քանի ամիս անց, երբ միսիա էի ծառայում Անգլիայի Լոնդոնում, Օքսֆորդի շրջանավարտ, Լոնդոնի Համալսարանի ակադեմիկոս ուսուցիչ, սեմիտական լեզուների



եգիպտացի փորձագետը կարդալով Մորմոնի Գիրքը նամակ էր գրել Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյին և հանդիպեց միսիոներներին: Նա հայտնեց նրանց, որ ինքը համոզված է, որ Մորմոնի Գիրքը այդ ժամանակաշրջանի Հրեաների ուսմունքների և եգիպտացիների լեզվի իսկական թարգմանությունն է:[20] Իր բերած օրինակներից մեկը «Եվ եղավ այնպես» շաղկապող արտահայտությունն էր, որը նրա հավաստմամբ ցույց էր տալիս, թե ինչպես նա կթարգմաներ սեմիտական գրվածքներում օգտագործվող դարձվածքները:[21] Այդ պրոֆեսորը տեղեկացրել էր, որ մինչ իր մասնագիտության վրա հիմնված նրա ինտելեկտուալ մոտեցումը օգնել էր իրեն, սակայն դեռևս անչափ կարևոր էր հոգևոր վկայություն ունենալը: Ուսումնասիրության և աղոթքի միջոցով նա հոգևոր վկայություն ստացավ և մկրտվեց: Այսպիսով, հայտնի հումորիստը ծիծաղի առարկա էր դարձրել այն, ինչը գիտնականը համարեց Մորմոնի Գրքի ճշմարտության հիմնարար ապացույց, որի հաստատումը նա ստացավ Հոգու կողմից:

Ազատ կամքի հիմնական վարդապետությունը պահանջում է, որ վերականգնված ավետարանի մասին վկայությունը հիմնված լինի ոչ թե լոկ արտաքին կամ գիտական ապացույցի, այլ հավատքի վրա: Սևեռուն կենտրոնացումը այն փաստերի վրա, որոնք դեռևս լիովին չեն բացահայտվել, օրինակ՝ ինչպես կարող էր կույսը մանուկ ծնել, Փրկիչը Հարություն առնել կամ ինչպես Ջոզեֆ Սմիթը թարգմանեց մեր սուրբ գրությունները, ապարդյուն է և հոգևոր առաջընթաց չի ապահովում: Սա հավատքի հարց է: Ի վերջո, պատասխանն է Մորոնիի խորհուրդը՝ կարդալ, խորհել և ապա հարցնել Աստծուն սրտի ողջ անկեղծությամբ, իրական միտումով, հաստատելով սուրբ գրքյան ճշմարտությունները Հոգու վկայությամբ:[22] Նաև, եթե մեր կյանքում արմատավորում ենք սուրբ գրքյան հրամայականները և ապրում ենք ավետարանով, մենք օրհնվում ենք Հոգով և ճաշակում Նրա բարությունից՝ զգալով ուրախություն, երջանկություն և հատկապես խաղաղություն:[23]

Իհարկե, սուրբ գրությունների ակտիվ ուսումնասիրությունն է հանդիսանում այն գիծը, որը բաժանում է նրանց, ովքեր լսում են հավատքի երգը, նրանցից, ովքեր խուլ են այդ երգի հանդեպ: Տարիներ առաջ ես խորապես հուզվեցի, երբ սիրելի մարգարե Սպենսեր Վ. Քիմբալը շեշտեց մշտապես սուրբ գրությունները կարդալու և ուսումնասիրելու անհրաժեշտության մասին: Նա ասաց. «Ես պարզել եմ, որ երբ անհոգաբար եմ վերաբերվում աստվածության հետ իմ հարաբերություններին, թվում է աստվածային ականջը չի լսում և աստվածային ձայնը չի խոսում, որ ես շատ-շատ հեռվում եմ: Երբ խորասուզվում եմ սուրբ գրությունների մեջ, տարածությունը փոքրանում է և հոգևոր զգացողությունը վերադառնում է»:[24]

Հուսով եմ, մենք երեխաների հետ կանոնավոր կարդում ենք Մորմոնի Գիրքը: Ես սա քննարկել եմ իմ զավակների հետ: Նրանք ինձ հետ կիսվել են երկու դիտարկումով: Առաջին, գաղտնիքը՝ հաստատակամորեն ամեն օր ընտանիքով սուրբ գրությունները կարդալն է: Դուստրս թեթև անհոգությամբ նկարագրեց իրենց դեռահաս երեխաների հետ հետևողականորեն սուրբ գրությունները կարդալու

վաղ առավոտյան ջանքերը: Նա և ամուսինը վաղ առավոտյան արթնանում են և քնաթաթախ խարխափելով բռնում են երկաթե ճաղավանդակից, որը իրենց աստիճաններով տանում է այնտեղ, որտեղ ընտանիքը հավաքվում է կարդալու Աստծո խոսքը: Կարևորը հաստատակամությունն է, օգնում է նաև հումորի զգացումը: Այն պահանջում է մեծ ջանք ընտանիքի յուրաքանչյուր անդամից, ամեն օր, սակայն դրա համար արժե ջանք գործադրել: Հաստատակամությամբ հաղթահարվում են ժամանակավոր անհաջողությունները:

Երկրորդը, թե ինչպես են մեր կրտսեր որդին և նրա կինը կարդում սուրբ գրությունները իրենց երիտասարդ ընտանիքի հետ: Նրանց չորս զավակներից երկուսը դեռ կարդալ չգիտեն: Հինգ տարեկանի համար նրանք հինգ մատերի նշաններ ունեն, որոնց օգնությամբ նա մասնակցում է սուրբ գրությունների ընտանեկան ընթերցանությանը: Առաջին մատը նշանակում է՝ կրկնել «Եվ եղավ այնպես», երբ որ այն հանդիպում է Մորմոնի Գրքում: Պետք է ասեմ, ես ուրախ եմ, որ այդ արտահայտությունն այդքան հաճախ է հանդիպում: Ի դեպ, երիտասարդ ընտանիքների համար ասեմ, որ 2 մատը նշանակում է՝ «Եվ այսպիսով մենք տեսնում ենք», 3, 4 և 5 մատերը ընտրվում են ծնողների կողմից ըստ տվյալ գլխում պարունակվող բառերի:

Մենք գիտենք, որ սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրությունը և ընտանեկան երեկոները երբեմն կատարյալ չեն: Անկախ ձեր առջև ծառացած խնդիրների, մի վհատվեք:

Խնդրում եմ, հասկացեք, որ առ Տեր Հիսուս Քրիստոս հավատք ունենալը և Նրա պատվիրանները պահելը կան և միշտ կլինի մահկանացու կյանքի որոշիչ քննությունը: Այդ ամենից բացի, մեզանից յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ երբ մեկը համահունչ չի հավատքի երգի հետ, նա համահունչ չի Հոգու հետ: Ինչպես Նեփի մարգարեն է ուսուցանել. «Դուք լսել եք նրա ձայնը . . . և նա խոսել է ձեզ հետ՝ մեղմ, հանդարտ ձայնով, բայց դուք անզգայացած էիք, որպեսզի կարողանայիք զգալ նրա խոսքերը»:[25]

Մեր վարդապետությունը պարզ է՝ մենք պետք է դրական և ուրախ լինենք: Մենք շեշտում ենք մեր հավատքը, ոչ թե մեր վախերը: Մենք ուրախանում ենք նրանով, որ Տերը հավաստիացնում է, որ կկանգնի մեր կողքին, կառաջնորդի և կուղղորդի:[26] Սուրբ Հոգին վկայում է մեր սրտին, որ մենք ունենք սիրող Երկնային Հայր, և մեր փրկագնման համար Նրա ողորմած ծրագիրը լիովին կիրագործվի՝ Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության շնորհիվ:

Ինչպես «Աստծո զավակն եմ» երգի հեղինակ Նաոմի Վ. Ռենդելն է գրել. «Նրա Հոգին առաջնորդում է, Նրա սերը վստահեցնում է, որ վախը հեռանում է, երբ հավատքը տոկում է»:[27]

Ուստի, Լեքիի տեսիլքում հետևորդ լինելու ճանապարհի որ մասում էլ որ լինենք, եկեք վճռականորեն մեր և մեր ընտանիքների մեջ ավելի մեծ ցանկություն արթնացնենք՝ հայցել Փրկչի հավերժական կյանքի անզուգական պարգևը: Ես աղոթում եմ, որ մենք մնանք հավատքի երգին համահունչ: Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի աստվածության և Նրա Քավության իրականության մասին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.30:
2. Jonathan Sacks, “Has Europe Lost Its Soul?” (address delivered on Dec. 12, 2011, at the Pontifical), chiefrabbi.org/ReadArtical.aspx?id=1843.
3. Տես 1 Նեփի 8:
4. Տես 1 Նեփի 8.27; 11.35:
5. Տես 1 Նեփի 8.23; 12.17:
6. 1 Նեփի 8.28:
7. Տես 1 Նեփի 8.12:
8. Փրկիչը հրահանգում է փնտրել կորած ոչխարներին, տես Մատթեոս ԺԸ.12–14:
9. Տես Հովհաննես Ե.22, տես նաև Մատթեոս Է.1–2:
10. Թոմաս Ս. Մոնսոն, «Որ դուք քաջություն ունենաք», *Լիահոնա*, մայիս 2009թ., 124:
11. 1 Նեփի 8.12:
12. *Handbook 2: Administering the Church* (2010), 1.1.1.
13. 1 Նեփի 8.12:
14. Տես Dallin H. Oaks, “Sins and Mistakes,” *Ensign,* Oct. 1996, 62. Երեց Օուքսն ուսուցանեց այս գաղափարը, երբ նա Բրիգամ Յանգ Համալսարանի նախագահն էր 1980թ.:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.25–27:
16. Տես Marva Jeanne Kimball Pedersen, *Vaughn Roberts Kimball: A Memorial* (1995): Վոնը Բրիգամ Յանգ Համալսարանի ֆուտբոլային թիմի կիսապաշտպանն էր 1941թ. աշնանը: Փըրլ Հարբորի վրա հարձակման հաջորդ օրը, 1941թ. դեկտեմբերի 8-ին, նա զինվորագրվեց ԱՄՆ Նավատորմում: Նա զոհվեց 1945թ. մայիսի 11-ին, երբ թշնամին ռմբակոծեց ամերիկյան *Bunker Hill* ռազմանավը, և թաղվեց ծովում:
17. Տես Հովհաննես Ե.39:
18. Տես Ezra Taft Benson, “The Book of Mormon—Keystone of Our Religion,” *Ensign,* Nov. 1986, 4; or *Liahona*, Oct. 2011, 52.
19. Մարկ Տվեյն, *Roughing It* (1891), 127–28: Ըստ Տվեյնի մեկնաբանությունների, յուրաքանչյուր սերունդ լիովին նոր հայտագործություն է: Հիմնականում քիչ է նշվում այն փաստը, որ Մարկ Տվեյնը չէր ընդունում Քրիստոնեությունը և ընդհանուր առմամբ կրոնը:
20. Տես 1 Նեփի 1.2:
21. Ես հանդիպեցի Պր. Էրիդ Սարոֆիմին Լոնդոնում, երբ երեցներն ուսուցանում էին նրան: Տես նաև N. Eldon Tanner, in Conference Report, Apr. 1962, 53: Շատ հնագույն սեմիտական և եգիպտական գրվածքների գիտնականներ նշել են նախադասությունների սկզբում «Եվ եղավ այնպես» շաղկապող արտահայտության հաճախակի օգտագործման մասին, տես Hugh Nibley, *Since Cumorah,* 2nd ed. (1988), 150:
22. Տես Մորոնի 10.3–4; շատ քիչ քննադատներ են փորձարկել սա անկեղծ մտադրությամբ:
23. Տես Վարդապետություն և Ուխտեր 59.23:
24. *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 67.
25. 1 Նեփի 17.45; տես նաև Ezra Taft Benson, “Seek the Spirit of the Lord,” *Tambuli,* Sept. 1988, 5: «Մենք շատ հաճախ զգացողությամբ ենք լսում Տիրոջ խոսքերը: Եթե խոնարհ և զգայուն լինենք, Տերը հուշումներ կտա մեզ մեր զգացողությունների միջոցով»:
26. Տես Վարդապետություն և Ուխտեր 68.6:
27. “When Faith Endures,” *Hymns,* no. 128.

Սան Պաուլո, Բրազիլիա

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ինչպես ստանալ հայտնություն և ոգեշնչում ձեր անձնական կյանքի համար

Ինչու՞ է Տերը ցանկանում, որ մենք աղոթենք Նրան և հարցնենք: Որովհետև այդպես է ստացվում հայտնությունը:

Յուրաքանչյուրը, ով կանգնում է այս ամբիոնի առաջ ուղերձ հղելու զգում է աշխարհի անդամների ուժը և աջակցությունը: Ես շնորհակալ եմ, որ նույն աջակցությունը գալիս է սիրելի զուգընկերոջից՝ վարագույրի մյուս կողմից: Շնորհակալություն, Ջենին:

Սուրբ Հոգին հաղորդում է կարևոր տեղեկություն, որով առաջնորդվելու կարիքը մենք ունենք մեր մահկանացու կյանքի ընթացքում: Երբ այն հստակ է, պարզ և կարևոր, այն կոչվում է հայտնություն: Երբ այն հուշումների շարք է, որոնք մենք հաճախ ստանում ենք քայլ առ քայլ մեզ առաջնորդելու համար դեպի արժանի նպատակ, այն այս ուղերձում կանվանվի ոգեշնչում:

Հայտնության օրինակ կարող է լինել հրահանգը, որ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը ստացավ Տիրոջը երկար ժամանակ շարունակաբար աղոթելուց հետո, որը կապված էր Եկեղեցու բոլոր արժանի տղամարդկանց քահանայություն տալու խնդրի հետ, քանի որ այդ ժամանակ այն հասանելի էր միայն որոշ տղամարդկանց:

Հայտնության մեկ այլ օրինակ է Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթին տրված այս առաջնորդությունը. «Ես կարծում եմ, որ մենք գործում ենք և գտնվում ենք երկնային սուրհանդակների և երկնային էակների ներկայության մեջ: Մենք առանձնացված չենք նրանցից: . . . Մենք սերտորեն կապված ենք մեր ազգականների, մեր նախնիների հետ, . . . ովքեր նախորդել են մեզ հոգևոր աշխարհում: Մենք չենք կարող մոռանալ նրանց, մենք չենք դադարում սիրել նրանց, նրանք միշտ մեր սրտում են և մեր հիշողության մեջ, և այսպիսով մենք հաղորդակցվում և միանում ենք նրանց հետ կապերով, որոնք մենք չենք կարող խզել: . . . Եթե սա է իրավիճակը մեր մահկանացու կյանքում, երբ շրջապատված ենք մեր մահկանացու թուլություններով, . . . որքան ավելի համոզիչ է . . . հավատալը, որ նրանք, ովքեր հավատարիմ են եղել, ովքեր մահացել են, . . . կարող են տեսնել մեզ ավելի լավ, քան մենք կարող ենք տեսնել նրանց, որ նրանք ավելի լավ գիտեն մեզ, քան մենք գիտենք նրանց: . . . Մենք ապրում ենք նրանց ներկայության մեջ, նրանք տեսնում են մեզ, նրանք անհանգստանում են մեր բարօրության համար, նրանք սիրում են մեզ այժմ ավելի, քան երբևէ: Քանզի այժմ նրանք տեսնում են վտանգները, որ գայթակղում են մեզ, . . . նրանց սերը մեր հանդեպ և նրանց ցանկությունը մեր բարեկեցության համար պետք է որ ավելի մեծ լինի, քան այն, որ մենք ենք զգում մեր հանդեպ»:[1]

Հարաբերությունները կարող են ամրանալ վարագույրի միջով այն մարդկանց հետ, ում մենք գիտենք և սիրում ենք: Դա կատարվում է շարունակաբար շիտակ գործելու մեր վճռական ջանքերի շնորհիվ: Մենք կարող ենք ամրացնել մեր հարաբերությունները սիրած անձնավորության հետ, ով հեռացել է, հասկանալով, որ բաժանումը ժամանակավոր է և որ տաճարում կապած ուխտերը հավերժական են: Երբ շարունակաբար հնազանդվում ենք, այն հաստատում է ուխտում եղած խոստումների իրականացումը հավերժության մեջ:

Իմ սեփական կյանքում շատ պարզ հայտնություն եղավ, երբ ես ուժգնորեն հուշում ստացա Հոգուց խնդրել Ջենին Վաթկինսին կնքվել ինձ հետ տաճարում:

Մեծ դասերից մեկը, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է սովորի, հարցնելն է: Ինչու՞ է Տերը ցանկանում, որ մենք աղոթենք Նրան և հարցնենք: Որովհետև այդպես է ստացվում հայտնությունը:

Երբ ես հանդիպում եմ շատ դժվար մի խնդրի, ահա թե ինչպես եմ ես փորձում հասկանալ, թե ինչ անել: Ես ծոմ եմ պահում: Ես աղոթում եմ, որ գտնեմ և հասկանամ սուրբ գրությունները, որոնք կարող են օգնել: Այդ գործընթացը կրկնվում է: Ես սկսում եմ կարդալ հատված սուրբ գրություններից, ես խորհում եմ այդ հատվածի նշանակության մասին և աղոթում եմ ոգեշնչման համար: Այնուհետև ես խորհում եմ և աղոթում, որ իմանամ, թե արդյոք ընկալել եմ այն ամենը, ինչ Տերը ուզում է, որ անեմ: Հաճախ ավելի շատ տպավորություններ գալիս են վարդապետությունը ավելի լավ հասկանալու հետ զուգահեռ: Ես նկատել եմ, որ դա սուրբ գրություններից սովորելու լավ ձև է:

Կան որոշ գործնական սկզբունքներ, որ մեծացնում են հայտնության հնարավորությունները: Առաջինը, բարկություն կամ վիրավորանք կամ պաշտպանվելու ցանկություն առաջացնող զգացմունքներին տեղ տալը հեռու կվանի Սուրբ Հոգին: Այդ զգացմունքները պետք է վերացնել, այլապես հայտնություն ստանալու մեր հնարավորությունը կփոքրանա:

Հաջորդ սկզբունքն է՝ զգույշ լինել հումոր օգտագործելիս: Բարձր, անպատշաճ ծիծաղը կվիրավորի Հոգուն: Լավ հումորի զգացողությունը օգնում է հայտնությանը, բարձր ծիծաղը՝ ոչ: Հումորի զգացումը կյանքում ճնշումներից խուսափելու միջոց է:

Հայտնության մեկ այլ թշնամի է՝ չափազանց բարձր կամ աղմուկով ինչ-որ բան ասելը: Զգուշությամբ ասված ցածր խոսքը մեծացնում է հայտնություն ստանալու զորությունը:

Մյուս կողմից, հոգևոր հաղորդակցումը բարելավվում է առողջ ապրելակերպի միջոցով: Մարզվելու, բավականաչափ քնելու և ճիշտ սնվելու սովորությունները մեծացնում են հայտնություններ ստանալու և հասկանալու մեր ունակությունը: Մենք կապրենք մեզ համար նախատեսված ժամանակահատվածը: Այնուամենայնիվ, մենք կարող ենք լավացնել այդ ծառայության որակը և մեր բարեկեցությունը՝ կատարելով զգույշ և պատշաճ ընտրություններ:

Կարևոր է, որ մեր ամենօրյա միջոցառումները չշեղեն մեզ Հոգուն լսելուց:

Հայտնությունը կարող է նաև տրվել երազում, երբ գրեթե աննկատելի անցում է կատարվում քնից դեպի արթուն վիճակի: Եթե դուք փորձում եք անմիջապես գրի առնել բովանդակությունը, դուք կարող եք գրի առնել կարևոր մանրամասներ, հակառակ դեպքում այն արագ կերպով մոռացվում է: Գիշերվա ոգեշնչված հաղորդակցությունը հիմնականում զուգորդվում է ողջ փորձառության հետ կապված սուրբ զգացողությամբ: Տերն օգտագործում է անձանց, ում մենք շատ ենք հարգում, ուսուցանելու համար մեզ ճշմարտություններ երազում, քանի որ մենք վստահում ենք նրանց և կլսենք նրանց խորհրդին: Տերն է, որ ուսուցանում է Սուրբ Հոգու միջոցով: Այնուամենայնիվ, Նա կարող է երազում ավելի հեշտ դարձնել հասկանալը և ավելի հավանական մեր սրտերին դիպչելը, ուսուցանելով մեզ ինչ-որ մեկի կողմից, ում մենք սիրում և հարգում ենք:

Եթե Տիրոջը նպատակահարմար է, Նա կարող է մեզ հիշեցնել ցանկացած բան: Դա չպիտի թուլացնի Հոգու կողմից ստացած տպավորությունները գրի առնելու մեր վճռականությունը: Ոգեշնչումը զգուշությամբ գրառելը ցույց է տալիս Տիրոջը, որ Նրա հաղորդակցությունները սուրբ են մեզ համար: Գրի առնելը նաև կմեծացնի հայտնությունը մտաբերելու մեր ունակությունը: Հոգու այսպիսի առաջնորդությունների գրառումը պետք է պահպանել, որ այն չկորի կամ այլ մարդկանց համար մատչելի չդառնա:

Սուրբ գրությունները տալիս են ազդեցիկ հաստատում, թե ինչպես է ճշմարտությունը բացում ոգեշնչման պատուհանը, երբ շարունակաբար ապրում ես դրանով, որպեսզի իմանաս, թե ինչ անել և, երբ անհրաժեշտ է, մարդու հնարավորությունները մեծանում են աստվածային զորությամբ: Սուրբ գրությունները նկարագրում են, թե ինչպես են անհրաժեշտության դեպքում դժվարությունները, կասկածները և անհաղթահարելի թվացող խնդիրները հաղթահարելու ունակությունները ուժեղացել Տիրոջ կողմից: Մինչ դուք խորհեք այս օրինակների շուրջ, Սուրբ Հոգու միջոցով հաստատում կգա, որ նրանց փորձառությունները ճշմարիտ են: Դուք կգիտակցեք, որ նմանատիպ օգնություն հնարավոր է ձեր համար:

Ես տեսել եմ դժվարությունների հանդիպող անդամների, ովքեր գիտեին ինչ անել, երբ դա իրենց սեփական ուժերից վեր էր, քանի որ նրանք վստահում էին Տիրոջը և գիտեին, որ Նա կառաջնորդեր նրանց դեպի անհապաղ պահանջվող լուծումները:

Տերը հայտարարել է. «Եվ դուք պետք է ուսուցանվեք ի վերուստ: Սրբացրեք ձեզ, և դուք զորությամբ կօժտվեք, որ կարողանաք ուսուցանել, ճիշտ ինչպես ես ասացի»:[2] *Սրբացրեք ձեզ* բառերը կարող են շփոթեցնող թվալ: Նախագահ Հարոլդ Բ. Լին մի անգամ բացատրել է ինձ, որ դուք կարող եք փոխարինել այդ բառերը «պահեք իմ պատվիրանները» արտահայտությամբ: Կարդացեք այդ ձրով, խորհուրդը ավելի պարզ է թվում:[3]

Մարդը պետք է մտքով և մարմնով միշտ մաքուր լինի և ունենա մաքուր մտադրություն, որպեսզի Տերը կարողանա ոգեշնչել նրան: Նա, ով հնազանդ է Նրա պատվիրաններին, վստահություն է ձեռք բերում Տիրոջ կողմից: Այդ անհատը արժանանում է Նրա ոգեշնչումներին, որպեսզի իմանա, թե ինչ անել և, երբ անհրաժեշտ լինի, արժանանում է աստվածային զորությանը այն անելու համար:

Հոգևոր առումով ավելի ուժեղ դառնալու և ավելի մատչելի լինելու համար այն պետք է սերմանել արդար միջավայրում: Գոռոզությունը, հպարտությունը և մեծամտությունը նման են քարքարոտ վայրին, որը երբեք հոգևոր պտուղ չի տա:

Համեստությունը պտղաբեր հող է, որտեղ հոգևորությունը աճում և տալիս է ոգեշնչման պտուղ, որպեսզի իմանալ, թե ինչ անել: Այն աստվածային զորություն է տալիս իրականացնելու համար այն, ինչը

պետք է անել: Փառք և ճանաչում ցանկացող անհատը չի կարող որակավորվել Հոգուց ուսուցանվելու համար: Ինքնահավան անձնավորությունը կամ նա, ով թույլ է տալիս իր զգացմունքներին ներգործել իր որոշումների վրա, Հոգու կողմից զորությամբ չի առաջնորդվի:

Երբ մենք գործիք ենք հանդիսանում ուրիշների համար, մենք ավելի հեշտությամբ ենք ոգեշնչվում, քան երբ մենք մտածում ենք միայն մեր մասին: Ուրիշներին օգնելու գործընթացը Տերը կարող է օգտակար դարձնել մեր իսկ համար:

Մեր Երկնային Հայրը մեզ չի բերել երկիր ձախողվելու համար, այլ փառահեղ հաջողություն ձեռք բերելու համար: Սա կարող է արտասովոր թվալ, սակայն դա է պատճառը, որ աղոթքի պատասխանը նկատելը կարող է երբեմն շատ դժվար լինել: Երբեմն մենք անխոհեմորեն փորձում ենք կյանքում առաջնորդվել, հիմնվելով մեր սեփական փորձառության և ունակության վրա: Մեր կողմից ավելի խելացի կլինի աղոթքով և աստվածային ոգեշնչմամբ փնտրել, իմանալու համար, թե ինչ անել: Մեր հնազանդությունը երաշխավորում է, որ երբ պահանջվի, մենք կարողանանք որակվել աստվածային զորության համար՝ ոգեշնչված գործ իրականացնելու համար:

Մեզանից շատերի նման Օլիվեր Քաուդերին չէր գիտակցել, որ Տերն արդեն իսկ պատասխանել էր իր աղոթքներին: Նրա և մեր աչքերը բացելու համար, Ջոզեֆ Սմիթի միջոցով տրվեցայս հայտնությունը.

«Օրհնված ես դու այն բանի համար, որ արել ես. քանզի դու հարցրել ես ինձ, և ահա, այնքան հաճախ, որքան հարցրել ես ինձ, դու հրահանգներ ես ստացել իմ Հոգուց: Եթե դա այդպես չլիներ, դու չէիր լինի այն տեղում, որտեղ հիմա գտնվում ես:

Ահա, դու գիտես, որ հարցրել ես ինձ, և ես լուսավորել եմ քո միտքը. և այժմ ես ասում եմ քեզ այս բաները, որ կարողանաս իմանալ, որ դու լուսավորվել ես ճշմարտության Հոգով»:[4]

Եթե դուք զգում եք, որ Տերը չի պատասխանել ձեր աղոթքներին, խորհեք այս սուրբ գրությունների շուրջ, այնուհետև զգուշությամբ փնտրեք փաստեր ձեր իսկ կյանքում, որոնք կվկայեն, որ Նա արդեն իսկ պատասխանել է ձեզ:

Աստծուց եկող զգացմունքների կամ հուշումների երկու նախանշաններ են սրտում խաղաղության զգացումը և մեղմ ու ջերմ զգացողությունը: Եթե դուք հետևեք իմ քննարկած սկզբունքներին, դուք պատրաստ կլինեք տեսնելու հայտնությունը ձեր կյանքի վճռորոշ պահերին:

Որքան ավելի մոտիկից դուք հետևեք աստվածային առաջնորդությանը, այնքան ավելի մեծ կլինի ձեր ուրախությունն այստեղ և հավերժության մեջ. դեռ ավելին, ավելի մեծ կլինի ձեր զարգացումը և ծառայելու ունակությունը: Ես ամբողջությամբ չեմ հասկանում, թե ինչպես է դա կատարվում, սակայն այդ առաջնորդությունը ձեր կյանքում ձեզանից չի խլում ձեր ազատ ընտրության իրավունքը: Դուք կարող եք որոշումներ կայացնել, որոնք որ դուք ընտրում եք կայացնել: Սակայն հիշեք, ճիշտը գործելու հակվածությունը բերում է մտքի խաղաղություն և երջանկություն:

Եթե սխալ ընտրություններ են կատարվում, վերադառնալու ճանապարհ կա ապաշխարության միջոցով: Երբ սխալը մինչև վերջ արդեն արված է, Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի Քավությունը ազատում է մեզ կատարված սխալների արդարադատության պահանջներից: Սա զարմանալիորեն պարզ և անհամեմատելիորեն գեղեցիկ է: Եթե դուք շարունակում եք արդար ապրել, դուք միշտ հուշում կստանաք, որ իմանաք ինչ անել: Երբեմն ընտրություն կատարելը կարող է պահանջել ձեզանից մեծ ջանքեր և վստահություն: Այնուամենայնիվ, ձեզ կհուշվի, որ իմանաք, թե ինչ անեք, երբ դուք հանդիպեք ձեր կյանքում իրավիճակների, երբ անհրաժեշտ է այսպիսի աստվածային առաջնորդություն, ինչպիսիք են հնազանդությունը Տիրոջ պատվիրաններին, վստահություն Նրա երջանկության աստվածային ծրագրի հանդեպ և խուսափել ցանկացած բանից, որը հակասում է դրան:

Մեր Երկնային Հոր հետ հաղորդակցվելը աննշան բան չէ: Այն սուրբ արտոնություն է: Այն հիմնված է հավերժական, անփոփոխ սկզբունքների վրա: Մենք օգնություն ենք ստանում մեր Երկնային Հոր կողմից ի պատասխան մեր հավատքի, հնազանդության և ազատ ընտրության պատշաճ օգտագործման:

Թող Տերը ոգեշնչի ձեզ հասկանալու և օգտագործելու սկզբունքները, որոնք տանում են դեպի անձնական հայտնություն և ոգեշնչում, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Joseph F. Smith, in Conference Report, Apr. 1916, 2–3; տես նաև *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 430–31:
2. Վարդապետություն և Ուխտեր 43.16:
3. Տես *Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* (2000), 34:
4. Վարդապետություն և Ուխտեր 6.14–15:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Երկնքի զորությունները

Քահանայություն կրողները՝ երիտասարդ և մեծահասակ, կարիք ունեն և իշխանության, և զորության՝ փրկության գործում Աստծուն ներկայացնելու համար անհրաժեշտ թույլտվության և հոգևոր ունակության:

Ամ սիրելի եղբայրներ, ես երախտապարտ եմ, որ մենք կարող ենք միասին երկրպագել՝ որպես քահանայություն կրողների մի մեծ մարմին: Ես սիրում և հիանում եմ ձեր արժանավորությամբ և բարի ազդեցությամբ ողջ աշխարհում:

Ես հրավիրում եմ յուրաքանչյուրիդ մտածել, թե ինչպես կպատասխանեիք հետևյալ հարցին, որը տրվեց Եկեղեցու անդամներին շատ տարիներ առաջ Նախագահ Դեյվիդ Օ. Մաքկեյի կողմից. «Եթե այս պահին ձեզանից յուրաքանչյուրին խնդրեն մի նախադասությամբ կամ արտահայտությամբ նշել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ամենատարբերակիչ հատկանիշը, ո՞րը կլիներ ձեր պատասխանը» (“The Mission of the Church and Its Members,” *Improvement Era,* Nov. 1956, 781):

Իր սեփական հարցին Նախագահ Մաքկեյը պատասխանեց՝ քահանայության «աստվածային իշխանությունը»: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին առանձնանում է այլ եկեղեցիներից, որոնք համարում են, որ իրենց իշխանությունը ծագում է պատմական անցյալից, սուրբ գրություններից կամ կրոնական ուսուցումից: Մեր հայտարարությունը այլ է՝ քահանայության իշխանությունը շնորհվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին ձեռնադրությամբ՝ անմիջապես երկնային սուրհանդակների կողմից:

Իմ ուղերձը կենտրոնացած է այս աստվածային քահանայության և երկնային զորությունների շուրջ: Ես անկեղծ աղոթում եմ Տիրոջ Հոգու օգնության համար, մինչ մենք կսովորենք այդ կարևոր ճշմարտությունների մասին:

Քահանայության իշխանությունը և զորությունը

Քահանայությունը Աստծո իշխանությունն է՝ փոխանցված երկրի տղամարդկանց՝ գործելու բոլոր բաներում մարդկության փրկության համար (տես Spencer W. Kimball, “The Example of Abraham,” *Ensign,* June 1975, 3): Քահանայությունը միջոց է, որով Տերը գործում է մարդկանց միջոցով՝ հոգիներ փրկելու համար: Հիսուս Քրիստոսի Եկեղեցու տարբերակիչ հատկանիշներից մեկը՝ և հնում և այսօր, Նրա իշխանությունն է: Չի կարող լինել ճշմարիտ Եկեղեցի առանց աստվածային իշխանության:

Սովորական տղամարդկանց տրվում է քահանայության իշխանությունը: Արժանավորությունը և պատրաստակամությունը, ոչ թե փորձը, մասնագիտությունը կամ կրթությունը, հանդիսանում են քահանայության շնորհման նախադրյալները:

Քահանայության իշխանությունը ստանալու ձևը նկարագրվում է Հավատո հինգերորդ հանգանակում. «Մենք հավատում ենք, որ Ավետարանը քարոզելու և նրա արարողությունները սպասավորելու համար, մարդ պետք է կանչված լինի Աստծո կողմից՝ մարգարեությամբ և իշխանություն ունեցողների ձեռնադրմամբ»: Այսպիսով, տղան կամ տղամարդը ստանում են քահանայության իշխանությունը և կարգվում որոշակի պաշտոնի նրա կողմից, ով արդեն կրում է քահանայություն և լիազորված է քահանայության անհրաժեշտ բանալիները կրող ղեկավարի կողմից:

Քահանայություն կրողը պետք է գործադրի այս սուրբ իշխանությունը համաձայն Աստծո սուրբ մտքի, կամքի և նպատակների: Քահանայությանը վերաբերող ոչ մի հարց ինքնակենտրոնացված չէ: Քահանայությունը պետք է միշտ օգտագործվի մարդկանց ծառայելու, օրհնելու և ամրացնելու համար:

Ավելի բարձր քահանայությունը ստացվում է պաշտոնական ուխտով, որը ներառում է պարտավորություն գործելու ստացված իշխանությամբ (տես ՎԿՈ 68.8) և պաշտոնում (տես ՎԿՈ 107.99): Որպես Աստծո սուրբ իշխանության կրողներ, մենք գործակալներ ենք գործելու համար, ոչ թե ներգործվելու համար առարկա (տես 2 Նեփի 2.26): Քահանայությունն ըստ էության ակտիվ է, ոչ թե պասիվ:

Նախագահ Էզրա Թավթ Բենսոնն ուսուցանել է.

«Բավական չէ ստանալ քահանայություն, ապա պասիվորեն նստել և սպասել մինչև ինչ-որ մեկը ակտիվացնի մեզ: Երբ մենք ստանում ենք քահանայություն, մենք պարտավորություն ենք ձեռք բերում ակտիվորեն և ոգեշնչված ներգրավվելու երկրի վրա արդարության աշխատանքը առաջ տանելու մեջ, որովհետև Տերն ասել է.

«. . . Ով ոչինչ չի անում, մինչև նրան չեն պատվիրում, և ընդունում է պատվիրանը կասկածամիտ սրտով, և պահում է այն ծուլությամբ, նա նզովված է» [ՎևՈւ 58.29]» (*So Shall Ye Reap* [1960], 21):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը նաև հատուկ շեշտել է քահանայության ակտիվ բնույթը. «Քահանայության ուխտը կարելի է կոտրել, խախտելով պատվիրանները, նաև՝ չկատարելով պարտականությունները: Հետևաբար, *այս ուխտը դրժելու համար բավական է ոչինչ չանել*» (*The Miracle of Forgiveness* [1969], 96):

Երբ մենք անում են, ինչ կարող ենք, քահանայության մեր պարտականությունները կատարելու համար, մենք կարող ենք օրհնվել քահանայության զորությամբ: Քահանայության զորությունը Աստծո զորությունն է, որը գործում է մեզ նման տղամարդկանց և տղաների միջոցով, և պահանջում է անձնական արդարակեցություն, հավատք, հնազանդություն և ջանասիրություն: Տղան կամ տղամարդը կարող է ձեռնադրությամբ ստանալ քահանայության իշխանություն, սակայն նա չի ունենա քահանայության զորություն, եթե լինի անհնազանդ, անարժան կամ անպատրաստակամ ծառայելու:

«Քահանայության իրավունքներն անբաժանորեն կապված են երկնքի զորությունների հետ, և . . . երկնքի *զորությունները* չեն կարող կառավարվել, ոչ էլ գործածվել, բացի միայն արդարության սկզբունքների հիման վրա:

Որ դրանք կարող են շնորհվել մեզ, ճշմարիտ է. բայց երբ մենք ձգտում ենք քողարկել մեր մեղքերը կամ գոհացնել մեր հպարտությունը, մեր ունայն փառասիրությունը կամ իշխանություն, տիրապետություն կամ էլ հարկադրանք ենք գործադրում մարդկանց զավակների հոգիների վրա, անիրավության որևէ աստիճանով, ահա, երկինքները ետ են քաշվում. Տիրոջ Հոգին տրտմում է. և երբ այն ետ է քաշվում, Ամեն այդ մարդու քահանայությանը կամ իշխանությանը» (ՎևՈւ 121.36–37; շեշտադրումն ավելացված է):

Եղբայրներ, երբ տղան կամ տղամարդը ստանում է քահանայության իշխանությունը, սակայն անտեսում է իր անելիքները քահանայության զորությանը արժանանալու համար, դա անընդունելի է Տիրոջ համար: Քահանայություն կրողները՝ երիտասարդ և մեծահասակ, կարիք ունեն և իշխանության, և զորության՝ փրկության գործում Աստծուն ներկայացնելու համար

անհրաժեշտ թույլտվության և հոգևոր ունակության:

Դաս իմ հորից

Ես մեծացել եմ մի տանը, որտեղ կային հավատարիմ մայր և հիանալի հայր: Մայրս պիոներների սերնդից էր, որոնք ամեն ինչ զոհաբերել էին Եկեղեցու և Աստծո արքայության համար: Հայրս մեր Եկեղեցու անդամ չէր և երիտասարդ տարիքում ցանկացավ դառնալ կաթոլիկ քահանա: Ի վերջո, նա որոշեց չհաճախել կրոնական սեմինարիա, փոխարենը ընտրեց գործիքներ պատրաստելու մասնագիտությունը:

Իր ամուսնացած կյանքի մեծ մասը հայրս մեր ընտանիքի հետ միասին հաճախել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ժողովներին: Իրականում, մեր ծխի անդամների մեծ մասը չեն իմացել անգամ, որ հայրս Եկեղեցու անդամ չէր: Նա խաղում էր և մարզում մեր ծխի սոֆտբոլի թիմում, օգնում էր սքաութների միջոցառումներին և աջակցում մայրիկիս նրա բազմազան կոչումներում և պարտականություններում: Ես ուզում եմ պատմել ձեզ քահանայության իշխանության և զորության վերաբերյալ մեծ դասերից մեկի մասին, որը սովորել եմ իմ հայրիկից:

Երբ տղա էի, ամեն շաբաթ հորս մի քանի անգամ հարցնում էի, թե երբ էր նա պատրաստվում մկրտվել: Նա սիրով, սակայն վստահորեն, ամեն անգամ պատասխանում էր. «Դեյվիդ, ես չեմ պատրաստվում միանալ Եկեղեցուն քո մայրիկի, քեզ կամ որևէ մեկի համար: Ես կմիանամ Եկեղեցուն, երբ իմանամ, որ դա անելը ճիշտ է»:

Համոզված եմ, որ դեռահասության վաղ տարիքում էի, երբ տեղի ունեցավ հորս հետ այս զրույցը: Մենք հենց նոր միասին վերադարձել էինք տուն մեր կիրակնօրյա ժողովից և ես հարցրեցի հայրիկիս, թե երբ էր նա պատրաստվում մկրտվել: Նա ժպտաց և ասաց. «Միշտ դու ես ինձ հարցնում մկրտվելու մասին: Այսօր ես քեզ հարց ունեմ»: Ես արագ և ոգևորված ենթադրեցի, որ մենք

առաջադիմել ենք այս հարցում:

Հայրս շարունակեց. «Դեյվիդ, քո եկեղեցին ուսուցանում է, որ քահանայությունը հնում վերցվել է Երկրի վրայից և ապա վերականգնվել Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով երկնային սուրհանդակների օգնությամբ, այդպես չէ՞»: Ես պատասխանեցի, որ նրա պնդումը ճշմարիտ էր: Ապա նա ասաց. «Ահա իմ հարցը. ամեն շաբաթ քահանայության ժողովին ես լսում եմ, ինչպես են եպիսկոպոսը և քահանայության մյուս ղեկավարները հիշեցնում, խնդրում և աղաչում, որ տղամարդիկ կատարեն իրենց տնային ուսուցումը և քահանայության իրենց պարտականությունները: Եթե քո եկեղեցին իսկապես ունի Աստծո վերականգնված քահանայությունը, ինչո՞ւ քո եկեղեցում այդքան շատ տղամարդիկ չեն տարբերվում իմ եկեղեցու տղամարդկանցից՝ իրենց կրոնական պատասխանատվությունները կատարելու հարցում»: Իմ երիտասարդ ուղեղը անմիջապես դատարկվեց: Ես չունեի հորս հարցի բավարար պատասխանը:

Ես հավատացած եմ, հայրս սխալ էր, դատելով աստվածային իշխանություն կրելու մեր Եկեղեցու հայտարարության արժեքի մասին, ելնելով այն տղամարդկանց թերություններից, որոնց հետ նա շփվում էր մեր ծխում: Սակայն նրա հարցի մեջ ինձ համար մարմնավորվում էր իրավացի ենթադրությունը, որ տղամարդիկ, ովքեր կրում են Աստծո սուրբ քահանայությունը, պետք է տարբերվեն մյուս տղամարդկանցից: Քահանայություն կրող տղամարդիկ ժառանգորեն մյուս տղամարդկանցից լավը չեն, բայց նրանք պետք է այլ պահվածք ունենան: Քահանայություն կրող տղամարդիկ պետք է ոչ միայն ստանան քահանայության իշխանությունը, այլ դառնան Աստծո զորության արժանի և հավատարիմ կատարածուներ: «Մաքուր եղեք, ով Տիրոջ սպասները կրողներ» (ՎԼՈ 38.42):

Ես երբեք չեմ մոռացել քահանայության իշխանության և զորության մասին դասերը, որոնք սովորել եմ

իմ հորից, որը լավ մարդ էր՝ ոչ մեր հավատքից, որն ավելին էր ակնկալում այն տղամարդկանցից, ովքեր համարում էին իրենց Աստծո քահանայությունը կրողներ: Տարիներ առաջ հորս հետ կիրակնօրյա այդ զրույցը ինձ մեջ «լավ տղա» լինելու ցանկություն առաջացրեց: Ես չէի ուզում լինել թույլ օրինակ և խանգարող քար վերականգնված ավետարանի մասին սովորելու հորս ճանապարհին: Ես պարզապես ուզում էի լինել լավ տղա: Տիրոջը հարկավոր է, որ որպես Իր իշխանության կրողներ մենք լինենք պատվարժան, առաքինի և լավ տղաներ՝ բոլոր ժամանակներում և բոլոր տեղերում:

Ձեզ հետաքրքիր կլինի իմանալը, որ տարիներ անց իմ հայրը մկրտվեց: Եվ պատշաճ ժամանակին ես հնարավորություն ունեցա շնորհելու նրան Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայությունները: Իմ կյանքի մեծագույն փորձառություններից էր տեսնելը, ինչպես է հայրս ստանում քահանայության իշխանությունը, և, ի վերջո, զորությունը:

Ես կիսվում եմ ձեզ հետ հորիցս սովորած այս համոզիչ դասով՝ շեշտելու համար մի պարզ ճշմարտություն: Ձեռնադրությամբ քահանայության իշխանություն ստանալը կարևոր սկիզբ է, սակայն բավական չէ: Ի սպաս դնելը իշխանություն է շնորհում, սակայն պահանջվում է արդարակեցություն զորության հետ մեկտեղ, որպեսզի մենք բարձրացնենք հոգիներ, ուսուցանենք և վկայենք, օրհնենք և խորհուրդ տանք, և առաջ տանենք փրկության աշխատանքը:

Երկրի պատմության այս կարևոր ժամանակ դուք և ես՝ որպես քահանայություն կրողներ պետք է լինենք արդարակյաց տղամարդիկ և արդյունավետ գործիքներ Աստծո ձեռքերում: Մենք պետք է դառնանք Աստծո տղամարդիկ: Դուք և ես լավ կանենք, եթե սովորենք Նեփիի օրինակից և հետևենք դրան, Նեփիի, որը Հելամանի թոռն էր և առաջինը այն տասներկու աշակերտներից, ովքեր կանչվեցին Փրկչի կողմից Նեփիացիների մեջ Նրա ծառայության սկզբում. «Եվ [Նեփին] շատ բաներ սովորեցրեց նրանց. . . . Եվ Նեփին սովորեցնում էր զորությամբ և մեծ իշխանությամբ» (3 Նեփի 7.17):

«Խնդրում եմ, օգնեք ամուսնուս հասկանալ»

Երբ որպես եպիսկոպոս և ցցի նախագահ ես տաճարային երաշխավորագրի հարցազրույցներ էի անցկացնում, վերջում հաճախ հարցնում էի ամուսնացած կանանց, թե ինչպես կարող եմ լավագույնս ծառայել իրենց և իրենց ընտանիքներին: Այդ հավատարիմ կանանց պատասխանների նմանությունը և ուսուցողական է, և անհանգստացնող: Քույրերը հազվադեպ են բողոքում կամ քննադատում, սակայն շատ հաճախ այսպես են պատասխանում. «Խնդրում եմ, օգնեք ամուսնուս հասկանալ որպես մեր տանը քահանայության ղեկավար իր պատասխանատվությունը: Ես ուրախությամբ եմ իմ ձեռքը վերցնում սուրբ գրությունների ուսումնասիրության, ընտանեկան աղոթքի և ընտանեկան երեկոյի նախաձեռնությունը, և կշարունակեմ դա անել: Բայց ես կցանկանայի, որ ամուսինս հավասար գործընկեր լիներ և քահանայության ամուր ղեկավարում ապահովեր, որը միայն նա կարող է անել: Խնդրում եմ, օգնեք իմ ամուսնուն սովորել մեր տանը լինել հայրապետ և քահանայության ղեկավար, որը նախագահում և պաշտպանում է»:

Ես հաճախ եմ խորհում այդ քույրերի անկեղծության և նրանց այս խնդրանքի շուրջ: Քահանայության ղեկավարները նման մտահոգություններ են լսում այսօր: Շատ կանայք խնդրում են, որ իրենց ամուսիններն ունենան ոչ միայն քահանայության իշխանություն, այլև քահանայության զորություն: Նրանք ուզում են հավասարապես կրել իրենց բեռը հավատարիմ ամուսինների և քահանայության զուգընկերների հետ, ստեղծելով Քրիստոսակենտրոն և ավետարանակենտրոն տներ:

Եղբայրներ, ես խոստանում եմ, որ եթե դուք և ես աղոթքով խորհենք այս քույրերի խնդրանքի մասին, Սուրբ Հոգին կօգնի տեսնել մեզ այնպես, ինչպես մենք իրականում կանք (տես ՎԿՈ 93.24), և կօգնի մեզ հասկանալ այն բաները, որոնք մենք պետք է փոխենք և բարելավենք: Իսկ գործելու ժամանակը այժմ է:

Եղեք արդարակեցության օրինակներ

Այսօր ես կրկնում եմ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի ուսմունքները, ով հրավիրել է մեզ որպես քահանայություն կրողներ լինել «արդարակեցության օրինակներ»: Նա շարունակ հիշեցնում է մեզ, որ մենք Տիրոջ այգում ենք և արժանի ենք Նրա օգնությանը, որը պայմանավորված է մեր արժանավորությամբ (տես «Արդարության օրինակները», *Լիահոնա*, մայիս 2008, 65–68): Դուք և ես կրում ենք քահանայության իշխանությունը, որը վերադարձվել է Երկիր այս տնտեսությունում երկնային սուրհանդակների՝ Հովհաննես Մկրտչի և Պետրոսի, Հակոբոսի ու Հովհաննեսի կողմից: Հետևաբար յուրաքանչյուր տղամարդ, ով ստանում է Մելքիսեդեկյան Քահանայություն, կարող է տանել իշխանության իր անձնական գիծը անմիջապես դեպի Տեր Հիսուս Քրիստոսը: Ես հույս ունեմ, որ մենք գնահատում ենք այդ հրաշալի օրհնությունը: Ես աղոթում եմ, որ մենք լինենք մաքուր և արժանի ներկայացնելու Տիրոջը՝ Նրա սուրբ իշխանությունը գործածելիս: Թող որ մեզանից յուրաքանչյուրը արժանի լինի քահանայության զորությանը:

Ես վկայում եմ, որ սուրբ քահանայությունը իսկապես վերականգնվել է երկրի վրա այս վերջին օրերին և այն գտնվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Ես նաև վկայում եմ, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Եկեղեցու քահանայապետերի նախագահող քահանայապետն է (տես ՎԿՈ 107.9, 22, 65–66, 91–92) և միակ անձը երկրի վրա, ով կրում է և լիազորված է գործածելու քահանայության բոլոր բանալիները: Այս ճշմարտությունների մասին ես հանդիսավորությամբ վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Եպիսկոպոս Ռիչարդ Ս. Էդգլի
Նախագահող Եպիսկոպոսության վերջերս
ազատված Առաջին Խորհրդական

Հասնել իրական աճի

Հոգիներ փրկելը այն աշխատանքն է,
որ Փրկիչը կանչել է մեզ բոլորիս անել:

Վերջին ամիսներին ավելի շատ ուշադրություն է դարձվում Եկեղեցում իրական աճ ապահովելու անհրաժեշտությանը, բերելով բոլորին, ովքեր կընդունեն և կպահեն ուխտերը և փրկագնող արարողությունները և կապրեն սրտի հզոր փոփոխությամբ, որը նկարագրել էր Ալման (տես Ալմա 5.14): Եկեղեցում իրական աճ ունենալու ամենահիմնական և կարևոր եղանակներից մեկը մկրտվածներին օգնության հասնելն ու փրկելն է, ովքեր գտնվում են քիչ-ակտիվ վիճակում, առանց օրհնություններ և փրկագնող արարողություններ ստանալու: Անկախ տնային կամ այցելող ուսուցիչ, կիրակնօրյա դպրոցի ուսուցիչ, եպիսկոպոս, հայր, մայր կամ Բարձրագույն Իշխանավոր

Մի կիրակի առավոտ, մոտավորապես 30 տարի առաջ, մինչ ես ծառայում էի ցցի նախագահությունում, մենք հեռախոսազանգ ստացանք մեր հավատարիմ եպիսկոպոսներից մեկից: Նա բացատրեց, որ իր ծուխը այնքան արագ էր աճել, որ նա այլևս չէր կարողանում կարևոր կոչումներ տալ բոլոր արժանի անդամներին: Նրա խնդրանքն էր մեզ, որ մենք կիսեինք ծուխը: Մինչ սպասում էինք նման պաշտոնական թույլտվության, մենք որոշեցինք որպես ցցի նախագահություն այցելել ծուխ և կանչել այդ բոլոր հրաշալի, արժանի եղբայրներին և քույրերին որպես ցցի միսիոներներ:

Երրորդ մարդը, ում ես այցելեցի, մի երիտասարդ ուսանողուհի էր, որ հաճախում էր տեղի համալսարանը: Մի քանի րոպե զրուցելուց հետո, ես տվեցի նրան կոչում՝ ծառայելու որպես միսիոներ: Մի քանի րոպե լռություն տիրեց: Այնուհետև նա ասաց. «Նախագահ, դուք չգիտե՞ք, որ ես ոչ ակտիվ եմ Եկեղեցում»:

Մի քանի րոպե լռելուց հետո ես ասացի. «Ոչ, ես չգիտեի, որ դուք ոչ ակտիվ եք»:

Նա պատասխանեց. «Ես ոչ ակտիվ եմ եղել Եկեղեցում տարիներ շարունակ»: Այնուհետև նա ասաց. «Չգիտե՞ք, որ երբ դուք ոչ ակտիվ եք լինում, դա այդքան էլ հեշտ չէ վերադառնալ»:

Ես պատասխանեցի. «Ոչ: Ձեր ճյուղը սկսում է ծառայությունը ժամը 9.00: Դուք գալիս եք աղոթատուն և դուք մեզ հետ եք»:

Նա պատասխանեց. «Ոչ, դա այդքան էլ հեշտ չէ: Դուք անհանգստանում եք շատ բաների համար: Ձեզ անհանգստացնում է, թե արդյոք ինչ-որ մեկը կողջունի ձեզ կամ եթե դուք մենակ կնստեք և կանտեսվեք ժողովների ժամանակ: Եվ դուք անհանգստանում եք, թե արդյոք դուք կնդունվեք և ովքեր կլինեն ձեր նոր ընկերները»:

Մինչ արցունքները գլորվում էին նրա այտերի վրայով, նա շարունակեց. «Ես գիտեմ, որ իմ հայրն ու մայրը տարիներ շարունակ աղոթել են իմ համար, որ ես վերադառնամ Եկեղեցի»: Այնուհետև, ևս մի րոպե լռությունից հետո, նա ասաց. «Վերջին երեք ամիսների ընթացքում ես աղոթում էի, որ գտնեի քաջություն, ուժ և ճանապարհ ակտիվության վերադառնալու համար»: Հետո նա հարցրեց. «Նախագահ, ի՞նչ եք կարծում, այս կոչումը կարո՞ղ է այդ աղոթքների պատասխանը լինել»:

Իմ աչքերը սկսեցին լցվել և ես պատասխանեցի. «Ես կարծում եմ, որ Տերը պատասխանեց ձեր աղոթքներին»:

Նա ոչ միայն ընդունեց կոչումը, այլ դարձավ հրաշալի միսիոներ: Եվ ես վստահ եմ, որ նա մեծ ուրախություն բերեց ոչ միայն ինքն իրեն, այլ նաև իր ծնողներին և հավանաբար ընտանիքի այլ անդամներին:

Մի քանի բաներ կան, որ ես սովորեցի այս և նմանատիպ հարցազրույցներից.

- Ես սովորել եմ կամ հիշեցվել, որ բազում քիչ-ակտիվ անդամներ ունեն սիրած էակներ, ովքեր ամեն օր իրենց ծնկների վրա աղոթքով խնդրում են Տիրոջը օգնել փրկել իրենց սիրելիին:
- Ես սովորեցի, որ այդքան էլ հեշտ չէր կամ հարմար քիչ-ակտիվ անդամի համար պարզապես քայլել ու ետ գալ Եկեղեցի: Նրանք օգնության կարիք ունեն: Նրանք աջակցության կարիք ունեն: Նրանք ընկերակցության կարիք ունեն:
- Ես սովորեցի նաև, որ մենք ունենք քիչ-ակտիվ անդամներ, ովքեր փորձում են և կամենում գտնել ակտիվ դառնալու ուղին:
- Ես սովորեցի, որ մի շարք քիչ-ակտիվ անդամներ կոչումներ կկրեն, եթե խնդրենք նրանց:
- Ես սովորեցի, որ քիչ-ակտիվ անդամը արժանի է, որ վերաբերվենք նրան որպես հավասարի և դիտենք նրան որպես սիրող Աստծո որդի կամ դուստր:

Տարիներ շարունակ ես խորհել եմ, թե ինչպես կանցներ այս հարցազրույցը, եթե ես նրան մոտենայի որպես Եկեղեցու քիչ-ակտիվ անդամի: Ես թողնում եմ, որ դուք որոշեք, թե ինչ կարող էր պատահել:

Մի շարք քիչ-ակտիվ անդամների կյանքում մի պահ է գալիս, երբ ինչ-որ մի բան դրդում է նրանց պատրաստ լինել վերադառնալու լրիվ ակտիվության Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցում: Դրա պատճառը կարող է լինել նոր ծնված երեխան: Կարող է լինել մահը: Դա կարող է լինել որոշակի աստիճանի հուսահատության կամ կարիքի մեջ լինելը: Դա կարող է լինել Տիրոջը հղված սիրած մեկի աղոթքների պատասխանը: Կամ դա կարող է այնքան հասարակ լինել, ինչպես ընդամենը խնդրելը: Շատերը կարող են և կկատարեն այդ փոփոխությունը, եթե նրանց վերաբերվեն որպես Աստծո արժեքավոր որդու կամ դստեր:

Վերաակտիվացումը միշտ եղել է Տիրոջ աշխատանքի կարևոր մասը: Չնայած օգնության հասնելը յուրաքանչյուր անդամի պարտականությունն է, Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայություն կրողների պարտականությունն է առաջնորդել ուրիշներին այս աշխատանքում: Ի վերջո դա այն է, ինչ իրենից ներկայացնում է քահանայության ծառայությունը՝ բերել բոլոր մարդկանց առ Տիրոջ վեհացնող ուխտերը, պարգևելով խաղաղություն, երջանկություն և ինքնարժեք:

Մորմոնի Գրքից ձեր ուսումնասիրության ժամանակ դուք կվերհիշեք, երբ Ալմա Կրտսերը իմացավ, որ Զորամացիները հեռացել էին Եկեղեցուց, նա կազմավորեց վերաակտիվացնող խումբ այդ մարդկանց փրկելու համար: Մինչ նրանք կատարում էին իրենց հանձնարարությունը, Ալման աղերսում էր Տիրոջն այս խոսքերով.

«Ո՜վ Տեր, խնդրում եմ շնորհիր մեզ, որ մենք կարողանանք հաջողություն ունենալ՝ նրանց *կրկին* Քրիստոսով դեպի քեզ բերելու:

Ահա, ո՜վ Տեր, նրանց հոգիներն արժեքավոր են, և *նրանցից շատերը մեր եղբայրներն են*. հետևաբար, ո՜վ Տեր, տուր մեզ զորություն և իմաստություն, որ կարողանանք մեր այս եղբայրներին կրկին բերել քեզ մոտ» (Ալմա 31.34–35, ընդգծումներն ավելացված են):

Մի քանի ամիս առաջ նորադարձների և քիչ-ակտիվ անդամների հանդիպման ժամանակ վերաակտիվացված իմ տարիքի մի ջենտելմեն մոտեցավ ինձ և ասաց. «Ես քիչ-ակտիվ եմ եղել իմ կյանքի մեծ մասը: Ես հեռացա Եկեղեցուց իմ կյանքի վաղ շրջանում: Սակայն ես վերադարձել եմ այժմ, և ես աշխատում եմ տաճարում իմ կնոջ հետ»:

Որպեսզի օգնեի նրան իմանալ, որ ամեն ինչ լավ էր, ես այսպիսի պատասխան տվեցի. «Ամեն ինչ լավ է, քանի որ ամեն բան լավ ավարտ ունեցավ»:

Նա պատասխանեց. «Ոչ, ամեն բան լավ չէ: Ես վերադարձել եմ Եկեղեցի, սակայն ես կորցրել եմ իմ բոլոր երեխաներին և թոռներին: Եվ այժմ ես ականատես եմ լինում իմ ծոռների կորստին՝ բոլորը դուրս են Եկեղեցուց: Ամեն բան լավ չէ»:

Մեր ընտանիքում մենք ունենք մի նախնի, ով միացել էր Եկեղեցուն Եվրոպայում Եկեղեցու վաղ շրջանում: Տղաներից մեկը դարձել էր ոչ ակտիվ: Քույր Էդգլին ու ես փորձել ենք գտնել այս ոչ ակտիվ նախնիի ժառանգներին:

Իմ կնոջ և ինձ համար հեշտ էր եզրակացնել, որ հաջորդ վեց սերունդների ընթացքում կատարելով հավանական ենթադրություններ, կարող էր լինել մինչև 3000 ընտանիքի անդամների կորուստ: Այժմ պատկերացրեք ևս երկու սերունդներ: Կորուստը տեսականորեն կհասնի մեր Երկնային Հոր 20000–30000 զավակների:

Օգնության հասնելու պարտականությունը հիմնված է Եկեղեցու ամենահիմնական վարդապետություններից մեկի վրա:

«Հիշեք, հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում.

Քանզի, ահա, Տերը՝ քո Քավիչը, մարմնի մեջ մահ տարավ. ուստի նա տարավ *բոլոր մարդկանց* ցավը, որ *բոլոր մարդիկ կարողանան ապաշխարել ու գալ իր մոտ:* . . .

Եվ, եթե լինի այնպես, որ դուք տքնեք ձեր բոլոր օրերում, ապաշխարություն աղաղակելով այս ժողովրդին, և ինձ մոտ բերեք գեթ մեկ հոգի, որքան մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ իմ Հոր արքայությունում» (ՎԵՈՒ 18.10–11, 15, ընդգծումներն ավելացված են):

Իմ կյանքի ընթացքում ես արտոնություն եմ ունեցել օգնելու մի քանի քիչ-ակտիվ անդամների: Այժմ, երբ ես օգնում եմ մի հոգու վերադառնալ Եկեղեցի, ես չեմ պատկերացնում մեկ հոգու: Ես տեսնում եմ վեց, յոթ կամ ավելի սերունդներ՝ հազարավոր հոգիներ: Եվ այդ ժամանակ ես մտածում եմ այս սուրբ գրության մասին. «Ինձ մոտ բերեք գեթ մեկ հոգի, որքան մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ իմ Հոր արքայությունում» (ՎԵՈՒ 18.15):

Իր Առաքյալներին Տերն ասել է. «Հունձքը շատ է, բայց մշակները քիչ» (Մատթեոս Թ.37): Մշակները չպիտի քիչ լինեն: Մենք ունենք հազարավոր հմուտ, արժանի քահանայություն կրողներ և Եկեղեցու միլիոնավոր նվիրված անդամներ աշխարհի բոլոր մասերում: Մենք ունենք խորհուրդներ, քահանայության քվորումներ, Սփոփող Միություն և այլ կազմակերպություններ, որոնք բոլորը գործում են փրկելու պարտավորությամբ: Հոգիներ փրկելն այն աշխատանքն է, որն անելու համար մեզ բոլորիս կանչել է Տերը:

Իմ մեջբերումներում ես անդրադարձա Ալմայի և նրա զուգընկերների ասած աղոթքին, երբ նրանք գնում էին փրկելու զորամացիներին: Համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ մոտավորապես 500 ամերիկացի զինվորներ և համախոհ տեղացիներ գերի էին պահվում ճամբարներում: Նրանց տառապանքների պատճառով և նրանց ապահովության համար անհանգստանալով մոտ 100 ամերիկացի կամավոր զինվորներ ընտրվեցին այս բանտարկյալներին փրկելու համար: Կամավորների հավաքվելուց հետո ավագ սպան նրանց հրահանգներ տվեց. «Այս երեկո, ով մարդիկ, դուք կհանդիպեք ձեր հոգևոր առաջնորդների հետ, դուք ծնկի եկեք, և դուք երդվեք Աստծուն, որ քանի դեռ դուք կենդանի եք, դուք թույլ չեք տա այս մարդկանցից մեկը տառապի ևս մեկ րոպե» (տես Hampton Sides, *Ghost Soldiers: The Forgotten Epic Story of World War II's Most Dramatic Mission* [2001], 28–29): Այս հաջողված փրկությունը փրկություն էր ֆիզիկական և ժամանակավոր տառապանքից: Մի՞թե մենք պետք է լինենք ավելի քիչ անվեհեր մեր ջանքերում, երբ փրկում ենք նրանց, ում տառապանքները հոգևոր և հավերժական են: Մի՞թե մենք պետք է ավելի քիչ նվիրված լինենք Տիրոջը:

Ամփոփելով ասեմ, որ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու անդամների մեր պարտավորությունը բխում է այն փաստից, որ Տերը տառապեց մեզանից յուրաքանչյուրի համար՝ ոչ անդամի, քիչ-ակտիվ անդամի, անգամ մեղավորի և մեր իսկ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար: Ես կարծում եմ, մենք կարող ենք հազարավորների բերել դեպի ուրախություն, խաղաղություն և ավետարանի քաղցրություն, և հարյուրավոր հազարների և նույնիսկ միլիոնների նրանց հաջորդ սերունդներում: Ես հավատում եմ, որ մենք հաջողության կհասնենք, քանի որ սա Տիրոջ Եկեղեցին է, և մեր քահանայության և անդամության շնորհիվ մենք կանչված ենք հաջողություն ունենալու: Ես բերում եմ այդ վկայությունը ձեզ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Ադրիան Օչոա
Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ահարոնյան Քահանայություն. Վեր կացեք և օգտագործեք Աստծո զորությունը

Քահանայությունը պետք է գործադրվի բարիք իրականացնելու համար: Դուք կանչվել եք «վեր կենալու և շողալու», չթաքցնելու ձեր լույսը խավարում:

Վերջերս ես Հարավային Աֆրիկայում էի, այցելելով մի տուն Տաբիսոյի՝ քահանաների քվորումի առաջին օգնականի հետ Կագիսո ծխում: Տաբիսոն և նրա եպիսկոպոսը, որը նախագահում է և կրում քվորումի բանալիները, աղոթել էին քվորումի անդամների համար, ովքեր ավելի քիչ ակտիվ էին, ոգեշնչում որոնելով, թե ում այցելեին և թե ինչպես օգնեին նրանց: Նրանք հուշում էին զգացել այցելել Թեբելլոների տուն, և նրանք հրավիրեցին ինձ գնալ իրենց հետ:

Հենց որ անցանք կատաղի պահապան շան կողքով, մենք հայտնվեցինք հյուրասենյակում՝ Թեբելլոյի մոտ, մի հանգիստ պատանու, որը դադարել էր եկեղեցի հաճախել, որովհետև կիրակի օրը սկսել էր զբաղվել այլ գործերով: Նա լարված էր, բայց ուրախ էր ընդունել մեզ և նույնիսկ հրավիրեց իր ընտանիքին միանալ մեզ: Եպիսկոպոսը հայտնեց իր սերը ընտանիքի հանդեպ և իր ցանկությունը նրանց օգնելու տաճարում կնքվելով հավերժական ընտանիք դառնալ: Նրանց սրտերը հուզվեցին, և մենք բոլորս զգացինք Սուրբ Հոգու ուժեղ ներկայությունը առաջնորդելով յուրաքանչյուր բառ և ամեն մի զգացում:

Տաբիսոյի խոսքերն էին, որ տարբերություն մտցրեցին այցելության մեջ: Ինձ թվաց, որ այդ երիտասարդ քահանան խոսում էր հրեշտակների լեզվով՝ սիրո խոսքերով, որ մենք բոլորս կարողանում ենք լիովին հասկանալ, բայց որը հատկապես հուզեց իր ընկերոջը: «Ես այնքան մեծ բավականություն էի ստանում քեզ հետ ողջ ժամանակ եկեղեցում խոսելով», ասաց նա: «Դու միշտ բարի խոսքեր ունես ինձ համար: Եվ գիտես մեր ֆուտբոլի թիմը լիովին անհետացել է այժմ, երբ դու մեզ հետ չես: Դու այնքան լավ ես խաղում»:

«Ափսոսում եմ, - ասաց Թեբելլոն, - Ես կվերադառնամ ձեզ մոտ, տղանե՛ր»:

«Դա սքանչելի կլինի, - ասաց Տաբիսոն, - Իսկ դու հիշո՞ւմ ես, թե ինչպես էինք պատրաստվում ծառայել որպես միսիոներ: Կարո՞ղ ենք նորից սկսել դա անել»:

«Այո», կրկնեց Թեբելլոն: «Ես ուզում եմ ետ գալ»:

Հավանաբար, մեծագույն ուրախությունը, որ ես զգում եմ որպես Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահության խորհրդական այն ժամանակ է, երբ տեսնում եմ Ահարոնյան Քահանայություն կրողներին ողջ աշխարհում, թե ինչպես են գործադրում Ահարոնյան Քահանայության զորությունը: Բայց երբեմն ես նաև տխուր սրտով ականատես եմ լինում՝ որքան շատ երիտասարդ տղամարդիկ չեն հասկանում, թե որքան շատ բարիք նրանք կարող են անել այն զորությամբ, որ իրենք են կրում:

Քահանայությունը հենց Իր՝ Աստծո զորությունն է և իշխանությունը Իր զավակների ծառայությունում գործելու համար: Օհ, եթե միայն յուրաքանչյուր երիտասարդ տղամարդ, յուրաքանչյուր Ահարոնյան Քահանայություն կրող կարողանար լիովին ըմբռնել, որ իր քահանայությունն ունի սպասավորող հրեշտակների բանալիները: Եթե միայն նրանք կարողանային հասկանալ, որ նրանք ունեն սրբազան պարտք՝ օգնելու իրենց ընկերներին գտնել դեպի Փրկիչը տանող արահետը: Եթե միայն նրանք իմանային, որ Երկնային Հայրը կտա նրանց զորություն բացատրելու վերականգնված ավետարանի ճշմարտություններն այնպիսի հստակությամբ և անկեղծությամբ, որ ուրիշները կզգային Քրիստոսի խոսքերի անհերքելի ճշմարտացիությունը:

Սիրելի երիտասարդ տղամարդիկ, թույլ տվեք մի հարց տալ ձեզ, որը հուսով եմ դուք կպահեք ձեր սրտերում ձեր մնացած կյանքի ընթացքում: Ինչպիսի՞ ավելի մեծ զորություն դուք կարող եք ձեռք բերել երկրի վրա, քան Աստծո քահանայությունը: Ի՞նչ զորություն կարող է հնարավորինս ավելի մեծ լինել, քան մեր Երկնային Հորը օգնելու կարողությունը մերձավորների կյանքը փոխելիս, օգնելու նրանց առաջ գնալ հավերժական երջանկության արահետով՝ մաքրված լինելով մեղքից և անիրավությունից:

Ինչպես որևէ այլ զորություն, քահանայությունը պետք է գործադրվի բարիք իրականացնելու համար: Դուք կանչվել եք «վեր կենալու և շողալու» (ՎԵՈՒ 115.5), չթաքցնելու ձեր լույսը խավարում: Միայն նրանք, ովքեր քաջարի են, նրանք կհամարվեն ընտրյալների թվում: Երբ դուք գործադրեք ձեր սրբազան քահանայության զորությունը, ձեր քաջությունն ու վստահությունը կմեծանա: Երիտասարդներ, դուք գիտեք, որ դուք լավագույն վիճակում եք, երբ Աստծո ծառայության մեջ եք: Դուք գիտեք, որ դուք ամենաերջանիկն եք, երբ ոգևորությամբ զբաղված եք բարի գործով: Մեծարեք ձեր քահանայության զորությունը՝ լինելով մաքուր և արժանի:

Ես միացնում եմ իմ ձայնը Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի կոչին, որը նա արեց վեց ամիս առաջ այս ամբիոնից: «Ես փնտրում եմ, – ասաց նա, – տղամարդկանց՝ երիտասարդ, թե ծեր, ովքեր այնքան անտարբեր չեն բարու և չարի միջև այս ճակատամարտի նկատմամբ, որ պատրաստ են զինվորագրվելու և չլռելու: Մենք պատերազմի մեջ ենք»: Նա շարունակեց. «Ես խնդրում եմ ավելի ուժեղ ու ավելի նվիրված ձայն, ոչ միայն ձայն, որը դեմ է չարին . . . այլ ձայն, որը կողմ է բարուն, ձայն, որը կողմ է ավետարանին, ձայն, որը կողմ է Աստծուն» («Բոլորս հավաքագրված ենք», *Լիահոնա*, նոյ. 2011, 44, 47):

Այո, Ահարոնյան Քահանայություն կրողներ, մենք պատերազմի մեջ ենք: Եվ այս պատերազմում չարից պաշտպանվելու լավագույն ուղին ակտիվորեն արդարությունն

առաջ մղելն է: Դուք չեք կարող լսել գարշելի խոսքեր և ձևացնել, որ չեք լսում: Դուք չեք կարող դիտել միայնակ կամ ուիրիշների հետ պատկերներ, որոնք գիտեք, որ պիղծ են և ձևացնեք, թե չեք տեսնում: Դուք չեք կարող շոշափել որևէ անմաքուր բան և ձևացնեք, թե ոչ մի բան էլ չի եղել: Դուք չեք կարող անտարբեր լինել, երբ սատանան ձգտում է կործանել այն, ինչն օգտակար է և մաքուր: Ընդհակառակը, համարձակ պաշտպանեք այն, ինչը գիտեք, որ ճիշտ է: Երբ լսում եք կամ տեսնում որևէ բան, որը խախտում է Տիրոջ չափանիշները, հիշեք, թե ով եք դուք՝ զինվոր հենց Իր՝ Աստծո բանակում, լիազորված Նրա սուրբ քահանայությամբ: Չկա ավելի լավ զենք թշնամու՝ ստերի հոր դեմ, քան ճշմարտությունը, որը դուրս կգա ձեր բերանից, երբ դուք գործադրեք քահանայության զորությունը: Ձեր հասակակիցներից շատերը կհարգեն ձեզ՝ ձեր քաջության և ձեր ազնվության համար: Ոմանք էլ չեն հարգի: Բայց դա նշանակություն չունի: Դուք ձեռք կբերեք Երկնային Հոր հարգանքն ու վստահությունը, որովհետև օգտագործեցիք Նրա զորությունը, որպեսզի իրականացնեք Նրա նպատակները:

Ես կոչ եմ անում յուրաքանչյուր Ահարոնյան Քահանայության քվորումի նախագահությանը, մեկ անգամ ևս բարձրացնել ազատության դրոշը և կազմակերպել և առաջնորդել ձեր գումարտակները: Օգտագործեք ձեր քահանայության ուժը հրավիրելով ձեր շրջապատում գտնվողներին գալ դեպի Քրիստոս՝ ապաշխարության և մկրտության միջոցով: Դուք ունեք Երկնային Հոր հանձնառությունն ու զորությունն այդ անելու համար:

Երկու տարի առաջ Չիլիի Սանտյագո այցելության ժամանակ ես մեծ տպավորություն ստացա Դանիել Օլեյթից՝ մի երիտասարդից, որը հաճախ էր ուղեկցում միսիոներներին: Ես խնդրեցի նրան գրել ինձ, և նրա թույլտվությամբ, ես կկարդամ ձեզ մի հատված նրա վերջին նամակից. «Իմ 16 տարեկանը հենց նոր է լրացել և կիրակի օրը ես ձեռնադրվեցի քահանայի պաշտոնում: Այդ նույն օրը ես մկրտեցի իմ ընկերուհիներից մեկին. նրա անունը Կարոլինա է: Ես նրան ուսուցանում էի ավետարանը, և նա կանոնավորապես հաճախում էր եկեղեցի և նույնիսկ ստացավ Անձնական Զարգացման պարգևներից մեկը, բայց նրա ծնողները թույլ չէին տալիս նրան մկրտվել, մինչև նրանք սկսեցին ճանաչել և վստահել ինձ: Նա ուզում էր, որ ես մկրտեի իրեն, այսպիսով մենք ստիպված էինք սպասել մեկ ամիս մինչև կիրակի օրը, երբ 16 տարեկանս լրանար: Ես այնքան լավ եմ զգում, օգնելով այդքան լավ անձնավորությանը մկրտվել, և ես երջանիկ եմ զգում, որ հենց ես մկրտեցի նրան»:

Դանիելը ուղղակի մեկն է շատ երիտասարդ տղամարդկանցից ողջ աշխարհում, ովքեր ապրում են համաձայն այն զորության, որ Աստված վստահել է նրանց: Մյուսը Լուիս Ֆերնանդոն է՝ Հոնդուրասից, որը նկատել էր, որ իր ընկերը վտանգավոր ճանապարհով էր քայլում և կիսվել էր իր վկայությամբ նրա հետ, տառացիորեն փրկելով նրա կյանքը (տես “A Change of Heart,” lds.org/youth/video): Օլավոն Բրազիլիայից մեկ այլ օրինակ է: Իսկական քահանա իր տանը (տես

ՎԵՈՒ 84.111), Օլավոն ոգեշնչեց իր մորը վերադառնալ լիակատար ակտիվության Եկեղեցում (տես “Reunited by Faith,” lds.org/youth/video)։ Դուք կարող եք գտնել այս պատմվածքներից մի քանիսը և սրանց նման շատ ուրիշներ Եկեղեցու երիտասարդական վեբ կայքում՝ youth.lds.org։ Ի միջի այլոց, համացանցը, սոցիալական կայքերը և այլ տեխնոլոգիաները միջոցներ են, որոնք Տերը դրել է ձեր ձեռքը՝ օգնելու ձեզ գործադրելու ձեր քահանայության պարտավորությունները և տարածելու ճշմարտության և առաքինության ազդեցությունը։

Սիրելի երիտասարդ տղամարդիկ, երբ դուք գործադրում եք Ահարոնյան Քահանայությունն այն ձևով, որ ես նկարագրեցի, դուք նախապատրաստվում եք ձեր ապագա պարտականություններին։ Բայց դուք անում եք շատ ավելին, քան այդ։ Հովհաննես Մկրտիչի՝ այդ օրինակելի Ահարոնյան Քահանայություն կրողի պես, դուք ևս նախապատրաստում եք Տիրոջ ճանապարհը և ուղիղ դարձնում Նրա ուղիները։ Երբ դուք համարձակությամբ հայտարարում եք ապաշխարության և մկրտության ավետարանը, ինչպես Հովհաննեսն արեց, դուք պատրաստում եք մարդկանց Տիրոջ գալստին (տես Մատթեոս Գ.3, ՎԵՈՒ 65.1–3, 84.26–28)։ Ձեզ հաճախ է ասվում ձեր մեծ ներուժի մասին։ Դե, այժմ է այդ ներուժը գործի դնելու ժամանակը, օգտագործելու այն ունակությունները, որոնք Աստված է տվել ձեզ՝ ուրիշներին օրհնելու համար, բերելու նրանց խավարից դեպի լույս և պատրաստելու Տիրոջ ճանապարհը։

Եկեղեցին տվել է ձեզ «Պարտականություն Աստծո հանդեպ» գրքույկը որպես միջոց՝ օգնելու ձեզ սովորել և կատարել ձեր պարտականությունները։ Հաճախ ուսումնասիրեք այն։ Ծնկի իջեք՝ տեխնոլոգիայից հեռու, և փնտրեք Տիրոջ առաջնորդությունը։ Իսկ հետո վեր կացեք և օգտագործեքԱստծո զորությունը։ Ես խոստանում եմ, որ դուք կստանաք պատասխաններ Երկնային Հորից, թե ինչպես վարեք

ձեր սեփական կյանքը և թե ինչպես օգնեք ուրիշներին։

Ես մեջբերում եմ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերը. «Երբեք մի թերագնահատեք ձեր վկայության հեռու գնացող ազդեցությունը։ . . . Դուք ունեք կարողություն նկատելու աննկատելին։ Երբ դուք ունեք աչքեր տեսնելու, ականջներ լսելու և սրտեր զգալու համար, դուք կարող եք հասնել և փրկել ուրիշներին» (“Be Thou an Example,” *Liahona*, May 2005, 115)։

Ես վկայում եմ ձեզ, որ քահանայության զորությունը իրական է։ Ես վկայություն եմ ձեռք բերել ինքս գործադրելով քահանայությունը։ Ես տեսել եմ հրաշք հրաշքի ետևից, որոնք կատարվել են նրանց կողմից, ովքեր ունեն Ահարոնյան Քահանայության զորությունը։ Ես վկա եմ եղել սպասավորող հրեշտակների զորությանը, երբ հավատարիմ Ահարոնյան Քահանայություն կրողները խոսել են հույսի Հոգով լցված խոսքեր, բացելով ինչ որ մեկի սիրտը, ով լույսի և սիրո կարիք ունի։ Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ՝ մեր առաջնորդի և մեր Փրկչի անունով, ամեն։ ■

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Քահանայության ծառայության *ինչու* հարցը

Ավետարանի ինչուն և քահանայության ինչուն հասկանալը կօգնի մեզ տեսնել այդ ամենի աստվածային նպատակը:

Ես ուրախ եմ քահանայության եղբայրների հետ հանդիպելու այս հրաշալի առիթով և հրճվում եմ ձեզ հետ Հիսուս Քրիստոսի ավետարանի հրաշքով և զեղեցկությամբ: Ես գովաբանում եմ ձեզ ձեր հավատքի, ձեր լավ գործերի և ձեր անսասան արդարակեցության համար:

Մենք ունենք ընդհանուր մի բան, որ մենք բոլորս ստացել ենք՝ Աստծո քահանայության կարգումը նրանցից, ում վստահված է սուրբ քահանայության իշխանություն և զորություն: Սա փոքր օրհնություն չէ: Սա սրբազան պարտականություն է:

Ինչո՞ւ-ի զորությունը

Վերջերս ես մտածում էի երկու կարևոր կոչումների մասին, որոնք ես ստացել եմ որպես քահանայություն կրող Եկեղեցում:

Այդ կոչումներից առաջինը եկավ, երբ ես սարկավագ էի: Ես հաճախում էի իմ ընտանիքի հետ Եկեղեցու Ֆրանկֆուրտի ճյուղը Գերմանիայում: Մենք օրհնված էինք շատ լավ մարդկանցով մեր փոքրիկ ճյուղում: Մեկը մեր ճյուղի նախագահ Եղբայր Լանդշուլցն էր: Ես շատ էի հիանում նրանով, չնայած նա միշտ բավականին լուրջ էր թվում, շատ պաշտոնական և մեծամասամբ մուգ կոստյում էր կրում: Հիշում եմ, երբ պատանի էի, կատակում էի ընկերներիս հետ, թե որքան հնաոճ տեսք ուներ մեր ճյուղի նախագահը:

Այժմ ծիծաղս գալիս է, երբ մտածում եմ այդ մասին, որովհետև շատ հնարավոր է, որ այսօր Եկեղեցու երիտասարդությունը տեսնում է ինձ ճիշտ նույն ձևով:

Մի կիրակի Նախագահ Լանդշուլցը հարցրեց թե կարո՞ղ էր խոսել ինձ հետ: Իմ առաջին միտքն էր. «Ի՞նչ սխալ բան եմ արել»: Միտքս սլացավ շատ բաների վրայով, որ ես հավանական է արել էի, որը կարող է ոգեշնչել էր ճյուղի նախագահ և սարկավագ այդ խոսակցությունը:

Նախագահ Լանդշուլցը հրավիրեց ինձ մի փոքրիկ դասասենյակ՝ մեր աղոթատունը ճյուղի նախագահի գրասենյակ չուներ, և այնտեղ նա առաջարկեց ինձ ծառայել որպես սարկավագների քվորումի նախագահ:

«Սա կարևոր կոչում է»,- ասաց նա, և հետո ժամանակ հատկացրեց և նկարագրեց, թե ինչու: Նա բացատրեց, թե ինչ էին նա և Տերը ակնկալում ինձանից, և թե ինչպես ես կարող էի օգնություն ստանալ:

Ես շատ բան չեմ հիշում նրանից, ինչ նա ասաց, բայց ես լավ եմ հիշում, թե ինչպես էի զգում ինձ: Մի սրբազան, աստվածային Հոգի լցրեց սիրտս, երբ նա խոսում էր: Ես զգացի, որ սա Փրկչի Եկեղեցին էր: Եվ ես զգացի, որ նրա առաջարկած կոչումը ոգեշնչված էր Սուրբ Հոգու կողմից: Ես հիշում եմ՝ դուրս գալով այդ փոքրիկ դասասենյակից, ես զգում էի մի քիչ ավելի բարձրահասակ, քան նախկինում էի:

Դա տեղի է ունեցել մոտ 60 տարի առաջ, և ես դեռ զանձի պես պահում եմ վստահության և սիրո այդ զգացումները:

Երբ ետ եմ նայում այդ փորձառությանը ես փորձում եմ հիշել, թե քանի սարկավագ կային մեր ճյուղում այդ ժամանակ: Որքան հիշում եմ կարծես երկուսն էին: Սակայն սա կարող է վիթխարի չափազանցություն լինել:

Բայց իսկապես նշանակություն չուներ արդյոք մեկ սարկավագ կար, թե տասներկու, ես ինձ մեծարված էի զգում և ուզում էի ծառայել իմ ունակությունների լավագույնով և չհիասթափեցնել իմ ճյուղի նախագահին կամ Տիրոջը:

Այժմ ես գիտակցում եմ, որ ճյուղի նախագահը կարող էր պարզապես կատարել այդ գործը, երբ նա կանչեց ինձ այդ կոչմանը, առանց ինձ հետ առանձին զրուցելու: Նա ուղղակի կարող էր դա ասել ինձ միջանցքում կամ մեր քահանայության ժողովում, որ ես սարկավագների քվորումի նոր նախագահն էի:

Դրա փոխարեն, նա ինձ ժամանակ տրամադրեց և օգնեց հասկանալ ոչ միայն իմ հանձնարարության և նոր պարտականության *ինչ* հարցը, բայց առավել կարևոր էր՝ *ինչու* հարցը:

Դա մի բան էր, որ ես երբեք չեմ մոռանա:

Այս պատմության նպատակը պարզապես նկարագրելը չէ, թե ինչպես կոչումներ տալ (չնայած ինձ համար դա ճիշտ ձևով անելու մի հրաշալի օրինակ է)։ Սա դաս է քահանայության ղեկավարության հիմնավորող զորության մասին, որն արթնացնում է հոգին և ոգեշնչում գործերի։

Մենք պետք է անընդհատ հիշեցվենք այն հավերժական պատճառների մասին, որոնք գտնվում են այն բաների ետևում, որոնք մեզ պատվիրվում է անել։ Ավետարանի հիմնական սկզբունքները պետք է մաս լինեն մեր կյանքի հյուսվածքում, եթե նույնիսկ դա նշանակում է կրկին և կրկին սովորել։ Դա չի նշանակում, որ այդ գործընթացը պետք է լինի մեխանիկական կամ ձանձրալի։ Ընդհակառակը, երբ մենք ուսուցանում ենք հիմնական սկզբունքները մեր տներում կամ եկեղեցում, թող ավետարանի խանդավառության բոցը և վկայության կրակը լույս, ջերմություն և ուրախություն բերի նրանց սրտերին, ում մենք ուսուցանում ենք։

Սկսած ամենանոր ձեռնադրված սարկավագից մինչև ամենաավագ քահանայապետը, մենք ունենք ցուցակներ, թե *ինչ* մենք կարող ենք և պետք է անենք մեր քահանայության պարտականություններում։ *Ինչ*-ը կարևոր է մեր աշխատանքում և մենք պետք է հետենք դրան։ Բայց քահանայութան ծառայության *ինչու* հարցում է, որ մենք հայտնաբերում ենք քահանայության կրակը, խանդավառությունը ու զորությունը։

Քահանայության ծառայության *ինչը* ուսուցանում է մեզ ինչ անել։ *Ինչուն* ոգեշնչում է մեր հոգին։

Ինչը տեղեկացնում է, իսկ *ինչուն* վերափոխում է։

«Լավ» բաներ անելու առատություն

Մեկ այլ քահանայության կոչում, որի մասին ես մտածում եմ, տրվեց ինձ շատ տարիներ հետո, երբ ես ունեի իմ սեփական ընտանիքը։ Մենք ետ էինք տեղափոխվել Ֆրանկֆուրտ, Գերմանիա, և ես հենց նոր էի առաջ քաշվել աշխատանքի վայրում, որը կպահանջեր հսկայական ժամանակ և ուշադրություն։ Իմ կյանքի այս զբաղված ժամանակահատվածում Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը ինձ կանչեց ծառայելու որպես ցցի նախագահ։

Նրա հետ հարցազրույցի ժամանակ շատ սրընթաց մտքեր էին անցնում գլխովս, որոնցից քիչ տեղ չէր զբաղեցնում հանգիստ չտվող այն միտքը, որ ես գուցե չունենայի այնքան ժամանակ, որ կպահանջեր այս կոչումը։ Չնայած ես մեծ պատիվ էի համարում այդ կոչումը, ես մի պահ կասկածեցի, թե արդյոք կարող էի ընդունել այն։ Բայց դա միայն մի անցողիկ միտք էր, որովհետև ես գիտեի, որ Երեց Վիրթլինը կանչված էր Աստծո կողմից, և որ նա անում էր Տիրոջ աշխատանքը։ Ի՞նչ կարող էի անել, բացի այն ընդունելուց։

Կան դեպքեր, երբ մենք պետք է հավատքով քայլ կատարենք դեպի խավարը, վստահ լինելով, որ Աստված ամուր գետնին կդնի մեր ոտքը, երբ անենք դա։ Եվ այսպիսով, ես ուրախությամբ ընդունեցի, իմանալով, որ Աստված հոգ կտաներ։

Այս հանձնարարության վաղ օրերին, որպես ցից մենք արտոնություն ունեինք ուսուցում ստանալ Եկեղեցու որոշ մեծագույն ուսուցիչներից և առաջնորդներից, այնպիսի մարդկանցից, ինչպես Երեց Ռասսել Մ. Նելսոնը և նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, որոնք եկել էին մեր տարածք։ Նրանց ուսուցումները նման էին երկնքից իջնող ցողի և ոգեշնչում էին մեզ համար։ Ես դեռ պահում եմ այն գրառումները, որոնք կատարել եմ այդ նիստերի ժամանակ։ Այս Եղբայրները տվեցին մեզ *խորաթափանցություն*, թե ինչ էր նշանակում հաստատել Աստծո թագավորությունը՝ կառուցելով անձնական վկայություններ և զորացնելով ընտանիքները։ Նրանք օգնեցին մեզ տեսնել, թե ինչպես կիրառել ավետարանական ճշմարտությունը և սկզբունքները մեր առանձնահատուկ հանգամանքներում և մեր առանձնահատուկ պահերի համար։ Այլ կերպ ասած, ոգեշնչված առաջնորդներն օգնեցին մեզ տեսնել ավետարանի *ինչուն*, և ապա մենք ծալեցինք մեր

թեքերն ու անցանք գործի:

Շատ չանցած մենք հասկացանք, որ կային բազմաթիվ բաներ, որոնք ցցի նախագահությունը կարող էր անել, փաստորեն, եթե մենք չդնեինք ոգեշնչված առաջնահերթություններ, մենք կարող է բաց թողնեինք կարևոր բաներ անելը: Սկսեցին հայտնվել միմյանց հետ մրցակցող առաջնահերթություններ, շեղելով մեր կիզակետը այն պատկերացումից, որի վերաբերյալ Եղբայրները կիսվել էին մեզ հետ: Կային բազմաթիվ «լավ» բաներ անելու, բայց դրանցից ոչ բոլորն էին, որ ամենակարևորն էին:

Մենք սովորեցինք մի կարևոր դաս՝ փաստը, որ ինչ-որ բան լավ է, ոչ միշտ է բավականաչափ պատճառ՝ պահանջելու մեր ժամանակն ու միջոցները: Մեր գործողությունները, նախաձեռնություններն ու ծրագրերը պետք է ոգեշնչվեն և հիմնավորվեն մեր քահանայության ծառայության *ինչուների* վրա և ոչ թե որևէ ցուցադրական միտումով կամ պահի թելադրանքով: Հակառակ դեպքում դրանք կարող են շեղել մեր ջանքերը, սպառել մեր էներգիան և մեզ թակարդել մեր իսկ նախասիրություններով՝ հոգևոր կամ աշխարհիկ, որոնք հետևորդ լինելու առանցքում չեն:

Եղբայրներ, մենք բոլորս գիտենք, որ ինքնակարգապահություն է պահանջվում այն բաների վրա կենտրոնացած մնալու համար, որոնք Աստծո և մերձավորի հանդեպ մեր սերը մեծացնելու մեծագույն ուժն ունեն, զորացնելու ամուսնությունները, ամրացնելու ընտանիքները և կառուցելու Աստծո թագավորությունը երկրի վրա: Շատ ճյուղերով և առատ տերևներով պտղատու ծառի նման մեր կյանքերը կանոնավորապես էտվելու կարիք ունեն՝ ապահովելու, որ մեր էներգիան և մեր ժամանակը ծախսենք մեր իսկական նպատակն իրականացնելու վրա, որպեսզի «առաջ բերենք բարի պտուղ»:[1]

Դուք մենակ չեք

Այսպիսով, ինչպե՞ս իմանանք, թե ինչ ընտրենք: Մենք յուրաքանչյուրս պատասխանատվություն ունենք դա ինքներս որոշելու: Այնուամենայնիվ, մեզ պատվիրված է ջանասիրաբար ուսումնասիրել սուրբ գրությունները, ուշադրություն դարձնել մարգարեների խոսքերին և դարձնել դա հավատքով լի, լուրջ, նվիրված աղոթքի հարց:

Եղբայրներ, Աստված հավատարիմ է: Սուրբ Հոգու միջոցով նա կխոսի մեր մտքերի և սրտերի հետ այն ուղու վերաբերյալ, որին մենք պետք է հետևենք մեր կյանքի յուրաքանչյուր ժամանակահատվածի ընթացքում:

Եթե մեր սրտերը մաքուր են, եթե մենք փնտրում ենք ոչ թե մեր, այլ Ամենազոր Աստծո փառքը, եթե մենք ձգտում ենք անել Նրա կամքը, եթե մենք ցանկանում ենք օրհնել մեր ընտանիքի և մեր մերձավորի կյանքը, մենք չենք թողվի քայլելու մենակ: Ինչպես Նախագահ Մոնսոնն է հաճախ հիշեցրել մեզ. «Երբ մենք Տիրոջ հանձնարարությունն ենք կատարում, մենք լիազորված ենք Տիրոջ օգնությունը ստանալու»:[2]

Ձեր Երկնային Հայրը «կգնա ձեր առջևից: [Նա] կլինի ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում և [Նրա] Հոգին կլինի ձեր սրտերում, և [Նրա] հրեշտակները կլինեն ձեր շուրջը, ձեզ վեր բարձրացնելու»:[3]

Գործելու զորությունը

Իմ սիրելի եղբայրներ, քահանայության ծառայության համար աստվածային օրհնությունները ակտիվացվում են մեր տքնաջան ջանքերի միջոցով, մեր զոհաբերելու պատրաստակամությամբ և մեր ցանկության միջոցով՝ անելու այն, ինչ ճիշտ է: Եկեք լինենք ներգործող, ոչ թե ներգործվող: Քարոզելը հրաշալի է, բայց քարոզները, որոնք չեն տանում դեպի գործեր, նման են առանց ջերմության կրակների կամ ջրի, որը չի կարող հագեցնել ծարավը:

Վարդապետության կիրառման միջոցով է, որ ավետարանի մաքրագործող բոցն աճում է և քահանայության զորությունը լցնում մեր հոգիները խանդավառությամբ:

Թոմաս Էդիսոնը, այն մարդը, որը ողողեց աշխարհը իր հնարած բոցավառվող էլեկտրական լամպի լույսով, ասաց որ «գաղափարի արժեքը գտնվում է դրա օգտագործման մեջ»:[4] Նմանապես ավետարանական վարդապետությունը դառնում է ավելի թանկարժեք, երբ այն դրվում է գործածության մեջ:

Մենք չպետք է թույլ տանք, որ քահանայության վարդապետությունները քնած մնան մեր սրտերում և չկիրառված մեր կյանքերում: Եթե կա ամուսնություն կամ ընտանիք, որին պետք է փրկել, գուցե նույնիսկ մեր սեփականը, եկեք ուղղակի չսպասենք ու տեսնենք: Ավելի շուտ եկեք շնորհակալություն հայտնենք Աստծուն երջանկության ծրագրի համար, որը ներառում է՝ հավատք, ապաշխարություն, ներում և նոր սկզբնավորումներ: Քահանայության վարդապետությունը կիրառելը մեզ կորակավորի որպես ամուսիններ, հայրեր և որդիներ, ովքեր հասկանում են քահանայության *ինչուն* և նրա զորությունը՝ ետ խլելու և ապահովելու հավերժական ընտանիքների գեղեցկությունն ու սրբությունը:

Գերագույն համաժողովը միշտ էլ լավ ժամանակ է ինչպես լսելու, այնպես էլ կատարելու համար: Ուստի եկեք «խոսքը անող լինենք, և ոչ միայն լսողներ»:[5] Եղբայրներ, ես կոչ եմ անում ձեզ մտածել խոսքերի մասին, որոնք ասվում ենք Աստծո ծառաների կողմից այս շաբաթավերջին: Ապա իջնել ծնկի և խնդրել Աստծուն, մեր Երկնային Հորը՝ լուսավորել ձեր միտքը և հպվել ձեր սրտին: Խնդրեք Նրան, որ լուսավորի ձեր միտքը և հպվի ձեր սրտին: Աղերսեք Աստծուն առաջնորդության համար ձեր ամենօրյա կյանքում, եկեղեցական ձեր պարտականություններում և ներկայիս ձեր առանձնահատուկ մարտահրավերներում: Հետևեք Հոգու հուշումներին, մի հետաձգեք: Եթե դուք անեք այս բոլորը, ես խոստանում եմ, որ Տերը չի թողնի ձեզ, որ միայնակ քայլեք:

Շարունակեք համբերությամբ

Մենք գիտենք, որ չնայած մեր լավագույն մտադրություններին, գործերը միշտ չէ որ ծրագրի համաձայն են գնում: Մենք սխալներ ենք կատարում կյանքում և մեր քահանայության ծառայությունում: Երբեմն մենք սայթաքում ենք և թերանում:

Երբ Տերը խորհուրդ է տալիս «համբերությամբ շարունակեք, մինչև որ [դուք] կատարյալ դարձվեք»,[6] Նա հաշվի է առնում, որ դա պահանջում է ժամանակ և հաստատակամություն: Ավետարանի *ինչուն* և քահանայության *ինչուն* հասկանալը կօգնի մեզ տեսնել այդ ամենի աստվածային նպատակը: Այն կտա մեզ հիմնավորում և ուժ՝ անելու ճիշտ բաներ, նույնիսկ երբ դրանք դժվար են: Ավետարանի հիմնական սկզբունքներով ապրելու վրա կենտրոնացած մնալը, կօրհնի մեզ պարզությամբ, իմաստությամբ և ուղղորդմամբ:

«Արդյոք չպե՞տք է մենք շարունակենք այս մեծ գործը»:[7] Այո, եղբայրներ, մենք կշարունակենք:

Առաջնորդվելով Սուրբ Հոգու կողմից, մենք կսովորենք մեր սխալներից: Եթե մենք սայթաքենք, մենք վեր կկենանք: Եթե մենք երերանք, մենք կշարունակենք առաջ գնալ: Մենք երբեք չենք սասանվի, մենք երբեք չենք հանձնվի:

Որպես Աստծո քահանայության հավիտենական հզոր եղբայրություն՝ մենք կկանգնենք միասին, ուս ուսի, կենտրոնացած Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի սկզբունքների վրա և երախտագիտությամբ ծառայելով մեր Աստծուն և մերձավորին՝ նվիրվածությամբ ու սիրով:

Աստված ապրում է

Իմ սիրելի եղբայրներ, ես վկայում եմ ձեզ այսօր, որ Հայր Աստվածը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսն ապրում են: Նրանք իրական են: Նրանք այնտեղ են:

Դուք մենակ չեք: Ձեր Երկնային Հայրը հոգ է տանում ձեր մասին և ցանկանում է օրհնել և բարձրացնել ձեզ արդարակեցության մեջ:

Համոզված եղեք, որ Աստված խոսում է մարդկության հետ մեր ժամանակներում: Նա կխոսի ձեզ հետ:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը տեսել էր այն, ինչ ասաց, որ տեսել էր: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին վերականգվել է երկրի վրա Ամենազոր Աստծո զորությամբ և իշխանությամբ:

Իմ աղոթքն է, որ մենք՝ որպես Նրա քահանայության կրողներ, ընդմիշտ մնանք ներդաշնակության մեջ քահանայության ծառայության *ինչու* հարցի հետ և օգտագործենք վերականգված ավետարանի սկզբունքները՝ վերափոխելու համար մեր կյանքը և նրանց կյանքը, ում մենք ծառայում ենք:

Երբ մենք այդպես անենք, Քավության անսահման զորությունը կսրբագործի, կմաքրագործի և կզտի մեր հոգիներն ու բնավորությունները, մինչև մենք դառնանք այն մարդիկ, որը կանխորոշված ենք դառնալ: Սրա մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս Է.18:
2. Թոմաս Ս. Մոնսոն, «Սովորել, անել, լինել», *Լիահոնա*, նոյ. 2008, 62:
3. Վարդապետություն և Ուխտեր 84.88:
4. Thomas Edison, in Elbert Hubbard, *Little Journeys to the Homes of Good Men and Great* (1910), 155.
5. Հակոբոս Ա.22:
6. Վարդապետություն և Ուխտեր 67.13:
7. Վարդապետություն և Ուխտեր 128.22:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Ուխտ կապած ընտանիքներ

Չկա ավելի կարևոր բան, որ եկել է կամ կարող է գալ ձեր ընտանիք, ինչպես կնքման օրհնությունները:

Ես երախտապարտ եմ ձեզ հետ հավաքվելու համար այս ժողովին, որին հրավիրված են երկրի վրա Աստծո քահանայության բոլոր կրողները: Մենք օրհնված ենք, որ այսօր նախագահում է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը: Որպես Եկեղեցու Նախագահ, նա է միակ կենդանի մարդը, ով պատասխանատու է բանալիների համար, որ կնքում են ընտանիքները և քահանայության բոլոր այն արարողությունները, որոնք անհրաժեշտ են հավերժական կյանք ձեռք բերելու համար, որն Աստծո պարգևներից ամենամեծն է:

Այս երեկո ինձ լսող մի հայր կա, ով հետ է վերադարձել ոչ ակտիվությունից, քանի որ նա ուզում է իր ողջ սրտով վստահ լինել, որ ինքը կունենա այդ պարգևը: Նա և նրա կինը սիրում են իրենց երկու փոքր երեխաներին՝ տղային և աղջկան: Բոլոր ծնողների նման նա կարող է պատկերացնել երկնային երջանկությունը, երբ կարդում է այս բառերը. «Եվ միևնույն հարաբերությունները, որոնք այստեղ գոյություն ունեն մեր մեջ, այնտեղ ևս գոյություն կունենան մեր մեջ, միայն թե դրանք կզուգակցվեն հավերժական փառքով, փառք, որը մենք այժմ չենք վայելում»:[1]

Այդ հայրը, որ լսում է մեզ հետ միասին այս երեկո, գիտի այդ փառահեղ ճակատագրի ուղին: Այն հեշտ չէ: Նա արդեն գիտի դա: Այն պահանջեց հավատք առ Հիսուս Քրիստոս, խորը ապաշխարություն և փոփոխություն իր սրտում՝ բարի եպիսկոպոսի շնորհիվ, ով օգնեց նրան զգալ Տիրոջ սիրառատ ներողամտությունը:

Հրաշալի փոփոխությունները շարունակվեցին, մինչ նա գնաց սուրբ տաճար օժտման համար, որոնք Տերը նկարագրեց նրանց, ում Նա զորությամբ օժտեց այս տնտեսության առաջին տաճարում: Դա Կիրթլենդում էր, Օհայո: Այդ մասին Տերն ասաց.

«Ուստի, այդ նպատակով ես ձեզ պատվիրան տվեցի, որ դուք գնաք Օհայո. և այնտեղ ես կտամ ձեզ իմ օրենքը. և այնտեղ դուք զորությամբ կօժտվեք ի վերուստ.

Եվ այնտեղից, քանզի ես մի մեծ գործ ունեմ պահ տրված, քանզի Իսրայելը պիտի փրկվի, և ես պիտի տանեմ նրանց ուր որ կամենամ, և ոչ մի զորություն ետ չի պահի իմ ձեռքը»:[2]

Վերջերս ակտիվ դարձած իմ ընկերոջ և ամբողջ քահանայության համար մեծագույն աշխատանքը, որը պիտի արվի, դեպի փրկություն առաջնորդելն է Իսրայելի մի մասին, որի համար մենք պատասխանատու ենք կամ կլինենք, որը մեր ընտանիքն է: Ընկերս և նրա կինը գիտեին, որ դա պահանջում էր Աստծո սուրբ տաճարում Մելքիսեդեկյան Քահանայության զորությամբ կնքվել:

Նա խնդրեց, որ ես կատարեի կնքումը: Նա և իր կինը ուզում էին, որ այն կատարվեր որքան հնարավոր է շուտ: Սակայն գերագույն համաժողովի նախաշեմին զբաղված լինելու պատճառով ես թողեցի, որ այդ զույգը և նրանց եպիսկոպոսը իմ քարտուղարի հետ միասին նշանակեին լավագույն ժամանակը:

Պատկերացրեք իմ զարմանքն ու հիացմունքը, երբ հայրն ասաց ինձ եկեղեցում, որ կնքումը նշանակված է ապրիլի 3-ին: Դա այն օրն էր, երբ 1836թ. Եղիան՝ կերպարանափոխված մարգարեն, ուղարկվել էր Կիրթլենդի Տաճար՝ տալու կնքելու զորությունը Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին: Այդ բանալիները Եկեղեցում են այսօր և կշարունակվեն լինել մինչև ժամանակների վերջը:[3]

Դա նույն աստվածային լիազորությունն է, որը տրվեց Պետրոսին Տիրոջ կողմից, երբ Նա խոստացավ. «Եւ ես կտամ քեզ երկնքի արքայութեան բանալիները. եւ այն որ կապես երկրի վերայ, կապուած կլինի երկնքումը. եւ այն որ երկրի վերայ արձակես, արձակուած կլինի երկնքումը»:[4]

Եղիայի վերադարձն օրհնեց բոլորին, ովքեր քահանայություն էին կրում: Երեց Հարոլդ Բ. Լին պարզաբանեց դա, երբ խոսեց գերագույն համաժողովում, մեջբերելով Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի խոսքերը: Ուշադիր լսեք. «Ես քահանայություն եմ կրու, դուք, եղբայրներ, որ այստեղ եք, կրում եք քահանայություն, մենք ստացել ենք Մելքիսեդեկյան Քահանայությունը, որը կրում էր Եղիան ու մյուս մարգարեները և Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը: Բայց մինչդեռ մենք

ունենք մկրտելու իշխանություն, մինչդեռ մենք ունենք իշխանություն դնելու ձեռքերը Սուրբ Հոգու պարգևի համար և կարգել ուրիշներին և անելու այս բոլոր բաները, առանց կնքման զորության մենք չենք կարող որևէ բան անել, քանի որ զորություն չի լինի նրանում, ինչը մենք արել ենք»:

Նախագահ Սմիթը շարունակում է. «Բարձրագույն արարողությունները, մեծագույն օրհնությունները, որոնք կարևոր են Աստծո թագավորությունում վեհացվելու համար, և որոնք կարող են ստացվել միայն հատուկ վայրերում . . . ոչ ոք իրավունք չունի կատարել դրանք, եթե նա իշխանություն չստանա նրանից, ով կրում է բանալիները . . .

. . . Այս երկրի երեսին չկա մի մարդ, ով իրավունք ունի առաջ գնալ և սպասավորել այս ավետարանի ցանկացած արարողություն, մինչև Եկեղեցու Նախագահը, ով կրում է բանալիները, չհաստատի այն: Նա մեզ տվել է իշխանություն. նա դրել է կնքման զորությունը մեր քահանայության մեջ, քանի որ նա կրում է այդ բանալիները»:[5]

Այդ նույն հավաստիացումը եկավ Նախագահ Բոյդ Ք. Փաքերից, երբ նա գրեց կնքման զորության մասին: Իմանալը, որ այս բառերը ճշմարիտ են, մխիթարություն է ինձ համար, ինչպես այն կլինի ընտանիքի համար, որին ես կկնքեմ ապրիլի 3-ին: «Պետրոսը պետք է կրեր բանալիները: Պետրոսը պետք է կրեր կնքման զորությունը. . . . այն իշխանությունը, որը զորություն ունի կապելու կամ կնքելու երկրի վրա և արձակելու երկրի վրա, և այդպես կլինի երկնքում: Այդ բանալիները պատկանում են Եկեղեցու Նախագահին՝ մարգարեին, տեսանողին և հայտնողին: Այդ սուրբ կնքման զորությունը Եկեղեցում է այժմ: Ոչինչ առավել սրբազան չի համարվում նրանց կողմից, ովքեր գիտեն այս իշխանության նշանակության մասին: Ոչինչ առավել մոտ չի պահվում: Երկրի վրա ցանկացած ժամանակահատվածում համեմատաբար քիչ թվով մարդկանց է տրվել այդ կնքման զորությունը, յուրաքանչյուր տաճարում կան եղբայրներ, որոնց տրված է կնքման զորությունը: Դա կարելի է ստանալ միայն մարգարեից, տեսանողից, հայտնողից և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահից»:[6]

Եղիայի գալստի ժամանակ ոչ միայն զորություն տրվեց քահանայությանը, այլ նաև սրտերը պիտի դառնային. «Եղիայի հոգին, զորությունը և կոչումն է, որ դուք զորություն ունենաք կրելու հայտնության, արարողությունների, պատգամների բանալին, Մելքիսեդեկյան Քահանայության լրիվության և երկրում Աստծո թագավորության զորություններն ու օժտումները. և ստանալ, ձեռք բերել և կատարել բոլոր արարողությունները, որոնք կապված են Աստծո թագավորության հետ, մինչև անգամ հայրերի սրտերը դարձնելու դեպի զավակները և զավակների սրտերը դեպի հայրերը, նույնիսկ նրանց, ովքեր երկնքում են»:[7]

Իր սրտի դառնալու այդ զգացողությունը արդեն իսկ եկել է իմ ընկերոջն ու իր ընտանիքին: Այն կարող է գալ ձեզ այս ժողովի ժամանակ: Դուք կարող է մտովի տեսնեք, ինչպես ես, ձեր հոր կամ ձեր մոր դեմքը: Դա կարող է լինել քույր կամ եղբայր: Դա կարող է լինել դուստր կամ որդի:

Նրանք կարող են լինել հոգիների աշխարհում կամ մի երկրում, որը հեռու է ձեզանից: Սակայն ուրախություն եկավ զգացողությունից, որ նրանց հետ կապերը հաստատված են, քանի որ դուք կապված եք կամ կարող եք կապվել նրանց հետ քահանայության արարողություններով, որոնք Աստված կպատվի:

Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները, ովքեր հայրեր են կնքված ընտանիքներում, ուսուցանվել են, թե ինչ պետք է իրենք անեն: Չկա ավելի կարևոր բան, որ եկել է կամ կարող է գալ ձեր ընտանիք, ինչպես կնքման օրհնությունները: Չկա ավելի կարևոր բան, քան ամուսնական և ընտանեկան ուխտերը պատվելը, որոնք դուք կապել եք, կամ կկապեք Աստծո տաճարներում:

Դա անելու եղանակը շատ պարզ է: Խոստումի Սուրբ Հոգին մեր հնազանդության և զոհաբերության շնորհիվ պետք է կնքի մեր տաճարային ուխտերը, որպեսզի ընդունվի գալիք աշխարհում: Նախագահ Հարոլդ Բ. Լին բացատրել է, թե ինչ է նշանակում կնքվել Խոստումի Սուրբ Հոգով, մեջբերելով Երեց Մելվին Ջ. Բալլարդի խոսքերը. «Մենք կարող ենք խաբել մարդկանց, սակայն մենք չենք կարող խաբել Սուրբ Հոգուն, և մեր օրհնությունները հավերժական չեն լինի, մինչև դրանք նաև չկնքվեն խոստումի Սուրբ Հոգով: Սուրբ Հոգին է, որ կարդում է մարդկանց մտքերն ու սրտերը և

տալիս է իր կնքող հաստատումը այն օրհնությունների, որոնք ասվել են իրենց ձեռնադրմամբ: Այնուհետև այն կապող, վավեր և ամբողջությամբ ուժի մեջ կլինի»:[8]

Երբ քույր Այրինգն ու ես կնքվեցինք Յուտայի Լոգան Տաճարում, ես այդ ժամանակ չէի հասկանում այդ խոստման նշանակությունը: Ես մինչև այժմ փորձում եմ հասկանալ դրա ողջ նշանակությունը, սակայն իմ կինն ու ես մեր գրեթե մոտ 50 տարվա ամուսնության սկզբում որոշեցինք որքան հնարավոր է շատ հրավիրենք Սուրբ Հոգուն մեր կյանք և մեր ընտանիք:

Երբ ես երիտասարդ հայր էի, կնքված տաճարում և իմ սիրտը դարձրած իմ կնոջն ու երիտասարդ ընտանիքին, ես առաջին անգամ հանդիպեցի Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթին: Առաջին Նախագահության խորհրդի սենյակում, որտեղ ես հրավիրված էի, միանգամայն համոզիչ վկայություն եկավ ինձ, երբ Նախագահ Հարոլդ Բ. Լին հարցրեց ինձ, ակնարկելով Նախագահ Սմիթին, որը նստած էր իր կողքին. «Դուք հավատո՞ւմ եք, որ այս մարդը կարող է Աստծո մարգարեն լինել»:

Նախագահ Սմիթը նոր էր մտել սենյակ և դեռ ոչ մի խոսք չէր ասել: Ես հավերժորեն երախտապարտ եմ, որ ես կարողացա պատասխանել՝ ասելով այն, ինչ զգացի իմ սրտում. «Ես գիտեմ, որ նա մարգարե է»: Եվ ես այնքան հաստատ գիտեի դա, ինչպես գիտեի, որ արևը շողում էր, որ նա կրում էր քահանայության կնքման զորությունը ողջ աշխարհի համար:

Այդ փորձառությունը մեծ զորություն տվեց նրա խոսքերին իմ և իմ կնոջ համար, երբ 1972թ. ապրիլի 6-ի համաժողովի նիստին Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը տվեց հետևյալ խորհուրդը. «Տիրոջ կամքն է, որ ամրացնենք և պաշտպանենք ընտանիքը: Մենք խնդրում ենք հայրերին գրավել իրենց օրինավոր տեղը որպես տան գլուխ: Մենք խնդրում ենք մայրերին հաստատել և աջակցել իրենց ամուսիններին և լույս լինել իրենց երեխաների համար»:[9]

Թույլ տվեք ինձ չորս խորհուրդ տալ, որոնց կարող եք հետևել որպես քահանայություն կրող հայր, որ բարձրացնեք և առաջնորդեք ձեր ընտանիքին տուն՝ կրկին Երկնային Հոր և Փրկչի հետ լինելու համար:

Առաջինը, ձեռք բերեք և պահեք հաստատուն վկայություն, որ քահանայության բանալիները մեզ հետ են և որ դրանք կրում է Եկեղեցու Նախագահը: Աղոթեք դրա համար ամեն օր: Պատասխանը կգա ձեր ընտանիքը առաջնորդելու աճող վճռականության հետ միասին, հույսի ձեր զգացողությամբ և ձեր ծառայության մեջ ավելի մեծ երջանկությամբ: Դուք ավելի ուրախ ու լավատես կլինեք, որը մեծ օրհնություն կլինի ձեր կնոջ և ընտանիքի համար:

Երկրորդ պահանջն է սիրել ձեր կնոջը: Հավատք և համեստություն կպահանջվի, որպեսզի կյանքի դժվար պահերին նրա շահերը դնեք ձեր սեփականից վեր: Դուք պարտականություն ունեք ապահովելու և հոգ տանելու ընտանիքի համար նրա հետ միասին, մինչ ծառայում եք ուրիշներին: Դա կարող է ժամանակ առ ժամանակ սպառել ձեր ունեցած ողջ էներգիան և ուժը: Տարիքն ու հիվանդությունը կարող են մեծացնել ձեր կնոջ կարիքները: Եթե դուք ընտրեք նույնիսկ այդ ժամանակ նրա երջանկությունը վեր դասել ձեր սեփականից, ես խոստանում եմ ձեզ, որ ձեր սերը նրա հանդեպ կմեծանա:

Երրորդ, խնդրեք ամբողջ ընտանիքին սիրել իրար: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ուսուցանել է.

«Հավերժության տեսանկյունից փրկությունը ընտանեկան պարտականություն է . . .

Ամեն ինչից առավել երեխաները կարիք ունեն իմանալու և զգալու, որ իրենք սիրված, ցանկալի և հասկացված են: Նրանց հաճախ պետք է հիշեցնել այդ մասին: Ակնհայտորեն, սա է դերը, որը ծնողները պետք է կատարեն, և ավելի հաճախ մայրը ավելի լավ կարող է դա անել»:[10]

Բայց սիրված լինելու զգացողությունը ունենալու մեկ այլ կարևոր միջոց է հանդիսանում ընտանիքի մյուս երեխաների սերը: Իրար հանդեպ եղբայրների և քույրերի մշտական հոգատարությունը կգա միայն ծնողների համառ ջանքերի շնորհիվ և Աստծո օգնությամբ: Դուք գիտեք, որ սա ճիշտ է ձեր սեփական ընտանիքների փորձառությունից: Եվ դա հաստատվում է ամեն անգամ, երբ դուք կարդում եք ընտանեկան խնդիրների մասին, որոնց հանդիպել են արդար Լեքին և նրա կինը՝ Սարիան, Մորմոնի Գրքում:

Հաջողությունները, որոնց նրանք հասել են, առաջնորդություն են հանդիսանում մեզ համար: Նրանք այնքան լավ և այնքան հետևողական են եղել Հիսուս Քրիստոսի

ավետարանը ուսուցանելիս, որ երեխաներն ու նույնիսկ որոշ հետնորդներ սերունդների ընթացքում փափկացրել են իրենց սրտերը առ Աստված և իրար հանդեպ: Օրինակ, Նեփին և այլոք գրել են և օգնության են հասել ընտանիքի անդամների, ովքեր եղել են իրենց թշնամիները: Հոգին ժամանակ առ ժամանակ փափկացրել է հազարավորների սրտերը և ատելությունը փոխարինել է սիրով:

Հայր Լեքիի հաջողություններն ընդօրինակելու ճանապարհներից մեկը ձեզ համար ընտանիքով աղոթել և ընտանիքի հետ ժամանակ անցկացնել սովորելն է, ինչպես օրինակ ընտանեկան երեկոները: Երեխաներին հնարավորություն տվեք աղոթել, երբ նրանք կարող են աղոթել շրջանում գտնվողների համար, ովքեր օրհնությունների կարիք ունեն: Արագ նշմարեք անհամաձայնության սկիզբը և նկատեք անեսասեր ծառայության գործերը, հատկապես իրար հանդեպ: Երբ նրանք աղոթեն իրար համար և ծառայեն իրար, սրտերը կփափկեն և կդառնան իրար և իրենց ծնողներին:

Տիրոջ ճանապարհով ձեր ընտանիքն առաջնորդելու չորրորդ հնարավորությունը կգա, երբ կարգուկանոն հաստատեք: Մենք կարող ենք կատարել Տիրոջ ճանապարհով ուղղելու մեր պարտավորությունը և ապա առաջնորդենք մեր երեխաներին դեպի հավերժական կյանք:

Դուք կհիշեք բառերը, սակայն դուք կարող է չտեսնեք դրանց զորությունը Մելքիսեդեկյան Քահանայության կրողի համար, ով պատրաստում է իր ընտանիքը ապրելու նույն հարաբերություններում, որը նրանք կունենան սելեստիալ թագավորությունում: Դուք կհիշեք խոսքերը, դրանք շատ ծանոթ են.

«Ոչ մի զորություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ. միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով.

Բարությամբ և մաքուր գիտելիքով, որոնք անչափ մեծացնում են հոգին՝ առանց կեղծավորության ու առանց նենգության,-

Ժամանակին խստությամբ հանդիմանելով, երբ ներշնչվում ես Սուրբ Հոգով. և ապա, դրանից հետո, ավելի մեծ սեր ցույց տալով նրա հանդեպ, ում հանդիմանել ես, չլինի թե նա քեզ իր թշնամին համարի.

Որպեսզի նա իմանա, որ քո հավատարմությունն ավելի ամուր է, քան մահվան կապանքները»:[11]

Եվ հետո որպես Սիոնի հայրեր մեզ համար մեծ արժեք ունեցող խոստումն է գալիս. «Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը, և քո գավազանը կլինի արդարության ու ճշմարտության անփոփոխ գավազան. և քո տիրապետությունը կլինի հավիտենական տիրապետություն և առանց հարկադրանքի կհոսի դեպի քեզ հավիտյանս հավիտենից»:[12]

Դա բարձր չափանիշ է մեզ համար, սակայն երբ մենք հավատքով ղեկավարում ենք մեր հավասարակշռությունը և խեղդում ենք մեր հպարտությունը, Սուրբ Հոգին տալիս է Իր հավանությունը, և սուրբ խոստումներն ու ուխտերը հաստատվում են:

Ձեր հավատքի շնորհիվ, որ Տերը վերականգնել է քահանայության բանալիները, որոնք շարունակում են լինել մեզ մոտ, դուք հաջողության կհասնեք, սիրո ամուր կապ հաստատելով ձեր կնոջ հետ, Տիրոջ օգնությամբ ձեր երեխաների սրտերը իրար և դեպի իրենց ծնողները դարձնելու և սիրով առաջնորդելու հարցում ձեզ ուղղելով և բարձրացնելով այնպես, ինչպես Հոգին է հրավիրում:

Ես գիտեմ, որ Հիսուսը Քրիստոսն է և մեր Փրկիչը: Ես վկայում եմ, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը այսօր երկրի վրա կրում և կիրառում է քահանայության բոլոր բանալիները: Ես սիրում և հաստատում եմ նրան: Ես սիրում և աղոթում եմ նրա համար: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Տիրանա, Ալբանիա

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 130.2:
2. Վարդապետություն և Ուխտեր 38.32–33:
3. Տես Joseph Fielding Smith, *Sealing Power and Salvation,* Brigham Speeches of the Year (Jan. 12, 1971), speeches.byu.edu.
4. Մատթեոս ԺԶ.19:
5. Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ, մեջբերումը Հարոլդ Բ. Լիի կողմից, in Conference Report, Oct. 1944, 75:
6. Բոյդ Ք. Փաքեր, «Սուրբ Տաճարը», *Լիահոնա*, հոկտ. 2010, 34:
7. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 11:
8. Melvin J. Ballard, quoted by Harold B. Lee, in Conference Report, Oct. 1970, 111.
9. Joseph Fielding Smith, “Counsel to the Saints and to the World,” *Ensign,* July 1972, 27.
10. Ezra Taft Benson, “Salvation—a Family Affair,” *Tambuli,* Nov. 1992, 3, 4.
11. Վարդապետություն և Ուխտեր 121.41–44:
12. Վարդապետություն և Ուխտեր 121.46:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Պատրաստական և արժանի լինել ծառայելու

Հրաշքներ ամենուր կարելի է գտնել, երբ քահանայությունը հասկացվում է, դրա զորությունը հարգվում և պատշաճ ձևով օգտագործվում է, և հավատք է գործադրվում:

Ամ սիրելի եղբայրներ, որքան հաճելի է կրկին ձեզ հետ հանդիպելը: Երբ գալիս եմ քահանայության գերագույն ժողովին, ես խորհում եմ Աստծո ազնվազարմ ղեկավարների ուսմունքների շուրջ, որոնք ասվել են Եկեղեցու քահանայության գերագույն ժողովներին: Շատերը գնացել են ստանալու իրենց հավերժական վարձքը, սակայն իրենց փայլուն մտքից, հոգու խորքից և բարի սրտից բխած խոսքերով ոգեշնչված ուղղություն են տվել մեզ: Այս երեկո ես կկիսվեմ քահանայության վերաբերյալ նրանց ուսմունքներով:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Քահանայությունը հավերժական սկզբունք է, և գոյություն է ունեցել Աստծո հետ հավերժությունից հավերժություն, առանց օրերի սկզբի և տարիների վերջի»:[1]

Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի խոսքերից մենք սովորում ենք. «Սուրբ Քահանայությունն այն կապուղին է, որով Աստված հաղորդակցվում է և գործում է մարդու հետ Երկրի վրա. և երկնային սուրհանդակները, որոնք այցելել են Երկիր հաղորդակցվելու մարդու հետ, մարդիկ են, ովքեր կրել և պատվել են քահանայությունը, երբ մարմին են ունեցել. և այն ամենը, ինչ Աստված կատարել է մարդու փրկության համար, մարդու Երկիր գալուց մինչև աշխարհի փրկագնումը, եղել է և կլինի հավիտենական քահանայության զորությամբ»:[2]

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը պարզաբանել է. «Քահանայությունը . . . Աստծո զորությունն է տրված մարդուն, ըստ որի մարդիկ կարող են Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով գործել Երկրի վրա մարդկային ընտանիքի փրկության համար, և գործել ոչ թե ձևական, այլ օրինական իշխանությամբ, փոխ չառնելով այն անցած գնացած սերունդներից, այլ իշխանությամբ՝ տրված այս օրերին, ծառայող հրեշտակների և հոգիների միջոցով, *ուղղակիորեն Ամենազոր Աստծո ներկայությունից*»:[3]

Եվ վերջապես Նախագահ Ջոն Թեյլորն ասել է. «Ի՞նչ է քահանայությունը . . . Դա Աստծո կառավարությունն է՝ թե երկրի վրա, և թե երկնքում, քանզի այդ զորությամբ, միջոցով կամ սկզբունքով են բոլոր բաները կառավարվում երկրի վրա և երկնքում, և այդ զորությամբ է ամեն ինչ պահվում և հաստատվում: Այն կառավարում, ուղղորդում և հաստատում է ամեն ինչ, և գործ ունի այն ամենի հետ, ինչը առնչվում է Աստծուն և ճշմարտությանը»:[4]

Որքան օրհնված ենք մենք այստեղ այս վերջին օրերին, երբ Աստծո քահանայությունը երկրի վրա է: Որքան արտոնված ենք մենք, որ քահանայություն ենք կրում: Քահանայությունը ոչ այնքան պարգև է, որքան ծառայելու հանձնառություն, բարձրացնելու արտոնություն և մյուսների կյանքերն օրհնելու հնարավորություն:

Այդ հնարավորությունների հետ գալիս են պատասխանատվություններ և պարտականություններ: Ես սիրում և փայփայում եմ *պարտականություն* ազնվազարմ բառը և այն ամենը, ինչ այն ենթադրում է:

12 տարեկանում սարկավագ կարգվելուց ի վեր, անցած 72 տարիների ընթացքում, ունենալով տարբեր պաշտոններ, ես հաճախել եմ քահանայության ժողովների տարբեր վայրերում: Ժամանակն իհարկե առաջ է գնում: Պարտականությունը քայլում է դրան համաչափ: Պարտականությունը երբեք ոչ նվազում, ոչ էլ անհետանում է: Աղետալի հակամարտությունները գալիս և գնում են, սակայն մարդկանց հոգիների համար մղվող պատերազմն անդադար շարունակվում է: Շեփորի կանչի նման լսվում է Տիրոջ խոսքը, ուղղված ձեզ, ինձ և քահանայություն կրողներին ամենուր. «Ուստի, այժմ թող ամեն տղամարդ սովորի իր *պարտականությունը* և ողջ ջանասիրությամբ գործի այն պաշտոնում, որում նշանակված է»:[5]

Պարտականության կանչ եկել է Ադամին, Նոյին, Աբրահամին, Մովսեսին, Սամուելին, Դավիթին: Այն

եկավ Մարգարե Ջոզեֆ Սմիթին և նրա իրավահաջորդներից յուրաքանչյուրին: Պարտականության կանչ եկավ պատանի Նեփիին, երբ իր հոր Լեքիի միջոցով, Տիրոջ կողմից նա հրահանգվեց իր եղբայրների հետ միասին վերադառնալ Երուսաղեմ և վերցնել պղնձե թիթեղները Լաբանից: Նեփիի եղբայրները տրտնջացին, ասելով որ իրենցից դժվար բան է պահանջվում: Ի՞նչ պատասխանեց Նեփիին: Նա ասաց. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է, քանզի գիտեմ, որ Տերը չի տալիս պատվիրաններ մարդկանց զավակներին՝ առանց ուղի պատրաստելու նրանց համար, որպեսզի նրանք կարողանան իրագործել այն, ինչ նա պատվիրել է իրենց»:[6]

Երբ այդ նույն կանչը գա ձեզ և ինձ, ինչպիսի՞ն կլինի մեր պատասխանը: Արդյո՞ք Լամանի և Լեմուելի պես կտրտնջանք և կասենք. «Դժվար բան է պահանջվում մեզանից»[7], թե Նեփիի նման յուրաքանչյուրս կհայտարարի. «Ես կգնամ ու կանեմ»: Պատրաստակամ կլինե՞նք ծառայելու և հնազանդվելու:

Երբեմն Աստծո իմաստությունը թվում է անմտություն կամ պարզապես շատ դժվար բան, սակայն ամենաարժեքավոր ու մեծագույն դասերից մեկը, որ կարող ենք սովորել մահկանացու կյանքում այն է, որ երբ Աստված խոսում է և մարդը հնազանդվում է, այդ մարդը միշտ ճիշտ կլինի:

Երբ մտածում եմ *պարտականություն* բառի մասին, թե ինչպես այդ պարտականությունը կատարելը կհարստացնի մեր և մյուսների կյանքը, ես հիշում եմ հայտնի բանաստեղծի խոսքերը.

Ես քնեցի և երազում տեսա,
որ կյանքը ուրախություն է:
Ես արթնացա և տեսա,
որ կյանքը պարտականություն է:
Ես գործեցի և ահա,-
Պարտականությունը ուրախություն դարձավ:[8]

Ռոբերտ Լուի Սթիվենսոնը դա այլ կերպ է ձևակերպել: Նա ասել է. «Ես գիտեմ, թե ինչ է հաճույքը, քանզի լավ աշխատանք եմ կատարել»:[9]

Կատարելով մեր պարտականությունները և գործադրելով մեր քահանայությունը, մենք իսկական ուրախություն կգտնենք: Մենք բավարարվածություն կզգանք ավարտին հասցնելով մեր առաջադրանքները:

Մենք ուսուցանվել ենք որոշակի պարտականություններ կապված քահանայության հետ, որը մենք կրում ենք, և Ահարոնյան, և Մելքիսեդեկյան Քահանայության հետ կապված: Ես հորդորում եմ ձեզ՝ մտածեք այդ պարտականությունների մասին և ապա ձեր ուժերի սահմանում արեք ամեն ինչ դրանք իրագործելու համար: Դրա համար ամեն ոք պետք է արժանի լինի: Եկեք ունենանք պատրաստ, մաքուր և հոժարակամ ձեռքեր, որպեսզի կարողանանք տալ այն, ինչ Երկնային Հայրը ցանկանում է, որ մարդիկ ստանան Իրենից: Եթե մենք արժանի չենք, հնարավոր է կորցնենք քահանայության զորությունը, և եթե կորցնենք այն, ուրեմն կորցրել ենք վեհացման էությունը: Եկեք արժանի լինենք ծառայելու:

Եկեղեցու մեծագույն ուսուցիչներից մեկը՝ Նախագահ Հարոլդ Բ.

Էին ասել է. «Մարդը քահանայություն ստանալով դառնում է Տիրոջ գործակալը: Նա պետք է իր կանչին վերաբերվի որպես Տիրոջ կողմից տրված հանձնարարություն»:[10]

Երկրորդ Համաշխարհայինի տարիներին՝ 1944թ. սկզբին, քահանայության հետ կապված մի դեպք տեղի ունեցավ, երբ Միացյալ Նահանգների ծովայինները գրավում էին Կվաջալին Աթոլը, որը Մարշալյան կղզիների մի մասն է և գտնվում է Խաղաղ օվկիանոսում Ավստրալիայի և Հավայիի մեջտեղում: Տեղի ունեցածի մասին պատմել է մի թղթակից, ոչ Եկեղեցու անդամ, որը աշխատում էր Հավայիի թերթի համար: 1944թ. իր հոդվածում նա գրել է հետևյալ դեպքի մասին: Նա պատմում է, որ ինքը մյուս թղթակիցների հետ գտնվում էր հարձակվողների երկրորդ գծի վրա, Կվաջալին Աթոլի մոտ գտնվող ծովայինների ետևում: Առաջանալով նրանք նկատեցին, որ մի երիտասարդ ծովային երեսնիվար լողում է ջրում, ակնհայտորեն ծանր վիրավոր: Նրա շուրջը ջուրը իր արյան գույնով էր ներկվել: Ապա նրանք մեկ այլ ծովային նկատեցին, որը շարժվում էր իր վիրավոր ընկերոջ կողմը: Երկրորդ ծովայինը նույնպես վիրավոր էր՝ ձախ ձեռքն անօգնական կախված կողքից: Նա բարձրացրեց ջրի վրա լողացող ընկերոջ գլուխը, որպեսզի նա չխեղդվեր, և խուճապահար օգնություն կանչեց: Թղթակիցները կրկին նայելով տղային, որին նա պահում էր, բացականչեցին. «Տղաս, մենք ոչինչ չենք կարող անել նրա համար»:

«Ապա, - գրում է թղթակիցը,- ես տեսա մի բան, որ նախկինում չէի տեսել: Այդ տղան, որն ինքն էլ ծանր վիրավոր էր, լողաց դեպի ափը իր ընկերոջ ասես անկենդան մարմինը քաշելով: Նա ընկերոջ գլուխը դրեց իր ծնկներին: Ինչպիսի տեսարան էր դա՝ երկու մահացու վիրավորված տղաներ, երկուսն էլ . . . մաքուր, հրաշալի տեսքով երիտասարդներ, անգամ այդ սոսկալի իրավիճակում: Այդ տղան գլուխը խոնարհելով մյուսի վրա ասաց. «Հրամայում եմ քեզ, Հիսուս Քրիստոսի անունով և քահանայության զորությամբ, որ կենդանի մնաս, մինչև բժշկական օգնություն կկանչեմ»: Թղթակիցն ավարտել էր իր հոդվածը այսպես. «Մենք երեքս [երկու ծովայինները և ես], հիվանդանցում ենք: Բժիշկները չգիտեն . . . [ինչպես են նրանք կենդանի մնացել], բայց ես գիտեմ»:[11]

Հրաշքներ ամենուր կարելի է գտնել, երբ քահանայությունը հասկացվում է, դրա զորությունը հարգվում և պատշաճ ձևով օգտագործվում է, և հավատք է գործադրվում: Երբ կասկածը փոխարինվում է հավատքով, երբ անձնուրաց ծառայությունը դուրս է մղում եսասեր պայքարը, Աստծո զորությունը իրականացնում է Իր նպատակները:

Պարտականության կանչը կարող է զալ անաղմուկ, երբ մենք՝ քահանայություն կրողներս արձագանքում ենք մեր ստացած հանձնարարություններին: Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթը, այդ համեստ, սակայն արդյունավետ առաջնորդը, հայտարարել է. «Ձեր պարտականությունն է՝ նախևառաջ իմանալ, ինչ է Տերը ցանկանում, ապա, Նրա սուրբ քահանայության իշխանությամբ և զորությամբ, մեծարել ձեր կոչումը ձեր ընկերների ներկայությամբ, որ մարդիկ ուրախությամբ ցանկանան հետևել ձեզ»:[12]

Նման պարտականության, ճիշտ է ոչ այնքան տպավորիչ կանչ, որը սակայն օգնեց փրկել հոգի, ես ստացա 1950թ., երբ նոր էի կանչել որպես եպիսկոպոս: Իմ պատասխանատվությունները որպես եպիսկոպոս շատ էին և տարբեր,



և ես փորձում էի իմ կարողության սահմանում անել ինձանից պահանջվող ամեն ինչ: Այդ ժամանակ Միացյալ Նահանգները ներգրավված էր մեկ այլ պատերազմում: Քանի որ մեր անդամներից շատերը ծառայում էին զինված ուժերում, Եկեղեցու գլխավոր վարչությունից մի հանձնարարություն եկավ բոլոր եպիսկոպոսներին՝ յուրաքանչյուր զինծառայողի համար բաժանորդագրվել *Church News* և *Improvement Era,* ամսագիրը: Նաև խնդրանք, որպեսզի յուրաքանչյուր եպիսկոպոս ամեն ամիս անձնական նամակ գրի իր ծխի յուրաքանչյուր զինծառայողի: Մեր ծուխն ուներ 23 զինծառայող: Քահանայության քվորումները, ջանքեր ներդրեցին գումար տրամադրելով թերթի և ամսագրի բաժանորդագրությունների համար: Ես ստանձնեցի հանձնարարությունը, այսինքն՝ ամեն ամիս 23 անձնական նամակ գրելու պարտականությունը: Այսքան տարիներ անց ես դեռ պահում եմ իմ գրած շատ նամակների պատճեները և ստացած պատասխանները: Այդ նամակները վերընթերցելիս արցունքներն անարգել հոսում են: Ուրախություն է կրկին իմանալը, որ զինվորը խոստանում է ավետարանով ապրել, նավաստին որոշում է իր ընտանիքի հետ հավատքը պահել:

Մի երեկո ես 23 նամակների կապոցը տվեցի ծխի մի քրոջ, որի առաջադրանքն էր նամակներն ուղարկել և պահել մշտական փոփոխվող հասցեների ցուցակը: Նա մի ծրարի նայելով՝ ժպիտով հարցրեց. «Եպիսկոպոս, դուք երբևէ չեք հուսահատվո՞ւմ: Եվս մեկ նամակ Եղբայր Բրայսոնին, սա 17-րդ նամակն է ուղարկում եք առանց նրանից պատասխան ստանալու»:

Ես ասացի. «Դե, մի գուցե այս անգամ կպատասխանի»: Այնպես ստացվեց, որ այդ ամիս նրանից նամակ *ստացա*: Առաջին անգամ էր նա իմ նամակին պատասխանում: Նրա պատասխանը հիշատակ է, գանձ: Նա ծառայում էր հեռավոր ափամերձ վայրում, մեկուսի, տան կարոտ, միայնակ: Նա գրել էր. «Թանկագին եպիսկոպոս, ես նամակ գրելուց լավ չեմ»: (Ես դա կարող էի ասել *դա* նրան մի քանի ամիս առաջ:) Նա շարունակում էր. «Շնորհակալություն *Church News*-ի և ամսագրերի համար, բայց ամենաշատը շնորհակալություն անձնական նամակների համար: Ես կյանքի նոր էջ եմ շրջել: Ես կարգվել եմ որպես Ահարոնյան Քահանայության քահանա: Սիրտս ուրախությամբ լի է: Ես երջանիկ մարդ եմ»:

Եղբայր Բրայսոնից ավելի երջանիկ էր նրա եպիսկոպոսը: Ես սովորեցի, ինչպես կյանքում կիրառել հետևյալ ասացվածքը. «Արա քո պարտականությունը: Արա որքան կարող ես, մնացածը թող Տիրոջը»:[13]

Տարիներ անց, երբ հաճախեցի Սոլթ Լեյքի Քոթընվուդ ցից, որի նախագահը Ջեյմս Ի. Ֆաուստն էր, ես պատմեցի այդ պատմությունը, որ խրախուսեի ավելի մեծ ուշադրություն ցուցաբերել մեր զինծառայողների հանդեպ: Հանդիպումից հետո, մի բարետես երիտասարդ մոտեցավ ինձ: Նա սեղմեց ձեռքս, ասելով. «Եպիսկոպոս Մոնսոն, դուք ինձ հիշո՞ւմ եք»:

Ես հանկարծ հասկացա, թե ով էր նա: «Եղբայր Բրայսոն,- բացականչեցի ես,- ինչպե՞ս ես, ի՞նչ ես անում Եկեղեցում»:

Ջերմորեն և ակնհայտ հպարտությամբ նա պատասխանեց. «Հրաշալի եմ, ես ծառայում եմ իմ երեցների քվորումի նախագահությունում: Կրկին շնորհակալություն ձեր մտահոգության և ձեր ուղարկած անձնական նամակների համար: Դրանք շատ թանկ են ինձ համար»:

Եղբայրներ, աշխարհը մեր օգնության կարիքն ունի: Արդյո՞ք անում ենք այն ամենը, ինչ պետք է: Հիշո՞ւմ ենք Նախագահ Ջոն Թեյլորի խոսքերը. «Եթե դուք չեք մեծարում ձեր կոչումները, Աստված պատասխանատվության կկանչի նրանց համար, ում կարող էիք փրկել, եթե ձեր պարտականությունը կատարեիք»:[14] Կան ոտքեր, որ կարող ենք ամրացնել, ձեռքեր, որ կարող ենք բռնել, մտքեր, որ կարող ենք խրախուսել, սրտեր, որ կարող ենք ոգեշնչել և հոգիներ, որ կարող ենք փրկել: Հավերժության օրհնությունները սպասում են ձեզ: Դուք արտոնություն ունեք լինելու ոչ թե հանդիսատես, այլ մասնակից քահանայության ծառայության բեմի վրա: Եկեք լսենք Հակոբոսի ոգեշնչող հիշեցումը. «Բայց խոսքը անող եղեք, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով»:[15]

Եկեք սովորենք մեր պարտականությունը և խորհենք դրա շուրջ: Եկեք պատրաստակամ և արժանի լինենք ծառայելու: Եկեք մեր պարտականությունները կատարելիս հետևենք Վարդապետի քայլերին: Երբ դուք և ես քայլենք Հիսուսի ճանապարհով, մենք կհայտնագործենք, որ Նա ավելին է, քան Բեթլեհեմի մանուկը, քան հյուսնի որդին, երբևէ ապրած ամենամեծ ուսուցիչը: Մենք կճանաչենք Նրան որպես Աստծո Որդի, մեր Փրկիչ և մեր Քավիչ: Երբ Նրան տրվեց պարտականության կանչը, Նա պատասխանեց. «Հայր, քո կամքը կատարվի, և փառքը քոնը լինի հավիտյան»:[16] Թող որ մենք անենք նմանապես, ես աղոթում եմ Նրա սուրբ անունով՝ Հիսուս Քրիստոսի՝ Տիրոջ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 104.
2. *Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* (2004), 38.
3. Joseph F. Smith, *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 139–40; emphasis added.
4. *Teachings of Presidents of the Church: John Taylor* (2001), 119.
5. Վարդապետություն և Ուխտեր 107.99; շեշտադրումն ավելացված է:
6. 1 Նեփի 3.7, տես նաև հատվածներ 1–5:
7. Տես 1 Նեփի 3.5:
8. Rabindranath Tagore, in William Jay Jacobs, *Mother Teresa: Helping the Poor* (1991), 42.
9. Robert Louis Stevenson, in Elbert Hubbard II, comp., *The Note Book of Elbert Hubbard: Mottoes, Epigrams, Short Essays, Passages, Orphic Sayings and Preachments* (1927), 55.
10. *Stand Ye in Holy Places: Selected Sermons and Writings of President Harold B. Lee* (1976), 255.
11. In Ernest Eberhard Jr., “Giving Our Young Men the Proper Priesthood Perspective,” typescript, July 19, 1971, 4–5, Church History Library.
12. George Albert Smith, in Conference Report, Apr. 1942, 14.
13. Henry Wadsworth Longfellow, “The Legend Beautiful,” in *The Complete Poetical Works of Longfellow* (1893), 258.
14. *Teachings: John Taylor,* 164.
15. Հակոբոս Ա.22:
16. Մովսես 4.2:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ողորմածները ողորմություն են գտնում

Երբ մեր սիրտը լցված է Աստծո սիրով, մենք դառնում ենք «բարի, գթած, իրար ներող»:

Ամ սիրելի եղբայրներ և քույրեր, վերջերս ես նամակ ստացա մի մտահոգված մորից, որը խնդրում էր գերագույն համաժողովի ելույթում շոշափել մի թեմա, որը հատկապես կօգներ իր երկու երեխաներին: Նրանք նեղացել էին միմյանցից և չէին խոսում իրար հետ: Մոր սիրտը կոտրված էր: Իր նամակում նա ինձ հավաստիացնում էր, որ գերագույն համաժողովի այդ թեմայով ուղերձը կհաշտեցնի իր զավակներին, և ամեն ինչ կհարթվի:

Այս լավ քրոջ անկեղծ ու սրտառուչ խնդրանքն այն մի քանի հուշումներից մեկն էր, որ ես ստացել եմ այս վերջին ամիսների ընթացքում, որ այսօր պետք է խոսեմ այս թեմայի շուրջ: Դա ահազանգող մտահոգություն է, ոչ միայն անհանգստացած մոր, այլ Եկեղեցում և, իհարկե, աշխարհում շատերի համար:

Ես տպավորված եմ այդ սիրող մոր հավատքով, որ գերագույն համաժողովի ելույթը կօգնի հարթել իր երկու զավակների հարաբերությունները: Համոզված եմ, որ նա վստահում էր ոչ այնքան խոսնակների ունակություններին, որքան «Աստծո խոսքի ուժին», որն ունի «ավելի զորավոր ազդեցություն մարդկանց մտքերի վրա, քան . . . որևէ այլ բան»:[1] Թանկագին քույր, ես աղոթում եմ, որ Հոգին դիպչի ձեր զավակների սրտերին:

Երբ հարաբերությունները վատթարանում են

Լարված և ընդհատված հարաբերություններն այնքան հին են, որքան մարդկությունն՝ ինքը: Կայենն առաջինն էր, որ թույլ տվեց, որ դառնությունն ու ոխը թունավորեին իր սիրտը: Նա իր հոգում ցանեց նախանձ ու ատելություն, և թույլ տվեց որ այդ զգացումները հասունանան այնքան, որ նա արեց աներևակայելին՝ սպանելով իր եղբորը և դառնալով սատանայի ստերի հայրը:[2]

Այդ առաջին օրերից ի վեր նախանձի և ատելության ոգին է եղել պատմության մեջ առավել ողբերգական դեպքերի առիթը: Այն Սավուղին տրամադրեց Դավթի դեմ, Հակոբի որդիներին իրենց եղբայր՝ Հովսեփի դեմ, Լամանին ու Լեմուելին Նեփիի դեմ, և Ամաղիկիային Մորոնիի դեմ:

Կարծում եմ, որ երկրի վրա ամեն մարդու վրա ինչ-որ չափով ազդել է հակառակության, զայրույթի և վրեժխնդրության կործանիչ ոգին: Գուցե անգամ կան պահեր, երբ մենք ինքներս մեր մեջ զգում ենք այդ ոգին: Երբ վիրավորվում ենք, զայրանում կամ նախանձում, շատ հեշտ է դատել ուրիշներին, հաճախ մյուսների գործողությունների մեջ տեսնելով մութ դրդապատճառներ, որպեսզի արդարացնենք մեր վրդովմունքը:

Վարդապետություն

Անշուշտ գիտենք, որ դա սխալ է: Վարդապետությունը պարզ է: Մենք բոլորս կախված ենք Փրկչից, մեզանից ոչ ոք չի կարող փրկվել առանց Նրա: Քրիստոսի Քավությունը անսահման է և հավերժական: *Մեր* մեղքերի ներումը գալիս է պայմանով: Մենք պետք է ապաշխարենք, և պետք է կամենանք ներել մյուսներին: Հիսուսն ուսուցանել է. «Ներեք միմյանց. քանզի, ով . . . չի ներում . . . դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ. քանզի նրա մեջ ավելի մեծ մեղք է մնում»,[3] և «երանի ողորմածներին, որ նրանք ողորմություն կգտնեն»:[4]

Իհարկե, այս խոսքերը թվում են շատ ողջամիտ, երբ վերաբերում են մեկ ուրիշին: Մենք կարող ենք շատ հստակ և հեշտությամբ տեսնել այն վնասակար արդյունքները, որոնք գալիս են, երբ *մյուսները* քննադատում են և վիրավորանք պահում: Եվ, իհարկե, մենք չենք սիրում, երբ մարդիկ քննադատում են մեզ:

Սակայն երբ խոսքը վերաբերում է մեր նախապաշարումներին և վիրավորանքներին, մենք շատ հաճախ արդարանում ենք՝ մեր բարկությունը համարելով արդարացի, և մեր քննադատությունը՝ ստույգ և տեղին: Թեև մենք չենք

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

Ապրիլ 2012

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Բոյդ Ք. Փաքեր

Լ. Թոմ Փերի

Ռասսել Մ. Նելսոն



Դալլին Հ. Օուքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ռիչարդ Գ. Սքոթ

Ռոբերտ Դ. Հեյլս

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Վոլթեր Ֆ. Գոնզալես

Լ. Ուիթնի Քլեյթոն

Ջեյ Ե. Ջենսեն

Դոնալդ Լ. Հոլստրոմ

Դոնալդ Լ. Հոլստրոմ

Ռիչարդ Ջ. Մեյնզ

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ՔՎՈՐՈՒՄ

Մարկոս Ա. Այդունայտիս · Հոսե Լ. Ալոնզո · Կարլոս Հ. Ամադո · Յան Ս. Սրդերն · Մերվին Բ. Առնոլդ · Դեյվիդ Ս. Բաքստեր · Շեյն Մ. Բոուեն · Քրեյգ Ա. Քարդոն · Յուն Հվան Չոյի · Քրեյգ Ս. Քրիչենսեն

Դոն Ռ. Քլարկ · Քարլ Բ. Քուք · Լորենս Ե. Քորբրիջ · Կլաուդիո Ռ. Մ. Կոստա · Լեգրան Ռ. Քըրտիզ Կրտս. · Բենջամին դե Հոյոս · Ջոն Բ. Դիքսոն · Քեվին Ռ. Դանքըն · Լարի Էքո Հոք · Սթենլի Գ. Էլիս

Դեյվիդ Ֆ. Էվանս · Էնրիկե Ռ. Ֆայաբեյա · Էդուարդո Գավարետ · Ռոբերտ Ս. Գեյ · Կարլոս Ա. Գոդոյ · Քրիստոֆել Գոդեն Կրտս. · Ջերիթ Վ . Գոն · Ս. Սքոթ Գրոու · Ջեյմս Ջ. Համուլա · Քեյթ Կ. Հիլբիգ

Մարլին Կ. Ջենսեն · Դանիել Լ. Ջոնսոն · Փոլ Վ. Ջոնսոն · Պատրիկ Քիրոն · Փոլ Ե. Քոլիքեր · Էրիկ Վ. Կոպիչկե · Մարկուս Բ. Նաշ · Բրենտ Հ. Նիլսոն · Ալլան Ֆ. Փաքեր · Քեվին Վ. Փիրսոն

Էնթոնի Դ. Փերկինս · Փոլ Բ. Փիփեր · Ռաֆայել Ի.Փինո · Բրուս Դ. Փորթեր · Դեյլ Գ. Ռենլանդ · Մայքլ Տ. Ռինգվոդ · Լին Գ. Ռոբինս · Ջոզեֆ Վ. Սիտատի · Սթիվեն Ե. Սնոու · Ուլիսես Սոարես

Մայքլ Ջոն Ու. Թեի · Հոսե Ա. Թեքսեյրա · Օկտավիանո Տենորիո · Խուան Ա. Ուսեդա · Ֆրանսիսկո Ջ. Վինաս · Վ. Քրիստոֆեր Վաղել · Վիլիամ Ռ. Վոքեր · Ֆ. Մայքլ Վատսոն · Սքոթ Դ. Վայթինգ · Կազուհիկո Յամաշիտա

Ջորջ Ֆ. Ջեբալոս · Կլաուդիո Դ. Զիվիկ · Վ. Քրեյգ Ցվիք

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՎՈՐՈՒՄ

Վիլֆորդ Վ. Անդերսեն · Կոիչի Սոյագի · Ռանդալ Կ. Բեներ · Բրուս Ա. Քարլսոն

Ջ. Դեվն Քորնիշ · Քեյթ Ռ. Էդվարդս · Բրեդլի Դ. Ֆոսթեր · Լարի Վ. Գիբոնս

Օ. Վինսենթ Հալեք · Լարի Ռ. Լորենս · Փեր Գ. Մալմ · Ջեյմս Բ. Մարտինո

Ջայրո Մազագարդի · Քենտ Ֆ. Ռիչարդս · Գրեգորի Ա. Շվիցեր · Քենտ Դ. Վատսոն

Լարի Յ. Վիլսոն

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ

Ջեռալդ Կոսե Առաջին Խորհրդական · Գարի Ի. Սթիվենսոն Նախագահող Եպիսկոպոս · Դին Մ. Դեյվիս Երկրորդ Խորհրդական

Վերջին Օրերի Սրբերը «ցնծում են մեծ արտոնությամբ» (Ալմա 61.14), լսելով 182-րդ ամենամյա գերագույն համաժողովի ուղերձները և կիսվելով դրանցով: Ժամացույցի սլաքի ուղղությամբ վերևում ձախից՝ միսիոներները և անդամները՝ Տիրանայում, Ալբանիա; Լոնդոնում, Անգլիա; Սան Պաուլոյում, Բրազիլիա; Մինեապոլիսում, Մինեսոտա, ԱՄՆ; Մոսկվայում, Ռուսաստան; Բարիգադայում, Գուամ; և Փարիզում, Ֆրանսիա:

կարող տեսնել մեկ ուրիշի սիրտը, մենք ենթադրում ենք, որ գիտենք վատ դրդապատճառը կամ անգամ վատ մարդուն, երբ տեսնում ենք նրան: Մենք բացառություններ ենք անում, ինչ վերաբերում է մեր դառնությանը, որովհետև զգում ենք, որ մեր դեպքում մենք ունենք մեզ անհրաժեշտ ողջ տեղեկությունը մեկ ուրիշին արհամարելու համար:

Հռոմեացիներին գրած իր նամակում Պողոս Առաքյալն ասում է, որ ովքեր դատապարտում են ուրիշներին, «աններելի» են: Նա բացատրում է, որ այն պահին, երբ մենք դատում ենք ուրիշին, մենք դատապարտում ենք մեզ, քանզի ոչ ոք առանց մեղքի չէ:[5] Ներելուց հրաժարվելը ծանր մեղք է, որի համար Փրկիչը զգուշացրել է: Հիսուսի իսկ աշակերտներն էին «մեղադրանք փնտրում մեկմեկու դեմ և միմյանց չէին ներում իրենց սրտերում. և այս չարիքի համար նրանք չարչարվեցին և դառնորեն խրատվեցին»:[6]

Մեր Փրկիչն այնքան հստակ է խոսել այս մասին, որ մեկնաբանության շատ քիչ տեղ է մնացել, ապա Նա ասել է. «Ես՝ Տերս, կներեմ, ում որ կներեմ, բայց ձեզանից *պահանջվում* է ներել *բոլոր* մարդկանց»:[7]

Կուզենայի այստեղ մի փոքր պարզաբանում ավելացնել: Երբ Տերը պահանջում է, որ մենք ներենք բոլոր մարդկանց, դա ներառում է՝ ինքներս մեզ ներելը: Երբեմն, աշխարհի բոլոր մարդկանցից նա, որ դժվարությամբ է ներում, և գուցե ամենաշատը մեր ներողամտության կարիքն ունի, դա հայելու միջից մեզ նայող մարդն է:

Հիմնական միտքը

Մյուսներին դատապարտելու մասին այս թեման իրականում կարելի է ուսուցանել երկու բառով: Երբ գործը հասնում է ատելությանը, բամբասանքին, արհամարհելուն, ծաղրելուն, վիրավորանքը ներսում պահելուն կամ վնաս պատճառելուն, խնդրում եմ կիրառեք հետևյալը.

Կանգ առեք:

Դա շատ պարզ է: Մենք ուղղակի պետք է դադարենք մյուսներին քննադատել, և քննադատական խոսքերն ու զգացմունքները փոխարինենք Աստծո և Նրա զավակների հանդեպ սրտանց սիրով: Աստված մեր Հայրն է: Մենք Նրա զավակներն ենք: Մենք բոլորս եղբայրներ և քույրեր ենք: Ես չգիտեմ ինչպես ճիշտ ձևակերպեմ *մյուսներին չդատելու* այդ միտքը, բավարար պերճախոսությամբ, խանդավառությամբ ու համոզումով, որ ձեր վրա տպավորվի: Ես կարող եմ մեջբերել սուրբ գրություն, մեկնաբանել վարդապետություն, և անգամ կարող եմ ասել, թե մի մեքենայի ետնամասի վրա փակցված ինչ խոսքեր եմ տեսել: Այդ մեքենայի վարորդը տեսքով կոպիտ էր, սակայն մեքենայի վրա գրված խոսքերը ոգեշնչող դաս էր, որն ասում էր՝ «Մի դատիր ինձ, որովհետև ես այլ կերպ եմ մեղանչում, քան դու»:

Մենք պետք է գիտակցենք, որ բոլորս էլ անկատար ենք, որ մենք մուրացկաններ ենք Աստծո առաջ: Արդյոք, չե՞ն եղել պահեր, երբ մենք բոլորս էլ հեզ մոտեցել ենք ողորմածության գահին և շնորհ աղերսել: Արդյոք, մեր հոգու ողջ եռանդով չե՞նք ցանկացել ողորմություն՝ ներվելու մեր կատարած սխալներից և մեղքերից:

Որովհետև մենք բոլորս կախված ենք Աստծո ողորմածությունից, ինչպե՞ս կարող ենք մերժել մյուսներին ինչ-որ չափի շնորհ, որը մենք հուսակտուր փափագում ենք մեզ համար: Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, արդյոք չպիտի՞ ներենք, ինչպես մենք ենք ցանկանում ներվել:

Աստծո սերը

Դժվա՞ր է դա անել:

Իհարկե, այո:

Մեզ և մյուսներին ներելը հեշտ չէ: Իրականում, մեզանից շատերի համար պահանջվում է մեծ փոփոխություն մեր վերաբերմունքի և մտածելակերպի մեջ, անգամ՝ սրտի փոփոխություն: Բայց կա բարի լուր: Այս սրտի «հզոր փոփոխությունը»[8] հենց այն է, ինչ Հիսուս Քրիստոսի ավետարանը պետք է բերի մեր կյանք:

Ինչպե՞ս է դա արվում։ Աստծո սիրով։

Երբ մեր սրտերը լի են Աստծո սիրով, ինչ-որ լավ ու մաքուր բան է տեղի ունենում մեզ հետ։ Մենք պահում ենք նրա պատվիրանները, «և նրա պատվիրանքները ծանր չեն։ Որովհետև ամեն ով որ Աստուածանից է ծնված հաղթում է աշխարհքին»։[9]

Որքան շատ ենք թույլ տալիս, որ Աստծո սերը կառավարի մեր մտքերն ու զգացմունքները, այնքան ավելի շատ ենք թույլ տալիս, որ մեր Երկնային Հոր հանդեպ սերն աճի մեր սրտերում, և ավելի հեշտ է լինում սիրել մյուսներին Քրիստոսի մաքուր սիրով։ Երբ մենք բացենք մեր սիրտը Աստծո սիրո պայծառ արևածագի դեմ, չարության և նախանձի խավարը և ցուրտը, ի վերջո, կանհետանան։

Ինչպես միշտ, Քրիստոսը մեր օրինակն է։ Իր ուսմունքներով, ինչպես նաև Իր կյանքով, Նա մեզ ցույց տվեց ուղին։ Նա ներեց ամբարիշտին, գոռեհիկին, և նրանց, ովքեր ձգտում էին վիրավորել և վնաս պատճառել Իրեն։

Հիսուսն ասաց, որ հեշտ է սիրել նրանց, ովքեր սիրում են մեզ, նույնիսկ չար մարդիկ կարող են *դա* անել։ Բայց Հիսուս Քրիստոսն ուսուցանեց ավելի բարձր օրենք։ Նրա խոսքերն արձագանքում են դարերի միջով և նախատեսված են մեզ համար։ Դրանք նախատեսված են բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են Նրա աշակերտները լինել։ Դրանք նախատեսված են ձեզ և ինձ համար. «Սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին, բարի արեք ձեզ ատողներին. և աղոթք արեք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար»։[10]

Երբ մեր սիրտը լցված է Աստծո սիրով, մենք դառնում ենք «բարի, գթած՝ իրար ներելով, ինչպես Աստուած էլ Քրիստոսով [մեզ] ներեց»։[11]

Քրիստոսի մաքուր սերը կարող է մեր միջից հանել վրդովմունքն ու ցասումը, թույլ տալով մեզ տեսնել մյուսներին այնպես, ինչպես մեր Երկնային Հայրն է մեզ տեսնում՝ թերի և անկատար մահկանացուներ, ովքեր մեր պատկերացումից վեր շատ ավելի մեծ ներուժ և արժեք ունեն։ Որովհետև Աստված մեզ շատ է սիրում, մենք ևս պետք է սիրենք և ներենք միմյանց։

Աշակերտ լինելու ուղին

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, այս հարցերն օգտագործեք որպես ձեզ ստուգելու թեսթ.

Դուք ոխ պահո՞ւմ եք ուրիշի հանդեպ։

Բամբասո՞ւմ եք, անգամ երբ ձեր ասածը գուցե ճշմարիտ է։

Արդյո՞ք դուք չեք ընդունում, ձեզանից հեռացնում եք կամ պատժում եք մյուսներին, իրենց արարքների համար։

Դուք գաղտնի նախանձո՞ւմ եք մեկ ուրիշին։

Դուք ցանկանո՞ւմ եք վնաս պատճառել մեկ ուրիշին։

Եթե այս հարցերից որևէ մեկին դրական պատասխան եք տվել, կարող եք կիրառել երկու բառով քարոզը՝ կանգ առեք։

Մեղադրանքների և անբարյացակամության աշխարհում հեշտ է քարեր հավաքել և նետել։ Բայց նախքան դա անելը, եկեք հիշենք խոսքերը Նրա, ով մեր Վարդապետը և օրինակն է. «Ձեզանից ով որ անմեղ է, թող առաջ նա քար գցե դրա վրա»։[12]

Եղբայրներ և քույրեր, եկեք քարերը ցած դնենք։

Լինենք բարի։

Ներենք։

Միմյանց հետ հանգիստ խոսենք։

Թող Աստծո սերը լցնի մեր սիրտը։

«Բարի գործենք ամենին»։[13]

Փրկիչը խոստացել է. «Տվեք և կտրուի ձեզ. լավ չափով թափ տրված շարժված լիփ լիքը . . . որովհետև այն չափով որ չափեք, նրանով կչափուի ձեզ»։[14]

Արդյո՞ք այս խոստումը բավարար չէ, որ միշտ ջանքեր գործադրենք ոչ թե վատ վարք դրսևորելու, այլ բարի, ներողամիտ և գթասիրտ լինելու ուղղությամբ։

Եկեք, որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ, չարությանը բարությամբ պատասխանենք։[15] Եկեք վրեժխնդրություն չփնտրենք և թույլ չտանք, որ մեր զայրույթը հաղթահարի մեզ։

«Որովհետև գրուած է՝ վրեժխնդրությունն իմն է. ես հատուցումը կտամ, ասում է Տերը։

Արդ եթե քո թշնամին սոված է, հաց տուր նորան. և եթե ծարաւ է, ջուր տուր նորան . . .

Մի հաղթուիր չարիցը, այլ բարիովը հաղթիր չարին»։[16]

Հիշեք՝ ի վերջո, ողորմածներն են ողորմություն գտնում։[17]



Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբեր, որտեղ էլ գտնվենք, եկեք հայտնի լինենք որպես «միմյանց սիրող» ժողովուրդ:[18]

Սիրեք միմյանց

Եղբայրներ և քույրեր, առանց մեր կամակորության, դառնության և վրդովմունքի էլ, բավականին գլխացավանք և վիշտ կա այս աշխարհում:

Մենք կատարյալ չենք:

Մեր շուրջը մարդիկ կատարյալ չեն:[19] Մարդիկ անում են բաներ, որ ձանձրացնում, հիասթափեցնում և բարկացնում են: Այս մահկանացու կյանքում միշտ այդպես է լինելու:

Այնուամենայնիվ, մենք պետք է թողնենք մեր վիրավորանքները: Մահկանացու կյանքի մի մասն է՝ սովորել ինչպես ազատվել նման բաներից: *Դա է Տիրոջ ուղին:*

Հիշեք, երկինքը լի է նրանցով, ովքեր ունեն այս ընդհանրությունը՝ նրանք ներված են, և նրանք ներում են:

Ձեր բեռը դրեք Փրկչի ոտքերի մոտ: Թողեք դատապարտելը: Թող Քրիստոսի Քավությունը փոխի և բժշկի ձեր սիրտը: Սիրեք միմյանց: Ներեք միմյանց:

Ողորմածները ողորմածություն կստանան:

Այս մասին ես վկայում եմ Նրա անունով, ով սիրեց այնքան շատ և այնքան լիարժեք, որ Իր կյանքը տվեց մեր՝ Իր ընկերների համար, Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ալմա 31.5:
2. Տես Մովսես 5.24, 16–32:
3. Վարդապետություն և Ուխտեր 64.9:
4. Մատթեոս Ե.7:
5. Տես Հռովմայեցիս Բ.1:
6. Վարդապետություն և Ուխտեր 64.8:
7. Վարդապետություն և Ուխտեր 64.10; շեշտադրումն ավելացված է:
8. Մոսիա 5.2:
9. Ա Հովհաննես Ե.3–4:
10. Մատթեոս Ե.44; տես նաև հ. 45–47:
11. Եփեսացիս Դ.32:
12. Հովհաննես Ը.7:
13. Գաղատացիս Զ.10:
14. Ղուկաս Զ.38:
15. Տես Մատթեոս Ե.39–41:
16. Հռովմայեցիս ԺԲ.19–21.
17. Տես Մատթեոս Ե.7:
18. Հովհաննես ԺԳ.35:
19. Տես Հռովմայեցիս Գ.23:



Երեց Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Շնորհակալություն Աստծուն

Որքան ավելի լավ կլիներ, եթե բոլորը կարողանային ավելի լավ ճանաչել Աստծո նախախնամությունն ու սերը, և երախտագիտություն հայտնեին Նրան:

Սիրելի եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր հաստատող աջակցության և ձեր նվիրվածության համար: Մենք մեր երախտագիտությունն ու սերն ենք հայտնում ձեզանից յուրաքանչյուրին:

Վերջերս, Քույր Նելսոնը և ես զմայլվում էինք փոքր ակվարիումում լողացող տրոպիկական ձկների գեղեցկությամբ: Վառ գույներով, տարբեր նախշերով և չափսերի ձկներն այս ու այն կողմ էին լողում: Ես հարցրեցի այնտեղ գտնվող աշխատողին. «Ո՞վ է կերակրում այս գեղեցիկ ձկներին»:

Նա ասաց. «Ես»:

Ապա ես հարցրեցի. «Նրանք երբևէ շնորհակալություն հայտնե՞լ են ձեզ»:

Նա պատասխանեց. «Դեռ ոչ»:

Ես մտածեցի ինձ ծանոթ մարդկանց մասին, ովքեր մոռացության են մատնել իրենց Արարչին և իրենց իսկական «կյանքի հացին»:[1] Նրանք օրեցօր ապրում են Աստծուց և իրենց հանդեպ ունեցած Նրա մեծահոգությունից անտեղյակ:

Որքան ավելի լավ կլիներ, եթե բոլորը կարողանային ավելի լավ ճանաչել Աստծո նախախնամությունն ու սերը, և երախտագիտություն հայտնեին Նրան: Ամմոնն ուսուցանել է. «Եկեք գոհություն հայտնենք [Աստծուն], քանզի նա արդարություն է գործում հավիտյանս»:[2] Մեր երախտագիտության աստիճանը Նրա հանդեպ մեր սիրո չափն է:

Աստված մեր հոգիների Հայրն է:[3] Նա ունի փառավոր, մսից և ոսկորից կատարյալ մարմին:[4] Նախքան ծնվելը մենք ապրել ենք երկնքում՝ Նրա հետ:[5] Իսկ երբ Նա ֆիզիկապես ստեղծեց մեզ, մենք արարվեցինք Աստծո պատկերով և յուրաքանչյուրն անձնական մարմին ստացավ:[6]

Մտածեք մեր ֆիզիկական սնուցման մասին: Դա իսկապես երկնքից ուղարկված է: Կարիքները, ինչպիսիք են՝ օդը, սնունդը և ջուրը, տրվում են են մեզ՝ որպես սիրող Երկնային Հոր կողմից պարգևներ: Երկիրը ստեղծվել է ապահովելու համար մահկանացու կյանքի մեր կարճատև գոյությունը:[7] Մենք ծնվել ենք աճելու, սիրելու, ամուսնանալու և ընտանիք կազմելու ունակությամբ:

Ամուսնությունը և ընտանիքը

կարգված են Աստծուց: Ընտանիքն ամենակարևոր սոցիալական միավորն է ժամանակի և հավերժության մեջ: Աստծո երջանկության մեծ ծրագրի ներքո՝ ընտանիքները կարող են կնքվել տաճարներում և պատրաստվել վերադառնալու և հավետ բնակվելու Նրա սուրբ ներկայությամբ: Դա է հավերժական կյանքը: Այն իրագործում է մարդկային հոգու ամենանվիրական ցանկությունը՝ ընտանիքի սիրելի անդամների հետ անվերջ ընկերակցություն վայելելու բնական փափագը:

Մենք Նրա աստվածային նպատակի մասն ենք. «Սա է իմ գործը և իմ փառքը,- ասել է Նա,- իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[8] Այդ նպատակին հասնելու համար, «Աստված այնպես սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուավ. որ ամեն նորան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա»:[9] Դա Աստծո սիրո գերագույն դրսևորումն էր: «Որովհետև Աստուած իր Որդին չուղարկեց աշխարհքը, որ աշխարհքին դատե, այլ որ աշխարհքը նորանով փրկուի»:[10]

Աստծո հավերժական ծրագրի առանցքում Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի առաքելությունն է:[11] Նա եկավ փրկագնելու Աստծո զավակներին:[12] Տիրոջ Քավության շնորհիվ հարությունը (կամ անմահությունը) իրականություն դարձավ:[13] Քավության շնորհիվ հավերժական կյանքը հնարավոր դարձավ բոլոր արժանավորների համար: Հիսուսն այսպես բացատրեց.

«Ես եմ հարությունը և կյանքը. ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի:

Եվ ամեն ով որ կենդանի է և ինձ հավատում է, հավիտյան չի մեռնիլ»:[14]

Շնորհակալություն Աստծուն՝ Տիրոջ Քավության և հարության Նրա պարգևի համար, Զատկի այս վեհ խորհրդի համար:

Ֆիզիկական պարգևներ

Մեր Երկնային Հայրը սիրում է Իր զավակներին:[15] Նա յուրաքանչյուրին օրհնել է ֆիզիկական և հոգևոր պարգևներով: Թույլ տվեք խոսել դրանց մասին: Երբ երգում եք «Աստծո զավակն եմ», մտածեք Նրա կողմից ձեզ տրված ֆիզիկական մարմնի պարգևի մասին: Ձեր մարմնի բազմաթիվ զարմանահրաշ հատկանիշները խոսում են ձեր իսկ «աստվածային էության»[16] մասին:

Ձեր մարմնի յուրաքանչյուր օրգան հրաշալի պարգև է Աստծուց: Յուրաքանչյուր աչք ունի ինքնաֆոկուսացվող ոսպնյակներ: Նյարդերը և մկանները կառավարում են երկու աչքերը՝ եռաչափ պատկեր ստանալու համար: Աչքերը կապված են ուղեղի հետ, որը գրանցում է տեսած պատկերները:

Ձեր սիրտը հրաշալի պոմպ է:[17] Այն ունի չորս նուրբ փականներ, որոնք ուղղորդում են արյան հոսքը: Այդ փականները բացվում և փակվում են օրվա մեջ 100000, իսկ տարվա մեջ 36 միլիոն անգամ: Եթե հիվանդության պատճառով փոփոխություն չկրեն, դրանք կարող են այդպիսի ծանրաբեռնվածությամբ աշխատել գրեթե անսահման ժամանակով:

Մտածեք մարմնի պաշտպանական համակարգի մասին: Այն վնասվելուց պաշտպանելու համար, ցավ է զգում: Վարակին ի պատասխան այն հակամարմիններ է ստեղծում: Մաշկը պաշտպանիչ դեր է կատարում: Այն նախազգուշացնում է վնասվածքներ ստանալուց, որոնք կարող են առաջանալ անչափ բարձր կամ ցածր ջերմությունից:

Մարմինը նորացնում է իր հին բջիջները և կարգավորում իր իսկ կենսական բաղադրիչների մակարդակները: Մարմինը բժշկում է իր կտրվածքները, կապտուկները և կոտրված ոսկորները: Վերարտադրողական ունակությունը մեկ այլ սուրբ պարգև է Աստծուց:

Մենք պետք է հիշենք, որ կատարյալ մարմին չի պահանջվում աստվածային ճակատագրին հասնելու համար: Իրականում, ամենահաճելի հոգիներից շատերը բնակվում են փխրուն կամ անկատար մարմիններում: Հաճախ մեծ հոգևոր ուժ են զարգացնում ֆիզիկական թերություն ունեցող մարդիկ, որովհետև նրանց կյանքը լի է դժվարություններով:

Նա, ով ուսումնասիրում է մարդկային մարմնի աշխատանքը, անկասկած «տեսել է Աստծուն իր վեհափառությամբ և զորությամբ շարժվելիս»:[18] Քանի որ մարմինը կառավարվում է աստվածային օրենքով, ցանկացած բուժում գալիս է այն օրենքին հնազանդվելու արդյունքում, որի վրա հիմնված է այդ օրհնությունը:[19]

Դեռևս ոմանք թյուրիմացաբար մտածում են, որ այդ հրաշալի ֆիզիկական հատկանիշներն առաջացել են պատահաբար կամ ինչ-որ տեղ հզոր պայթյունի արդյունքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Կարո՞ղ

է արդյոք տպագրատանը տեղի ունեցած պայթյունի արդյունքում բառարան ստեղծվել»: Սակայն դա *առավել* անհավանական է: Բայց եթե այդպես լիներ, այն չէր կարող կպցնել իր իսկ պատռված էջերը կամ վերարտադրել իր նոր խմբագրությունները:

Եթե մարմնի բնականոն ընթացքը, պաշտպանությունը, վերականգնումը, կարգավորումը և ռեգեներացիան շարունակվեր անսահման, այստեղ կյանքը կտևեր հավիտյան: Մենք կմնայինք այստեղ՝ երկրի վրա: Ի ողորմածություն մեզ, մեր Արարիչը ապահովել է ծերացման և այլ պրոցեսներ, որոնք, ի վերջո, հանգեցնում են մեր ֆիզիկական մահվան: Ինչպես ծնունդը, մահը կյանքի մասն է: Սուրբ գրությունն ուսուցանում է, որ «անհրաժեշտ չէր, որ մարդը ձերբազատվեր այս ժամանակավոր մահից, քանզի դա կկործաներ երջանկության մեծ ծրագիրը»:[20] Դարպասի միջով, որը մենք կոչում ենք մահ, Աստծո մոտ վերադառնալը ուրախություն է նրանց համար, ովքեր սիրում են Նրան և պատրաստ են հանդիպելու Նրան:[21] Ի վերջո, ժամանակը կգա, երբ յուրաքանչյուր «հոգի ու մարմին պիտի վերամիավորվեն նորից՝ իր կատարյալ ձևով. և վերջավորություն ու հոդ պետք է վերականգնվեն իրենց բնական կառուցվածքով»[22], որպեսզի երբեք այլևս չբաժանվեն: Շնորհակալություն Աստծուն այդ ֆիզիկական պարգևների համար:

Հոգևոր պարգևներ

Կարևոր է այն, որ մարմինը ծառայում է որպես հավերժական հոգու խորան: Մեր հոգիները գոյություն են ունեցել նախամահկանացու թագավորությունում[23] և կշարունակեն ապրել մարմնի մահանալուց հետո:[24] Հոգին մարմնին կյանք է տալիս և անհատականություն:[25] Այս և հաջորդ կյանքում, հոգին և մարմինը միավորվելով միասին դառնում են աստվածային արժեքով կենդանի հոգի:

Քանի որ մարդու հոգին շատ կարևոր է, դրա զարգացումը հավերժական նշանակություն ունի:

Այն զորանում է, երբ մենք խոնարհ աղոթքով հաղորդակցվում ենք մեր սիրող Երկնային Հոր հետ:[26]

Հատկանիշները, ըստ որոնց մենք պետք է մի օր դատվենք, հոգևոր են:[27] Դրանցից են՝ սերը, առաքինությունը, շիտակությունը, կարեկցանքը և մյուսներին ծառայելը:[28] Ձեր հոգին, մարմնի մեջ բնակվելով, ձեր մարմնի հետ միասին կարող է զարգացնել և դրսևորել այդ հատկանիշներն այնպիսի եղանակներով, որոնք կարևոր են ձեր հավերժական առաջընթացի համար:[29] Հոգևոր առաջընթաց ձեռք է բերվում հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելու միջոցով, ներառյալ օժտումը և սուրբ տաճարի կնքման ծեսերը:[30]

Ճիշտ ինչպես մարմինն է պահանջում ամենօրյա սնունդ գոյատևելու համար, հոգին ևս սնուցման կարիք ունի: Հոգին սնվում է հավերժական ճշմարտությամբ: Անցյալ տարի մենք նշեցինք Աստվածաշնչի Ջեյմս թագավորի թարգմանության 400-ամյակը: Եվ մենք արդեն մոտ 200 տարի է ունենք Մորմոնի Գիրքը: Այն ամբողջությամբ կամ որպես ընտրանի թարգմանվել է 107 լեզուներով: Այս և այլ արժեքավոր սուրբ գրությունների շնորհիվ մենք գիտենք, որ Աստված մեր Հավերժական Հայրն է, և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, մեր Փրկիչն ու Քավիչն է: Շնորհակալություն Աստծուն այս հոգևոր պարգևների համար:

Ավետարանի պարգևներ

Մենք գիտենք, որ տարբեր տնտեսությունների մարգարեները, ինչպիսիք են՝ Ադամը, Նոյը, Մովսես և Աբրահամը, բոլորն ուսուցանում էին մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի աստվածության մասին: Ներկայիս տնտեսությունը բացվեց Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի կողմից, երբ Նրանք հայտնվեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթին 1820թ.: Եկեղեցին կազմակերպվեց 1830թ.: Այժմ, 182 տարի անց, մենք գտնվում ենք ավետարանը «ամեն ցեղի, ազգի, լեզվի և ժողովրդի»[31] տանելու ուխտի տակ: Դա անելիս և՛ տվողները և՛ ստացողները կօրհնվեն:

Մենք պատասխանատվություն ենք կրում ուսուցանելու Նրա զավակներին և նրանց մեջ արթնացնելու Աստծո մասին գիտակցությունը: Հնում Բենիամին թագավորն ասել է.

«Հավատացե՛ք Աստծուն. հավատացե՛ք, որ նա կա, և որ նա ստեղծել է բոլոր բաները՝ և՛ երկնքում, և՛ երկրի վրա. հավատացե՛ք, որ նա ունի բոլոր իմաստությունը, և բոլոր զորությունը՝ և՛ երկնքում, և՛ երկրի վրա. . . .

. . . Հավատացե՛ք, որ դուք պետք է ապաշխարեք ձեր մեղքերից և թողնեք դրանք և խոնարհեցնեք ձեզ՝ Աստծո առաջ. և սրտի անկեղծությամբ խնդրեք, որ նա ների ձեզ. և այժմ, եթե դուք հավատում եք բոլոր այս բաներին, տեսեք, որ դուք անեք դրանք»:[32]

Աստված նույնն է երեկ, այսօր և հավիտյան, իսկ մենք՝ ոչ: Ամեն օր, մեր խնդիրն է՝ օգտվել Քավության զորությունից, որպեսզի իսկապես փոխվենք, դառնալով ավելի Քրիստոսանման, և արժանանանք վեհացման պարգևին և հավերժ ապրենք Աստծո, Հիսուս Քրիստոսի և մեր ընտանիքների հետ:[33] Շնորհակալություն Աստծուն այդ զորությունների, արտոնությունների և ավետարանի պարգևների համար:

Ես վկայում եմ, որ Նա ապրում է, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ սա Նրա Եկեղեցին է, վերականգնված այս վերջին օրերին, իրականացնելու իր աստվածային նպատակը: Մենք այսօր առաջնորդվում ենք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի կողմից, որին սիրում և հաստատում ենք մեր ողջ սրտով, ինչպես նաև հաստատում ենք նրա

խորհրդականներին և Տասներկու Առաքյալներին, որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ: Ես այս ամենի մասին վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես Զ.35, 48; տես նաև հ. 51:
2. Ալմա 26.8; տես նաև Ալմա 7.23:
3. Տես Գործք ԺԷ.27–29:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 130–22:
5. Տես Մովսես 6.51; Հռովմայեցիս Ը.16; Եբրայեցիս ԺԲ.9; Երեմիա Ա.4–5:
6. Տես Ծննդոց Բ.7; Ա Կորնթացիս ԺԵ.44; Մովսես 3.7:
7. Տես 1 Նեփի 17.36:
8. Մովսես 1.39:
9. Հովհաննես Գ.16:
10. Հովհաննես Գ.17:
11. Նրա նպատակները հակիրճ ամփոփված են 3 Նեփի 27.13–22:
12. Տես Ալմա 11.40:
13. Տես 2 Նեփի 9.6–7, 20–22:
14. Հովհաննես ԺԱ.25–26:
15. Տես 1 Նեփի 17.40; Ա Հովհաննես Դ.10:
16. Բ Պետրոս Ա.4:
17. Ամեն օր սիրտը մղում է մոտ 7570լ.:
18. Վարդապետություն և Ուխտեր 88.47:
19. Տես Վարդապետություն և Ուխտեր 130.21. Իրոք, այդ աստվածային օրենքը անվիճարկելի է:
20. Ալմա 42.8:
21. Սաղմոսողը հայտնել է Աստվածության տեսակետը. «Պատուական է Տիրոջ առաջին նրա սուրբերի մահը» (Սաղմոս ճԺԶ.15); տես նաև Ժողովող ԺԲ.7):
22. Ալմա 11.43; տես նաև Ժողովող ԺԲ.7; Ալմա 40.23; Վարդապետություն և Ուխտեր 138.17:
23. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.38:
24. Տես Ալմա 40.11; Աբրահամ 3.18:
25. Հոգին տվյալ անձի նմանությամբ է (տես Վարդապետություն և Ուխտեր 77.2):
26. Տես 3 Նեփի 14.9–11:
27. Ոգին, ոչ թե մարմինը, հոգու ակտիվ, պատասխանատու մասն է: Առանց հոգու մարմինը մեռած է (տես Հակոբոս Բ.26): Հոգին է, որ ընտրում է բարին կամ չարը, և Վերջին Դատաստանի ժամանակ պատասխանատվություն կկրի դրական և բացասական հատկանիշների համար (տես Ալմա 41.3–7):
28. Ինչպիսիք են՝ «հավատք, առաքինություն, գիտություն, ժուժկալություն, համբերություն, եղբայրասիրություն, աստվածայնություն, գթություն, խոնարհություն, ջանասիրություն» (Վարդապետություն և Ուխտեր 4.6):
29. Տես 2 Նեփի 2.11–16, 21–26; Մորոնի 10.33–34:
30. Սա Քրիստոսի վարդապետությունն է (տես 2 2 Նեփի 31.11–21):
31. Մոսիա 15.28; տես նաև 1 Նեփի 19.17; 2 Նեփի 26.13; Մոսիա 3.20; 15.28; 16.1; Ալմա 37.4; Վարդապետություն և Ուխտեր 1.18–23;77.11; 133.37:
32. Մոսիա 4.9–10:
33. «Հավերժական կյանքը . . . մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից» (Վարդապետություն և Ուխտեր 14.7):

Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ
Յոթանասունի Նախագահությունից

Հատուկ դասեր

Իմ հույսն ու աղոթքն է, որ մենք շարունակենք արժանապատվորեն տանել մեր բեռը և օգնության հասնենք մեր շուրջը եղողներին, ովքեր տառապում են:

Վերջին 20 ամիսների ընթացքում մեր ընտանիքը օրհնվել է շատ հատուկ երեխայով:

Փոքրիկ Փաքստոնը՝ մեր թոռնիկը, ծնվել է շատ հազվադեպ քրոմոսոմային շեղվածությամբ, գենետիկ խանգարմամբ, որը նրան առանձնացնում է, բառացիորեն որպես միակը հարյուրավոր միլիոնների մեջ: Մեր աղջկա և նրա ամուսնու համար չնախատեսված, կյանքը փոխող փորձառությունը սկսվեց, երբ Փաքստոնը ծնվեց: Սա դժվար փորձառություն դարձավ հատուկ դասեր սովորելու համար, որոնք կապված են հավերժության հետ:

Հարգելի Երեց Ռասսել Մ. Նելսոնը, որը քիչ առջև իր խոսքն ուղղեց մեզ, ուսուցանել է.

«Սովորաբար անիմանալի պատճառներով որոշ մարդիկ ծնվում են ֆիզիկական սահմանափակումներով: Մարմնի որոշակի մասեր կարող է ոչ նորմալ լինեն: Մարդու մոտ որոշակի համակարգեր կարող են խախտված լինել: Եվ մեր բոլորի մարմիններն էլ ենթակա են հիվանդությունների և մահվան: Այնուամենայնիվ, ֆիզիկական մարմին ունենալու պարգևը անգին է . . .

Կատարյալ մարմին չի պահանջվում աստվածային ճակատագրին հասնելու համար: Ի դեպ, որոշ հրաշալի հոգիներ տեղ են գտնում անառողջ մարմնում . . .

Ի վերջո, ժամանակը կգա, երբ յուրաքանչյուր «ոգին ու մարմինը կրկին պիտի վերամիավորվեն՝ կատարյալ տեսքով. և վերջավորություն ու հոդ պիտի վերականգնվեն իրենց բնական կառուցվածքով» (Ալմա 11.43): Այնուհետև, Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք կատարյալ լինել Նրանում»:[1]

Դուք բոլորդ, որ ունեք խնդիրներ, մտահոգություններ, հիասթափություններ կամ խորը վիշտ սիրելի մեկի համար, իմացեք այս. անսահման սիրով ու հավերժական կարեկցանքով Աստված՝ մեր Երկնային Հայրը, սիրում է ձեր հիվանդին, և Նա սիրում է ձեզ:

Ոմանք կարող են հարցնել, երբ հանդիպում են այսպիսի տառապանքի, ինչպե՞ս կարող է Ամենազոր Աստվածը թույլ տալ, որ սա պատահի: Եվ այնուհետև այդ անխուսափելի թվացող հարցը, ինչո՞ւ սա պատահեց ինձ հետ: Ինչո՞ւ մենք պետք է հիվանդության և այնպիսի իրադարձությունների հանդիպենք, որոնք հաշմանդամ են դարձնում կամ վաղաժամկետ տուն են կանչում ընտանիքի թանկագին

անդամների, կամ պատճառ են դառնում բազում տարիներ ցավով ապրելու փորձառությունն ունենալ: Ինչո՞ւ խորը վիշտ ունենալ:

Այս պահերին մենք կարող ենք դառնալ դեպի երջանկության մեծ ծրագիրը, որի հեղինակը մեր Երկնային Հայրն է: Այդ ծրագիրը, երբ ներկայացվեց նախաերկրային կյանքում, դրդեց մեզ բոլորիս ցնծալ ուրախությունից:[2] Պարզ ասած, այս կյանքը հավերժական վեհացման փորձառություն է, և այդ գործընթացը նշանակում է փորձություններ և դժվարություններ: Դա միշտ այդպես է եղել, և ոչ ոք բացառություն լինել չի կարող:

Աստծո կամքին վստահելը առանցքային դեր ունի մեր մահկանացու կյանքում: Հավատալով Նրան, մենք մեր հույսը դնում ենք Քրիստոսի Քավության վրա այն պահերին, երբ հարցերը շատ են և պատասխանները քիչ:

Իր Հարությունից հետո, երբ այցելեց Ամերիկաները, մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, բոլորին հղեց այս հրավերը.

«Ունե՞ք ձեր մեջ այնպիսիք, որ հիվանդ են: Բերեք նրանց այստեղ: Ունե՞ք դուք կաղեր, կամ կույրեր, կամ խեղվածներ, կամ հաշմանդամներ, կամ բորոտներ, կամ որ չորացած են, կամ, որ խուլ են, կամ, որ չարչարված են ինչ-որ ձևով: Բերեք նրանց այստեղ, և ես կբժշկեմ նրանց, քանզի ես կարեկցանք ունեմ ձեզ վրա. իմ սիրտը լցված է ողորմությամբ: . . .

Եվ եղավ այնպես, որ երբ նա այսպես խոսեց, ողջ բազմությունը, միախմբված գնաց առաջ իրենց հիվանդներով և իրենց չարչարվածներով, իրենց կաղերով և իրենց կույրերով և իրենց խուլերով, և բոլոր նրանց հետ, որ չարչարված էին ինչ-որ ձևով. և նա բժշկեց նրանցից ամեն մեկին, երբ նրանք առաջ բերվեցին նրա մոտ»:[3]

Մեծ ուժ կարելի է գտնել «ողջ բազմությունը . . . առաջ գնաց» բառերում, *ողջ,* եղբայրներ և քույրեր: Մենք *բոլորս* էլ հանդիպում ենք դժվարությունների: Եվ այնուհետև «որ չարչարված էին ինչ-որ ձևով» արտահայտությունը: Այդ

արտահայտությունը վերաբերվում է բոլորիս, այդպես չէ՞:

Թանկագին Փաքստոնի ծնվելուց կարճ ժամանակ անց, մենք գիտեինք, որ Երկնային Հայրը կօրհներ մեզ և կուսուցաներ մեզ հատուկ դասեր: Մինչ ես ու նրա հայրը դրեցինք մեր մատները նրա փոքրիկ գլխին բազում քահանայական օրհնություններց առաջինի ժամանակ, Հովհաննեսի ինիերորդ գլխի այս բառերը եկան իմ մտքում. «այլ որ Աստուծոյ գործերը յայտնի լինին դորանում»:[4]

Աստծո գործերը անշուշտ հայտնի են դարձվում Փաքստոնի միջոցով:

Մենք սովորում ենք համբերություն, հավատք և երախտագիտություն ծառայության բալասանի միջոցով, ուժգին զգացմունքների, կարեկցանքի արցունքների և աղոթքների անվերջանալի ժամեր և կարիքի մեջ գտնվող սիրելիներին հղված սիրո արտահայտություն, հատկապես Փաքստոնին և իր ծնողներին:

Իմ պատանեկության տարիների ցցի նախագահ՝ Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստն ասել է. «Ես մեծ երախտագիտությամբ եմ լցված այն ծնողների հանդեպ, ովքեր դիմացկունությամբ տանում և հաղթահարում են իրենց տառապանքն ու վիշտը կապված երեխայի հետ, ում մոտ ի ծնե կամ հետագայում առաջ է եկել լուրջ մտավոր կամ ֆիզիկական հիվանդություն: Այս տառապանքը հաճախ շարունակվում է ամեն օր, առանց դադարի, ծնողի կամ երեխայի որջ կյանքի ընթացքում: Հաճախ ծնողներից պահանջվում է տալ յուրահատուկ խնամք, որի կարիքը երբեք չի ավարտվում, գիշեր ու ցերեկ: Շատ մայրերի ձեռքեր ու սիրտ ցավացել են տարիներ շարունակ, տալով մխիթարություն և թեթևացնելով իր հատուկ երեխայի տառապանքները»:[5]

Ինչպես նկարագրված է Մոսիայում, մենք ականատես ենք եղել Փրկչի մաքուր սիրուն, տրված Փաքստոնի ընտանիքին, սեր, որը տրվում է բոլորին. «Եվ արդ, եղավ այնպես, որ բեռները, որոնք դրվել էին Ալմայի ու նրա եղբայրների վրա, թեթևացան. այո, Տերն ուժեղացրեց նրանց, որ նրանք կարողանային իրենց բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու համբերությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին»:[6]

Մի գիշեր, երբ Փաքստոնը դեռ նոր էր ծնվել, մենք գտնվում էինք Յուտայում, Սոլթ Լեյքի Կրտսեր Տարիքի Երեխաների Բժշկական Կենտրոնի նորածինների հատուկ բժշկական խնամքի սենյակում, հիանալով բժիշկների, քույրերի և խնամողների նվիրված, անդադար ուշադրությամբ: Ես հարցրեցի իմ աղջկան, թե ինչպես մենք պիտի վճարեինք սրա համար և մոտավորապես գուշակեցի, թե որքան կլիներ գումարը: Մոտ կանգնած բժիշկներից մեկն ասաց, որ ես «չափազանց ցածր» գին ասացի, և որ փոքրիկ Փաքստոնի խնամքը զգալիորեն ավելին կարժեներ, քան իմ մոտավոր հաշվարկն էր: Մենք իմացանք, որ այս հիվանդանոցում տրված խնամքի համար վճարվող գումարի մեծ մասը տրվում էր

ուրիշների ժամանակի և դրամական աջակցության առատաձեռն նվիրատվության շնորհիվ: Նրա խոսքերը խոնարհեցրեցին ինձ, երբ ես մտածեցի,թե այս փոքրիկի հոգու արժեքը որքան մեծ էր նրանց համար, ովքեր այնքան մեծ հոգատարությամբ հսկում էին նրան:

Ես հիշեցի միսիոներական մի ծանոթ սուրբ գրություն, որը նոր նշանակություն ստացավ ինձ համար. «Հիշեք, հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում»:[7]

Ես արտասվեցի, երբ խորհեցի մեր Երկնային Հոր և Նրա Միրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի՝ մեզանից յուրաքանչյուրի հանդեպ ունեցած անսահման սիրո մասին, մինչ զորեղ եղանակով սովորում էի, թե որքան կարևոր է հոգու արժեքը Աստծո համար՝ ֆիզիկապես և հոգևորապես:

Փաքստոնի ընտանիքը սովորեց, որ իրենք շրջապատված են անթիվ երկնային և աշխարհիկ սպասավորող հրեշտակներով: Նրանցից ոմանք լուռ օգնության են հասել անհրաժեշտության պահին և լռությամբ էլ հեռացել են: Ոմանք էլ կանգնած են եղել դռան մոտ՝ ուտելիքով, արել են լվացքը, օգնել են հարազատներին՝ ծառայելով իրենց մեքենաներով, քաջալերել են իրենց զանգերով և հատկապես Փաքստոնի համար աղոթելով: Այսպիսով, ես մեկ այլ հատուկ դաս սովորեցի. Եթե դուք հանդիպում եք խեղդվող անձնավորության, դուք կհարցնեք, թե արդյոք նա օգնության կարիք ունի, թե՞ ավելի լավ կլինի ուղղակի ցատկել և փրկել նրան խորտակող ջրերից: «Եթե կարող եմ օգնել, ինձ տեղյակ պահիր» առաջարկը, չնայած որ անկեղծորեն է արվում և հաճախ տրվում, իրականում բացարձակապես չի օգնում:

Մենք շարունակում ենք սովորել մեր շուրջը եղողների կյանքի մասին տեղյակ լինելու և հետաքրքրվելու կարևոր արժեքի մասին, սովորելով ոչ միայն օգնության հասնելու կարևորության մասին, այլ նաև անչափ մեծ ուրախության մասին, որ գալիս է ուրիշներին օգնելուց:

Միրելի Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, ով ընկճվածներին բարձրացնելու մեծ օրինակ է, ասել է. «Աստված օրհնի բոլորին, ովքեր ջանում են լինել իրենց եղբոր պահապանը, ովքեր զոհաբերում են շատ բաներ տառապանքից ազատելու համար, ովքեր փորձում են իրենց հնարավորությունների սահմաններում աշխարհը ավելի լավը դարձնել: Դուք նկատե՞լ եք, որ այսպիսի անձնավորությունները ավելի երջանիկ տեսք ունեն: Նրանք ավելի վստահ ու ապահով են: Թվում է, թե նրանք ավելի գոհ ու բավարարված են . . . քանի որ մարդը չի կարող օգնել ուրիշներին առանց անձամբ մեծ օրհնություններ ստանալու»:[8]

Չնայած, որ մենք կհանդիպենք փորձությունների, դժբախտությունների, անկարողության, վշտի և ամեն տեսակ չարչարանքների, մեր հոգատար, սիրող Փրկիչը միշտ մեր կողքին կլինի: Նա խոստացել է.

«Ձեզ որբ չեմ թողիլ. կգամ ձեզ մոտ: . . .

Իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չխռովի եւ չվախենայ»:[9]

Որքան երախտապարտ ենք մենք մեր Երկնային Հորը մեր հրաշալի Փաքստոնի համար: Նրա միջոցով Տերը հայտնի է դարձրել մեզ Իր գործերը և շարունակում է ուսուցանել մեզ այս արժեքավոր, սուրբ և հատուկ դասերը:

Ես կկամենայի ավարտել սիրված հիմնի բառերով.

Մենք բոլորս զինվորներ ենք մինչև վերջ:
Ուրախ ենք մենք: Ուրախ ենք մենք:
Զինվորներն ենք բանակի,
որ պսակ ունի,
Կհաղթենք և կկրենք շուտով:[10]

Եղբայրներ և քույրեր, իմ հույսն ու աղոթքն է, որ մենք շարունակենք արժանապատվորեն տանել մեր բեռը և օգնության հասնենք մեր շուրջը եղողներին, ովքեր տառապում են և կարիք ունեն բարձրացվելու և քաջալերվելու: Թող որ մեզանից յուրաքանչյուրը շնորհակալ լինի Աստծուն Իր օրհնությունների համար և նորոգենք Իր զավակներին խոնարհաբար ծառայելու մեր պարտականությունը, որ ունենք մեր Երկնային Հոր առաջ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Russell M. Nelson, “We Are Children of God,” *Liahona,* Jan. 1999, 103.
2. Տես Հոբ ԼԸ.7:
3. 3 Նեփի 17.7, 9:
4. Հովհաննես Թ.3:
5. James E. Faust, “The Works of God,” *Ensign,* Nov. 1984, 54.
6. Մոսիա 24.15:
7. Վարդապետություն և Ուխտեր 18.10:
8. Thomas S. Monson, “Our Brother’s Keepesr,” *Ensign,* June 1998, 39.
9. Հովհաննես ԺԴ.18, 27:
10. “We Are All Enlisted,” *Hymns,* no. 250.

Ջուլի Բ. Բեք
Վերջերս ազատված Սփոփող Միության
Գերագույն Նախագահ

Մարգարեների տեսիլքը Սփոփող Միության մասին՝ հավատք, ընտանիք, սփոփանք

Հավատք, ընտանիք և սփոփանք՝ այս երեք պարզ բառերը արտահայտում են մարգարեների տեսիլքը Եկեղեցու քույրերի մասին:

Վերջին տարիներին ես զգում եմ, որ ավելին պետք է խոսեմ Սփոփող Միության մասին՝ դրա նպատակների և հատկանիշների,[1] պատմության արժեքի,[2] աշխատանքի և եպիսկոպոսների և Մելքիսեդեկյան Քահանայության քվորումների հետ համագործակցության մասին:[3] Այժմ կարևոր է դառնում ուշադրությունը կենտրոնացնել Սփոփող Միության մասին մարգարեների տեսիլքներին:[4]

Ճիշտ ինչպես Տիրոջ մարգարեները շարունակ ուսուցանել են երեցներին և քահանայապետերին նրանց նպատակների և պարտականությունների մասին, նրանք կիսվել են իրենց տեսիլքով Սփոփող Միության քույրերի մասին: Նրանց խորհրդից պարզ է դառնում, որ Սփոփող Միության նպատակներն են՝ մեծացնել հավատքը և անձնական արդարակեցությունը, ամրացնել ընտանիքները և տները և փնտրել ու օգնել կարիքավորներին: *Հավատք, ընտանիք,* և *սփոփանք*՝ այս երեք պարզ բառերը արտահայտում են մարգարեների տեսիլքը Եկեղեցու քույրերի մասին:

Վերականգնման օրից ի վեր մարգարեները կիսվել են իրենց տեսիլքով ամուր, հավատարիմ և նպատակասլաց կանանց մասին, ովքեր հասկանում են իրենց հավերժական արժեքը և նպատակը: Երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը հիմնեց Սփոփող Միությունը, նա դրա առաջին նախագահին հրահանգեց՝ նախագահել այդ կազմակերպությունում, հոգ տանելով աղքատների համար՝ բավարարելով նրանց կարիքները, և իրականացնելով այդ կազմակեպության տարբեր գործերը:[5] Նա տեսնում էր այս կազմակերպությունը որպես ընտրյալ հասարակություն, առանձնացված աշխարհի չարիքներից:[6]

Բրիգամ Յանգը՝ Եկեղեցու երկրորդ Նախագահը, իր խորհրդականներին և Տասներկու Առաքյալների Քվորումին պատվիրեց հրահանգել եպիսկոպոսներին թույլ տալ, որ քույրերը կազմակերպեին Կանանց Սփոփող Միություններ տարբեր ծխերում: Նա ասաց. «Ոմանք կարող են մտածել, թե դա աննշան բան է, սակայն դա այդպես չէ:[7]

Ավելի ուշ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ասել է, որ ի տարբերություն աշխարհիկ կազմակերպությունների, որոնք ստեղծել են տղամարդիկ կամ կանայք, Սփոփող Միությունը աստվածայնորեն պատրաստված, աստվածայնորեն լիազորված, աստվածայնորեն կազմակերպված, աստվածայնորեն կարգված է Աստծո կողմից:[8] Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը քույրերին ասել է, որ իրենց տրվել է զորություն և իշխանություն կատարելու մեծ բաներ:[9] Նա ասել է. «Դուք աշխարհում կանանց այս մեծագույն կազմակերպության անդամներն եք, կազմակերպություն, որը կենսական դեր ունի երկրի վրա Աստծո արքայությունում և որը կառուցվել և գործում է, որպեսզի օգնի իր հավատարիմ անդամներին ձեռք բերել հավերժական կյանք մեր Հոր արքայությունում»:[10]

Ազդեցության մեծ գոտի

Ամեն տարի հարյուր հազարավոր կանայք և երիտասարդ աղջիկներ դառնում են քույրերի անընդմեջ աճող այս շրջանակի մասը:[11] Այսուհետև, որտեղ էլ որ քույրն ապրի կամ ծառայի, նա պահպանում է Սփոփող Միության իր անդամությունը և կապը:[12] Սփոփող Միության կարևոր նպատակներն են պատճառը, որ Առաջին Նախագահությունը ցանկություն է հայտնել, որ երիտասարդ կանայք սկսեն պատրաստվել միանալու Սփոփող

Կոլկատա, Հնդկաստան

Միությանը իրենց 18 տարեկանը լրանալուց շատ առաջ:[13]

Սփոփող Միությունը ծրագիր չէ: Այն Տիրոջ Եկեղեցու պաշտոնական մասն է, որը «աստվածայնորեն կարգված է Աստծո կողմից»՝ ուսուցանելու, ամրացնելու և ոգեշնչելու քույրերին հավատքի, ընտանիքի և սփոփանքի իրենց նպատակներին հասնելու գործում: Վերջին օրերի սրբերի կանանց համար Սփոփող Միությունը ապրելաձև է, և դրա ազդեցությունը տարածվում է կիրակնօրյա դասարանից կամ սոցիալական հավաքներից դուրս: Այն ընդօրինակում է աշակերտ կանանց, որոնք ծառայում էին Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա Առաքյալների հետ Նրա հին Եկեղեցում:[14] Մեզ ուսուցանել են, որ պարտադիր է կնոջ համար իր կյանք բերել արժեքներ, որոնք սնուցվում են Սփոփող Միության կողմից, ինչպես պարտադիր է, որ տղամարդիկ կառուցեն իրենց կյանքը քահանայությամբ սնվող բնավորության գծերի վրա:[15]

Երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը կազմակերպեց Սփոփող Միությունը, նա քույրերին ուսուցանեց, որ նրանք պետք է «օգնեին աղքատներին» և «փրկեին հոգիներ»:[16] «Հոգիներ փրկելու» իրենց աշխատանքի մեջ քույրերը լիազորված էին կազմակերպելու և ընդգրկվելու գործունեության լայն շրջանակում: Սփոփող Միության առաջին նախագահը ձեռնադրվեց, որպեսզի մեկնաբանի սուրբ գրությունները, և Սփոփող Միությունը դեռևս կրում է Տիրոջ Եկեղեցում ուսուցանելու հիմնական պատասխանատվությունը: Երբ Ջոզեֆ Սմիթը քույրերին ասաց, որ Սփոփող Միության կազմակերպումը կօգնի նրանց պատրաստվել «Քահանայության արտոնություններին, օրհնություններին և պարգևներին»,[17] Տիրոջ փրկության աշխատանքը բացվեց նրանց առաջ: Հոգիներ փրկելը ներառում է ավետարանով կիսվելը և միսիոներական աշխատանքին մասնակցելը: Այն ներառում է տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելը: Այն ներառում է՝ անել հնարավոր ամեն ինչ հոգևոր և նյութական առումով ինքնուրույն դառնալու համար:

Երեց Ջոն Ա. Վիդսոուն հայտարարել է, որ Սփոփող Միությունը առաջարկում է՝ «ազատում աղքատությունից, ազատում հիվանդությունից, ազատում կասկածներից, ազատում տգիտությունից՝ ազատում այն ամենից, ինչը խանգարում է կնոջ ուրախությանը և զարգացմանը: Ինչպիսի հրաշալի կոչում»:[18]

Նախագահ Բոյդ Կ. Փաքերը Սփոփող Միությանը նմանեցրել է «պաշտպանող պատի»:[19] Քույրերին և նրանց ընտանիքները պաշտպանելու պատասխանատվությունը մեծացնում է այցելող ուսուցիչների հսկողության և սպասավորման ծառայությունների կարևորությունը, և դա ցույց է տալիս Տիրոջ հետ մեր կապած ուխտերը հիշելու մեր ցանկությունը: Կարիքավորներին և տուժվածներին ծառայելիս մենք ներդաշնակության մեջ ենք աշխատում եպիսկոպոսների հետ Սրբերի հոգևոր և նյութական կարիքները հոգալու համար:[20]

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Շատ քույրեր կան, որ ապրում են ցնցոտիներում՝ հոգևոր ցնցոտիներում: Նրանք արժանի են շքեղ զգեստ կրելու՝ հոգևոր զգեստ: . . . Ձեր արտոնությունն է զնալ տներով և ցնցոտիները փոխարինել զգեստով»:[21] Նախագահ Հարոլդ Բ. Լին կիսվել է իր տեսիլքով. «Չե՞ք տեսնում, թե ինչու է Տերը հանձնարարել . . . Սփոփող Միությանը այցելել տները: Որովհետև, Վարդապետից հետո, ոչ ոք Եկեղեցում չունի այդ անձանց սրտերի և կյանքերի հանդեպ ավելի սիրալիր վերաբերմունք, ավելի լիարժեք հասկացողություն»:[22]

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը զգուշացրել է Սփոփող Միության քույրերին և նրանց ղեկավարներին, ասելով, որ նա չի ուզում տեսնել այնպիսի ժամանակ, երբ մեր Սփոփող Միությունները հետևեն կանանց կողմից ստեղծված կազմակերպություններին, կամ կորցնեն իրենց ինքնությունը, հարելով այդ կազմակերպություններին»: Նա ակնկալում էր, որ քույրերը «տանեն իրենց ետևից աշխարհը և . . . հատկապես աշխարհի կանանց դեպի այն ամենը, ինչը գովեստի արժանի է, Աստվածանման է, ոգեշնչող և մաքրող մարդկանց զավակների համար»:[23] Նրա խորհուրդը շեշտում է պատասխանատվությունը՝ տարհանել ավանդույթներ, թեմաներ, քմահաճույքներ և ընհանուր ուղղություններ, և ընդգրկել սովորություններ, որոնք համապատասխանում են Սփոփող Միության նպատակներին:

Ղեկավարները, ովքեր փնտրում են հայտնություն, կարող են հետևել, որ ցանկացած Սփոփող Միության հավաք, դաս, միջոցառում և ջանք ուղղված լինի այն նպատակների իրականացմանը, որոնց համար այն ստեղծվել է: Մեր ցանկալի

շփումները, ընկերությունը և միությունը կլինեն Տիրոջ հետ Նրա աշխատանքում միասին ծառայելու քաղցր արդյունքները:

Մարգարեների տեսիլքի իրականացումը

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը և նրա խորհրդականները վերջերս վկայել են, որ «Տերը վերականգնել է ավետարանի լրիվությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, և որ Սփոփող Միությունը այդ վերականգնման կարևոր մասն է հանդիսանում»: Որպես Սփոփող Միության «փառավոր ժառանգություն» պահպանելու ցանկության վկայություն, Առաջին Նախագահությունը վերջերս հրատարակեց և աշխարհով տարածեց *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը գրքույկը:* Այդ գրքի էջերում մենք կարող ենք գտնել սովորույթներ և օրինակներ, որ պատկանում են քույրերին և եղբայրներին, որոնք միասին աշխատում են ընտանիքներում և Եկեղեցում, և մենք կարող ենք սովորել սկզբունքներ այն մասին, թե ով ենք մենք, ինչին ենք հավատում և ինչը պետք է պաշտպանենք: Առաջին Նախագահությունը մեզ խրախուսում է ուսումնասիրել այս կարևոր գիրքը և «թույլ տալ, որ դրա հարատև ճշմարտությունները և ոգեշնչող օրինակները փոխեն մեր կյանքը»:[24]

Երբ քույրերը ավելի ու ավելի են հետևում Սփոփող Միության նպատակներին, մարգարեների տեսիլքը իրականանում է: Նախագահ Քիմբալն ասել է. «Այս կազմակերպության մեջ զորություն կա, որը դեռևս լիովին չի օգտագործվել ամրացնելու Սիոնի տները և կառուցելու Աստծո արքայությունը, և չի օգտագործվի լիարժեք մինչև քույրերը և քահանայությունը չըմբռնեն Սփոփող Միության տեսիլքը»:[25] Նա մարգարեացել է, որ «վերջին օրերին Եկեղեցու աճի մեծ մասը պայմանավորված կլինի աշխարհի այն լավ կանանցով (որոնք ունեն հոգևորության ներքին զգացում), որոնք մեծ թվերով կմիանան Եկեղեցուն: Սա տեղի կունենա այն աստիճան, որ Եկեղեցու կանայք . . . կառանձնանան և կտարբերվեն՝ լավ իմաստով, աշխարհի կանանցից»:[26]

Ես շնորհակալ եմ Սփոփող Միության վերաբերյալ մարգարեների տեսիլքի համար: Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի նման, ես «համոզված եմ, որ ոչ մի տեղ չկա մեկ այլ կազմակերպություն, որը կհամեմատվի այս Եկեղեցու Սփոփող Միության հետ»:[27] Մեր պարտականությունն է այժմ ապրել Սփոփող Միության վերաբերյալ մարգարեների տեսիլքի համաձայն՝ ձգտելով մեծացնել հավատքը, ամրացնել ընտանիքները և օգնություն տրամադրել:

Ես ավարտում եմ Նախագահ Լորենզո Մնոուի խոսքերով. «Սփոփող Միության ապագան լի է խոստումով: Եկեղեցու աճի հետ մեկտեղ դրա գործունեության դաշտը համապատասխանաբար կլայնանա: Մեր պատասխանատվությունն է համապատասխանեցնել մեզ Սփոփող Միության վերաբերյալ մարգարեների տեսիլքին, և այն կլինի էլ ավելի ունակ բարիք գործելու, քան եղել է անցյալում»:[28] Քույրերին, ովքեր օգնում են առաջ տանել Աստծո արքայությունը, նա ասել է. «Քանզի դուք կիսել եք այդ ջանքերը, դուք անշուշտ կկիսեք աշխատանքի հաղթանակը և վեհացումն ու փառքը, որ Տերը կտա Իր հավատարիմ զավակներին»:[29] Այս տեսիլքի մասին ես նույնպես բերում եմ վկայություն, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ջուլի Բ. Բեք, «Կատարենք Սփոփող Միության նպատակները», *Լիահոնա*, նոյ. 2008, 108–11:
2. Տես Julie B. Beck, BYU Women's Conference address (Apr. 29, 2011), http://ce.byu.edu/cw/womensconference/archive/2011/pdf/JulieB_openingS.pdf; «Ինչ ես հույս ունեմ, որ կհասկանան իմ թոռները Սփոփող Միության մասին», *Լիահոնա*, նոյ. 2011, 109–13; "Relief Society: A Sacred Work," *Liahona*, Nov. 2009, 110–14.
3. See Julie B. Beck, "Why We Are Organized into Quorums and Relief Societies" (Brigham devotional address, Jan. 17, 2012), speeches.byu.edu.
4. This message is not a comprehensive review of all prophetic statements regarding Relief Society. It is only a sample of their vision and direction. *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society,* conference reports, and other Church publications contain more teaching on this subject.
5. Joseph Smith, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 13.
6. Joseph Smith, in *Daughters in My Kingdom,* 15.
7. Brigham Young, in *Daughters in My Kingdom,* 41.
8. Joseph F. Smith, in *Daughters in My Kingdom,* 65–66.
9. Joseph Fielding Smith, in *Daughters in My Kingdom,* 142.
10. Joseph Fielding Smith, in *Daughters in My Kingdom,* 97.
11. Boyd K. Packer, in *Daughters in My Kingdom,* 85.
12. See Boyd K. Packer, "The Circle of Sisters," *Ensign,* Nov. 1980, 110.
13. See First Presidency letters, Mar. 19, 2003, and Feb. 23, 2007.
14. See *Daughters in My Kingdom,* 3–6.
15. Boyd K. Packer, in *Daughters in My Kingdom,* 16.
16. Joseph Smith, in *Daughters in My Kingdom,* 17.
17. Joseph Smith, in *History of the Church,* 4:602.
18. John A. Widtsoe, in *Daughters in My Kingdom,* 25.
19. Boyd K. Packer, *Ensign,* Nov. 1980, 110.
20. Joseph Fielding Smith, in *Daughters in My Kingdom,* 142.
21. Spencer W. Kimball, in *Daughters in My Kingdom,* 117.
22. Harold B. Lee, "The Place of Relief Society in the Welfare Plan," *Relief Society Magazine,* Dec. 1946, 842.
23. Joseph F. Smith, in *Daughters in My Kingdom,* 66.
24. The First Presidency, in *Daughters in My Kingdom,* ix.
25. Spencer W. Kimball, in *Daughters in My Kingdom,* 142.
26. Spencer W. Kimball, in *Daughters in My Kingdom,* 95.
27. Gordon B. Hinckley, in *Daughters in My Kingdom,* 160.
28. Lorenzo Snow, in *Daughters in My Kingdom,* 19.
29. Lorenzo Snow, in *Daughters in My Kingdom,* 7.

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Քրիստոսի վարդապետությունը

Այսօր Եկեղեցում ճիշտ ինչպես հնադարյան ժամանակներում Քրիստոսի վարդապետությունը հաստատելը, կամ վարդապետական շեղումներն ուղղելը աստվածային հայտնության հարց է:

Ս եր խորը երախտագիտությունն ու սերն ենք հայտնում Քույր Բեքին, Քույր Ալրեդին, Քույր Թոմսոնին, և Սփոփող Միության խորհրդին:

Մենք վերջերս հասարակայնության կողմից հետաքրքրության աճ ենք նկատում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հավատալիքների հանդեպ: Սա մի բան է, որը մենք ողջունում ենք, որովհետև վերջ ի վերջո մեր հիմնական առաջադրանքը Հիսուս Քրիստոսի ավետարանը, Նրա վարդապետությունն ուսուցանելն է ողջ աշխարհում (տես Մատթեոս ԻԸ.19–20, ՎԱՈ 112.28): Բայց մենք պետք է ընդունենք, որ եղել է և դեռ կա որոշ շփոթություն մեր վարդապետության առնչությամբ և թե ինչպես է այն հաստատվել: Սա է այն թեման, որին ես կկամենայի անդրադառնալ այսօր:

Փրկիչը ուսուցանեց Իր վարդապետությունը ժամանակների գագաթնակետին և Նրա Առաքյալները հզոր պայքար մղեցին պահպանելու Նրա վարդապետությունը կեղծ սովորույթների և փիլիսոփայության հարձակման դեմ: Նոր Կտակարանի Թղթերը տեղեկացնում են բազմաթիվ դեպքերի մասին, որոնք ցույց են տալիս, որ լուրջ և համատարած ուրացությունն արդեն սկսվել էր Առաքյալների ծառայության ընթացքում:[1]

Դարերը, որոնք հաջորդեցին երբեմն լուսավորվում էին ավետարանի լույսի ճառագայթներով, մինչև որ 19-րդ դարում վերականգման մի շողշողուն առավոտ բացվեց աշխարհի վրա և Քրիստոսի ավետարանը՝ լիակատար և ամբողջական, մեկ անգամ ևս հայտնվեց երկրի վրա: Այդ փառահեղ օրը սկսվեց, երբ «արևի պայծառությունը գերազանցող» (Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.16), լույսի սյան մեջ, Հայր Աստվածը և Նրա Սիրելի Որդին՝ Հիսուս Քրիստոսն, այցելեցին երիտասարդ Ջոզեֆ Սմիթին և սկիզբ դրեցին նրան, ինչը դարձավ աստվածային զորության և իշխանության հետ կապված հայտնության իսկական հեղեղ:

Այս հայտնություններում մենք գտնում ենք, ինչը կարելի է կոչել երկրի վրա վերահաստատված Հիսուս Քրիստոսի Եկեղեցու առանցքային վարդապետություն: Հիսուսն Ինքն է սահմանել այդ վարդապետությունը այս խոսքերում, որոնք գրվել են Մորմոնի Գրքում՝ Եվս մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի մասին.

«Այս է իմ վարդապետությունը, և դա այն վարդապետությունն է, որը Հայրը տվել է ինձ. և ես վկայում եմ Հոր մասին, և Հայրը վկայում է իմ մասին, և Սուրբ Հոգին վկայում է Հոր և իմ մասին. և ես վկայում եմ, որ Հայրը պատվիրում է բոլոր մարդկանց, ամենուր, ապաշխարել և հավատալ ինձ:

Եվ ով որ հավատում է ինձ և մկրտվում, նույնը պիտի փրկվի. այդ նրանք են, ովքեր պիտի ժառանգեն Աստծո արքայությունը:

Եվ ով որ չի հավատում ինձ և չի մկրտվում, նզովված պիտի լինի:

Եվ ով որ հավատում է ինձ, հավատում է նաև Հորը. և նրան Հայրը կվկայի իմ մասին, քանզի նա կայցելի նրան կրակով և Սուրբ Հոգով . . .

Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս է իմ վարդապետությունը՝ ով որ կառուցում է սրա վրա, կառուցում է իմ վեմի վրա, և դժոխքի դռները չպիտի հաղթեն նրանց (3 Նեփի 11.32–35, 39):

Սա է մեր ուղերձը, վեմը, որի վրա մենք կառուցում ենք, հիմքը Եկեղեցում մնացած բոլոր բաների: Աստծո կողմից եկող ամեն ինչի նման այս վարդապետությունն անբիծ է, այն հստակ է, այն հեշտ է հասկանալ, նույնիսկ երեխայի համար: Ուրախ սրտերով մենք հրավիրում ենք բոլորին ընդունել այն:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում «մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է, այն ամենին, ինչ Նա այժմ հայտնում է, և հավատում ենք, որ Նա դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է հայտնելու Աստծո Արքայության վերաբերյալ» (Հավատո Հանգանակ 1.9): Սա նշանակում է, որ չնայած կա շատ բան, որ մենք դեռ չգիտենք, ճշմարտությունները և վարդապետությունը, որ մենք ստացել ենք, եկել է և կշարունակի գալ աստվածային հայտնության

միջոցով։ Որոշ հավատքի ավանդույթներում աստվածաբանները պահանջում են ուսուցանելու հավասար իշխանություն եկեղեցական վերնախավի հետ և վարդապետական հարցերը կարող են դառնալ կարծիքների մրցույթ նրանց միջև։ Ոմանք հենվում են միջնադարյան տիեզերական ժողովների և դրանց դավանանքների վրա։ Մյուսները հիմնական շեշտը դնում են ետ առաքելական աստվածաբանների դատողությունների կամ աստվածաշնչյան մեկնաբանության մեթոդների կամ սկզբունքների և բացատրությունների կամ քննադատական մեկնաբանությունների վրա։ Մենք ևս գնահատում ենք գիտականությունը, որն ուժեղացնում է հասկացողությունը, բայց այսօր Եկեղեցում, ճիշտ ինչպես հնադարյան ժամանակներում, Քրիստոսի վարդապետությունը հաստատելը կամ վարդապետական շեղումներն ուղղելը աստվածային հայտնության հարց է նրանց համար, ում Տերը օժտում է առաքելական իշխանությամբ։[2]

1954թ. Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ կրտսերը, որն այդ ժամանակ Առաջին Նախագահության խորհրդական էր, բացատրեց, թե ինչպես է վարդապետությունը հայտնի դարձվում Եկեղեցում և Եկեղեցու Նախագահի ծայրահեղ կարևոր դերի մասին։ Խոսելով Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի մասին, նա նշեց. «[Մենք] պետք է մեր մտքում պահենք, որ Բարձրագույն Իշխանավորներից ոմանց հանձնարարված է հատուկ կոչում. նրանք ունեն հատուկ պարգև, նրանք հաստատվում են որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ, որը նրանց տալիս է հատուկ հոգևոր օժտում, որը կապված է ժողովրդին նրանց կողմից ուսուցանելու հետ։ Նրանք ունեն իրավունք, զորություն և իշխանություն հայտարարելու Աստծո միտքն ու կամքը՝ ենթակա լինելով Եկեղեցու Նախագահի համընդհանուր զորությանն ու իշխանությանը»։ Մյուս Բարձրագույն Իշխանավորներին չի տրվել այս հատուկ հոգևոր օժտումը և իշխանությունը ուսուցանելու համար. նրանք այդ առումով սահմանափակում ունեն, և ուսուցանելու զորության և իշխանության վրա իրենց այդ սահմանափակումը տարածվում է Եկեղեցու ամեն մի պաշտոնյայի և անդամի վրա, քանի որ նրանցից ոչ մեկը հոգեպես չի օժտվել որպես մարգարե, տեսանող և հայտնող։ Բացի այդ, ինչպես հենց նոր նշեցի Եկեղեցու Նախագահն ունի լրացուցիչ և հատուկ հոգևոր օժտում այս տեսակետից, քանի որ նա է Մարգարեն, Տեսանողը և Հայտնողը ողջ Եկեղեցու համար»։[3]

Ինչպե՞ս է Փրկիչը հայտնում Իր կամքը և վարդապետությունը մարգարեներին, տեսանողներին և հայտնողներին։ Նա կարող է գործել իր սուրհանդակի միջոցով կամ Իր սեփական անձով։ Նա կարող է խոսել Իր իսկ ձայնով կամ Սուրբ Հոգու ձայնով, Հոգու հաղորդակցությունը հոգուն, որը կարող է արտահայտվել խոսքերով կամ զգացումներով, որն արտահայտում է խոսքերից վեր հասկացողություն (տես 1 Նեփի 17.45, ՎևՈւ 9.8)։ Նա կարող է Ինքը դիմել Իր ծառաներին անձնապես կամ գործելով խորհրդով (տես 3 Նեփի 27.1–8)։

Ես երկու օրինակներ մեջ կբերեմ Նոր Կտակարանից։ Առաջինը հայտնություն էր ուղղված Եկեղեցու ղեկավարին։ Գործք Առաքելոց գրքի սկզբում մենք գտնում ենք, որ Քրիստոսի Առաքյալները հայտարարում էին ավետարանի ուղերձը միայն հրեաներին՝ հետևելով Հիսուսի ծառայության օրինակին (տես Մատթեոս ԺԵ.24), բայց այժմ, Տիրոջ ժամանակացույցով, եկել էր փոփոխության ժամանակը։ Պետրոսը Յոպպէում մի երազ տեսավ, որտեղ նա տեսավ «մի մեծ կտավի պես անօթ չորս ծայրիցը կապած» մեջը տարբեր կենդանիներ, որոնք իջեցվեցին երկնքից երկրի վրա (Գործք Ժ.11) և նրան պատվիրվեց «մորթել և ուտել» (Գործք Ժ.13)։ Պետրոսը չենթարկվեց, քանի որ կենդանիներից առնվազն մի քանիսը «անմաքուր» էին ըստ Մովսեսի օրենքի, իսկ Պետրոսը երբեք չէր

խախտել պատվիրանը և չէր կերել նման կենդանիներ: Սակայն ձայնն ասաց Պետրոսին իր երազում. «Այն որ Աստուած սրբեց, դու պիղծ մի համարիր» (Գործք Ժ.15):

Այս երազի իմաստը պարզ դարձավ, երբ դրանից հետո շուտով Հռոմեացի հարյուրապետ Կոռնելիոսի կողմից ուղարկված մի քանի մարդիկ հասան Պետրոսի իջևանատեղը՝ խնդրանքով, որ նա գար և ուսուցաներ իրենց Տիրոջը: Կոռնելիոսը հավաքել էր ազգականների և ընկերների բավականին մեծ մի խումբ, և նրանց գտնելով իր ուղերձին անհամբեր սպասելիս, Պետրոսն ասաց.

«Աստուած ինձ ցոյց տուաւ, ոչ մէկ մարդի էլ պիղծ կամ անմաքուր չասել:

. . . Ճշմարտութեամբ հասկանում եմ, որ Աստուած աչառ չէ.

Այլ ամեն ազգումն, ով որ վախենում է նորանից՝ եւ արդարութիւն է գործում, ընդունելի է նորան» (Գործք Ժ.28, 34–35; տես նաև հատվածներ 17–24):

Եւ Պետրոսը դեռ այս բանը խօսելիս, Սուրբ Հոգին իջավ այն խօսքը լսողների բոլորի վերայ:

Եւ զարմացան . . . հաւատացեալները, ովքեր [ուղեկցում էին Պետրոսին] որ հեթանոսների մէջ էլ Սուրբ Հոգու պարգեւը թափվում էր:

. . . Այն ժամանակ Պետրոսը պատասխանեց.

Մի՞թե մէկը կարող է ջուրը արգիլել, որ սորանք չմկրտուին, որ Սուրբ Հոգին ընդունեցին ինչպէս եւ մենք» (Գործք Ժ.44–47):

Պետրոսին տրված այս փորձառությամբ և հայտնությամբ Տերը փոխեց Եկեղեցու գործունեությունը և հայտնեց ավելի ամբողջական վարդապետական ըմբռնում Իր աշակերտներին: Եվ այսպիսով, ավետարանի քարոզումը տարածվեց՝ ընդգրկելով ողջ մարդկությունը:

Հետագայում Գործք գրքում մենք գտնում ենք մեկ այլ, ինչ որ չափով առնչվող օրինակ, այս անգամ ցույց տալով, թե ինչպես կարող է վարդապետության հարցերի հետ կապված հայտնություն գալ խորհրդաժողովում: Վիճաբանություն էր ծագել թլփատության հարցի առնչությամբ,

թե ըստ Մովսեսի օրենքի պահանջի այն արդյոք պե՞տք է կատարվեր որպես պատվիրան Քրիստոսի ավետարանում և Եկեղեցում (տես Գործք ԺԵ.1, 5): «Եւ առաքյալները եւ երէցները ժողովուեցան, որ տեսնեն այս բանի համար» (Գործք ԺԵ.6): Այս խորհրդաժողովի մեր արձանագրությունը իհարկե ամբողջական չէ, բայց մեզ ասվում է, որ «շատ քննութիւն լինելուց» (Գործք ԺԵ.7) հետո, Պետրոսը՝ ավագ Առաքյալը, վեր կացավ և հայտարարեց, թե ինչ էր Սուրբ Հոգին իրեն հաստատել: Նա հիշեցրեց խորհրդին, որ երբ ավետարանը սկսեց քարոզվել չթլփատված հեթանոսներին Կոռնելիոսի տանը, նրանք ստացան Սուրբ Հոգին ճիշտ ինչպես Հրեա թլփատված նորադարձները: Աստված, ասաց նա, «խտրութիւն չարաւ նորանց եւ մեր մէջ, հաւատքով սրբելով նորանց սրտերը:

Եւ հիմա ի՞նչու էք Աստուծուն փորձում, որ մի լուծ դնէք աշակերտների վզի վերայ, որ ոչ մեր հայրերը եւ ոչ մենք կարողացանք տանել:

Այլ հավատում ենք որ Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքովը կապրենք, ինչպէս նորանք էլ» (Գործք ԺԶ.9–11; տես նաև հատված 8):

Հետո Պողոսը, Բառնաբասը և գուցե մյուսները խոսեցին ի աջակցություն Պետրոսի հայտարարության, Հակոբոսն առաջարկեց, որ որոշումը ի կատար ածվի Եկեղեցուն ուղղված նամակով և խորհուրդը միավորված էր, «միաբան» (Գործք ԺԵ.25; տես նաև հատվածներ 12–23): Իրենց որոշումը հայտարարող նամակում Առաքյալներն ասացին. «Սուրբ Հոգուն եւ մեզ հաճոյ երեւեցաւ» (Գործք ԺԵ.28), կամ այլ խոսքերով այս որոշումը եկավ աստվածային հայտնությամբ՝ Սուրբ Հոգու միջոցով:

Այս նույն գործելակերպին հետևում են այսօր՝ Հիսուս Քրիստոսի վերականգված Եկեղեցում: Եկեղեցու Նախագահը կարող է հայտարարել կամ մեկնաբանել իրեն տրված հայտնության վրա հիմնված վարդապետությունները (տես օրինակ, ՎԵՈՒ 138): Վարդապետական մեկնաբանությունը կարող է գալ նաև Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի միավորված խորհրդի միջոցով (տես, օրինակ, Պաշտոնական Հայտարարություն 2): Խորհրդի ժողովի քննարկումը հաճախ կարող է ներառել կանոնական սուրբ գրությունները, Եկեղեցու առաջնորդների ուսմունքները և անցյալի կանոնակարգերը քննելը: Բայց վերջում, ճիշտ ինչպես Նոր Կտակարանի Եկեղեցում, նպատակը միայն համաձայնության գալը չէ խորհրդի անդամների միջև, այլ հայտնությունը Աստծուց: Դա մի գործընթաց է, որը ներգրավում է ինչպես խելքը այնպես էլ հավատքը՝ Տիրոջ միտքն ու կամքը ձեռք բերելու համար:[4]

Միևնույն ժամանակ հարկ է հիշել, որ Եկեղեցու անցյալ կամ ներկա առաջնորդի կողմից առաջ քաշվող ամեն մի դրույթ չէ, որ անպայմանորեն վարդապետության սահմանում է: Ընդհանուր առմամբ Եկեղեցում հասկացվում է, որ որևէ առաջնորդի արտահայտած միտքը որևէ հատուկ առիթով հաճախ ներկայացնում է անձնական, չնայած լավ մտածված կարծիք, ի նկատի չունենալով, որ այն կդառնա պաշտոնական կամ պարտավորեցնող ողջ Եկեղեցու համար: Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է, որ. «մարգարեն մարգարե է միայն այն ժամանակ, երբ նա գործում է որպես այդպիսին»:[5] Նախագահ Քլարկը, որին քիչ առաջ մեջբերեցինք, նկատել է.

«Այս հարցին առնչվող մի հասարակ պատմություն է հայրս պատմել ինձ, երբ ես տղա էի, չգիտեմ թե ինչ իշխանության մասին էր, բայց դա լուսաբանում է հարցը: Նրա պատմությունն այն մասին էր, որ Ջոնսթոնի բանակի գալու հուզումնալի միջադեպի հետ կապված Եղբայր Բրիգամը քարոզեց ժողովրդին մի առավոտյան ժողովի ժամանակ, մի քարոզ, որը լի էր մոտեցող բանակի դեմ մրցահրավերով և հայտարարելով մտադրություն՝ նրանց դիմադրելու և ետ մղելու մասին: Կեսօրվա ժողովին նա վերկացավ և ասաց, որ առավոտյան Բրիգամ Յանգն էր խոսում, բայց այժմ խոսելու էր Տերը: Այնուհետև, նա դիմեց խոսքով, որի տեմպը առավոտյան ելույթի ճիշտ հակառակն էր: . . .

Եկեղեցին կիմանա Սուրբ Հոգու վկայությամբ, որը տրվել է անդամներին, թե արդյոք Եղբայրներն իրենց տեսակետներն արտահայտելիս Սուրբ Հոգո՞ւց են մղվում և ի վերջո այդ գիտելիքը կդրսևորվի»:[6]

Նախագահ Ջոզեֆ Սմիթը հաստատեց Փրկչի կենտրոնական դերը մեր վարդապետությունում մեկ եզրափակիչ նախադասությամբ. «Մեր կրոնի հիմնական սկզբունքները Առաքյալների և Մարգարեների վկայությունն է Հիսուս Քրիստոսի մասին, որ Նա մահացավ, թաղվեց և կրկին բարձրացավ երրորդ օրը և համբարձվեց երկինք, և բոլոր մյուս բաները, որոնք վերաբերում են մեր կրոնին ընդամենը դրա հավելումներն են»:[7] Հիսուսի մասին Ջոզեֆ Սմիթի վկայությունն է, որ Նա ապրում է, «քանզի [նա] տեսել էր Նրան «Նույնիսկ Աստծո աջ կողմում և [նա] լսել էր ձայնը, որը վկայում էր, որ նա Հոր Միածինն էր» (ՎԱՈ 76.23; տես նաև հատված 22): Ես կոչ եմ անում բոլորին, ովքեր լսում են կամ կարդում այս ուղերձը փնտրել աղոթքի և սուրբ գրությունների ուսումնասիրության միջոցով աստվածային հատկանիշի վերաբերյալ այդ նույն վկայությունը, Հիսուս Քրիստոսի Քավությունն ու Հարությունը: Ընդունեք Նրա վարդապետությունը ապաշխարելով, մկրտվելով, ստանալով Սուրբ Հոգու պարգևը, իսկ հետո ողջ ձեր կյանքի ընթացքում հետևեք Հիսուս Քրիստոսի ավետարանի օրենքներին և ուխտերին:

Քանի որ Զատիկի տոնակատարությունը մոտենում է, ես արտահայտում եմ իմ սեփական վկայությունը, որ Նազարեթցի Հիսուսը Աստծո Որդին էր և է, հենց Մեսիան հին մարգարեության: Նա Քրիստոսն է, ով տանջվեց Գեթսեմանում, մահացավ խաչի վրա, թաղվեց և ով իսկապես բարձրացավ կրկին երրորդ օրը: Նա է հարություն առած Տերը, որի միջոցով մենք բոլորս հարություն կառնենք և որի միջոցով բոլորը, ովքեր կկամենան, կկարողանան փրկագնվել և վեհացման հասնել Նրա երկնային արքայությունում: Սա է մեր վարդապետությունը, ընդունելով բոլոր նախորդ վկայությունները Հիսուս Քրիստոսի մասին և հայտարարելով նորից մեր իսկ ժամանակաշրջանում, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Neal A. Maxwell, “From the Beginning,” *Ensign,* Nov. 1993, 18–19:
   «Հակոբոսը պարսավեց «պատերազմունքները և կռիվները» Եկեղեցու մեջ (Հակոբոս Դ.1): Պողոսը ողբում էր «բաժանումները» Եկեղեցում և ինչպես «հափշտակող գայլերը» չեն խնայի «հոտը» (Ա Կորնթ. ԺԱ.18, Գործք Ի.29–31): Նա գիտեր, որ ուրացություն էր գալու և գրեց Թեսաղոնիկեցիներին, որ Հիսուսի երկրորդ գալուստը տեղի չէր ունենա մինչև «առաջ չգայ ապստամբութիւնը» հետագայում խորհուրդ տալով «անօրէնութեան խորհուրդը արդեն գործանում է» (Բ Թեսաղ. Բ.3, 7):
   «Ավարտին մոտ Պողոսը հասկացավ թե որքան մեծ էր ուրացությունը. «Բոլոր նրանք որ Ասիայումն են ինձանից շրջվեցին», (Բ Տիմոթ. Ա.15): . . .
   «Համատարած պոռնկությունը և կռապաշտությունը տագնապ առաջացրեցին Առաքյալների մեջ (տես Ա Կորնթ. Ե.9, Եփեսացիս Ե.3, Հուդա Ա.7): Հովհաննեսն ու Պ ողոսը երկուսն էլ ողբացին կեղծ առաքյալների հայտնվելը» (տես Բ Կոր. ԺԱ. 13, Հայտ. Բ.2): Եկեղեցին ակնհայտորեն պաշարման մեջ էր: Ոմանք ոչ միայն ուրացան այլ բացեիբաց հակադրվեցին: Մի իրավիճակում Պողոսը միայնակ կանգնեց և ողբաց, որ «ամենքը ինձ թողեցին» (Բ Տիմ. Դ.16): Նա նաև կշտամբեց նրանց, ովքեր «ամբողջ տները կործանում են» (Տիտոս Ա.11):
   Որոշ տեղական ղեկավարներ ապստամբեցին, երբ մեկը, որը սիրեց իր բարձր դիրքը, հրաժարվեց ընդունել եղբայրներին (տես Գ Հովհ. Ա.9–10):
   «Զարմանալի չէ, որ Նախագահ Յանգը նկատել է «Ասում են որ Քահանայությունը վերցվեց Եկեղեցուց, բայց դա այսպես չէ, Եկեղեցին գնաց Քահանայությունից» (in *Journal of Discourses,* 12:69):
   Ժամանակի ընթացքում, ինչպես Երեց Նիլ Ա. Մաքսվելն է ասել. «Դատողությունը, որը հունական փիլիսոփայական ավանդույթն է, գերիշխում էր, հետո փոխարինվեց, ապավինելով հայտնությանը, որի արդյունքում Քրիստոնյաների կողմից, հավանաբար, բարի մտադրություններով, կամեցան արագորեն իրենց հավատալիքները այդ ժամանակվա մշակույթի գաղափարախոսության հետ համաձայնության բերել»:
   «. . . Եկեք մենք [նույնպես] զգուշանանք, որպեսզի հայտված աստվածային խոսքը չհարմարեցնենք պայմանական իմաստությանը» (*Ensign,* Nov. 1993, 19–20):
2. Առաքյալներն ու մարգարեները, ինչպես օրինակ՝ Ջոզեֆ Սմիթը հռչակում են Աստծո խոսքը, բայց մենք հավատում ենք, որ բացի դրանից, տղամարդիկ և կանայք ընդհանրապես և նույնիսկ երեխաները կարող են իմանալ և առաջնորդվել աստվածային ոգեշնչմամբ՝ ի պատասխան աղոթքի և սուրբ

գրությունների ուսումնասիրության: Ճիշտ ինչպես հնադարյան Առաքյաների օրերին, Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամներին տրվում է Սուրբ Հոգու պարգևը, որը հնարավոր է դարձնում շարունակվող հաղորդակցություն իրենց Երկնային Հոր հետ, կամ այլ խոսքով ասած՝ անձնական հայտնություն (տես Գործք Բ.37–38): Այս ձևով Եկեղեցին դառնում է նվիրված, հոգեպես հասուն անձնավորությունների մի խումբ, որոնց հավատքը կույր չէ, այլ տեսնող՝ տեղեկացված և հաստատված Սուրբ Հոգու կողմից: Սա չի նշանակում, որ յուրաքանչյուր անդամ խոսում է Եկեղեցու անունից կամ կարող է սահմանել վարդապետություններ, այլ որ յուրաքանչյուրը կարող է ստանալ աստվածային առաջնորդություն իր կյանքի մարտահրավերների և հնարավորությունների հետ առնչվելիս:

3. J. Reuben Clark Jr., “When Are Church Leaders’ Words Entitled to Claim of Scripture?” *Church News,* July 31, 1954, 9–10; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 28.1–2, 6–7, 11–13:
4. Խորհրդի մասնակիցների համար պահանջվում են հետևյալ պատրաստվածությունն ու որակավորումը «արդարակեցություն, . . . սրբություն և սրտի խոնարհություն, հեզություն և երկայնամտություն, . . . հավատք, և առաքինություն, և գիտություն, ժուժկալություն, համբերություն, աստվածապաշտություն, եղբայրասիրություն և գթություն, «Քանզի խոստումն է, որ եթե այս բաներն առատ լինեն նրանց մեջ, նրանք անպտուղ չեն լինի Տիրոջ գիտության մեջ» (Վարդապետություն և Ուխտեր 107.30–31):
5. Joseph Smith, in *History of the Church,* 5:265.
6. J. Reuben Clark Jr., “Church Leaders’ Words,” 10. Հետագայում Նախագահ Քլարկը գրել է իր հոր պատմածը Բրիգամ Յանգի մասին.

«Ես չգիտեմ սա երբևե տեղի է ունեցել թե ոչ, բայց ես կարծում եմ, որ սա լուսաբանում է սկզբունքը, որ նույնիսկ Եկեղեցու Նախագահն ինքը միշտ չէ, որ «մղվում է Սուրբ Հոգու կողմից», երբ նա դիմում է ժողովրդին: Սա պատահել է վարդապետության հարցերի առնչությամբ (սովորաբար բարձր մտահայեցողական բնույթի), որտեղ Եկեղեցու հաջորդ Նախագահները և մարդիկ իրենք են զգացել, որ վարդապետությունը հռչակելիս հայտարարողը «Սուրբ Հոգուց չէր մղված»:

Ինչպե՞ս պետք է Եկեղեցին իմանա, թե երբ են եղբայրների այս արկածային արշավանքները դեպի այդ բարձր մտահայեցողական սկզբունքները և վարդապետությունները բավարարում կանոնադրության պահանջները, թե հայտարարողները արդյոք «մղվա՞ծ են եղել Սուրբ Հոգուց»: Եկեղեցին կիմանա Սուրբ Հոգու վկայությամբ, որը տրվել է անդամներին, թե արդյոք Եղբայրներն իրենց տեսակետներն արտահայտելիս Սուրբ Հոգուց են մղվում և, ի վերջո, այդ գիտելիքը կդրսևորվի» (“Church Leaders’ Words,” 10):

7. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները՝ Ջոզեֆ Սմիթ* (2007), 49:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Կյանքի մրցավազք

Որտեղի՞ց ենք մենք եկել: Ինչո՞ւ ենք այստեղ: Ո՞ւր ենք գնալու այս կյանքից հետո: Այս համընդհանուր հարցերն այլևս կարիք չունեն անպատասխան մնալու:

Հմ սիրելի եղբայրներ և քույրեր, այս առավոտ ես ցանկանում եմ խոսել ձեզ հետ հավերժական ճշմարտությունների մասին, որոնք կհարստացնեն մեր կյանքը և մեզ ապահով տուն կուղեկցեն:

Ամենուր մարդիկ շտապում են: Ռեակտիվ ինքնաթիռները սրընթաց իրենց ուղևորներին տանում են մայրցամաքներով և օվկիանոսներով, որպեսզի գործնական հանդիպումներ կայանան, պարտավորություններ կատարվեն, արձակուրդներ անցկացվեն կամ ընտանիքներ այցելվեն: Ամենուր ավտոճանապարհներով՝ մայրուղիներով, փողոցներով թվում է անվերջ հոսքով և տարբեր պատճառներով միլիոնավոր ավտոմեքենաներ են սլանում, տանելով միլիոնավոր մարդկանց, երբ ամեն օր շտապում ենք մեր գործերով:

Կյանքի այս արագընթաց վազքի մեջ, երբևէ դադար առնո՞ւմ ենք խորհելու հավիտենական ճշմարտությունների մասին:

Հավերժական ճշմարտությունների համեմատ առօրյա կյանքի հարցերից և մտահոգություններից շատերը իրոք որ բավականին սովորական են: Ի՞նչ ենք ուտելու ճաշին: Ի՞նչ գույն պետք է ներկենք հյուրասենյակը: Արժե՞ Ջոնիին ֆուտբոլի տանել: Այս և նմանատիպ անթիվ այլ հարցեր կորցնում են իրենց նշանակությունը, երբ ճգնաժամ է սկսվում, սիրելին է վնասվում, երբ առողջ տուն հիվանդություն է մուտք գործում, երբ կյանքի մոմը մարում է և ահաբեկող մթություն է տիրում: Մեր մտքերը կենտրոնանում են, և մենք հեշտությամբ կարողանում ենք որոշել, թե ինչն է իսկապես կարևոր և ինչն է պարզապես անկարևոր:

Ինձ վերջերս այցելել էր մի կին, որը երկու տարուց ավելի պայքարում է կյանքին սպառնացող հիվանդության դեմ: Նա նշեց, որ իր հիվանդությունից առաջ, նա ամբողջ օրը զբաղված էր գործերով՝ տունը կատարելության աստիճան մաքուր էր պահում և այն կահավորում էր գեղեցիկ կահույքով: Նա իր վարսավիրին էր այցելում շաբաթը երկու անգամ և գումար ու ժամանակ էր ծախսում իր զգեստապահարանը համալրելու համար: Թոռնիկներին թույլ չէր տալիս հաճախ այցելել իրեն, քանի որ միշտ մտահոգվում էր, մտածելով որ նրանք իրենց փոքրիկ ու անհոգ թաթիկներով իր թանկագին ունեցվածքը կկոտրեն կամ կփչացնեն:

Այնուհետև նա իմացավ ցնցող նորությունը, որ իր կյանքը

վտանգված է, և իրեն ապրելու քիչ ժամանակ է մնացել: Նա ասաց, որ բժշկի ախտորոշումը լսելու պահին նա անմիջապես հասկացավ, որ իր մնացած ժամանակը կուզենար անցկացնել իր ընտանիքի, ընկերների շրջապատում, իր կյանքի կենտրոնում ունենալով ավետարանը. դրանք էին ամենաթանկ բաները նրա համար:

Նման մտքի պարզեցման պահեր մենք բոլորս էլ ժամանակ առ ժամանակ ունենում ենք, իհարկե ոչ միշտ նման ցավալի իրավիճակում: Մենք պարզորոշ տեսնում ենք, թե ինչն է իսկապես կարևոր մեր կյանքում և ինչպես պետք է ապրենք:

Փրկիչն ասել է.

«Ձեզ համար գանձեր մի դիզեք երկրիս վրա. ուր որ ցեցն և ժանկն ապականում են, և ուր որ գողերը պատը ծակում են և գողանում:

Բայց ձեզ համար գանձեր դիզեցեք երկնքումը, ուր ոչ ցեց և ոչ ժանկ չեն ապականում, և ուր գողերը պատը չեն ծակում և չեն գողանում:

Որովհետև ինչ տեղ որ ձեր գանձն է, այնտեղ կլինի և ձեր սիրտը»:[1]

Մեծ խորհրդածության կամ մեծ կարիքի պահերին, մարդու հոգին հասնում է երկինք՝ փնտրելով աստվածային պատասխան կյանքի մեծագույն հարցերին՝ *որտեղի՞ց ենք գալիս: Ինչո՞ւ ենք այստեղ: Այս կյանքին հրաժեշտ տալուց հետո ո՞ւր ենք գնալու:*

Այս հարցերի պատասխանները չեք գտնի դասագրքերում կամ համացանցում: Այս հարցերը անցնում են մահկանացու կյանքի սահմանը և ընդգրկում են հավերժությունը:

Որտեղի՞ց ենք մենք գալիս: Այս հարցի մասին եթե անգամ չի խոսում, ապա անխուսափելիորեն մտածում է յուրաքանչյուր մարդ:

Պողոս Առաքյալն ասաց աթենացիներին, որ մենք Աստծո ժառանգներն ենք:[2] Որովհետև գիտենք, որ մեր ֆիզիկական մարմինները մեր մահկանացու ծնողների ժառանգներն են, մենք պետք է մանրամասն քննենք Պողոսի խոսքերի նշանակությունը: Տերը հայտարարել է, որ «ոգին ու մարմինը՝ մարդու հոգին են»:[3] Ուստի, հոգին Աստծո ժառանգն է: Եբրայեցիների գրողը Նրան անվանում է՝ «հոգիների Հայր»:[4] Բոլոր մարդկանց հոգիները Նրա «ծնված որդիներն ու դուստրերն են»:[5]

Մենք նկատում ենք, որ բանաստեղծները այդ թեմայի շուրջ մեզ խորհրդածելու առիթ տալու համար, գրել են սրտաշարժ տողեր և արտասովոր մտքեր: Վիլիամ Վորդսվորթը գրել է ճշմարտությունը.

Մեր ծնունդը սոսկ քուն
է և մոռացություն,
Մեր մեջ զարթնած Հոգին, Աստղը
մեր կյանքի,
Մեկ այլ հեռու վայրում տուն ունի,
Եվ գալիս է այդ հեռուներից.
Ոչ ամեն ինչ մոռացած,
Ոչ էլ մերկ, չհագնված,
Այլ փառքի ամպեր գրկած,
Աստծո մոտից, որ Տունն է մեր.
Երկինքը մեր մեջ է, մանուկ
ենք երբ:[6]

Ծնողները խորհում են ուսուցանելու, ոգեշնչելու, առաջնորդություն և ուղղություն տալու և օրինակ լինելու իրենց պատասխանատվության մասին: Եվ մինչ ծնողները խորհում են, երեխաները, հատկապես երիտասարդները, տալիս են խորաթափանց հարցը՝ ինչո՞ւ ենք մենք այստեղ: Սովորաբար, այդ հարցը լուռ ուղղվում է դեպի հոգին, ձևակերպվելով՝ ինչո՞ւ եմ *ես* այստեղ:

Որքան երախտապարտ պետք է լինենք մենք, որ իմաստուն Արարիչը ստեղծեց Երկիրը և մեզ դրեց այստեղ մոռացության վարագույրով առանձնացնելով նախկին գոյությունից, որպեսզի անցնենք

ժամանակի փորձությունով, փորձվելու հնարավորություն ունենանք, և արժանի դառնանք այն ամենին, ինչ Աստված պատրաստել է մեզ համար:

Երկրի վրա մեր գոյության կարևոր նպատակն է՝ձեռք բերել մսից ու ոսկորներից մարմին: Մեզ նաև տրվեց ազատ կամքի պարգևը: Հազարավոր միջոցներով, մենք արտոնություն ունենք ինքնուրույն ընտրելու: Այստեղ մենք սովորում ենք մեր կյանքի դժվար փորձառություններից: Մենք տարբերում ենք բարին չարից: Մենք տարբերում ենք որն է դառը, և որը քաղցր: Մենք հայտնագործում ենք, որ մեր գործողություններին հաջորդում են հետևանքներ:

Աստծո պատվիրաններին հնազանդվելով մենք կարող ենք արժանանալ այն «տանը», որի մասին խոսեց Հիսուսը, երբ հայտարարեց՝ «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան . . . Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու . . . որ ուր ես եմ, դուք էլ լինիք»:[7]

Թեև մենք գալիս ենք մահկանացու կյանք «փառքի ամպեր գրկած», կյանքն անողոք առաջ է գնում: Մանկությանը հետևում է երիտասարդությունը, և աննկատ գալիս է հասուն տարիքը: Փորձով սովորում ենք, որ պետք է նայել երկնքին օգնության համար, երբ մեր ուղին եք հարթում կյանքի ճանապարհին:

Մեր Հայր Աստվածը և մեր Տեր Հիսուս Քրիստոսը նշել են կատարելություն տանող ուղին: Նրանք մեզ կոչ են անում հետևել հավերժական ճշմարտություններին և դառնալ Իրենց պես կատարյալ:[8]

Պողոս Առաքյալը կյանքը նմանեցնում է մրցավազքի: Եբրայեցիներին նա հորդորում է. «Դեն գցենք . . . մեզ դիուրավ պաշարող մեղքը. և համբերությամբ վազենք մեր առաջին դրած ասպարեզի ընթացքը»:[9]

Մեր եռանդի մեջ եկեք չանտեսենք իմաստուն խորհուրդը Ժողովողի. «Ընթացքը վազողներինը չէ, և ոչ էլ պատերազմը՝ հաղթողներինը»:[10] Իրականում, պարգևը նրանցն է, ովքեր համբերում են մինչև վերջ:

Երբ խորհում եմ կյանքի մրցավազքի մասին, հիշում եմ մեկ այլ մրցման մասին, մանկության օրերից: Ես և ընկերներս վերցնում էինք գրպանի դանակը և ուռենու փափուկ փայտից փոքր խաղալիք նավակներ էինք սարքում: Յուրաքանչյուրը իր եռանկյունաձև կտորից առագաստով հասարակ նավակը մրցման համար դնում էր Յուտայի Պրովո գետի անհանգիստ ջրերի վրա: Մենք վազում էինք գետի ափով և նայում, ինչպես են մեր փոքրիկ նավերը երբեմն ուժեղ ճոճվում սրընթաց հոսանքի վրա, իսկ երբեմն էլ հանգիստ նավարկում, երբ ջուրը խորանում էր:

Մի հատուկ մրցման ժամանակ մենք նկատեցինք, որ մի նավակն առաջնորդում էր մյուսներին դեպի նշված վերջնագիծը: Հանկարծ, հոսանքը նրան տարավ ջրապտույտին շատ մոտ, և նավակը թեքվելով կողքի շրջվեց: Այն անընդհատ պտտվում էր՝ չկարողանալով նորից վերադառնալ դեպի հիմնական հոսանքը: Ի վերջո, այն իր անախորժ հանգրվանը գտավ շրջապատված նավաբեկորներով և անպետք իրերով, ամուր հափշտակվելով կանաչ մամուռի թելիկներով:

Մանկության խաղալիք նավակները չունեին կայունություն ապահովող ողնափայտ, ուղղությունը պահող ղեկ և սնուցման աղբյուր: Դրանք գնում էին միայն հոսանքն ի վար՝ նվազագույն դիմադրության ուղով:

Նավակներին հակառակ, մեզ տրվել են մեր ճանապարհին ուղղորդող աստվածային հատկանիշներ: Մենք մահկանացու կյանք ենք մտնում ոչ թե կյանքի հոսանքներով գնալու, այլ մտածելու, դատելու և հասնելու զորությամբ:

Մեր Երկնային Հայրը մեր հավերժական ճամփորդության մեջ մեզ չի թողել առանց միջոցներ տրամադրելու, որոնցով մենք կարող ենք Նրա առաջնորդությունը ստանալ՝ անվտանգ ետ վերադառնալու համար: Ես խոսում եմ աղոթքի մասին: Ես նաև խոսում եմ այդ մեղմ, հանդարտ ձայնի հուշումների մասին, և չեմ անտեսում սուրբ գրությունները, որոնք պարունակում են Տիրոջ խոսքը և մարգարեների խոսքը, և տրվել են օգնելու մեզ անարգել հասնել վերջնագծին:

Մեր մահկանացու առաքելության որոշ հատվածում ի հայտ են գալիս՝ դողդոջուն քայլեր, հոգնատանջ ժպիտ, հիվանդության ցավ, այսինքն՝ ամառամուտ, աշնան գալուստ, ձմռան ցուրտ, և փորձառություն, որ կոչում ենք մահ:

Յուրաքանչյուր մտածող մարդ ինքն իրեն հարց է տվել, որը կարելի է ձևակերպել Հոբի խոսքերով. «Եթե մարդը մեռավ, մի՞թե կկենդանանա»:[11] Որքան էլ փորձենք այդ հարցը մտքից հանել, այն միշտ վերադառնում է: Մահն այցելում է բոլոր մարդկանց: Այն այցելում է երերուն քայլող ծերերին: Մահվան կանչը լսում են նրանք, ովքեր հազիվ են հասել կյանքի կես ճանապարհին: Երբեմն այն լռեցնում է փոքր երեխաների ծիծաղը:

Իսկ ի՞նչ է լինում մահից հետո: Արդյո՞ք մահն ամեն ինչի վերջն է: Ռոբերտ Բլաչֆորդը, իր *Աստված և իմ մերձավորը* գրքում եռանդագին հարձակում է գործում ընդունված քրիստոնեական համոզմունքների վրա, ինչպիսիք են՝ Աստված, Քրիստոս, աղոթք և հատկապես անմահություն: Նա համարձակ պնդում է, որ մահը մեր գոյության վերջն է և ոչ ոք չի կարող այլ կերպ ապացուցել:

Սալվադոր, Բրազիլիա

Ապա զարմանալի բան է կատարվում: Նրա թերահավատության պատը փլվում ու փոշիանում է: Նա մնում է խոցված և անպաշտպան: Դանդաղ նա սկսում է զգալ իր վերադարձը դեպի հավատ, որը նա ծաղրել էր և որից հրաժարվել: Ի՞նչը պատճառ դարձավ, որ նրա տեսակետն ամբողջովին փոխվեր: Նրա կինը մահացավ: Կոտրված սրտով նա գնաց այն սենյակ, ուր իր մահացած կինն էր պառկած: Նա կրկին նայեց այն դեմքին, որը նա այնքան շատ էր սիրել: Դուրս գալով, նա ասաց ընկերոջը. «Դա նա է, միևնույն ժամանակ նա չէ: Ամեն ինչ փոխված է: Այն, ինչ կար նախկինում, այժմ չկա: Նա նույնը չէ: Ի՞նչն է հեռացել, եթե ոչ հոգին»:

Ավելի ուշ նա գրեց. «Մահը այն չէ, ինչ մարդիկ պատկերացնում են: Դա նման է մեկ այլ սենյակ գնալուն: Այդ մյուս սենյակում մենք կգտնենք . . . սիրելի կանանց և տղամարդկանց, թանկագին երեխաներին, որոնց սիրել ենք և կորցրել»:[12]

Իմ եղբայրներ և քույրեր, մենք գիտենք, որ մահը վերջը չէ: Այս ճշմարտությունը դարեր ի վեր ուսուցանվել է կենդանի մարգարեների կողմից: Դա նաև կարող ենք գտնել մեր սուրբ գրություններում: Մորմոնի Գրքում մենք կարդում ենք հատուկ և սփոփող խոսքեր.

«Այժմ, հոգու վիճակի վերաբերյալ մահվան և հարության միջև: Ահա, ինձ համար հայտնի դարձվեց մի հրեշտակի կողմից, որ բոլոր մարդկանց հոգիները, հենց որ նրանք հեռանում են այս մահկանացու մարմնից, այո, բոլոր մարդկանց հոգիները՝ լինեն նրանք բարի, թե չար, տարվում են տուն՝ այն Աստծո մոտ, որը նրանց կյանք էր տվել:

Եվ հետո պիտի լինի այնպես, որ նրանց հոգիները, ովքեր արդար են, ընդունվում են երջանկության մի վիճակի մեջ, որը կոչվում է դրախտ՝ հանգստության մի վիճակ, խաղաղության մի վիճակ, որտեղ նրանք պիտի հանգստանան բոլոր իրենց տագնապներից և բոլոր մտահոգություններից, և վշտից»:[13]

Փրկչի խաչումից և երեք օր Նրա մարմինը գերեզմանում մնալուց հետո, հոգին կրկին վերադարձավ: Քարը գլորված էր և հարություն առած Քավիչը դուրս էր եկել՝ հագած մսից ու ոսկորից անմահ մարմին:

«Եթե մարդը մեռավ, մի՞թե կկենդանանա» Հոբի հարցի պատասխանը եկավ, երբ Մարիամը և մյուսները մոտեցան գերեզմանին և տեսան երկու տղամարդ փայլուն հանդերձներով, որոնք ասացին նրանց. «Ի՞նչ եք կենդանին մեռելների մեջ որոնում: Այստեղ չէ, այլ հարություն առավ»:[14]

Գերեզմանի դեմ Քրիստոսի տարած հաղթանակի շնորհիվ մենք բոլորս պիտի հարություն առնենք: Սա է հոգու փրկագնումը: Պողոսը գրել է. «Կան երկնավոր մարմիններ էլ, երկրավոր մարմիններ էլ. բայց ուրիշ է երկնավորների փառքը, և ուրիշ է երկրավորների փառքը»:[15]

Մենք սելեստիալ փառքին ենք ձգտում: Մենք ցանկանում ենք Աստծո ներկայությամբ բնակվել: Մենք ցանկանում ենք հավիտենական ընտանիքի անդամը լինել: Այդ օրհնությունները կարող ենք վաստակել՝ ողջ կյանքի ընթացքում ձգտելով, փնտրելով, ապաշխարելով և, ի վերջո, հաջողության հասնելով:

Որտեղի՞ց ենք մենք եկել: Ինչո՞ւ ենք այստեղ: Ո՞ւր ենք գնալու այս կյանքից հետո: Այս համընդհանուր հարցերն այլևս կարիք չունեն անպատասխան մնալու: Իմ սրտի խորքից և ողջ խոնարհությամբ, ես վկայում եմ, որ այն ամենը, ինչի մասին ես խոսեցի, ճշմարիտ են:

Մեր Երկնային Հայրը ցնծում է նրանց համար, ովքեր պահում են Իր պատվիրանները: Նա մտահոգվում է նաև իր կորած զավակով, դանդաղկոտ դեռահասով, կամակոր երիտասարդով, օրինազանց ծնողով: Վարդապետը մեղմորեն խոսում է նրանց և, անշուշտ, բոլորի հետ. «Ետ եկեք: Բարձրացեք: Ներս մտեք: Տուն եկեք: Ինձ մոտ եկեք»:

Մյուս շաբաթ մենք տոնելու ենք Զատիկը: Մեր մտքերը կդառնան դեպի Փրկչի կյանքը, մահը և Հարությունը: Որպես Նրա հատուկ վկա, ես վկայում եմ ձեզ, որ Նա ապրում է և սպասում է մեր հաղթական վերադարձին: Որ մենք այդպիսի վերադարձ ունենանք, ես խոնարհաբար աղոթում եմ Նրա, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի, մեր Փրկչի և մեր Քավիչի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս Զ.19–21:
2. Գործք ԺԷ.29:
3. Վարդապետություն և Ուխտեր 88.15:
4. Եբրայեցիս ԺԲ.9:
5. Վարդապետություն և Ուխտեր 76.24:
6. William Wordsworth, *Ode: Intimations of Immortality from Recollections of Early Childhood* (1884), 23–24.
7. Հովհաննես ԺԴ.2–3:
8. Տես Մատթեոս Ե.48; 3 Նեփի 12.48:
9. Եբրայեցիս ԺԲ.1:
10. Ժողովող Թ.11:
11. Հոբ ԺԴ.14:
12. Տես Robert Blatchford, *More Things in Heaven and Earth: Adventures in Quest of a Soul* (1925), 11:
13. Ալմա 40.11–12:
14. Ղուկաս ԻԴ.5–6:
15. Ա Կորնթացիս ԺԵ.40:

Երեց Լ. Թոմ Փերի
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ազատման զորությունը

Մենք կարող ենք ազատվել չար ուղիներից և ամբարշտությունից՝ դառնալով դեպի սուրբ գրությունների ուսմունքները:

Ես մի շատ լավ ընկեր ունեմ, որը յուրաքանչյուր գերագույն համաժողովի ինձ մի նոր փողկապ է ուղարկում, որ կրեմ նիստերի ընթացքում: Նա հրաշալի ճաշակ ունի, այդպես չէ՞:

Իմ երիտասարդ ընկերը մի քանի դժվար մարտակոչ ունի: Դրանք ինչ-որ ձևով նրան սահմանափակում են, բայց մյուս կողմերից նա արտասովոր է: Օրինակ՝ նրա համարձակությունը որպես միսիոներ կարելի է համեմատել Մոսիայի որդիների հետ: Նրա հավատքի պարզությունն է, որ նրա համոզմունքները դարձնում է աներևակայելիորեն ամուր և հաստատուն: Կարծում եմ, որ Սքոթի մտքի համար աներևակայելի է, որ բոլորը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ չեն և բոլորը չեն կարդացել Մորմոնի Գիրքը և դրա ճշմարտացիության վերաբերյալ չունեն վկայություն:

Թույլ տվեք մի դեպք պատմել Սքոթի կյանքից, երբ նա առաջին անգամ էր միայնակ ինքնաթիռով թռիչք կատարում՝ այցելելու իր եղբորը: Մի հարևան, որը մոտ էր նստած, լսեց Սքոթի խոսակցությունը իր կողքի մարդու հետ.

«Ողջույն, իմ անունը Սքոթ է: Ի՞նչ է ձեր անունը»:

Նրա կողքի նստածն ասաց իր անունը:

«Ինչո՞վ եք զբաղվում»:

«Ես ճարտարագետ եմ»:

«Դա լավ է: Որտե՞ղ եք ապրում»:

«Լաս Վեգասում»:

«Մենք այնտեղ տաճար ունենք: Դուք գիտե՞ք, թե որտեղ է Մորմոնների տաճարը»:

«Այո, այն գեղեցիկ շենք է»:

«Դուք Մորմո՞ն եք»:

«Ոչ»:

«Դե, դուք պետք է լինեք: Դա հիանալի կրոն է: Դուք կարդացե՞լ եք Մորմոնի Գիրքը»:

«Ոչ»:

«Դե, դուք պետք է կարդաք դա: Այն հրաշալի գիրք է»:

Ես Սքոթի հետ ողջ սրտով համաձայն եմ, Մորմոնի Գիրքը հրաշալի գիրք է: Մարգարե Ջոզեֆ Սմիթի խոսքերը մեջբերված Մորմոնի Գրքի նախաբանի էջից, միշտ ինձ մոտ արձագանք են գտել. «Ես ասացի եղբայրներին, որ Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների»:

Այս տարի մեր Կիրակնօրյա Դպրոցի դասերին մենք ուսումնասիրում ենք Մորմոնի Գիրքը: Երբ մենք պատրաստվում ենք և մասնակցում, թող որ մենք դրդվենք հետևելու Սքոթի համարձակ օրինակին՝ կիսվելով մեր սիրով այս առանձնահատուկ սուրբ գրության մասին նրանց հետ, ովքեր մեր հավատքից չեն:

Մորմոնի Գրքի մի գերիշխող թեմա արտահայտվում է 1 Նեփի առաջին գլխի վերջին հատվածում: Նեփին գրել է. «Բայց ահա, ես՝ Նեփիս, ցույց կտամ ձեզ, որ Տիրոջ զորավագութ ողորմությունները բոլոր նրանց վրա են, ում նա ընտրել է, նրանց հավատքի շնորհիվ. դարձնելու նրանց հզոր՝ մինչև իսկ ի զորությունն ազատ[ման]» (1 Նեփի 1.20):

Ես ուզում եմ խոսել, թե ինչպես Մորոմոնի Գիրքը, որը Տիրոջ զորավագութ ողորմությունն է՝ պահված այս վերջին օրերին, ազատում է մեզ ուսուցանելով մեզ մաքուր և «ամենաճիշտ» ձևով Քրիստոսի վարդապետությունը:

Մորմոնի Գրքի պատմություններից շատերը ազատվելու պատմություններ են: Լեքիի մեկնումը անապատ իր ընտանիքի հետ Երուսաղեմի կործանումից ազատման մասին էր: Հարեդացիների պատմությունը ազատման պատմություն է, ինչպես Մուղեկացների պատմությունն էր: Ալմա Կրտսերը ազատվեց մեղքից: Հելամանի պատանի ռազմիկները ազատվեցին ճակատամարտում: Նեփին և Լեքին ազատվեցին բանտից: Ազատման թեման ակնհայտ է ողջ Մորմոնի Գրքով մեկ:

Մորմոնի Գրքում կան երկու պատմություններ, որոնք շատ նման են և ուսուցանում են կարևոր դաս: Առաջինը Մոսիայի գրքից է, որը սկսվում է 19-րդ գլխից: Այստեղ

մենք իմանում ենք, որ թագավոր Լիմքին ապրում էր Նեփիի երկրում: Լամանացիները պատերազմ էին սանձազերծել Լիմքիի ժողովրդի դեմ: Պատերազմի արդյունքում Լամանացիները թույլ տվեցին թագավոր Լիմքիին կառավարել իր ժողովրդին, բայց նրանք պետք է գերության մեջ լինեին իրենցից: Դա շատ տհաճ խաղաղություն էր: (Տես Մոսիա 19–20:)

Երբ Լիմքիի ժողովուրդը հոգնեց Լամանացիների բռնություններից, նրանք համոզեցին իրենց թագավորին գնալ Լամանացիների դեմ ճակատամարտի: Երեք անգամ Լիմքիի ժողովուրդը պարտվեց: Ծանր բեռներ դրվեցին նրանց վրա: Ի վերջո, նրանք խոնարհեցրին իրենց և զորությամբ աղաղակեցին առ Տերը, որ Նա իրենց ազատեր: (Տես Մոսիա 21.1–14:) 21 գլխի 15 հատվածը պատմում է մեզ Տիրոջ պատասխանի մասին. «Եվ արդ, Տերը դանդաղ էր նրանց աղաղակը լսելիս՝ նրանց անօրինությունների պատճառով, այնուամենայնիվ, Տերը լսեց նրանց աղաղակները և սկսեց փափկացնել Լամանացիների սրտերը, այնպես որ նրանք սկսեցին թեթևացնել նրանց բեռները. Սակայն Տերը հարմար չէր տեսնում նրանց ճորտությունից ազատել»:

Շուտով Ամմոնը և տղամարդկանց մի փոքր խումբ Զարահեմլայից եկան և Գեդեոնի՝ Լիմքիի ժողովրդի առաջնորդներից մեկի հետ, նրանք ծրագիր մշակեցին, որը հաջողվեց, և նրանք փախան Լամանացիների բռնություններից: Տերը դանդաղ էր նրանց աղաղակները լսելիս: Ինչո՞ւ: Նրանց անօրինությունների պատճառով:

Երկրորդ պատմությունը շատ կողմերից նման է, բայց նաև տարբեր: Պատմությունը արձանագրված է Մոսիա 24 գլխում:

Ալման և նրա ժողովուրդը բնակություն էին հաստատել Էլամի երկրում, երբ Լամանացիների մի բանակ մտավ երկրի սահմաններից ներս: Նրանք հանդիպեցին և գտան խաղաղ լուծում: (Տես Մոսիա 23.25–29:) Շուտով Լամանացիների առաջնորդները սկսեցին իրենց կամքը թելադրել Ալմայի ժողովրդի վրա և կրելու ծանր բեռներ դրեցին նրանց վրա (տես Մոսիա 24.8): 13 հատվածում մենք կարդում ենք. «Եվ եղավ այնպես, որ Տիրոջ ձայնը եկավ նրանց իրենց չարչարանքների մեջ՝ ասելով. Բարձրացրեք ձեր գլուխները և հանգիստ եղեք, քանզի ես գիտեմ ուխտի մասին, որը դուք արել եք ինձ հետ. Եւ ես կուխտեմ իմ ժողովրդի հետ ու կազատեմ նրանց ճորտությունից»:

Ալմայի ժողովուրդը ազատվեց Լամանացիների ձեռքից և ապահով ճանապարհ ընկան ետ՝ միանալու Զարահեմլայի ժողովրդի հետ:

Ո՞րն էր տարբերությունը Ալմայի և թագավոր Լիմքիի ժողովրդի միջև: Ակնհայտորեն կային մի քանի տարբերություններ՝ Ալմայի ժողովուրդը խաղաղասեր էր և ավելի արդարակյաց, նրանք արդեն մկրտվել էին և մտել ուխտի մեջ Տիրոջ հետ, նրանք խոնարհեցրել էին իրենց Տիրոջ առջև, նույնիսկ նախքան իրենց չարչարանքների սկսվելը: Բոլոր այս տարբերությունները նպատակահարմար դարձրեց և արդարացի, որ Տերը հրաշագործ ձևով նրանց արագ ազատեր այն ձեռքերից, ովքեր պահում էին նրանց ճորտության մեջ: Այս սուրբ գրությունները մեզ ուսուցանում են Տիրոջ ազատման զորության մասին:

Մարգարեությունները, որոնք կանխագուշակում են Հիսուս Քրիստոսի կյանքն ու առաքելությունը, խոստանում են մեզ այն ազատումը, որ Նա է ապահովում: Նրա Քավությունն ու Հարությունը մեզ բոլորիս ապահովում են փախուստ ֆիզիկական մահից և, եթե ապաշխարենք, փախուստ հոգևոր մահից, իր հետ բերելով հավերժական կյանքի օրհնությունները: Քավության և Հարության խոստումները, ֆիզիկական և հոգևոր մահից ազատումի խոստումները հայտարարվել էր

Աստծո կողմից Մովսեսին, երբ Նա ասաց. «Քանզի ահա սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Ի հակադրություն սուրբ գրությունների զեղեցիկ ծրագրված հավատալիքների, մենք տեսնում ենք, թե ինչպես են աշխարհիկության հակադիր ուժերը զբաղված մարտակոչեր նետելով սուրբ գրությունների բազմադարյան հավատալիքներին՝ գրություններ, որոնք տվել են մեզ առաջնորդություն, այս բազմաթիվ դարերի ընթացքում կյանքի մեր վարքի համար՝ սահմանելով հավերժական արժեքներ և չափանիշներ: Այդ աշխարհիկ ուժերը հայտարարում են, որ Աստվածաշնչի ուսմունքները կեղծ են, իսկ Տիրոջ ուսմունքները՝ հնացած: Այդ ձայները գոչում են, որ յուրաքանչյուր ոք պետք է ազատություն ունենա սահմանելու իր չափանիշները, դրանք փորձում են փոխել հավատացյալների իրավունքները, ի հակառակ նրա, ինչ սովորեցվում են սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում:

Ինչպիսի օրհնություն է ունենալ մեր Տիրոջ և Փրկչի առաքելության պատմությունը Մորմոնի Գրքում ավելացնելու մի երկրորդ վկայություն այն վարդապետությանը, որը հայտարարվում է Աստվածաշնչում: Կարծում եմ պատասխանը գտնվում է 1 Նեփի 13 գլխում: Նեփին գրում է. «Եվ հրեշտակը խոսեց ինձ հետ ասելով. Այս վերջին հիշատակարանները, որոնք դու տեսար հեթանոսների մոտ, կհաստատեն առաջինի ճշմարտացիությունը, որոնք Գառան տասներկու առաքյալներինն են, հայտնի կդարձնեն պարզ ու արժեքավոր բաներ, որոնք հանվել են դրանցից. և հայտնի կդարձնեն բոլոր ցեղերին, լեզուներին ու ժողովուրդներին, որ Աստծո Գառը՝ Հավերժական Հոր Որդին է և աշխարհի Փրկիչը. և որ բոլոր մարդիկ պետք է գան դեպի նա, այլապես նրանք չեն կարող փրկվել» (հատված 40):

Ո՛չ Աստվածաշունչը, ո՛չ էլ Մորմոնի Գիրքը առանձին բավարար չեն: Երկուսն էլ անհրաժեշտ են մեզ

ուսուցանելու և սովորելու Քրիստոսի լրիվ և ամբողջական վարդապետությունը: Մյուսի կարիքը չի նվազեցնում նրանցից և ոչ մեկին: Երկուսն էլ՝ թե՛ Աստվածաշունչը և թե՛ Մորմոնի Գիրքը անհրաժեշտ են մեր փրկության և վեհացման համար: Ինչպես Էզրա Թաֆթ Բենսոնն է զորավոր ձևով ուսուցանել. «Երբ Աստվածաշունչն ու Մորոմնի Գիրքն օգտագործվում են միասին, կործանում են կեղծ վարդապետությունները» (“A New Witness for Christ,” *Ensign,* Nov. 1984, 8):

Ես ցանկանում եմ եզրափակել՝ նշելով երկու պատմություն, մեկը Հին Կտակարանից, մյուսը Մորմոնի Գրքից, ցույց տալու թե գրքերը որքան ներդաշնակ են աշխատում միասին:

Աբրահամի պատմությունը սկսվում է Աբրահամի ազատումով Քաղդեացիների կռապաշտությունից (տես Ծննդոց ԺԱ.27–31, Աբրահամ 2.1–4): Նա և նրա կինը՝ Սառան հետագայում ազատվեցին իրենց վշտից և խոստում ստացան, որ նրանց սերնդով երկրի բոլոր ազգերը կօրհնվեն (տես Ծննդոց ԺԸ.18):

Հին Կտակարանը պարունակում է Աբրահամի պատմությունը, թե ինչպես նա իր հետ Եգիպտոսից դուրս հանեց Ղովտին՝ իր եղբոր որդուն: Հողի ընտրությունը իրեն տրված լինելով, Ղովտն ընտրեց Հորդանանի հովիտը, և նա խփեց իր վրանը դեպի Սոդոմ՝ մեծ ամբարշտության քաղաքը: (Տես Ծննդոց ԺԳ.1–12:) Հետագայում Ղովտի խնդիրների մեծ մասը, որ նրան պատահեցին իր կյանքում, իսկ դրանք շատ էին, կարելի է վերագրել նրա վաղ կատարած որոշմանը՝ իր վրանի դուռը այնպիսի

դիրքում դնելը, որ դեպի Սոդոմը նայեր:

Աբրահամը՝ հավատարիմների հայրը, կյանքն այլ կերպ ապրեց: Իհարկե, կային մեծ մարտահրավերներ, բայց այն օրհնված կյանք էր: Մենք չգիտենք, թե Աբրահամի վրանի դուռը որ ուղղությամբ էր նայում, բայց կա մի համոզիչ ակնարկ Ծննդոց ԺԳ գլխի վերջին հատվածում. «Եվ Աբրամը չվեց, եւ եկավ եւ բնակվեց Մամբրեի կաղնիների մեջ, որ Քեբրոնումն է. Եւ այնտեղ սեղան շինեց Եհովայի համար» (Ծննդոց ԺԳ.18):

Չնայած ես չգիտեմ, անձամբ հավատացած եմ, որ Աբրահամի վրանը նայում էր դեպի զոհասեղանը, որը նա կառուցել էր Տիրոջ համար: Ինչպես եմ հանգում այդ եզրակացությանը: Դա այն պատճառով է, որ ես գիտեմ Մորմոնի Գրքի պատմությունը Բենիամին թագավորի մասին, որը ցուցումներ տվեց իր ժողովրդին, երբ նրանք հավաքվեցին լսելու նրա վերջին ելույթն իր ժողովրդին: Թագավոր Բենիամինը հրահանգեց նրանց իրենց վրանները դնել մի դիրքում, որպեսզի դրանց դռները նայեին դեպի տաճարը (տես Մոսիա 2.1–6):

Մենք կարող ենք ազատվել չար ուղիներից և ամբարշտությունից՝ դառնալով դեպի սուրբ գրությունների ուսմունքները: Փրկիչը Մեծ Ազատարարն է, քանզի Նա ազատում է մեզ մահից և մեղքից (տես Հռովմայեցիս ԺԱ.26; 2 Նեփի 9.12):

Ես հայտարարում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է, և մենք կարող ենք Նրան ավելի մոտենալ կարդալով Մորմոնի Գիրքը: Մորմոնի Գիրքը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին: Մեր Փրկչի մասին առաջին վկայություններն են՝ Հին և Նոր Կտակարանները, կամ Աստվածաշունչը:

Եկեք կրկին հիշենք իմ ընկեր Սքոթի նկարագրությունը Մորմոնի Գրքի մասին: «Այն հրաշալի Գիրք է»: Ես վկայում եմ ձեզ, որ Մորմոնի Գրքի մեծությունը հիմնականում պայմանավորված է Սուրբ Աստվածաշնչի հետ դրա ներդաշնակությամբ. Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Որպեսզի կորածները գտնվեն

Երբ ձգտեք ապրել Քրիստոսի ավետարանով և վարդապետությամբ Սուրբ Հոգին կառաջնորդի ձեզ և ձեր ընտանիքը:

Եղբայրներ և քույրեր, ըստ սուրբ գրությունների՝ Լիահոնան «զարմանալի վարպետության մի կլոր գունդ» էր, երկու սլաքներով, որոնցից մեկը ցուց էր տալիս ուղին, որով Հայր Լեքիի ընտանիքը պետք է գնար անապատ (1 Նեփի 16.10):

Կարծում եմ գիտեմ, թե ինչու Լեքին խիստ ապշեց, երբ առաջին անգամ տեսավ այն, որովհետև ես հիշում եմ իմ արձագանքը, երբ առաջին անգամ տեսա GPS-ը (Երկրագնդի Տեղորոշման Համակարգը): Իմ մտքում այն «զարմանալի վարպետության» ժամանակակից սարք էր: Ինչ-որ կերպ, ինչ-որ տեղ ես նույնիսկ չեմ կարող պատկերացնել, այս փոքրիկ սարքը հենց իմ հեռախոսի մեջ, ինչպես է կարողանում ճշգրիտ ցույց տալ, թե որտեղ եմ ես և ճշգրտորեն ասել ինձ, թե ինչպես հասնեմ այնտեղ, ուր ես եմ ուզում գնալ:

Մեզ երկուսիս՝ Բարբարայի և ինձ համար GPS-ը օրհնություն է: Բարբարայի համար դա նշանակում է, որ նա ստիպված չի լինի ասել ինձ կանգ առնել և հարցնել ուղղությունը, իսկ ինձ համար դա նշանակում է ես կարող եմ ճիշտ լինել, երբ ասեմ. «Ես կարիք չունեմ հարցնել որևէ մեկից: Ես ճշգրիտ գիտեմ, թե ուր եմ գնում»:

Այժմ, եղբայրներ և քույրեր, մենք մեզ համար ունենք մի մատչելի սարք, նույնիսկ ավելի նշանավոր, քան լավագույն GPS-ը: Ամենքն էլ ինչ-որ դեպքում, ինչ-որ չափով կորցնում են իրենց ճանապարհը: Սուրբ Հոգու հուշումների միջոցով է, որ մենք կարող ենք ետ բերվել ճիշտ ուղու վրա, և դա Փրկչի քավող զոհաբերությունն է, որ կարող է մեզ վերադարձնել տուն:

Կորած լինելը կարող է վերաբերել ինչպես ամբողջ հասարակությանը, այնպես էլ անձանց: Այսօր մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ այս աշխարհի մեծ մասը կորցրել է իր ճանապարհը, մասնավորապես, ինչ վերաբերում է մեր տներում առկա արժեքներին և առաջնահերթություններին:

Հարյուր տարի առաջ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը ուղղակիորեն կապում էր երջանկությունը ընտանիքի հետ և հորդորում մեզ կենտրոնացնել մեր ջանքերն այնտեղ: Նա ասել է. «Չի կարող լինել իսկական երջանկություն տնից առանձին և

անջատ: . . . Չկա երջանկություն առանց ծառայության և չկա ավելի մեծ ծառայություն, քան այն, որը դարձնում է տունը աստվածային հաստատություն, և որը խթանում է և պահպանում ընտանեկան կյանքը: . . . Տունն է այն, ինչը պետք է բարեփոխվի» (*Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* [1998], 382, 384):

Մեր տներն ու ընտանիքներն են, որ կարիք ունեն բարեփոխման՝ ավելի ու ավելի նյութական և աշխարհիկ դարձող այս աշխարհում: Շշմեցուցիչ օրինակ է աճող արհամարհանքը ամուսնության հանդեպ այստեղ՝ Միացյալ Նահանգներում: Այս տարվա սկզբին *New York Times* պարբերականը զեկուցեց, որ «Չամուսնացած կանանցից ծնված երեխաների բաժնեմասը անցել է շեմը. մինչև 30 տարեկան ամերիկացի կանանց ծնունդների ավելի քան կեսը տեղի է ունենում ամուսնությունից դուրս» (Jason DeParle and Sabrina Tavernise, “Unwed Mothers Now a Majority Before Age of 30,” *New York Times,* փետր. 18, 2012, A1):

Իսկ Միացյալ Նահանգներում ամուսնացած զույգերի մոտավորապես կեսը բաժանվում են: Նույնիսկ նրանք, ովքեր մնում են ամուսնացած, հաճախ կորցնում են իրենց ուղին թույլ տալով, որ այլ բաներ խանգարեն իրենց ընտանեկան հարաբերություններին:

Հավասարապես անհանգստացնող է հարուստների և աղքատների միջև անընդհատ աճող անդունդը, և նրանց միջև, ով ձգտում է պահպանել ընտանեկան արժեքներն ու պարտավորությունները և նրանց, ովքեր հրաժարվել են այդ անելուց: Վիճակագրական տվյալների համաձայն՝ նրանք, ովքեր ունեն ավելի ցածր կրթություն և, հետևաբար, ավելի քիչ եկամուտներ, ավելի քիչ հավանականություն ունեն ամուսնանալու և գնալու եկեղեցի և ավելի շատ հավանականություն՝ ներքաշվելու հանցագործության մեջ և ունենալու երեխաներ ամուսնությունից դուրս: Եվ այս միտումներն անհանգստացնում են նաև աշխարհի մնացած մեծ մասին: (See W. Bradford Wilcox and others, “No

Money, No Honey, No Church: The Deinstitutionalization of Religious Life among the White Working Class,” available at www.virginia.edu/marriageproject/pdfs/Religion_WorkingPaper.pdf.)

Հակառակ տարածված կարծիքի, բարգավաճումն ու կրթությունը թվում է կապված են ավանդական ընտանիքներ և արժեքներ ունենալու ավելի բարձր հավանականության հետ:

Իրականում, իհարկե, հարցը *պատճառի* և *հետևանքի* մասին է: Արդյոք մեր հասարակության որոշ մասերն ունեն ավելի ուժեղ արժեքներ և ընտանիքներ, *որովհետև* նրանք ավելի լա՞վ են դաստիարակված և հաջողակ են, թե նրանք ավելի լավ դաստիարակված են և հաջողակ են, *որովհետև* նրանք ունեն արժեքներ և ամուր ընտանիքներ: Այս համաշխարհային Եկեղեցում մենք գիտենք, որ ճիշտը վերջինն է: Երբ մարդիկ ընտանիք են կազմում և կրոնական պարտավորություններ ստանձնում՝ ըստ ավետարանի սկզբունքների, նրանց վիճակն ավելի բարվոք է դառնում հոգեպես և հաճախ նաև նյութապես:

Եվ, իհարկե, հասարակություններն ընդհանուր առմամբ զորանում են, երբ ընտանիքներն ավելի են ամրանում: Հիմնական *սկզբնապատճառը* ընտանիքի հանդեպ պարտավորություններն ու արժեքներն են: Գրեթե մնացած բոլորը *հետևանքներ* են: Երբ զույգերն ամուսնանում են և պարտավորություններ ստանձնում միմյանց հանդեպ, նրանք խիստ մեծացնում են տնտեսական բարեկեցության իրենց հնարավորությունները: Երբ երեխաները ծնվում են ամուսնական կապի մեջ և ունենում և մայր և հայր, նրանց հնարավորությունները և մասնագիտական հաջողությունների հավանականությունը խիստ մեծանում է: Եվ երբ ընտանիքները աշխատում են և խաղում միասին, հարևանությունը և համայնքները ծաղկում են, տնտեսությունը բարելավվում է և ավելի քիչ կառավարական և ավելի սակավ թանկարժեք ծրագրեր են պահանջվում աղքատներին օգնելու համար:

Այսպիսով, վատ նորությունն այն է, որ ընտանիքի խորտակումը առաջացնում է հասարակական և տնտեսական մեծ քանակությամբ խնդիրներ: Իսկ լավ նորությունն այն է, որ ինչպես ամեն մի պատճառ և հետևանք այդ խնդիրները կարելի է վերափոխել, եթե այն, ինչ առաջացնում է դրանք, փոխվեն: Անօրինությունները լուծվում են ապրելով ճիշտ սկզբունքներով և արժեքներով: Եղբայրներ և քույրեր, մեր կյանքի ժամանակի ամենակարևոր *հարցը* մեր ընտանիքներն են: Եթե մենք նվիրվենք այդ գործին, մենք կբարելավենք մեր կյանքի յուրաքանչյուր մյուս կողմերը և կդառնանք որպես ժողովուրդ և եկեղեցի օրինակ և փարոս աշխարհի բոլոր ժողովուրդների համար:

Բայց սա հեշտ չէ մի աշխարհում, որտեղ սրտերը շրջվում են բազմաթիվ ուղղություններով և որտեղ ողջ մոլորակը թվում է անընդհատ շարժվում է փոխվում այնպիսի մի արագությամբ, որ երբեք նախկինում չէր կարելի պատկերացնել: Ոչինչ չի մնում նույնը երկար ժամանակ: Ոճեր, սովորույթներ, գաղափարներ, քաղաքական ճշտություն և նույնիսկ ճշտի և սխալի ըմբռնումները փոխվում են և տեղաշարժվում: Ինչպես Եսայիա մարգարեն է կանխագուշակել, սխալը ներկայացվում է որպես ճիշտ և ճիշտը որպես սխալ (տես Եսայիա Ե.20):

Հոգևոր անջրպետը անգամ ավելի էխորանում, քան երբևէ, քանի որ չարը դառնում է ավելի խաբուսիկ և նենգ և քաշում մարդկանց

այնտեղ՝ խավար մագնիսի պես, ճիշտ ինչպես ճշմարտության և լույսի ավետարանը գրավում է սրտով ազնիվներին և աշխարհի պատվավորներին, ովքեր ձգտում են նրան, ինչն առաքինի է և բարի:

Մենք համեմատաբար թվով փոքր ենք, բայց որպես այս Եկեղեցու անդամներ, մենք կարող ենք հասնել այս լայնացող անդունդների վրայով: Մենք գիտենք Քրիստոսակենտրոն ծառայության զորությունը, որը բերում է միատեղ Աստծո զավակներին, անկախ նրանց հոգևոր կամ տնտեսական վիճակից: Մեկ տարի առաջ Առաջին Նախագահությունը հրավիրեց մեզ մասնակցել մեկօրյա ծառայության ընթացքում տոնելու բարօրության ծրագրի 75-ամյակը, որն օգնում է մարդկանց դառնալ ավելի ինքնապահովող: Միլիոնավոր ժամեր նվիրաբերվեցին մեր անդամների կողմից ողջ աշխարհով մեկ:

Եկեղեցին ապաստան է այս փոթորկահույզ ծովում, խարիսխ փոփոխությունների և բաժանումների անհանգիստ ջրերում և փարոս նրանց համար, ովքեր գնահատում են և փնտրում արդարակեցություն: Տերն օգտագործում է այս Եկեղեցին որպես գործիք՝ քաշելով Իր զավակներին ողջ աշխարհով մեկ դեպի Իր ավետարանի պաշտպանությունը:

Եղիայի Ոգին, որը սահմաններ չունի, նույնպես մեծ զորություն է Տիրոջ նպատակներում և Իր զավակների հավերժական ճակատագրում: Մաղաքիայի խոսքերում Սուրբ Հոգու Ոգին դարձնում է «հայրերի սիրտը դէպի որդիքը եւ որդկանց սիրտը՝ դէպի իրանց հայրերը» (Մաղաքիա Դ.6):

Աշխարհի համար Եկեղեցին կանգնած է որպես սրտերը դարձի բերելու և բարին տարանջատելու օրինակ: Եկեղեցու անդամների մեջ, ովքեր ամուսնացած են տաճարում, և ովքեր կանոնավորապես հաճախում են կիրակնօրյա ժողովներին, ամուսնալուծության մակարդակը նշանակալիորեն ցածր է, քան աշխարհինը և ընտանիքներն ավելի մոտիկ են մնում միմյանց և ավելի հաճախ հաղորդակցվում: Մեր ընտանիքների առողջությունն ավելի լավ վիճակում է և մենք մի քանի տարի ավելի երկար ենք ապրում, քան բնակչության միջին ցուցանիշն է: Մենք նվիրաբերում ենք ավելի շատ ֆինանսական միջոցներ և ավելի շատ ծառայություն մեկ մարդու հաշվով նրանց, ովքեր կարիքի մեջ են և մենք, ամենայն հավանականությամբ, ավելի շատ ենք ձգտում բարձրագույն կրթության: Ես նշում եմ այս բաները ոչ թե պարծենալու համար, այլ վկայելու, որ կյանքն ավելի լավ է (և շատ ավելի երջանիկ), երբ սրտերը դառնում են դեպի ընտանիքը, և երբ ընտանիքներն ապրում են Քրիստոսի ավետարանի լույսով:

Այսպիսով, ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի չկորչենք: Առաջինը, որ կարող եմ առաջարկել, *առաջնահերթություն* սահմանելն է: Դրեք ամեն ինչ, որ դուք անում եք տնից դուրս՝ ի ենթակայություն և ի աջակցություն նրա, ինչ պատահում է ձեր տան ներսում: Հիշեք Նախագահ Հարոլդ Բ. Լիի խորհուրդը, որ «ամենակարևոր . . . աշխատանքը, որ դուք երբևէ կանեք, կլինի ձեր սեփական տան պատերի ներքո» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 134), իսկ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ասել է. «Ոչ մի այլ հաջողություն չի կարող փոխհատուցել տանը ունեցած ձեր ձախողմանը» (quoted from J. E. McCulloch, *Home: The Savior of Civilization* [1924], 42; in Conference Report, Apr. 1935, 116):

Կազմակերպեք ձեր անձնական կյանքը՝ ժամանակ հատկացնելով աղոթքին, սուրբ գրություններին և ընտանեկան գործերին: Ձեր երեխաներին պարտականություններ տվեք տանը, որոնք կսովորեցնեն նրանց, թե ինչպես աշխատեն: Ուսուցանեք նրանց, որ ավետարանով ապրելը նրանց հեռու կպահի համացանցի, տեսաձայնանյութերի և տեսախաղերի լկտիությունից, խառնաշփոթից ու բռնությունից: Նրանք չեն կորչի և նրանք նախապատրաստված կլինեն ստանձնել պարտականություն, երբ այն դրվում է նրանց վրա:

Երկրորդը, մենք պետք է գործերը *ճիշտ հերթականությամբ* անենք: Նախ՝ ամուսնություն, իսկ հետո ընտանիք: Աշխարհում շատ-շատերն են մոռացել իրերի այս բնական կարգը և կարծում են, թե կարող են փոխել կամ նույնիսկ շրջել հերթականությունը: Վերացրեք ձեր բոլոր երկյուղները հավատքով: Վստահեք Աստծո զորությանը ձեզ առաջնորդելու համար:

Դուք, որ դեռ ամուսնացած չեք, մեծ ուշադրություն դարձրեք ձեզ համար հավերժական զուգընկեր գտնելուն: Երիտասարդներ, հիշեք մեկ բան ևս, որը Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն է ասել. «Ամուրիությունը . . . մակերեսային մտքին [բերում] է այն գաղափարը, որ [ամուրի լինելը] ցանակալի [է], որովհետև այն իր հետ [բերում է] նվազագույն պարտավորվածություն: . . . Իրականում, մեղքը երիտասարդ տղամարդկանց վրա է: Չափահաս երիտասարդ տարիքի ազատությունը նրանց հեռու է տանում պատասխանատվության ուղիներից և պարտականություններից: [Եկեղեցու] նրանց քույրերը զոհ են . . . [և] կամուսնանային, եթե հնարավորություն ունենային և ուրախությամբ կընդունեին ընտանեկան կյանքի պարտականությունները»: (*Gospel Doctrine,* 5th ed. [1939], 281):

Եվ դիմելով երիտասարդ կանանց, ես կավելացնեի, որ դուք ևս չպետք է աչքից բաց թողնեք այս պատասխանատվությունը: Ոչ մի կարիերա չի կարող բերել ձեզ կայացած լինելու այնքան շատ զգացողություն, որքան ընտանիք մեծացնելը: Եվ երբ դուք իմ տարիքի լինեք, շատ ավելի լավ կգիտակցեք դա:

Երրորդը, ամուսիններ և կանայք, դուք պետք է լինեք *հավասար ընկերակիցներ* ձեր ամուսնությունում: Հաճախ կարդացեք և հասկացեք «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին» ուղերձը և հետևեք դրան: Խուսափեք անարդար իշխանության որևէ դրսևորումից: Կողակիցը կամ երեխաները ոչ մեկի սեփականությունը չեն, Աստված է մեր բոլորի Հայրը և ընձեռել է մեզ մեր սեփական ընտանիքի արտոնությունը, որը նախկինում միայն Իրենն էր, օգնելով մեզ ավելի շատ նմանվելու Իրեն: Որպես Նրա զավակներ մենք պետք է տանը սովորենք սիրել Աստծուն և իմանալ, որ մենք կարող ենք խնդրել Նրանից օգնություն, որի կարիքն ունենք: Յուրաքանչյուրդ՝ ամուսնացած, թե միայնակ, կարող եք երջանիկ և աջակցող լինել, ինչպիսի ընտանիք էլ որ դուք ունենաք:

Եվ վերջապես, օգտագործեք Եկեղեցու *ընտանեկան ռեսուրսները*: Երեխաներ մեծացնելիս ընտանիքները կարող են օգնություն հայցել ծխից: Աջակցեք և աշխատեք համատեղ քահանայության և օժանդակների ղեկավարների հետ և լիովին օգտվեք Եկեղեցու երիտասարդական և ընտանեկան ծրագրերից: Հիշեք Նախագահ Լիի ներըմբռնմամբ լի արտահայտություններից ևս մեկը, որ Եկեղեցին այն կառույցն է, որի միջոցով մենք կառուցում ենք հավերժական ընտանիքներ (տես *Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 148):

Այժմ, եթե ինչ-որ պատճառով դուք անձնապես կամ որպես ընտանիք կորցրել եք ձեր ճանապարհը, ապա դուք պետք է միայն կիրառեք Ղուկասի ԺԵ գլխի Փրկչի ուսմունքները ձեր ուղղությունը ճշտելու համար: Այստեղ Փրկիչը խոսում է հովվի ջանքերի մասին, որը որոնում էր իր կորած ոչխարին, մի կնոջ կորած մետաղադրամը որոնելու մասին և այն ողջույնի, որը ստացավ անառակ որդին տուն վերադառնալով: Ինչո՞ւ Հիսուսը սովորեցրեց այս առակները: Նա ուզում էր, որ մենք իմանայինք, որ մեզանից ոչ ոք երբևէ չէր կարող այնպես կորել, որ չկարողանայինք կրկին գտնել մեր ճանապարհը Նրա Քավության և Նրա ուսմունքների միջոցով:

Երբ դուք ձգտեք ապրել Քրիստոսի ավետարանով և վարդապետությամբ, Սուրբ Հոգին կառաջնորդի ձեզ և ձեր ընտանիքին: Դուք կունենաք հոգևոր GPS, որը միշտ կասի ձեզ, թե դուք որտեղ եք և ուր եք գնում: Ես բերում եմ վկայություն, որ հարություն առած մարդկության Քավիչը սիրում է մեզ բոլորիս և Նա խոստացել է, եթե մենք հետևենք Իրեն, Նա կառաջնորդի մեզ ետ՝ դեպի մեր Երկնային Հոր ներկայությունը, որի մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Օ. Վինսենթ Հալեք
Յոթանասունից

Ունենալ գործելու տեսիլք

Եթե ուզում ենք բարգավաճել, ոչ թե ոչնչանալ, ապա մենք պետք է ձեռք բերենք ինքներս մեր մասին տեսիլքը այնպես, ինչպես Փրկիչն է մեզ տեսնում:

Ինչպես բոլոր լավ ծնողները, իմ ծնողները պայծառ ապագա էին ցանկանում իրենց զավակների համար: Հայրս անդամ չէր և արտասովոր պայմանների պատճառով, որոնք տիրում էին այդ ժամանակ, ծնողներս որոշեցին, որ եղբայրներս, քույրերս և ես Հարավային Խաղաղօվկիանոսյան Ամերիկյան Սամոայի մեր հարազատ կղզուց մեկնեինք Միացյալ Նահանգներ՝ դպրոց հաճախելու համար:

Մեզանից բաժանվելը դժվար որոշում էր ծնողներիս, հատկապես՝ մորս համար: Նրանք գիտեին, որ նոր պայմաններում անհայտ խնդիրներ կլինեին: Ինչևէ, հավատքով և վճռականությամբ, նրանք առաջ տարան իրենց ծրագիրը:

Վերջին Օրերի Սրբերի դաստիարակություն ունենալու շնորհիվ, մայրս ծանոթ էր ծոմի և աղոթքի սկզբունքներին, և երկու ծնողներս էլ զգում էին, որ երկնային օրհնությունների կարիքն ունեին՝ իրենց զավակներին օգնելու համար: Այդ ոգով նրանք սկսեցին ամեն շաբաթ մեկ օր հատկացնել մեզ համար ծոմ պահելուն և աղոթելուն: Նրանց նպատակն էր պատրաստել իրենց զավակներին պայծառ ապագայի համար: Նրանք գործում էին այդ տեսիլքով, երբ կիրառում էին իրենց հավատքը փնտրելով Տիրոջ օրհնությունները: Ծոմի և աղոթքի միջոցով նրանք ստանում էին սփոփանք, խաղաղություն և հավաստիացում, որ ամեն ինչ լավ կլինի:

Ինչպե՞ս ենք մենք՝ մեր կյանքի խնդիրների մեջ, ստանում այն տեսիլքը, որն անհրաժեշտ է այն անելու համար, ինչը մեզ կմոտեցնի Փրկչին: Տեսիլքի հետ կապված Առակաց գիրքը ուսուցանում է մեզ այս ճշմարտությունը. «Առանց մարգարեության ժողովուրդը կվայրենանայ» (Առակաց ԻԹ.18): Եթե ուզում ենք բարգավաճել, ոչ թե ոչնչանալ, ապա մենք պետք է ձեռք բերենք ինքներս մեր մասին տեսիլքը այնպես, ինչպես Փրկիչն է մեզ տեսնում:

Փրկիչը այդ խոնարհ ձկնորսների մեջ, որոնց կանչեց հետևել Իրեն, տեսավ ավելին, քան իրենք էին տեսնում իրենց մեջ. Նա ուներ տեսիլք, թե ինչ նրանք կարող էին դառնալ: Նա գիտեր նրանց բարության և ներուժի մասին, և Նա գործի անցավ՝ կանչելով նրանց: Սկզբում նրանք փորձառու չէին, սակայն հետևելով, նրանք տեսան Նրա օրինակը, զգացին Նրա ուսմունքները և դարձան Նրա աշակերտները: Եկավ մի ժամանակ, երբ Նրա աշակերտներից մի քանիսը հեռացան Նրանից, քանի որ այն, ինչ լսել էին, դժվար էր իրենց համար: Հասկանալով, որ մյուսները նույնպես կարող են հեռանալ, Հիսուսը հարցրեց Տասներկուսին. «Մի՞թե դուք էլ ուզում եք գնա» (Հովհաննես Զ.67): Պետրոսի պատասխանը արտահայտում է այն, թե որքան էր նա փոխվել և նա ստացել էր տեսիլքն այն մասին, թե ով էր Փրկիչը: «Ո՞ւմ մոտ գնանք. Հավիտենական կյանքի խոսքեր ունիս դու» (Հովհաննես Զ.68),- պատասխանեց նա:

Այդ տեսլիքով զինված, այդ հավատարիմ և նվիրված աշակերտները կարողացան կատարել դժվար գործեր, ճանապարհորդելով և քարոզելով ավետարանը և հիմնելով Եկեղեցին Փրկչի հեռանալուց հետո: Ի վերջո, նրանցից ոմանք մեծագույն զոհաբերություն կատարեցին իրենց վկայության համար:

Սուրբ գրքերում կան այլ օրինակներ նրանց մասին, ովքեր ստացել են ավետարանի տեսիլքը և առաջ են գնացել, գործելով ըստ այդ տեսիլքի: Ալմա մարգարեն տեսիլք ստացավ, երբ լսեց Աբինադիի համարձակ ուսմունքը և վկայությունը Նոյ թագավորի մոտ: Ալման գործեց ըստ Աբինադիի ուսմունքների և սկսեց ուսուցանել այն, ինչ սովորել էր, և մկրտել շատերին, ովքեր հավատացին իր խոսքերին (տես Մոսիա 17.1–4, 18.1–16): Չնայած որ առաջին Սրբերին Պողոս Առաքյալը հալածում էր, նա դարձի եկավ Դամասկոսի ճանապարհին, ապա գործեց, ուսուցանելով և վկայելով Քրիստոսի մասին (տես Գործք Թ.1–6, 20–22, 29):

Մեր օրերում երիտասարդ շատ տղամարդիկ, կանայք և ավագ զույգեր արձագանքում են միսիաներում ծառայելու Աստծո մարգարեի կոչին: Հավատքով և խիզախությամբ նրանք թողնում են իրենց տները և այն ամենը, ինչ հարազատ է իրենց, որովհետև իրենց հավատքով

կարող են մեծ գործ կատարել որպես միսիոներներ: Գործելով ըստ ծառայելու իրենց տեսիլքի, նրանք օրհնում են շատերի կյանքը և այդ ընթացքում փոխում իրենց սեփական կյանքը: Անցած գերագույն համաժողովին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը շնորհակալություն հայտնեց մեզ այն ծառայության համար, որը մենք կատարում ենք միմյանց համար, և հիշեցրեց մեզ Իր զավակներին երկրի վրա օրհնելու գործում Աստծո ձեռքերը լինելու մեր պատասխանատվության մասին (տես «Մինչև նոր հանդիպում», *Լիահոնա*, նոյ. 2011, 108): Այս կոչի իրականացումը ջերմացնում է մեր սրտերը, մինչ Եկեղեցու անդամները գործում են ըստ այդ տեսիլքի:

Հասկանալով, որ մենք օգնության կարիք կունենանք, հեռանալուց առաջ Փրկիչն ասաց. «Ձեզ որբ չեմ թողիլ» (Հովհաննես ԺԴ.18): Նա սովորեցրեց Իր աշակերտներին. «Մխիթարիչը՝ սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կսովորեցնէ ձեզ, և կհիշեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասացի» (Հովհաննես ԺԴ.26): Սա նույն Սուրբ Հոգին է, որը կարող է հզորացնել և խրախուսել մեզ անելու այն, ինչ մեզ ուսուցանում են Փրկիչը և մեր օրերի մարգարեները և առաքյալները:

Գործի դնելով մեր ղեկավարների ուսմունքները, մենք ավելի խորը հասկացողություն ենք ստանում մեր վերաբերյալ մեր Փրկչի տեսիլքի մասին: Այս համաժողովի ընթացքում մենք ստացանք ոգեշնչված խորհուրդներ մեր մարգարեներից և առաքյալներից: Ուսումնասիրեք նրանց ուսմունքները և խորհեք դրանց մասին ձեր սրտերում, միևնույն ժամանակ փնտրելով Սուրբ Հոգին, որպեսզի նա օգնի ձեզ տեսնել այդ ուսմունքների տեսիլքը ձեր կյանքում: Այդ տեսիլքով հանդերձ, գործադրեք ձեր հավատքը, հետևելով նրանց խորհուրդներին:

Քննեք և ուսումնասիրեք սուրբ գրությունները՝ ավելի շատ լույս և գիտելիք ստանալու մտադրությամբ: Խորհեք դրանց մասին ձեր սրտերում և թույլ տվեք, որ դրանք ոգեշնչեն ձեզ: Այնուհետև գործեք ձեր ոգեշնչմանը համաձայն:

Ընտանիքով սովորելով, մենք գործում ենք, երբ ծոմ ենք պահում և աղոթում: Ալման ծոմի և աղոթքի մասին խոսում է որպես հավատիացում ստանալու եղանակի. «Ես ծոմ եմ պահել ու աղոթել շատ օրեր, որ ես ինքս կարողանայի իմանալ այս բաները» (Ալմա 5.46): Մենք նույնպես սկսում ենք հասկանալ ինչպես վարվել կյանքի խնդիրների հետ ծոմի և աղոթքի միջոցով:

Մենք դժվարություններ ենք ունենում մեր կյանքում, որոնք երբեմն կարող են թուլացնել մեր տեսիլքը և հավատքը և թույլ չտալ անել այն, ինչ պետք է անենք: Մենք դառնում ենք այնքան զբաղված, որ հաճախ գերծանրաբեռնված ենք մեզ զգում և անընդունակ անելու ավելին: Թեև մենք բոլորս տարբեր ենք, ես խոնարհաբար հավատում եմ, որ մենք պետք է մեր տեսիլքը կենտրոնացնենք Փրկչի և Նրա ուսմունքների վրա: Ի՞նչ Նա տեսավ Պետրոսի, Հակոբոսի, Հովհաննեսի և մյուս Առաքյալների մեջ, ինչը հուշեց Նրան հրավիրել նրանց հետևել Իրեն: Նրանց համար ունեցած Իր տեսիլքի պես, Փրկիչը մեծ տեսիլք ունի նրա վերաբերյալ, թե ովքեր մենք կարող ենք դառնալ: Կպահանջվի նույն հավատքը և քաջությունը, որ ցուցաբերեցին առաջին Առաքյալները, որպեսզի մենք վերակենտրոնացնենք մեզ այլ բաների վրա, որոնք առավել կարևոր են տևական երջանկություն և մեծ ուրախություն ունենալու համար:

Երբ մենք ուսումնասիրում ենք մեր Փրկչի կյանքը և Նրա ուսմունքները, մենք տեսնում ենք Նրան մարդկանց մեջ՝ ուսուցանելիս, աղոթելիս, բարձրացնելիս և բժշկելիս: Երբ մենք ընդօրինակում ենք Նրան և անում այն, ինչ Նա է անում, մենք սկսում ենք տեսիլք ձեռք բերել՝ թե ովքեր մենք կարող ենք դառնալ: Դուք կօրհնվեք ներշնչմամբ՝ Սուրբ Հոգու օգնությամբ, որպեսզի անեք բարիք: Փոփոխություններ կգան և դուք այլ կարգ կներմուծեք ձեր կյանք, որը կօրհնի ձեզ և ձեր ընտանիքին: Նեփիացիների մեջ Իր ծառայության ընթացքում Փրկիչը հարցրեց. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել»: Նա պատասխանեց. «Ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27): Մենք ունենք Նրա կարիքը, որպեսզի դառնանք Նրա նման, և Նա ցույց է տվել մեզ ուղին. «Հետևաբար, խնդրեք և դուք կստանաք. թակեք և կբացվի ձեզ. քանզի նա, ով խնդրում է, ստանում է.

և նրա համար, ով թակում է, կբացվի» (3 Նեփի 27.29):

Ես գիտեմ, որ մեր մասին Փրկչի աչքերով տեսիլք ձեռք բերելու և ըստ այդ տեսիլքի գործելու արդյունքում մեր կյանքը կօրհնվի անսպասելի ճանապարհներով: Իմ ծնողների տեսիլքի շնորհիվ ոչ միայն օրհնվեց իմ կյանքը կրթությամբ, այլ ես հայտնվեցի այնպիսի պայմաններում, որտեղ գտա և ընդունեցի ավետարանը: Ավելի կարևոր է, որ ես սովորեցի լավ և հավատքով լի ծնողների կարևորության մասին: Պարզ ասած, իմ կյանքը ընդմիշտ փոխվեց:

Ինչպես տեսիլքը օգնեց իմ ծնողներին ծոմ պահել և աղոթել իրենց զավակների բարօրության համար, և ինչպես առաջին Առաքյալների տեսիլքը օգնեց իրենց հետևել Փրկչին, այդ նույն տեսիլքը մատչելի է նաև ոգեշնչելու և օգնելու մեզ գործել: Եղբայրներ և քույրեր, մենք տեսիլքի և հավատքով ու քաջությամբ գործելու պատմություն ունեցող ժողովուրդ ենք: Տեսեք, թե որտեղից ենք մենք եկել և ինչ օրհնություններ ենք ստացել: Հավատացեք, որ Նա կարող է օրհնել ձեզ ձեր կյանքի տեսիլքով և գործելու քաջությամբ:

Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը Փրկչի և Նրա ցանկության մասին, որ մենք վերադառնանք Իր մոտ: Դա անելու համար մենք պետք է հավատք ունենանք գործելու՝ հետևելու Նրան և դառնալու Նրա նման: Մեր կյանքի տարբեր ժամանակներում Նա բարձրացնում է Իր ձեռքը և հրավիրում մեզ.

«Ձեր վերայ առեք իմ լուծը և ինձանից սովորեցեք. որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք:

Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթեոս ԺԱ.29–30):

Ճիշտ ինչպես Փրկիչը տեսավ մեծ ներուժ Իր առաջին աշակերտների մեջ, Նա նաև տեսնում է այն մեր մեջ: Եկեք մենք տեսնենք մեզ այնպես, ինչպես մեզ տեսնում է Փրկիչը: Ես աղոթում եմ, որ մենք ունենանք այդ տեսիլքը՝ գործելու հավատքով և քաջությամբ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Լարի Ե. Վիլսոն
Յոթանասունական

Միայն արդարության սկզբունքների հիման վրա

Իմաստուն ծնողները պատրաստում են իրենց երեխաներին ինքնուրույն ապրելուն: Նրանք աճելու հնարավորություններ են տալիս, երբ երեխաները ձեռք են բերում հոգևոր հասունություն՝ ճիշտ ձևով գործադրելու իրենց ազատ կամքը:

Ուր ամուսնությունից մոտ մեկ ամիս անց կնոջս հետ երկար ճամփորդություն էինք կատարում մեքենայով: Նա վարում էր, իսկ ես փորձում էի հանգստանալ: Ասացի *փորձում* էի, որովհետև այդ մայրուղու վրա դրված էին արագաչափեր, իսկ կինս մի փոքր սովորություն ուներ այդ օրերին արագ վարել: Ես ասացի. «Դու շատ արագ ես վարում, դանդաղեցրու»:

Նոր ամուսնացած կինս մտքում մտածեց. «Ես 10 տարի է մեքենա եմ վարում, և իմ վարորդական ուսուցչից բացի ոչ ոք ինձ չի ասել, ինչպես պետք է վարեմ»: Եվ նա պատասխանեց. «Ի՞նչ իրավունք ունես ինձ ասելու, թե ինչպես վարեմ»:

Ճիշտն ասած, նրա հարցն ինձ հանկարծակիի բերեց: Այնպես որ, որպես ամուսնացած տղամարդ փորձելով ստանձնել իմ նոր պարտականությունները, ես ասացի. «Չգիտեմ, որովհետև ես քո ամուսինն եմ և քահանայություն եմ կրում»:

Եղբայրներ, ուղղակի մի արագ խորհուրդ՝ եթե նման իրավիճակում հայտնվեք, դա ճիշտ պատասխանը չէ: Եվ ես ուրախ եմ ասելու, դա միակ դեպքն էր, որ ես այդպիսի սխալ գործեցի:

Վարդապետություն և Ուխտերը բացատրում են, որ տանը կամ այլ տեղում քահանայությունն օգտագործելու իրավունքն ուղղակիորեն կապված է մեր արդարակեցության հետ. «Երկնքի զորությունները չեն կարող կառավարվել, ոչ էլ գործածվել, բացի միայն արդարության սկզբունքների հիման վրա»:[1] Այն շարունակում է ասելով, որ մենք կորցնում ենք այդ զորությունը, երբ «իշխանություն, տիրապետություն կամ էլ հարկադրանք ենք գործադրում [մյուսների] հոգիների վրա, անիրավության *որևէ* աստիճանով»:[2]

Այս սուրբ գրությունն ասում է,

որ մենք պետք է առաջնորդվենք «արդարության սկզբունքներով»: Նման սկզբունքները վերաբերվում են բոլոր ղեկավարներին Եկեղեցում, ինչպես նաև բոլոր հայրերին և մայրերին իրենց տներում:[3] Մենք կորցնում ենք Տիրոջ Հոգին ունենալու իրավունքը *և* Աստծուց ստացած իշխանությունը, երբ անարդար իշխանություն ենք գործադրում մեկ ուրիշի հանդեպ:[4] Մենք կարող ենք մտածել, որ նման վերաբերմունքը «վերահսկվող» անձի բարիքի համար է: Սակայն մենք իրավացի չենք, երբ փորձում ենք հարկադրել մեկին արդարակյաց լինել, երբ նա *կարող* է և *պետք* է գործադրի իր բարոյական ազատ կամքը: Երբ մեկ ուրիշ անձնավորության համար անհրաժեշտ է անփոփոխ սահմաններ դնել, այդ սահմաններ դնելը պետք է արվի սիրող համբերատարությամբ և հավերժական սկզբունքներ ուսուցանելով:

Մենք պարզապես չենք կարող մյուսներին ստիպել ճիշտ գործել: Սուրբ գրությունները հստակեցնում են, որ դա Աստծո ուղին չէ: Հարկադրանքը զայրույթ է առաջացնում: Այն անվստահություն է հաղորդում և մարդիկ իրենց զգում են անընդունակ: Սովորելու հնարավորությունները չեզոքանում են, երբ վերահսկող անձինք զոռոզաբար համարում են, թե իրենք բոլոր ճիշտ պատասխաններն ունեն մյուսների համար: Սուրբ գրություններն ասում են, որ «գրեթե բոլոր մարդկանց բնությունն ու հակվածությունն է» անհիրավ իշխանություն գործադրել,[5] այնպես որ մենք պետք է իմանանք, որ դա թակարդ է, որի մեջ հեշտ է ընկնել: Կանայք նույնպես կարող են անհիրավ իշխանություն գործադրել, թեև սուրբ գրություններն այդ խնդիրը կապում են հիմնականում տղամարդկանց հետ:

Անհիրավ իշխանությունը հաճախ ուղեկցվում է մշտական քննադատությամբ և առանց գնահատանք կամ սեր արտահայտելու: Մյուս կողմը զգում է, որ երբեք չի գոհացնի նման ղեկավարին կամ ծնողին, և որ իրենք միշտ թերանում են: Իմաստուն ծնողը պետք է որոշի, թե երբ է երեխան պատրաստ սկսել իր կյանքի որոշակի ոլորտներում իր որոշումները կայացնել՝ ինքնուրույն գործադրելով իր ազատ կամքը: Բայց եթե ծնողներն են *միայն* որոշում կայացնողը և դա դիտում են որպես իրենց «իրավունք», նրանք խիստ սահմանափակում են իրենց երեխաների աճն ու զարգացումը:

Մեր երեխաները ժամանակավորապես են մեր տանն ապրում: Եթե սպասում ենք, մինչև նրանք հեռանան մեր տնից, և միայն այդ ժամանակ թողնենք, որ գործադրեն իրենց բարոյական ազատ կամքը, ուրեմն մենք շատ ենք սպասել: Նրանք միանգամից չեն զարգացնի իմաստուն որոշումներ կայացնելու ունակություն, եթե մեզ հետ ապրելու ընթացքում երբեք ազատ չեն եղել կարևոր որոշումներ կայացնելիս: Նման երեխաները հաճախ կամ ապստամբում են այդ հարկադրանքի դեմ կամ ընդունակ չեն ինքնուրույն որոշումներ կայացնելու:

Իմաստուն ծնողները պատրաստում են իրենց երեխաներին ինքնուրույն ապրելուն: Նրանք աճելու հնարավորություններ են տալիս, երբ երեխաները ձեռք են բերում հոգևոր հասունություն՝ ճիշտ ձևով գործադրելու իրենց ազատ կամքը: Դա նաև նշանակում է, որ երեխաները երբեմն սխալներ կկատարեն և դասեր կքաղեն այդ սխալներից:

Մեր ընտանիքը փորձառություն ունեցավ, որը մեզ սովորեցրեց ինչպես օգնել երեխաներին զարգացնել որոշումներ կայացնելու ունակությունը: Մեր դուստրը՝ Մերին, դպրոցում լավագույն ֆուտբոլ խաղացողն էր: Մի տարի նրան թիմը հասավ առաջնությանը, և ցավոք սրտի խաղը նշանակված էր կիրակի օրը: Լինելով դեռահաս Մերիին տարիներ շարունակ ուսուցանվել էր, որ Կիրակին ոչ թե զվարճանքի, այլ հանգստյան և հոգևոր զորացման օր է: Սակայն նա խաղին մասնակցելու ճնշում էր զգում իր մարզիչների ու թիմակիցների կողմից, և ինքն էլ չէր ցանկանում թողնել իր թիմին:

Նա հարցրեց մեզ, թե ինչ պետք է աներ: Կինս և ես կարող էինք հեշտորեն կայացնել այդ որոշումը նրա փոխարեն: Սակայն, աղոթքով

քննարկելուց հետո մենք որոշեցինք, որ այս դեպքում մեր դուստրը պատրաստ էր հոգևոր պատասխանատվություն կրել իր որոշման համար: Մենք նրա հետ միասին մի քանի սուրբ գրություններ ընթերցեցինք և խրախուսեցինք Մերիին աղոթել և մտածել այդ մասին:

Մի քանի օր անց նա հայտնեց Կիրակի օրվա խաղին մասնակցելու իր որոշման մասին: Ի՞նչ կարող էինք մենք անել: Քննարկումից և Հոգուց հաստատում ստանալուց հետո, մենք պահեցինք մեր խոստումը և թույլ տվեցինք նրան, որ կատարեր խաղալու իր որոշումը: Խաղից հետո, Մերին դանդաղ քայլերով մոտենալով իրեն սպասող մորը, ասաց. «Օ՜, մայրիկ, *սոսկալի* զգացում էր: Ես երբեք չէի ցանկանա կրկին նման զգացում ունենալ: Ես այլևս Կիրակի օրը չեմ խաղա»: Եվ այդպես էլ արեց:

Այժմ Մերին ինքնուրույն յուրացրել էր Կիրակին պահելու սկզբունքը: Եթե մենք նրան ստիպեինք չխաղալ, նրան կզրկեինք Հոգով սովորելու թանկ ու զորեղ փորձառությունից:

Ինչպես տեսնում եք, որպեսզի օգնենք երեխաներին ճիշտ գործադրել իրենց ազատ կամքը, պետք է ուսուցանենք նրանց աղոթել և ստանալ իրենց աղոթքների պատասխանները: Նաև պետք է ուսուցանել հնազանդվելու արժեքի և նպատակի, ինչպես նաև ավետարանի այլ հիմնական սկզբունքների մասին:[6]

Մեր երեխաներին մեծացնելիս մենք որոշեցինք, որ մեր ամենակարևոր նպատակը պետք է լինի՝ օգնել մեր երեխաներին իրենց կապը հաստատել երկնքի հետ: Մենք գիտեինք, որ ի վերջո նրանք պետք է կախված լինեին Տիրոջից, ոչ թե՝ մեզանից: Բրիգամ Յանգն ասել է. «Եթե ես տարբերակում ղնեի մարդկանց զավակներից պահանջվող բոլոր պարտականությունների մեջ, . . . առաջինը և ամենակարևորը ես համարում եմ Տիրոջը, մեր Աստծուն, փնտրելը, մինչև որ մենք կբացենք հաղորդակցման ուղին երկնքից երկիր՝ Աստծուց մինչև մեր հոգիները»:[7]

Մերին ստացել էր իր աղոթքների պատասխանները նախկինում այլ իրավիճակների համար, և մենք վստահեցինք, որ մեր դուստրն իր կյանքում զարգացնում էր երկնքի հետ հաղորդակցման այս ուղին: Ուստի, նա ինչ-որ դրական բան սովորեց իր փորձից և պատրաստվեց ավելի լավ որոշումներ կայացնել ապագայում: Առանց Հոգու հետ կապի, երեխաները, ինչպես նաև ծնողները, իրենց ազատ կամքը գործադրելու անվան տակ կարող են նպատակահարմար դարձնել տարատեսակ սխալ որոշումներ: Սուրբ գրության խոստումն է, որ «նրանք, ովքեր իմաստուն են . . . և վերցրել են Սուրբ Հոգին որպես իրենց ուղեկից . . . չեն խաբվել»:[8]

Անհիրավ իշխանության լրացուցիչ և ողբերգական կողմնակի հետևանքը կարող է լինել Աստծո սիրո հանդեպ վստահության կորուստը: Ես ճանաչել եմ մարդկանց, ովքեր հպատակվել են պահանջկոտ և վերահսկող ղեկավարներին կամ ծնողներին, և նրանց համար դժվար է եղել զգալ իրենց Երկնային Հոր սերը, որը կաջակցեր և կառաջնորդեր իրենց արդարակեցության ուղով:

Եթե ուզում ենք օգնել մեր ղեկավարության ներքո գտնվողներին հաստատել անչափ կարևոր կապը երկնքի հետ, մենք պետք է լինենք բարի ծնող կամ ղեկավար,

որի մասին ասվում է Վարդապետություն և Ուխտեր 121 բաժնում: Մենք պետք է գործենք «միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով»:[9] Նախագահ Հենրի Բ. Այրինգն ասել է. «Ամենակարևոր օգնությունը, որ կարող ենք տալ երիտասարդներին, . . . թույլ տալ, որ նրանք զգան մեր վստահությունը, որ նրանք գտնվում են Աստծո տուն տանող ուղու վրա, և որ նրանք կարող են դա հաղթահարել»:[10]

Քանի որ քննարկեցինք, թե ինչպիսի սկզբունքներով պետք է առաջնորդվենք Եկեղեցում և տանը, թույլ տվեք վերջում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի կենսագրությունից մի օրինակ բերել: Մոնսոնների դուստրը՝ Էնն Դիբը ասում է, որ մինչ օրս, երբ նա մտնում է իր հայրական տուն, հայրը այսպես է դիմավորում. «Օ՜, տես ով է եկել: Որքան ուրախ ենք, և որքան գեղեցիկ ես դու»: Նա շարունակում է ասելով. «Ծնողներս միշտ ինձ հաճոյախոսում են, կարևոր չէ, թե ինչպիսի տեսք ունեմ կամ ինչ եմ անում: . . . Երբ այցելում եմ ծնողներիս, ես գիտեմ, որ սիրված եմ, ինձ հաճոյախոսում են, ինձ ջերմորեն են ընդունում, ես տանն եմ»:[11]

Եղբայրներ և քույրեր, սա Տիրոջ ուղին է: Անգամ եթե անցյալում ձեզ վատ են վերաբերվել, ես գիտեմ, որ Տերը ցանկանում է, որ դուք գաք Նրա մոտ:[12] *Բոլորը* սիրված են: *Բոլորն* ընդունված են: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 121.36:
2. Վարդապետություն և Ուխտեր 121.37, շեշտադրումն ավելացված է:
3. Տես Neal A. Maxwell, “Put Off the Natural Man, and Come Off Conqueror,” *Tambuli,* Jan. 1991, 13–14:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.37:
5. Վարդապետություն և Ուխտեր 121.39:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 68.25–29:
7. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 44.
8. Վարդապետություն և Ուխտեր 45.57:
9. Վարդապետություն և Ուխտեր 121.41–42:
10. Հենրի Բ. Այրինգ, «Օգնեք նրանց դեպի տուն իրենց ճանապարհին», *Լիահոնա*, մայիս 2010, 25:
11. Տես Heidi S. Swinton, *To the Rescue: The Biography of Thomas S. Monson* (2010), 372:
12. Տես Մատթեոս ԺԱ.28:

Երեց Դեյվիդ Ֆ. Էվանս
Յոթանասունից

Արդյո՞ք դա արժեր

Բնական և նորմալ ընթացքով ավետարանը քարոզելու գործընթացը նրանց, ում մասին մենք մտահոգվում ենք և ում սիրում ենք, մեր կյանքում կլինի և աշխատանք և ուրախություն:

Այս համաժողովի և վերջին այլ հավաքների ժամանակ[1] մեզանից շատերը հարց են տալիս՝ Ի՞նչ կարող եմ ես անել օգնելու համար կառուցել Տիրոջ Եկեղեցին և տեսնելու իրական աճ այնտեղ, որտեղ ես ապրում եմ:

Այս և ցանկացած այլ կարևոր հարցում մեր ամենակարևոր աշխատանքը միշտ կատարվում է մեր սեփական տանը և ընտանիքում:[2] Մեր ընտանիքներում է, որ Եկեղեցին հիմնվում է և իրական աճը տեղի է ունենում:[3] Մենք պետք է ուսուցանենք մեր երեխաներին ավետարանի սկզբունքները և վարդապետությունները: Մենք պետք է օգնենք նրանց հավատք ունենալ Հիսուս Քրիստոսի հանդեպ և պատրաստենք նրանց մկրտությանը, երբ նրանք դառնան ութ տարեկան:[4] Մենք պետք է ինքներս հավատքով լինենք, որպեսզի նրանք կարողանան տեսնել Տիրոջ և Նրա Եկեղեցու հանդեպ սիրո մեր օրինակը: Սա օգնում է մեր երեխաներին ուրախություն զգալ պատվիրանները պահելու մեջ, երջանկություն ընտանիքներում և երախտագիտություն ուրիշներին ծառայելու մեջ: Մեր տներում մենք պետք է հետևենք Նեփիի տված ուղուն, որի մասին նա ասել է.

«Մենք աշխատում ենք ջանասիրաբար՝ . . . համոզելու մեր զավակներին . . . հավատալու Քրիստոսին և հաշտվելու Աստծո հետ . . .

. . . Մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին, և մենք գրում ենք մեր մարգարեությունների համաձայն, որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»:[5]

Մենք ջանասիրաբար աշխատում ենք, որպեսզի բերենք այս օրհնությունները մեր երեխաներին, նրանց հետ հաճախելով եկեղեցի, անցկացնելով ընտանեկան երեկո և միասին կարդալով սուրբ գրքերը: Մենք ամեն օր աղոթում ենք մեր ընտանիքով, ընդունում ենք կոչումները, այցելում ենք հիվանդներին և միայնակներին և անում շատ այլ բաներ, որոնք թույլ են տալիս մեր երեխաներին իմանալ, որ մենք սիրում ենք իրենց և մեր Երկնային Հորը, Նրա Որդուն և Նրանց Եկեղեցին:

Մենք խոսում և մարգարեանում ենք Քրիստոսի մասին, երբ ընտանեկան տնային երեկոյի դաս ենք մատուցում կամ նստում մեր երեխայի հետ և պատմում նրան նրա հանդեպ մեր սիրո և վերականգնված ավետարանի վերաբերյալ մեր վկայության մասին:

Մենք կարող ենք գրել Քրիստոսի մասին, նամակներ գրելով նրանց, ովքեր հեռու են տնից: Ծառայող միսիոներները, բանակում գտնվող որդիները և նրանք, ում մենք սիրում ենք, օրհնվում են մեր գրած նամակներով: Տնից ուղարկված նամակները արագ գրված էլեկտրոնային նամակներ չեն: Իրական նամակները շոշափելի են. դրանք կարելի է բռել, խորհել դրանց մասին և փայփայել:

Մենք օգնում ենք մեր երեխաներին վստահել Փրկչի Քավությանը և իմանալ սիրող Երկնային Հոր ներման մասին, դրսևորելով սեր և ներողամտություն որպես ծնողներ: Մեր սերը և ներողամտությունը ոչ միայն ավելի են մոտեցնում երեխաներին մեզ, այլ նաև կառուցում հավատք, քանի որ նրանք իմանում են, որ իրենց Երկնային Հայրը սիրում է իրենց և որ Նա կների իրենց, եթե նրանք ապաշխարեն և ձգտեն անել և լինել ավելի լավը: Նրանք վստահում են այս ճշմարտությանը, որովհետև նույնը զգացել են իրենց երկրային ծնողների կողմից:

Ի լրումն այն աշխատանքի, որը մենք կանենք մեր ընտանիքում, Նեփին ուսուցանել է, որ «մենք աշխատում ենք ջանասիրաբար՝ . . . համոզելու մեր եղբայրներին . . . հավատալու Քրիստոսին և հաշտվելու Աստծո հետ»:[6] Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, յուրաքանչյուրս ունի ավետարանով կիսվելու օրհնություն և պատասխանատվություն: Կան մարդիկ, ովքեր իրենց կյանքում ավետարանի կարիքն ունեն, բաց դեռ Եկեղեցու անդամ չեն: Ոմանք մի ժամանակ մեր մեջ էին, սակայն նորից պետք է զգան այն ուրախությունը, որը զգացել են, երբ ընդունել են ավետարանը իրենց կյանքի ավելի վաղ շրջանում: Տերը սիրում է և նրան, ով երբեք չի ունեցել ավետարանը, և նրան, ով վերադառնում է Իր մոտ:[7] Նրա և մեր

մոտ, կարևոր չէ: Սա մեկ աշխատանք է: Անկախ իրենց վիճակից, դա հոգիների արժեքն է, որ կարևոր է մեր Երկնային Հոր, Նրա Որդու և մեզ համար:[8] Մեր Երկնային Հոր և Նրա Որդու աշխատանքն է «բերել անմահություն և հավերժական կյանք»[9] Նրա բոլոր զավակներին, անկախ նրանց ներկա պայմաններից: Մեր օրհնությունն է օգնել այդ մեծ գործում:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը բացատրել է, թե ինչպես մենք կարող են օգնել. «Մեր միսիոներական փորձառությունները պետք է միշտ կենդանի լինեն: Բավական չէ նստել և խորհել նախկին փորձառությունների մասին: Իրականացման համար դուք պետք է շարունակեք բնական և նորմալ ընթացքով քարոզել ավետարանը»:[10]

Բնական և նորմալ ընթացքով ավետարանը քարոզելու գործընթացը նրանց, ում մասին մենք մտահոգվում ենք և ում սիրում ենք, մեր կյանքում կլինի և աշխատանք և ուրախություն: Թույլ տվեք պատմել ձեզ երկու նման փորձառության մասին:

Դեյվ Օրչարդը մեծացել է Սոլթ Լեյք Սիթիում, որտեղ նրա ընկերների մեծ մասը Եկեղեցու անդամներ են: Նրանք մեծ ազդեցություն ունեին իր վրա: Բացի դա, իր հարևան Եկեղեցու ղեկավարները շարունակ հրավիրում էին նրան միջոցառումներին: Նույնը արեցին և նրա ընկերները: Թեև նա այդ ժամանակ չէր միացել Եկեղեցուն, հասունացման այդ տարիքում նա օրհնված էր ՎՕՍ լավ ընկերների և Եկեղեցու միջոցառումների ազդեցությամբ: Քոլեջ ընդունվելուց հետո նա տեղափոխվեց տնից, իսկ նրա ընկերներից շատերը մեկնեցին միսիա: Նրա կյանքում պակասում էր նրանց ազդեցությունը:

Դեյվի ավագ դպրոցի ընկերներից մեկը դեռ տանն էր: Այդ ընկերն ամեն շաբաթ հանդիպում էր իր եպիսկոպոսի հետ, աշխատելով կարգի բերել իր կյանքը և ի վիճակի լինել ծառայել որպես միսիոներ: Նա և Դեյվը վարձեցին մի բնակարան և կարծես բնական և նորմալ էր, որ նրանք խոսում էին այն մասին,



թե ինչու նա չէր ծառայում որպես միսիոներ և հաճախ հանդիպում եպիսկոպոսի հետ: Նրա ընկերը արտահայտեց իր երախտագիտությունը և հարգանքը իր եպիսկոպոսի հանդեպ և ապաշխարելու ու ծառայելու հնարավորության համար: Ապա նա հարցրեց Դեյվին, թե արդյոք չէր ցանկանա գալ իր հաջորդ առանձնազրույցին: Ինչպիսի հրավեր: Սակայն նրանց ընկերության և իրավիճակի պայմաններում, դա և բնական էր, և նորմալ:

Դեյվը համաձայնվեց և շուտով ինքը հանդիպեց եպիսկոպոսի հետ: Դրա արդյունքում Դեյվը որոշում կայացրեց հանդիպել միսիոներների հետ: Նա վկայություն ստացավ այն մասին, որ ավետարանը ճշմարիտ է, և նրա մկրտության ամսաթիվը որոշվեց: Դեյվին մկրտեց նրա եպիսկոպոսը և մի տարի անց Դեյվ Օրչարդը և Քեթրին Էվանսը ամուսնացան տաճարում: Նրանք ունեն հինք սքանչելի զավակ: Քեթրինը իմ փոքր քույրն է: Ես ընդմիշտ շնորհակալ եմ այդ լավ ընկերոջը, որը, լավ եպիսկոպոսի հետ միասին, բերեցին Դեյվին Եկեղեցի:

Խոսելով այդ դարձի մասին և բերելով իր վկայությունը, Դեյվը հարցնում է. «Արդյո՞ք դա արժեր: Արդյո՞ք ընկերների, երիտասարդների ղեկավարների և իմ եպիսկոպոսի տարիների ջանքերը արժեին, որ միայն մեկ տղա մկրտվեր»:Քեթրինին և իրենց հինգ զավակներին ցույց տալով, նա ասաց. «Դե, առնվազն կնոջս և մեր հինգ երեխաների համար պատասխանը դրական է»:

Երբ քարոզվում է ավետարանը, երբեք խոսք չի գնում «միայն մեկ տղայի» մասին: Երբ դարձ է տեղի է ունենում կամ որևէ մեկը վերադառնում է Տիրոջ մոտ, ընտանիք է փրկվում: Մեծանալով, Դեյվի ու Քեթրինի բոլոր երեխաները ընդունեցին ավետարանը: Մեկ դուստրը և երկու որդիները ծառայեցին որպես միսիոներներ և մյուսը վերջերս կանչվել է ծառայելու Էլփին գերմանախոս միսիայում: Երկու ավագ երեխաները ամուսնացել են տաճարում, իսկ կրտսերը այժմ ավագ դպրոցում է՝ ամեն առումով հավատքով լի: Արդյո՞ք դա արժեր: Այո, դա արժեր:

Քույր Էյլին Վեյթը մասնակցում էր ցցի նույն համաժողովին, որի ժամանակ Դեյվ Օրչարդը պատմում էր իր դարձի գալու մասին: Ողջ համաժողովի ընթացքում նա մտածում էր միայն իր ընտանիքի մասին, մասնավորապես իր քրոջ՝ Միշելի մասին, որը երկար ժամանակ արդեն հեռացել էր Եկեղեցուց: Միշելը ամուսնալուծված էր և փորձում էր մեծացնել չորս երեխաների: Էյլինը սկզբում զգաց, որ պետք է ուղարկեր նրան Երեց Մ. Ռասսել Բալլարդի *Երջանկության մեր որոնումը* գիրքը՝ իր վկայության հետ միասին, ինչը և արեց: Հաջորդ շաբաթ Էյլինի ընկերուհիներից մեկը նրան ասաց, որ նույնպես զգացել է, որ պետք է կապ հաստատեր Միշելի հետ: Այդ ընկերուհին նույնպես մի գրություն ուղարկեց Միշելին, կիսվելով իր վկայությամբ և արտահայտելով իր սերը: Արդյո՞ք հետաքրքիր չէ, թե որքան հաճախ է Հոգին աշխատում մի քանիսի հետ՝ կարիքի մեջ գտնվող մեկ հոգուն օգնելու համար:

Ժամանակ անցավ: Միշելը զանգահարեց Էյլինին և

շնորհակալություն հայտնեց նրան գրքի համար: Նա ասաց, որ սկսել էր զգալ իր կյանքում հոգևոր պակասը: Եյլինը նրան ասաց, որ գիտեր, որ խաղաղությունը, որը նա փնտրում էր, կարելի է գտնել ավետարանում: Նա ասաց, որ սիրում էր նրան և ցանկանում էր, որ նա երջանիկ լիներ: Միշելը սկսեց փոփոխություններ կատարել իր կյանքում: Շուտով նա հանդիպեց մի հիանալի տղամարդու, որն ակտիվ էր Եկեղեցում: Նրանք ամուսնացան և մի տարի անց կնքվեցին Յուտայի Օգդենի Տաճարում: Վերջերս նրա 24-ամյա որդին մկրտվեց:

Միշելի ընտանիքի մյուս անդամներին և բոլորին, ովքեր դեռ չգիտեն, որ այս Եկեղեցին ճշմարիտ է, ես հրավիրում եմ աղոթքով մտածել, թե արդյոք Եկեղեցին ճշմարիտ է: Թույլ տվեք ձեր ընտանիքին և ընկերներին և միսիոներներին օգնել: Երբ դուք իմանաք, որ այն ճշմարիտ է, եկեք և միացեք մեզ, կատարելով այդ քայլը ձեր կյանքում:

Այս պատմության վերջը դեռ չի գրվել, սակայն օրհնություններ տրվեցին այս հրաշալի կնոջը և նրա ընտանիքին, որովհետև նրանք, ովքեր սիրում էին նրան, գործեցին, հետևելով հուշումներին, և բնական ու նորմալ ճանապարհով կիսվեցին իրենց վկայությամբ և հրավիրեցին նրանց վերադառնալ ետ:

Ես շատ եմ մտածել այս երկու պատմությունների մասին: Մի պատանի, որն աշխատում էր կարգի բերել իր սեփական կյանքը, օգնեց մեկ այլ պատանուն, ով փնտրում էր ճշմարտությունը: Մի կին կիսվեց իր վկայությամբ և հավատքով իր քրոջ հետ, որը 20 տարի Եկեղեցուց հեռացել էր: Եթե մենք աղոթենք և հարցնենք Երկնային Հորը, թե ում կարող ենք օգնել, և եթե գործենք ըստ այն հուշումների, որոնք Նա տալիս է մեզ, Նա կպատասխանի մեր աղոթքներին և մենք կդառնանք գործիքներ Նրա ձեռքերում, կատարելով Նրա գործը: Հոգու հուշումներին սիրով հետևելը խթանիչ ուժ է հանդիսանում:[11]

Լսելով բնական և նորմալ ճանապարհով ավետարանով կիսվելու



այս փորձառությունների մասին նրանց հետ, ում մասին մենք հոգ եք տանում, շատերդ կարող եք տեսնել, որ ունեցել եք նույն փորձառությունը, որն ունեցավ Էյլին Վեյթը: Դուք մտածել եք մեկի մասին, ում պետք է օգնեիք և հրավիրեիք նրան վերադառնալ ետ, կամ կիսվեիք նրա հետ Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին ձեր զգացմունքներով: Իմ հրավերն է ձեզ՝ գործել ըստ այդ հուշումի, առանց հապաղելու: Խոսեք ձեր ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ: Արեք դա բնական և նորմալ ճանապարհով: Թույլ տվեք, որ նրանք իմանան իրենց հանդեպ ձեր և Տիրոջ սիրո մասին: Միսիոներները կարող են օգնել: Իմ խորհուրդը նույնն է, ինչ Նախագահ Մոնսոնն է տվել այս ամբիոնից բազմաթիվ անգամ. «Երբեք մի հետաձգեք հուշումը»:[12] Գործելով ըստ հուշումի և անելով դա սիրով, դուք կտեսնեք, ինչպես է մեր Երկնային Հայրն օգտագործում ձեր գործելու ցանկությունը և հրաշք գործում ձեր և այն անձի կյանքում, ում մասին դուք հոգ եք տանում:[13]

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք կարող ենք կառուցել Նրա Եկեղեցին և տեսնել իրական աճ, աշխատելով և բերելով ավետարանի օրհնությունները մեր ընտանիք և նրանց, ում սիրում ենք: Դա մեր Երկնային Հոր և Նրա Որդու աշխատանքն է: Ես գիտեմ, որ Նրանք ապրում են և որ Նրանք պատասխանում են աղոթքներին: Գործելով այդ հուշումների համաձայն, հավատք ունենալով հրաշք գործելու Նրանց ունակությանը, մենք կտեսնենք, ինչպես հրաշքներ տեղի կունենան և կյանքեր կփոխվեն: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Worldwide Leadership Training Meeting, Feb. 11, 2012, LDS.org:
2. Տես *Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* (2000), 134:
3. Տես Boyd K. Packer, "Priesthood Power in the Home," Worldwide Leadership Training Meeting, Feb. 11, 2012, LDS.org:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 68.25–28:
5. 2 Նեփի 25.23, 26:
6. 2 Նեփի 25.23:
7. Տես Ղուկաս 15.4–7:
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 18.10:
9. Մովսես 1.39:
10. "Status Report on Missionary Work: A Conversation with Elder Thomas S. Monson, Chairman of the Missionary Committee of the Council of the Twelve," *Ensign,* Oct. 1977, 14.
11. Տես Thomas S. Monson, "Anxiously Engaged," *Liahona*, Nov. 2004, 56–59; "To the Rescue," *Liahona,* July 2001, 57–60; "The Doorway of Love," *Liahona*, Oct. 1996, 2–7:
12. Տես Ann M. Dibb, "My Father Is a Prophet" (Brigham Young University–Idaho devotional, Feb. 19, 2008), byui.edu/devotionalsandspeeches; Thomas S. Monson, "Stand in Your Appointed Place," *Liahona*, May 2003, 54–57; "Peace, Be Still," *Liahona*, Nov. 2002, 53–56; "Priesthood Power," *Liahona,* Jan. 2000, 58–61; "The Spirit Giveth Life," *Ensign,* May 1985, 68–70:
13. Բացի Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնից, մյուս մարգարեները նույնպես ուսուցանել են այս նույն սկզբունքը: Օրինակ, Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը ուսուցանել է Հոգու հուշումների հետևելու կարևորության մասին, ասելով, որ Աստված նկատում է մեզ և հսկում: Սակայն սովորաբար մեկ այլ անձի միջոցով է, որ Նա բավարարում է մեր կարիքները: Հետևաբար, կարևոր է, որ մենք ծառայենք միմյանց արքայությունում (տես *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 82):

Երեց Փոլ Բ. Փայփեր
Յոթանասունից

Սուրբ պահել

Սուրբ բաներին պետք է ավելի հոգաւորությամբ վերաբերվել, ավելի հարգալից լինել և ընդունել ավելի խորը ակնածանքով:

Քրիստոսից մոտ 1500 տարի առաջ մի հովիվ տեսավ մի այրվող թուփ Քորեբ սարի լանջին: Այդ աստվածային հանդիպումով սկսվեց Մովսեսի վերափոխումը հովվից մարգարեի և նրա աշխատանքը ոչխարներին ժողովելուց Իսրայելի հավաքմանը: Հազար երեք հարյուր տարի անց թագավորական արքունիքի պատվավոր երիտասարդ քահանան հմայվել էր հրապարակավ մեղադրվող մարգարեի վկայությամբ: Այդ հանդիպումով սկսվեց Ալմայի զարգացումը քաղաքացիական ծառայից Աստծո ծառայի: Մոտ 2000 տարի անց 14 տարեկան տղան մտավ անտառ՝ պատասխան փնտրելով անկեղծ հարցին: Ջոզեֆ Սմիթի հանդիպումը պուրակում դրեց նրան մարգարե դառնալու և վերականգնման ճանապարհին:

Մովսեսի, Ալմայի և Ջոզեֆ Սմիթի կյանքը ամբողջովին փոխվեց աստվածայինին հանդիպելուց հետո: Այս փորձառությունները ամրացրեցին նրանց, որպեսզի հավատարիմ մնան Տիրոջը և Նրա աշխատանքին իրենց կյանքի ընթացքում՝ անկախ մեծ ընդդիմությունից և հետագա դժվար փորձություններից:

Աստվածայնության հետ մեր փորձառությունները կարող են այդքան անմիջական կամ ցայտուն չլինեն, և ոչ էլ մեր դժվարությունները այդքան վախեցնող: Այնուամենայնիվ, ինչպես մարգարեների դեպքում, հավատարմորեն տոկալու մեր ուժը կախված է ճանաչելուց, հիշելուց և սուրբ պահելուց այն, ինչը մենք ստանում ենք վերևից:

Այսօր իշխանությունը, բանալիները և արարողությունները վերականգնվել են երկրի վրա: Կան նաև սուրբ գրություններ և հատուկ վկաներ: Նրանք, ովքեր փնտրում են Աստծուն, կարող են մկրտվել մեղքերի թողության համար և հաստատվեն «ձեռնադրվելով կրակով և Սուրբ Հոգով մկրտության համար» (ՎԵՈՒ 20.41): Այս վերականգնված թանկագին պարգևներով մեր աստվածային հանդիպումները հիմնականում կառնչվեն Աստվածգալխի երրորդ անդամի՝ Սուրբ Հոգու հետ:

Շատ մեղմ ձայնով Հոգին
խոսում է ինձ հետ,
Որ ինձ առաջնորդի:
(“The Still Small Voice,” *Children’s Songbook,* 106)

Թող Հոգին առաջնորդի,
Սովորեցնի, որն է ճիշտ:
Վկայի Որդու մասին,
Լուսավորի երկնքով:
(“Let the Holy Spirit Guide,” *Hymns,* no. 143)

Երբ մենք պատասխաններ ենք փնտրում Աստծուց, մենք զգում ենք հանդարտ մեղմ ձայն, որ շշնջում է մեր հոգիներին: Այդ զգացմունքները, այդ տպավորությունները շատ բնական ու շատ նուրբ են, որ մենք կարող է չնկատենք դրանք կամ վերագրենք դրանք բանականությանը կամ ներքին զգացողությանը: Այս անհատական ուղերձները վկայում են Աստծո սիրո և մտահոգության մասին Իր յուրաքանչյուր զավակի հանդեպ և նրանց անձնական մահկանացու միսիայի մասին: Հոգուց եկող տպավորությունների շուրջ ամեն օր խորհելը և դրանք գրառելը ծառայում է երկու նպատակի՝ օգնել մեզ (1) տեսնել մեր անձնական հանդիպումները աստվածայինի հետ և (2) պահպանել դրանք մեր և մեր սերունդների համար: Դրանք ձայնագրելը նույնպես Աստծո հանդեպ մեր երախտագիտության պաշտոնական արտահայտման ձև է, քանի որ «ոչնչով մարդ չի վիրավորում Աստծուն կամ ոչ ոքի հանդեպ նրա ցասումը չի բռնկվում, բացի նրանցից, ովքեր չեն խոստովանում նրա ձեռքը բոլոր բաներում» (ՎԵՈՒ 59.21):

Հոգու կողմից ստացված բաների վերաբերյալ Տերը ասում է. «Հիշեք, որ այն, ինչ գալիս է վերևից, սրբազան է» (ՎԵՈՒ 63.64): Նրա ասածը ավելին է, քան հիշեցում. այն նաև հիմնավորում և բացատրություն է: Երկնքից ստացված լույսն ու գիտելիքը սուրբ են: Դրանք սուրբ են, քանի որ երկինքն է դրանց աղբյուրը:

Սուրբ նշանակում է ակնածանքի և հարգանքի արժանի: Ինչ-որ բան սուրբ անվանելով Տերը նախազգուշացնում է, որ այն ավելի բարձր արժեք և կարևորություն ունի, քան մնացած բաները: Սուրբ բաների հետ պետք է ավելի զգույշ վերաբերվել, ավելի հարգալից լինել և ավելի խորը ակնածանք ունենալ դրանց հանդեպ: Երկնային արժեքների

ստորակարգման մեջ սուրբը բարձր տեղ է գրավում:

Այն, ինչը սուրբ է Աստծո համար, սուրբ է դառնում մեզ համար միայն ազատ ընտրության կիրառման միջոցով. յուրաքանչյուր ոք պետք է ընտրի ընդունել և սուրբ պահել այն, ինչն Աստված սուրբ է որակել: Նա լույս և գիտելիք է ուղարկում երկնքից: Նա հրավիրում է մեզ ընդունել և վերաբերվել դրան որպես սրբության:

Սակայն «պետք է, որ հակադրություն լինի բոլոր բաներում» (2 Նեփի 2.11): Սուրբ բաներին հակադրվում են ոչ կրոնական բաները, բաներ, որոնք ժամանակավոր կամ աշխարհիկ են: Աշխարհիկը մշտապես մրցում է սուրբ բաների հետ մեր ուշադրության և առաջնահերթության համար: Աշխարհիկ գիտելիքները կարևոր են մեր ամենօրյա ապրելակերպի համար: Տերը հրահանգել է մեզ փնտրել ուսում և իմաստություն, ուսումնասիրել և սովորել բաներ լավագույն գրքերից և ծանոթանալ լեզուների, բարբառների և ժողովուրդների հետ (տես ՎևՈւ 88.118; 90.15): Ուստի, սուրբ բաները աշխարհիկ բաներից վեր դասելու ընտրությունը առաջնահերթության հետ կապված ընտրություն է, ոչ թե մենաշնորհի. «ուսյալ լինելը լավ է, *եթե* [մենք] ականջ ենք դնում Աստծո խորհուրդներին» (2 Նեփի 9.29, ընդգծումներն ավելացված են):

Յուրաքանչյուր մարդու սրտում սուրբ և աշխարհիկ բաների առաջնահերթության համար կռիվը կարելի է ներկայացնել վառվող թփի մոտ Մովսեսի ունեցած փորձառության միջոցով: Այնտեղ Մովսեսը Եհովայից ստացավ Իսրայելի ժողովրդին գերությունից ազատելու իր սուրբ կոչումը: Այնուամենայնիվ, սկզբում իր աշխարհիկ իմացությունը Եգիպտոսի և փարավոնի զորության վերաբերյալ պատճառ հանդիսացան, որ նա կասկածի: Ի վերջո, Մովսեսը հավատք ցուցաբերեց Տիրոջ խոսքի հանդեպ, ճնշելով իր աշխարհիկ գիտելիքները և վստահելով սուրբ բաներին: Այդ վստահությունը զորություն շնորհեց նրան ժամանակավոր դժվարությունները հաղթահարելու և Իսրայելին Եգիպտոսից հանելու համար:

Նոյի բանակից փախչելուց հետո Ալման կարող էր կասկածել հոգու կողմից տրված վկայությանը, որը ստացել էր Աբինադիին լսելիս, որի արդյունքում գերության կընկներ Ամուղոնի ձեռքը: Սակայն, նա վստահեց սուրբ բաներին և նրան զորություն տրվեց տոկալու և հաղթահարելու իր ժամանակավոր փորձությունները:

Ջոզեֆ Սմիթը Մորմոնի Գիրքը թարգմանելու վաղ շրջանում հանդիպեց նմանատիպ երկընտրանքի: Նա գիտեր թիթեղների և թարգմանչական աշխատանքի սուրբ էության մասին: Սակայն Մարտին Հարրիսը համոզեց նրան առաջնահերթությունը տալ ընկերության ու ֆինանսական օգնության աշխարհիկ խնդիրներին, ի հակադրություն սուրբ հրահանգների: Դրա արդյունքում թարգմանության ձեռագրերը կորան: Տերը նախատեց Ջոզեֆին «այն, ինչը սրբազան էր ամբարշտությանը» (ՎևՈւ 10.9) հանձնելու համար և նրան ժամանակավորապես զրկեց թիթեղներից և թարգմանելու պարգևից: Երբ Ջոզեֆի առաջնահերթությունները պատշաճ կերպով վերականգնվեցին, սուրբ բաները վերադարձվեցին և աշխատանքը շարունակվեց:

Մորմոնի Գիրքը տալիս է սուրբ բաներին առաջնահերթություն տալու այլ օրինակներ: Այնտեղ խոսվում է հավատացյալների մասին, ում հավատքը առաջնորդեց նրանց դեպի կյանքի ծառը, դրա սուրբ պտուղը՝ Աստծո սերը, ճաշակելու համար: Սակայն մեծ ու ընդարձակ շենքի մարդկանց կողմից ծաղրվելու պատճառով հավատացյալները իրենց ուշադրությունը շեղեցին սուրբ բաներից դեպի աշխարհիկը: (Տես 1 Նեփի 8.11, 24–28:) Հետագայում նեփիացիները ընտրեցին հպարտությունը և ուրացան մարգարեության և հայտնության հոգին, «այն, ինչ սրբազան էր ծաղր սարքելով» (Հելաման 4.12): Նույնիսկ Տիրոջ ծննդյան հետ կապված նշանների և հրաշքների ականատեսներ ընտրեցին մերժել երկնքի սուրբ ապացույցները ի օգուտ աշխարհիկ բացատրությունների (տես 3 Նեփի 2.1–3):

Այսօր կռիվը շարունակվում է: Աշխարհիկ ձայները բարձրանում են ու սաստկանում: Դրանք ավելի ու ավելի շատ են մղում հավատացյալներին թողնել իրենց համոզմունքները, որոնք աշխարհը համարում է անմիտ ու անխոհեմ: Որովհետև «հայելու մեջ օրինակով

ենք տեսնում» (Ա Կորնթացիս ԺԳ.12) և «չգիտենք բոլոր բաների իմաստը» (1 Նեփի 11.17), ժամանակ առ ժամանակ մենք կարող ենք խոցելի լինել և ավելի մեծ հոգևոր հավաստիացումների կարիք ունենալ: Տերն ասաց Օլիվեր Քաուդերիին.

«Եթե դու լրացուցիչ վկայություն ես փափագում, ուղղիր միտքդ դեպի այն գիշերը, երբ դու ինձ էիր կանչում քո սրտում, որպեսզի իմանայիր այս բաների ճշմարտության մասին:

Խաղաղություն չխոսեցի՞ ես քո մտքին այդ հարցի վերաբերյալ: Ավելի մեծ ի՞նչ վկայություն կարող ես դու ունենալ, քան Աստծուց» (ՎևՈՒ 6.22–23):

Տերը հիշեցրեց Օլիվերին և մեզ՝ ապավինել արդեն իսկ ստացված անձնական սուրբ վկայություններին, երբ մեր հավատքը փորձվում է: Ինչպես Մովսեսի, Ալմայի և Ջոզեֆի դեպքերում անցյալում, այս աստվածային հանդիպումները ծառայում են որպես հոգևոր խարիսխներ մեզ ապահով պահելու և փորձության պահին ճիշտ ուղղու վրա պահելու համար:

Սուրբ բաներից չի կարելի ընտրողաբար հրաժարվել: Նրանք, ովքեր կընտրեն թողնել նույնիսկ մեկ սուրբ բան, նրանց միտքը կմթագնի (տես ՎևՈՒ 84.54), և եթե նրանք չապաշխարեն, նրանցից պիտի վերցվի լույսը, որը նրանք ունեն (տես ՎևՈՒ 1.33): Սուրբ բաներից հեռանալով նրանք կգտնեն իրենց բարոյապես խորասուզված աշխարհիկ ծովում: Ի հակադրություն սրա, նրանք, ովքեր սուրբ բաները սուրբ են պահում, խոստումներ են ստանում. «Այն, ինչ Աստծուց է՝ լույս է. և նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս. և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում» (ՎևՈՒ 50.24):

Թող Տերը օրհնի մեզ, որ միշտ ճանաչենք, հիշենք և սուրբ պահենք բաները, որոնք մենք վերևից ենք ստացել: Ես վկայում եմ, որ եթե մենք այդպես անենք, մենք զորություն կունենանք դիմակայելու փորձություններին և հաղթահարելու մեր օրերի դժվարությունները: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորում

Ի՞նչ է իմ մասին մտածում Քրիստոսը

Եթե Նրան սիրեք, վստահեք, հավատաք և հետևեք, դուք կզգաք Նրա սերն ու հավանությունը:

Բրազիլական մի առաջատար ամսագրի լրագրող լուրերի գլխավոր հոդվածի համար պատրաստվելիս ուսումնասիրել էր Եկեղեցին:[1] Նա քննել էր մեր վարդապետությունը, այցելել էր միսիոներների պատրաստման և մարդասիրական օգնության կենտրոններ, զրուցել էր Եկեղեցու հանդեպ և լավ և ոչ այնքան լավ տրամադրված մարդկանց հետ: Ինձ հետ հարցազրույցի ժամանակ այդ լրագրողն անկեղծորեն զարմացած էր թվում, երբ հարցրեց. «Ինչպե՞ս կարող է ինչ-որ մեկը ձեզ Քրիստոնյա չհամարել»: Գիտեմ, նա ի նկատի ուներ Եկեղեցին, սակայն ներքուստ այդ հարցը ուղղեցի ինձ և ինքս ինձ հարցրեցի. «Արդյո՞ք իմ կյանքն արտացոլում է Քրիստոսի հանդեպ տածած իմ սերն ու նվիրվածությունը»:

Հիսուսը հարցրեց Փարիսեցիներին. «Ի՞նչ եք մտածում Քրիստոսի համար»:[2] Վերջին դատաստանի ժամանակ, մեր անձնական նվիրվածությունը մեր ընկերները կամ թշնամիները չեն դատելու: Այլ, ինչպես Պողոսն է ասել. «Ամենքս Քրիստոսի ատեանի առաջին պիտի կանգնենք»:[3] Այդ օրը յուրաքանչյուրիս համար կարևոր հարցն է լինելու. «Ի՞նչ է իմ մասին մտածում Քրիստոսը»:

Չնայած ողջ մարդկության հանդեպ ունեցած Իր սիրո, Հիսուսն իր շուրջը գտնվողներից ոմանց հանդիմանելով անվանում էր կեղծավորներ,[4] հիմարներ,[5] և անօրենություն գործողներ:[6] Ոմանց էլ Նա գովեստով անվանում էր՝ արքայության որդիք[7] և աշխարհի լույս:[8] Նա կշտամբանքով ոմանց անվանում էր կույրեր[9] և անպտուղ,[10] սակայն գովում էր նրանց, որ սրտով մաքուր էին[11] և սոված ու ծարավ՝ արդարության:[12] Նա ափսոսում էր, որ ոմանք անհավատ[13] էին և այս աշխարհից[14] էին, իսկ մյուսներին հարգալից կոչում էր ընտրյալներ,[15] աշակերտներ,[16] բարեկամներ:[17] Եվ ուրեմն մեզանից յուրաքանչյուրը պետք է հարցնի՝ «Ի՞նչ է իմ մասին մտածում Քրիստոսը»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը մեր օրերը նկարագրել է որպես «հոգևորից հեռանալու ժամանակներ . . . երբ փոփոխության հողմերը պտտվում են մեր շուրջը և հասարակության բարոյական հիմքերը շարունակում են քայքայվել մեր աչքի առաջ»:[18] Սա Քրիստոսի և

Նրա ուսմունքների հանդեպ աճող անհավատության և անարգանքի ժամանակներ են:

Նման անհանգիստ միջավայրում մենք ցնծում ենք՝ լինելով Հիսուս Քրիստոսի աշակերտները: Մենք տեսնում ենք Տիրոջ ձեռքը մեր շուրջն ամենուր: Մեր վերջնանպատակը սքանչելի կերպով դրված է մեր առջև: «Սա է հավիտենական կյանքը,- աղոթում էր Հիսուսը,- որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. և նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին»:[19] Նման ճակատագրական օրերին աշակերտ լինելը պատվավոր նշան կլինի հավերժություններում:

Այս համաժողովին հնչած ուղերձները նշաձողեր են Տիրոջից՝ որպես աշակերտ՝ մեր ճանապարհին: Այս վերջին երկու օրերին մենք լսեցինք դրանք, աղոթեցինք հոգևոր ուղղորդության համար, և եթե գալիք օրերին էլ ուսումնասիրենք այդ ուղերձները և աղոթենք դրանց շուրջ, Տերը կօրհնի մեզ անհատական առաջնորդությամբ՝ Սուրբ Հոգու պարգևի շնորհիվ: Այդ զգացողությունները մեզ էլ ավելի կմոտեցնեն Աստծուն, եթե ապաշխարենք, հնազանդվենք, հավատանք և վստահենք: Փրկիչը պատասխանում է մեր հավատքի գործերին: «Եթե մեկն ինձ սիրում է, իմ խոսքը կպահե և իմ հայրը կսիրե նորան. և նորա մոտը կգանք և բնակություն կանենք նորա մոտ»:[20]

Հիսուսի «Իմ ետևից արի»[21] կանչը միայն նրանց համար չէ, ովքեր պատրաստվել են մրցելու հոգևոր Օլիմպիադաներում: Իրականում, աշակերտ լինելն ամենևին էլ մրցություն չէ, այլ հրավեր՝ ուղղված բոլորին: Աշակերտ լինելու մեր ճանապարհը ոչ կարճ մրցավազք է, ոչ էլ մեծ մարաթոն: Իրականում դա դեպի սելեստիալ աշխարհ տանող կյանքի տևողությամբ ճամփորդություն է:

Նրա հրավերն ամենօրյա պարտականության կանչ է: Հիսուսն ասել է. «Եթե ինձ սիրում եք, իմ պատուիրանքները պահեցեք»:[22] «Եթե մեկը կամենում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա և ամեն օր իր խաչն առնե և իմ ետևից գա»:[23] Գուցե չկարողանանք լավագույնս դրսևորել մեզ ամեն օր, սակայն եթե փորձենք, Հիսուսի կանչը լի է քաջալերանքով և հույսով. «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ»:[24]

Աշակերտ լինելու ճանապարհի որ հաստվածում էլ որ այսօր գտնվեք, դուք դեպի հավերժական կյանք տանող ճիշտ ուղու վրա եք: Միասին մենք կարող ենք բարձրացնել և ամրացնել միմյանց գալիք մեծ և կարևոր օրերին: Ինչպիսի դժվարություններ որ ծառանան մեր առջև, ինչպիսի թուլություն որ պատի մեզ կամ անհնարինություն շրջապատի մեզ, եկեք հավատանք Աստծո Որդուն, որը հայտարարում է. «Ամեն բան հնարավոր է հավատացողի համար»:[25]

Ուզում եմ կիսվել ձեզ հետ գործով աշակերտ լինելու երկու օրինակով: Առաջինը Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի կյանքից է, որը դրսևորում է պարզ բարության զորությունը և Հիսուսի ուսմունքը. «Ձեզանից մեծը թող ձեր ծառան լինի»:[26]

Մոտ 20 տարի առաջ Նախագահ Մոնսոնը գերագույն համաժողովի իր ելույթում խոսեց 12-ամյա մի երիտասարդ աղջկա մասին, որը տառապում էր քաղցկեղով: Նա պատմեց նրա արիության և նրա ընկերների բարության մասին, ովքեր նրան իրենց հետ բարձրացրել էին Յուտայի կենտրոնում գտնվող Տիմպանոգոս սարը:

Մի քանի տարի առաջ ես հանդիպեցի Ջեմի Փալմեր Բրինթոնին և լսեցի պատմությունը այլ տեսանկյունից, այն, թե ինչ էր արել Նախագահ Մոնսոնը այդ աղջկա համար:

Ջեմին հանդիպել էր Նախագահ Մոնսոնին 1993թ. մարտին, մեկ օր անց, երբ իրեն հայտնել էին, որ իր աջ ծնկում արագ աճող նորագոյացություն էր: Իր հոր մասնակցությամբ, Նախագահ Մոնսոնը քահանայական օրհնություն էր տվել նրան, խոստանալով. «Հիսուսը կլինի քո աջ կողմում և քո ձախ կողմում՝ քաջալերելով և զորավիգ լինելով քեզ»:

«Այդ օրը նրա գրասենյակից հեռանալուց առաջ,- ասաց Ջեմին,- ես քանդեցի իմ անվասայլակին ամրացված փուչիկը և տվեցի նրան: Փուչիկի վրա վառ տառերով գրված էր՝ Դու լավագույնն ես»:

Քիմիաթերապիայի բուժումների և ոտքը պահպանող վիրահատության ընթացքում Նախագահ Մոնսոնը չմոռացավ նրան: Ջեմին ասաց. «Նախագահ Մոնսոնը օրինակ ծառայեց, թե ինչպիսին պետք է լինի Քրիստոսի ճշմարիտ աշակերտը: Նա ինձ բարձրացրեց վշտից՝ մեծ և հաստատուն հույս պարգևելով: Իրենց առաջին հանդիպումից երեք տարի անց

Էնջի, Գանչի և Գանսլի Սանտելուս

Ջեմին կրկին այցելեց Նախագահ Մոնսոնի գրասենյակ: Հանդիպման ավարտին նա այնպիսի բան արեց, որ Ջեմին երբեք չի մոռանա: Իրեն հատուկ խոհուն հոգատարությամբ Նախագահ Մոնսոնը աղջկան տվեց այն նույն փուչիկը, որը նա նվիրել էր իրեն երեք տարի առաջ: Փուչիկի վրա գրված էր. «Դու լավագույնն ես»: Նա պահել էր այն, իմանալով, որ ապաքինվելուց հետո նա կվերադառնա իր գրասենյակ: Առաջին անգամ Ջեմիին հանդիպելուց տասնչորս տարի անց Նախագահ Մոնսոնը կատարեց նրա և Ջեյսոն Բրինթոնի ամուսնությունը Սոլթ Լեյքի Տաճարում:[27]

Մենք այնքան բան կարող ենք սովորել Նախագահ Մոնսոնի աշակերտ լինելու օրինակից: Նա հաճախ է հիշեցնում Գերագույն Իշխանություններին՝ հիշել այս կարևոր հարցը. «Ի՞նչ կաներ Հիսուսը»:

Հիսուսը ժողովրդապետին ասաց. «Մի՛ վախենար, բայց միայն հավատա»:[28] Աշակերտ լինել նշանակում է հավատալ Նրան թե խաղաղ, և թե դժվար պահերին, երբ մեր ցավը և վախը փարատվում են միայն համոզվածությամբ, որ Նա սիրում է մեզ և պահում է Իր խոստումները:

Վերջերս ես հանդիպեցի մի ընտանիքի, որը հրաշալի օրինակ է այն բանի, թե ինչպես ենք մենք հավատում Նրան: Հաիթիի Պորտոպրինսից Օլգան և Սոլին Սենթելուսներն ինձ պատմեցին իրենց պատմությունը:

2010թ. հունվարի 12-ին Օլգանն աշխատանքավայրում էր, իսկ Սոլինը՝ եկեղեցում, երբ ավերիչ երկրաշարժը հարվածեց Հաիթիին: Նրանց երեք երեխաները՝ հնգամյա Գանչին, երեքամյա Էնջին և մեկամյա Գանսլին իրենց տանն էին՝ բարեկամի մոտ:

Ամենուր ավերածություններ էին: Կհիշեք, որ տասնյակ հազարավոր մարդիկ զոհվեցին այդ հունվարին Հաիթիում: Օլգանը և Սոլինը որքան կարող էին արագ վազեցին իրենց տուն գտնելու երեխաներին: Եռահարկ շենքը, որտեղ Սենթելուսների ընտանիքն էր բնակվում, փլվել էր:

Երեխաները չէին փախչել: Ոչ մի փրկարարական աշխատանք չէր տրամադրվել հիմնովին ավերված շենքին:

Օլգան և Սոլինը Սենթելուսները լիաժամկետ միսիա էին ծառայել և ամուսնացել էին տաճարում: Նրանք հավատում էին Փրկչին և Նրա տված խոստումներին: Սակայն նրանց սրտերը կոտրված էին: Նրանք անզուսպ լաց էին լինում:

Օլգանն ինձ պատմեց, որ իր համար ամենամութ ժամին սկսեց աղոթել. «Երկնային Հայր, եթե քո կամքն է, գոնե զավակներիցս մեկը կենդանի լինի, խնդրում եմ, խնդրում եմ օգնիր մեզ»: Նա անընդատ քայլում էր շենքի շուրջը և աղոթում ոգեշնչման համար: Հարևանները փորձում էին նրան սփոփել և օգնել, որ ընդունի իր զավակների կորուստը, սակայն նա շարունակում էր քայլել փլված շենքի ավերակների շուրջը՝ հույս փայփայելով և աղոթելով: Ապա մի հրաշք եղավ: Օլգանը լսեց գրեթե անլսելի երեխայի լացի ձայն: Իր

կրտսեր երեխան էր լալիս։

Ժամեր շարունակ հարևաններն ինքնամոռաց անդադար փորում էին ավերակների մեջ, վտանգելով իրենց իսկ կյանքը։ Գիշերվա խավարում մուրճերի և լոմերի հարվածների ձայների մեջ փրկարարները լսեցին ևս մեկ ձայն։ Նրանք դադարեցին փորելը և ականջ դրեցին։ Նրանք չհավատացին իրենց լսածին։ Դա փոքր երեխայի երգի ձայն էր։ Հնգամյա Գանչին ավելի ուշ պատմել էր, որ համոզված էր, որ եթե երգի, հայրը իրեն կլսի։ Երկաթբետոնե պատի ծանրության տակ, որի հետևանքով ավելի ուշ նրա ձեռքն անդամահատվեց, Գանչին երգում էր իր սիրելի երգը՝ «Աստծո զավակն եմ»։[29]

Ժամերն անցնում էին, և Հայիթիում տիրող խավարի, մահվան և Աստծո բազմաթիվ թանկագին որդիների և դուստրերի հուսահատության մեջ Սենթելուս ընտանիքում հրաշք կատարվեց։ Գանչին, Էնջին և Գանսլին կենդանի դուրս բերվեցին շենքի փլատակների տակից։[30]

Հրաշքները միշտ չէ, որ անմիջապես են կատարվում։ Երբեմն էլ մենք խորհում ենք զարմանալով, թե ինչու հրաշքը, որի համար այնքան ջերմեռանդ աղոթել ենք, չի կատարվում այժմ և այստեղ։ Սակայն եթե մենք վստահում ենք Փրկչին, խոստացված հրաշքները գալիս են։ Լինի այս, թե հաջորդ կյանքում, ամեն ինչ իր տեղը կընկնի։ Փրկիչն ասել է. «Ձեր սիրտը չխռովի և չվախենա»։[31] «Աշխարհքում նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին»։[32]

Ես վկայում եմ, որ եթե Նրան սիրեք, վստահեք, հավատաք և հետևեք, դուք կզգաք Նրա սերն ու հավանությունը։ Եթե հարցնեք. «Ի՞նչ է իմ մասին մտածում Քրիստոսը», կիմանաք, որ դուք Նրա աշակերտն եք, դուք Նրա ընկերն եք։ Իր շնորհով Նա ձեզ համար կանի այն, ինչ դուք անկարող եք անել։

Մենք անհամբեր սպասում ենք մեր սիրելի մարգարեի փակող խոսքին։ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալ կարգվեց, երբ ես 12 տարեկան էի։ Ավելի քան 48 տարի է մենք օրհնված ենք լսելու Հիսուս Քրիստոսի մասին նրա վկայությունը։ Ես վկայում եմ, որ նա այժմ Փրկչի ավագ Առաքյալն է երկրի վրա։

Մեծ սեր և հիացմունք տածելով Հիսուս Քրիստոսի շատ աշակերտների հանդեպ, ովքեր այս Եկեղեցու անդամներ չեն, մենք խոնարհ հայտարարում ենք, որ հրեշտակները վերադարձել են երկիր մեր օրերում։ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին, ինչպես որ Նա հիմնել է այն հնում, վերականգնվել է՝ զորությամբ, ծեսերով և երկնային օրհնություններով։ Մորմոնի Գիրքը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին։

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսն աշխարհի Փրկիչն է։ Նա տառապեց և մահացավ մեր մեղքերի համար, և երրորդ օրը Նա հարություն առավ։ Մի օր ամեն ծունկ կծալվի և ամեն լեզու կխոստովանի, որ Նա է Քրիստոսը։[33] Այդ օրը մենք չենք մտահոգվի, թե՝ «Արդյո՞ք մյուսներն ինձ Քրիստոնյա են համարում»։ Այդ ժամանակ մեր հայացքը հառված կլինի Նրա վրա, և մեր հոգին կենտրոնացած մեկ հարցի շուրջ՝ «Ի՞նչ է իմ մասին մտածում Քրիստոսը»։ Նա ապրում է։ Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես André Petry, “Entre a Fé e a Urna,” *Veja,* Nov. 2, 2011, 96։
2. Մատթեոս ԻԲ.42
3. Հռովմայեցիս ԺԴ.10
4. Տես Մատթեոս Զ.2։
5. Տես Մատթեոս ԻԳ.17։
6. Տես Մատթեոս Է.23։
7. Տես Մատթեոս ԺԳ.38։
8. Տես Մատթեոս Ե.14։
9. Տես Մատթեոս ԺԵ.14։
10. Տես Մատթեոս ԺԳ.22։
11. Տես Մատթեոս Ե.8։
12. Տես Մատթեոս Ե.6։
13. Տես Մատթեոս ԺԷ.17։
14. Տես Հովհաննես Ը.23։
15. Տես Հովհաննես Զ.70։
16. Տես Հովհաննես ԺԳ.35։
17. Տես Հովհաննես ԺԵ.13։
18. Թոմաս Ս. Մոնսոն, «Կանգնեք սուրբ վայրերում», *Լիահոնա*, նոյ. 2011, 83, 86։
19. Հովհաննես ԺԷ.3։
20. Հովհաննես ԺԴ.23։
21. Ղուկաս ԺԸ.22։
22. Հովհաննես ԺԴ.15։
23. Ղուկաս Թ.23։
24. Մատթեոս ԺԱ.28։
25. Մարկոս Թ.23։
26. Մատթեոս ԻԳ.11։
27. Ջեմի Բրինթոն, նամակը ուղարկվել է հեղինակին, հունվ. 27, 2012թ.։
28. Մարկոս Ե.36։
29. «Աստծո զավակն եմ», *ՀՄԵ,* էջ 58։
30. Օլգան և Սոլին Սենթելիուսների հետ զրույցից, փետ. 10, 2012թ., տես նաև Jennifer Samuels, Family Reunited in Miami after Trauma in Haiti,” *Church News,* Jan. 30, 2010, 6։
31. Հովհաննես ԺԴ.27։
32. Հովհաննես ԺԶ.33։
33. Տես Հռովմայեցիս ԺԴ.11։

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Փակելով այս համաժողովը

Թող որ դուք խորհեք այն ճշմարտությունների մասին, որ լսեցիք, և թող դրանք օգնեն ձեզ դառնալ էլ ավելի լավը, քան դուք այս համաժողովից առաջ էիք՝ միայն երկու օր առաջ:

Սիրտս լցվում է, երբ մենք մոտենում ենք այս փառավոր համաժողովի ավարտին: Մենք այնպիսի առատությամբ օրհնվեցինք, լսելով նրանց խորհուրդները և վկայությունները, ովքեր խոսեցին մեզ հետ: Կարծում եմ, կհամաձայնվեք ինձ հետ, որ մենք զգացինք Տիրոջ Հոգին, երբ մեր սրտերը հուզվեցին և մեր վկայությունները ամրացան:

Կրկին մենք վայելեցինք գեղեցիկ երաժշտությունը, որը զարդարեց և հարստացրեց համաժողովի բոլոր նիստերը: Ես իմ երախտագիտությունն եմ հայտնում բոլորին, ովքեր կիսվեցին մեզ հետ իրենց տաղանդներով:

Իմ սրտանց շնորհակալությունը ուղղված է յուրաքանչյուրին, ով խոսեց, ինչպես նաև նրանց, ովքեր ասացին աղոթքները յուրաքանչյուր նիստին:

Անթիվ մարդիկ են աշխատում և բեմի ետևում, և յուրաքանչյուր համաժողովի քիչ տեսանելի դիրքերում: Մենք չէինք կարողանա անցկացնել այս նիստերը առանց նրանց օգնության: Իմ շնորհակալությունը ուղղված է բոլոր նրանց նույնպես:

Ես գիտեմ, որ դուք կմիանաք ինձ, խորը երախտագիտություն հայտնելով այն եղբայրներին և քույրերին, ովքեր ազատվեցին այս համաժողովին իրենց պաշտոններից: Մենք կկարոտենք նրանց: Տիրոջ աշխատանքին կատարած նրանց ներդրումը ահռելի է և կզգացվի սերունդներ շարունակ:

Բարձրացրած ձեռքերով մենք նաև հաստատեցինք եղբայրներին և քույրերին, ովքեր այս համաժողովին կանչվեցին նոր պաշտոնների: Մենք ողջունում ենք նրանց և ցանկանում, որ իրենք իմանան, որ մենք ուրախությամբ կծառայենք նրանց հետ Վարդապետի գործի համար: Նրանք կանչվել են վերստին ստացված ոգեշնչման ներքո:

Այս համաժողովը աննախադեպ տարածման է արժանացել, անցնելով մայրցամաքների և օվկիանոսների միջով և հասնելով մարդկանց ամենուրեք: Թեև մենք շատ հեռու ենք ձեզանից շատերից, մենք զգում ենք ձեր հոգին և ձեր նվիրումը, և ուղարկում ենք մեր սերը և երախտագիտությունը, որտեղ էլ որ լինեք:

Որքան օրհնված ենք մենք, իմ եղբայրներ և քույրեր, որ ունենք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը մեր կյանքում և մեր սրտերում: Այն տալիս է կյանքի մեծագույն հարցերի պատասխանները: Այն իմաստ, նպատակ և հույս է հաղորդում մեր կյանքին:

Բրիգամ Յանգ Համալսարան, Այդահո

Մենք ապրում ենք անհանգիստ ժամանակներում: Ես հավաստիացնում եմ ձեզ, որ մեր Երկնային Հայրը մտահոգ է մեր խնդիրների համար: Նա սիրում է մեզանից յուրաքանչյուրին և ցանկանում է օրհնել և օգնել մեզ: Թող որ մենք կանչենք առ Նա աղոթքով, ինչպես Նա է հորդորել. «Անդադար աղոթիր, և ես իմ Հոգին դուրս կթափեմ քո վրա, և մեծ կլինի քո օրհնությունը, այո, նույնիսկ ավելի մեծ, քան եթե դու ձեռք բերեիր երկրի գանձերը»:[1]

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, թող ձեր տները լցված լինեն սիրով և բարյացկամությամբ և Տիրոջ Հոգով: Սիրեք ձեր ընտանիքներին: Եթե կլինեն անհամաձայնություններ կամ վեճեր, ես կոչ եմ անում ձեզ լուծել դրանք այժմ: Փրկիչն ասել է.

«Եվ ձեր մեջ չպիտի լինեն վիճաբանություններ . . .

Քանզի ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, նա, որ ունի հակառակության ոգին, ինձանից չէ, այլ դևից է, որը հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց սրտերը բարկությամբ վիճելու մեկը մյուսի հետ:

Սհա, սա իմ վարդապետությունը չէ . . . այլ *այս* է իմ վարդապետությունը, որ այդպիսի բաները պիտի վերացվեն»:[2]

Որպես ձեր խոնարհ ծառա, ես կրկնում եմ իր ժողովրդին ուղղված Բենիամին թագավորի խոսքերը.

«Ես չեմ պատվիրել ձեզ . . . որ, դուք մտածեք, որ ես ինքս ավելին եմ, քան մի մահկանացու մարդ:

Այլ ես ձեր պես՝ ենթակա եմ ամեն ձևի թուլությունների՝ ի մարմնո, և ի մտոք. սակայն ես

ընտրված եմ . . . Տիրոջ ձեռքով . . . և պահվել ու պահպանվել եմ նրա անզուգական զորությամբ՝ ծառայելու ձեզ ողջ զորությամբ, մտքով և ուժով, որը Տերը շնորհել է ինձ»:[3]

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես իմ ողջ սրտով ցանկանում եմ կատարել Աստծո կամքը և ծառայել Նրան և ձեզ:

Այժմ, հեռանալով այս համաժողովից, ես խնդրում եմ, որ երկնքի օրհնությունները տրվեն ձեզ: Թող որ դուք, ովքեր հեռու են իրենց տներից, ապահով տուն վերադառնաք: Թող որ դուք խորհեք այն ճշմարտությունների մասին, որ լսեցիք, և թող դրանք օգնեն ձեզ դառնալ էլ ավելի լավը, քան դուք այս համաժողովից առաջ էիք՝ միայն երկու օր առաջ:

Մինչև որ մենք կրկին կհանդիպենք վեց ամիս անց, ես խնդրում եմ Տիրոջ օրհնությունները ձեզ և մեր բոլորի համար, և անում եմ դա Նրա՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 19.38:
2. 3 Նեփի 11.28–30; շեշտադրումն ավելացված է:
3. Մոսիա 2.10–11:

Էն Մ. Դիբ
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական

Վեր կացեք և շողացեք

Վեր կենալու և շողալու լավագույն ճանապարհներից մեկը Աստծո պատվիրաններին վստահորեն հնազանդվելն է:

Ինձ համար պատիվ է այս երեկո լինել ձեզ հետ: Ամեն հունվար ես անհամբեր սպասում եմ Միացյալ նոր թեմայի հայտարարությանը: Սակայն, ես միշտ ժամանակ եմ տրամադրում գնահատելու, թե ինչպես եմ յուրացրել *անցած* տարվա թեմայի դասերը:

Մի պահ եկեք վերանայենք վերջին թեմաները. «Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար»,[1] «Եղեք հաստատուն և անխախտ, միշտ հարուստ լինելով բարի գործերով»,[2] «Օրինակ եղիր հավատացեալներին»,[3] «Զորացիր և քաջ եղիր»[4] և հավատո տասներեքերորդ հանգանակը. «Մենք հավատում ենք ազնիվ, ճշմարիտ, մաքրաբարո, բարյացակամ, առաքինի լինելուն և բոլոր մարդկանց բարիք անելուն»:[5]

Ամբողջ տարվա ընթացքում այս սուրբ գրությունները ուսումնասիրելը և դրանց վրա կենտրոնանալը թույլ է տվել, որ դրանք դառնան մեր սրտերի, մեր հոգիների և մեր վկայությունների մասը Հուսով ենք, որ դուք կշարունակեք հետևել այդ ցուցումներին, մինչ մենք կանցնենք 2012թ. Միացյալի թեմային, որը գտնվում է Վարդապետություն և Ուխտերում:

115-րդ բաժնի խորագիրը բացատրում է, որ 1838 թվականն էր, Ֆար Վեստ, Միսսուրի: Ջոզեֆ Սմիթին հայտնի դարձվեց «Աստծո կամքն այդ վայրի կառուցման և Տիրոջ տան վերաբերյալ»: Մարգարեն լավատես էր և ոգևորված: Տող 5-ում մենք գտնում ենք այս տարվա թեման. «Ճշմարիտ ասում եմ ձեզ բոլորիդ. Վեր կացեք և շողացեք, որպեսզի ձեր լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար»:

Ի՞նչ եք դուք մտածում, երբ լսում եք *վեր կացեք* բառը: Անձամբ ես մտածում եմ ձեր՝ Եկեղեցու ազնվագույն երիտասարդների մասին: Ես պատկերացնում եմ ձեզ, թե ինչպես եք ամեն առավոտ պարտաճանաչ վեր կենում ձեր անկողիններից վաղ առավոտյան սեմինարիայի համար: Ես տեսնում եմ, ինչպես եք դուք հավատարմորեն վեր կենում՝ ձեր ամենօրյա աղոթքների համար ծնկի իջնելուց հետո: Ես մտածում եմ ձեր մասին, երբ դուք քաջությամբ վեր եք կենում՝ ձեր վկայությամբ կիսվելու և ձեր չափանիշները պաշտպանելու համար: Ինձ ոգեշնչում են ավետարանին ձեր նվիրումը և ձեր լավ օրինակները: Ձեզանից շատերն արդեն ընդունել են այս հրավերը՝ վեր կենալ և շողալ, և ձեր լույսը խրախուսում է մյուսներին անել նույնը:

Վեր կենալու և շողալու լավագույն ճանապարհներից մեկը Աստծո պատվիրաններին վստահորեն հնազանդվելն է: Մենք սովորում ենք այդ պատվիրանների մասին սուրբ գրություններում, ժամանակակից մարգարեներից և *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի էջերից: Յուրաքանչյուրդ պետք է ունենաք ձեր օրինակը: Իմ սեփական օրինակում ես օղակի մեջ եմ վերցրել *համար* և *ձեր* բառերը, ինչպես ինձ սովորեցրեց անել իմ հարգելի մի ընկեր: Այս հասարակ ձևը հիշեցնում է ինձ, որ այս չափանիշները ընդհանուր ուղեցույցներ չեն՝ դրանք հատուկ *ինձ համար* են: Հուսով եմ, որ դուք ժամանակ կգտնեք և օղակի մեջ կվերցնեք ձեր գրքույկների մեջ այդ բառերը, կարդացեք այն սկզբից մինչև վերջ և զգացեք, ինչպես է Հոգին վկայում, որ այս չափանիշները նաև *ձեզ համար* են:

Ոմանք կփորձեն անտեսել կամ մերժել *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկում գտնվող չափանիշները: Նրանք կարող են նայել գրքույկին և ասել. «Տես, մայրիկ, գիրքը չի ասում ոչինչ *[ընթացիկ ամսագիրը]*»: Կամ նրանք կարող են արդարացնել իրենց. «Այն, ինչ ես անում եմ, այդքան էլ վատ չէ: Ես, անկասկած, այդքան վատը չեմ, ինչպես *[ընկերոջ կամ ծանոթի անունը]*»:

Նախագահ Հարոլդ Բ. Լին ուսուցանել է. «Աստծո բոլոր պատվիրաններից ամենակարևորն այն է, որը դուք դժվարանում եք պահել այսօր»:[6] Բենիամին թագավորը բացատրել է. «Ես չեմ կարող ասել ձեզ բոլոր բաները, որոնցով դուք կարող եք մեղք գործել, քանզի կան զանազան ուղիներ և միջոցներ, նույնիսկ այնքան շատ, որ ես չեմ կարող թվել դրանք»:[7] Եթե դուք դժվարանում եք

պահել այս չափանիշները և պատվիրանները, ես խրախուսում եմ ձեզ օգնություն փնտրել ավետարանում: Կարդացեք ձեր սուրբ գրությունները: Ժամանակ գտեք LDS.org Եկեղեցու պաշտոնական կայք էջը ուսումնասիրելու և ձեր հարցերի պատասխանները գտնելու համար: Խոսեք ձեր ծնողների, Եկեղեցու ձեր ղեկավարների և նրանց հետ, ովքեր, ապրելով ավետարանով, պայծառ շողում են: Աղոթեք: Ձեր սիրտը թափեք ձեր Երկնային Հոր առաջ, որը սիրում է ձեզ: Ամեն օր օգտվեք ապաշխարության պարգևից: Ծառայեք մյուսներին: Եվ ամենակարևորը, լսեք և հնազանդվեք Սուրբ Հոգու հուշումներին:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը մեզ բոլորիս խրախուսում է այս խոսքերով. «Իմ երիտասարդ ընկերներ, եղեք ամուր: . . . Դուք գիտեք, ինչն է ճիշտը և ինչն է սխալ, և ոչ մի քողարկում, որքան էլ որ հրապուրիչ լինի, չի կարող փոխել դա: . . . Եթե ձեր այսպես կոչված ընկերները կոչ են անում ձեզ անել մի բան, որը, դուք գիտեք, որ սխալ է, ապա միայն *դուք* պետք է ճիշտը պաշտպանեք, եթե անգամ միայնակ եք այդ հարցում»:[8]

Երկնային Հայրը չի ուզում, որ մենք նայենք աշխարհին և *հետևենք* դրա անընդմեջ փոփոխվող միտումներին: Նա ցանկանում է, որ մենք նայենք Իրեն և հետևենք Իր անփոփոխ առաջնորդությանը: Նա ցանկանում է, որ մենք ապրենք ավետարանով և *տանենք* մյուսներին դեպի այն, սահմանելով բարձր չափանիշ:

Սուրբ գրությունները բազմաթիվ մեծ օրինակներ են տրամադրում այդ գաղափարը պարզաբանելու համար: Հին Կտակարանի Դատավորաց գրքում մենք սովորում ենք Սամփսոնի մասին: Սամփսոնը մեծ ներուժով էր ծնվել: Նրա մորը խոստում էր տրվել. «Նա սկսելու է Իսրայելին ազատել Փղշտացիների ձեռքից»:[9] Սակայն մեծանալով, Սամփսոնը ավելի շատ նայում էր աշխարհի գայթակղություններին, քան Աստծո ուղղորդությանը: Նա ընտրություններ էր կատարում, որոնք ոչ թե ճիշտ էին, այլ որովհետև դրանք «[նրան] հաճելի էին»:[10] «Եվ իջավ»[11], ինչ վերաբերում է Սամփսոնի ճամփորդութուններին, արարքներին և ընտրություններին: Վեր կենալու և շողալու փոխարեն՝ իր մեծ ներուժը իրագործելու համար, Սամփսոնը տրվեց աշխարհին, կորցրեց իր աստվածատուր զորությունը և մահացավ ողբերգական վաղաժամ մահով:

Մյուս կողմից, սուրբ գրությունները տալիս են Դանիելի օրինակը: Դանիելը նույնպես ծնվել էր մեծ ներուժով: Դանիելի գրքում, գլուխ 6-ում մենք կարդում ենք. «Դանիելը նախապատիվ եղավ հրամանատարներից և կուսակալներից, որովհետև նորանում գերազանց հոգի կար»:[12] Երբ աշխարհիկ փորձությունները բաժին ընկան Դանիելին, նա չնայեց ներքև՝ աշխարհին, այլ վեր կացավ և նայեց երկնքին:

Թագավորի աշխարհիկ հրամանին հետևելու փոխարեն, ըստ որի մինչև 30 օր ոչ ոք չպետք է աղոթեր ոչ ոքի, բացի թագավորից, Դանիելը «գնաց իր տունը, և իր պատուհանները բաց էին վերնատանը դեպի Երուսաղեմ, և օրը երեք անգամ նա ծունկի վրա էր գալիս և աղոթք էր անում և գովաբանում էր իր Աստծուն, ըստ որում նա սրանից առաջ այդպես էր անում:[13]

Դանիելը չէր վախենում վեր կենալ և շողալ, հետևելով Աստծո պատվիրաններին: Թեև ճշմարտությունը պաշտպանելու համար նա անհանգիստ գիշեր անցկացրեց առյուծների գուբում, նա պաշտպանված և օրհնված էր իր հնազանդության շնորհիվ: Երբ հաջորդ առավոտյան Դարեհ թագավորը Դանիելին հանեց առյուծների գուբից, նա հրաման արձակեց այն մասին, որ բոլորը այսուհետ պետք է վախենային Դանիելի Աստծուց և հետևեին Դանիելի հավատարիմ օրինակին: Իսկապես, Դանիելը մեզ ցույց է տալիս, թե ինչ է նշանակում չափանիշ լինել ազգերի համար և երբեք չիջեցնել մեր չափանիշները աշխարհիկ գայթակղությունների առաջ կանգնելիս:

Ես օրհնվել եմ, լսելով ժամանակակից երիտասարդների բազմաթիվ օրինակների մասին՝ ձեզ նման երիտասարդների, ովքեր չեն վախենում վեր կենալ և շողալ և թույլ տալ, որ իրենց լույսը չափանիշ լինի իրենց հասակակիցների մոտ: Ջոաննան Եկեղեցու միակ երեք անդամներից մեկն էր ավագ դպրոցում և միակ երիտասարդ կինը իր ծխում: Նա ինքն իր և Տիրոջ առաջ պարտավորվել էր երբեք վատ խոսելաձև չօգտագործել: Երբ դպրոցական մի ծրագրում նա պետք է զուգընկեր լիներ մի պատանու հետ, որը նման պարտավորություն չուներ, նա չիջեցրեց իր չափանիշները: Նա խնդրեց նրան հարգել և պատվել իր արժեքները: Ժամանակի ընթացքում, բազմաթիվ մեղմ և ոչ այդքան մեղմ ակնարկների արդյունքում, նրա ընկերը նոր սովորույթներ հիմնեց և սկսեց ավելի մաքուր խոսելաձև օգտագործել: Շատերը նկատեցին

տարբերությունը, ներառյալ նրա հայրը, որը շնորհակալություն հայտնեց Ջոաննային իր որդու կյանքում լավ ազդեցություն գործելու համար:[14]

Վերջերս Ֆիլիպիններում մի հանձնարարության ժամանակ ես հանդիպեցի Քերինին, որը կիսվեց իր փորձառությամբ, որն ունեցել էր, երբ Դափնի էր և սովորում էր բակալավրի աստիճանի համար հյուրանոցային և ռեստորանային կառավարման գծով: Ուսուցիչը պահանջեց, որ յուրաքանչյուր ուսանող սովորի պատրաստել և համտեսել զանազան ըմպելիքներ, որոնք կմատուցվեն իրենց ռեստորաններում: Որոշ ըմպելիքներ ալկոհոլ էին պարունակում և Քերինը գիտեր, որ դրանք համտեսելը Տիրոջ պատվիրաններին դեմ էր: Կանգնելով լուրջ հետևանքների առջև, Քերինը խիզախ գտնվեց վեր կենալու և շողալու. նա չհամտեսեց ըմպելիքները:

Քերինը պատմեց. «Ուսուցիչս մոտեցավ ինձ և հարցրեց, թե ինչու ես չեմ ըմպում: Նա ասաց. «Օրիորդ Քերին, ինչպե՞ս դուք կարող եք իմանալ համը և փոխանցել այս կարևոր տեղեկությունը, եթե անգամ չեք համտեսում խմիչքները»: Ես նրան ասացի, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եմ և մենք՝ անդամներս չենք խմում այն, ինչը վնաս է մեզ համար: Ինչ էլ, որ նա ակնկալեր ինձանից, անգամ եթե դա նշանակեր չանցնող գնահատական, ես կհասկանայի, սակայն ես երբեք չէի հրաժարվի իմ անձնական չափանիշներով ապրելուց»:

Շաբաթներ անցան և ավելին ոչինչ չասվեց այդ օրվա մասին: Կիսամյակի վերջում Քերինը գիտեր, որ իր ավարտական գնահատականը պետք է արտացոլեր իր խմիչքները փորձելու իր մերժումը: Նա չէր համարձակվում նայել իր գնահատականին, սակայն երբ հայացք գցեց, տեսավ, որ ստացել էր ամենաբարձր գնահատականը դասարանում:

Նա ասաց. «Այս փորձառությունից ես սովորեցի, որ Աստված . . . անկասկած կօրհնի մեզ, եթե մենք հետևենք Իրեն: Ես գիտեմ նաև, որ եթե անգամ ես ցածր գնահատական ստանայի, չէի զղջա իմ արածի համար: Ես գիտեմ, որ երբեք չեմ ընկնի Տիրոջ աչքում, եթե ընտրեմ անել այն, ինչը գիտեմ, որ ճիշտ է»:[15]

Թանկագին երիտասարդ կանայք, ձեզանից յուրաքանչյուրը ծնվել է մեծ ներուժով: Դուք Երկնային Հոր սիրելի դուստրերն եք: Նա ճանաչում և սիրում է ձեզ: Նա հրավիրում է ձեզ «վեր կենալ և շողալ», և խոստանում է, որ կաջակցի և կօրհնի ձեզ: Ես աղոթում եմ, որ յուրաքանչյուրդ խիզախություն գտնեք և ընդունեք Նրա հրավերը և ստանաք Նրա խոստումները: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 121.45:
2. Մոսիա 5.15:
3. Ա Տիմոթեոս 4.12:
4. Յեսու 1.9:
5. Հավատո հանգանակ 1.13:
6. *Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* (2000), 30.
7. Մոսիա 4.29:
8. Thomas S. Monson, “Examples of Righteousness,” *Liahona*, May 2008, 65.
9. Դատավորաց 13.5:
10. Դատավորաց 14.3:
11. Դատավորաց 14.7:
12. Դանիել 6.3:
13. Դանիել 6.10:
14. Այս պատմության մի մասի համար տես՝ Joanna Ehrisman, “The Thing about Being Mormon,” in Katilin Medlin and others, eds., *Going on 15: Memoirs of Freshmen* (2010), 93–96:
15. Հեղինակի անձնական նամակագրությունից, 2012:

Մերի Ն. Քուք
Երիտասարդ Կանանց գերագույն
նախագահության առաջին խորհրդական

Ուսում փնտրեք. դուք աշխատանք ունեք կատարելու

Օրհնեք ձեր երեխաներին և ձեր ապագա տունը, սովորելով որքան կարող եք այժմ:

Ի՜մ սիրելի երիտասարդ կանայք, որքան շատ ենք մենք սիրում յուրաքանչյուրիդ: Մենք տեսնում ենք, ինչպես եք դուք քաջությամբ բարձրանում և շողում մի աշխարհում, որտեղ մեծ մարտահրավերները ուղեկցում են մեր հնարավորություններին: Սա կարող է հարց առաջացնել ձեզ մոտ. «Ի՞նչ է պահել ինձ համար ապագան»: Ես հավաստիացնում եմ ձեզ, որ որպես Աստծո առաքինի դուստր ձեր ապագան պայծառ է: Դուք ապրում եք մի ժամանակ, երբ ավետարանի ճշմարտությունները վերականգվել են և այդ ճշմարտությունները կարելի է գտնել սուրբ գրքերում: Մկրտության ժամանակ դուք ստացել եք Սուրբ Հոգու պարգևը և Սուրբ Հոգին կուսուցանի ձեզ ճշմարտությունը և կպատրաստի կյանքի դժվարություններին:

Աստված տվել է ձեզ բարոյական ընտրության ազատություն և հնարավորություն սովորելու Երկրի վրա, և Նա աշխատանք ունի ձեզ համար: Այդ աշխատանքը կատարելու համար դուք անձնական պատասխանատվություն եք կրում՝ ուսում փնտրելու: Ձեր ապագայի բանալին, ձեր «հույսի պայծառ շողը»[1] կարող եք գտնել *Երիտասարդներին զորացնելու համար* նոր գրքույկում՝ կրթության չափանիշի և Երիտասարդ Կանանց գիտելիքի արժեքի բաժիններում:

«Կրթությունը . . . կբացի հնարավորության դռները»:[2] Հետևելով Տիրոջ խրատին՝ «ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով»,[3] դուք ոչ միայն գիտելիք կստանաք ձեր ուսումից, այլ նաև լրացուցիչ լույս, եթե սովորեք հավատքով:

Ուսում փնտրեք, սովորելով ջանասիրաբար: Դժվար կարողանաք սովորելուն այնքան ժամանակ տրամադրել, որքան կարող եք տրամադրել այժմ: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին իմաստուն խորհուրդ է տվել Եկեղեցու երիտասարդներին. «Դպրոցական տարիներին ձևավորած ձեր ուսման սովորույթները մեծապես կազդեն ողջ կյանքում գիտելիքի ձեր որոնման ընթացքի վրա»:[4] «Դուք պետք է ստանաք այն ողջ կրթությունը, որը հնարավոր է ձեզ համար: . . . Զոհաբերեք այն ամենը, ինչ անհրաժեշտ է, որպեսզի կարողանաք աշխատանք կատարել [այս] աշխարհում: . . . Վարժեցրեք ձեր ուղեղը և ձեռքերը, որպեսզի բարի ազդեցություն գործեք ձեր կյանքի ընթացքում»:[5]

Հատուկ դիմելով կանանց, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Հաճախ ապագան անհայտ է, հետևաբար, ճիշտ կլիներ, եթե մենք պատրաստվեինք անորոշություններին: . . . Ես կոչ եմ անում ձեզ կրթություն ստանալ և ձեռք բերել շուկայական հմտություններ, որպեսզի, եթե նման իրավիճակ առաջանա, դուք պատրաստ լինեք դրանք կիրառելու»:[6]

Երիտասարդ կանայք, հետևեք այս իմաստուն և ոգեշնչված մարգարեների խորհրդին: Եղեք լավ ուսանող: Բարձրացեք և շողացեք ձեր դպրոցներում՝ ձեր աշխատասիրությամբ, ազնվությամբ և շիտակությամբ: Եթե դուք պայքարում եք կամ հուսահատված եք դպրոցում ձեր առաջադիմության առումով, օգնություն խնդրեք ծնողներից, ուսուցիչներից և Եկեղեցու անդամներից: Երբեք մի հանձնվեք:

Կազմեք այն ամենի ցանկը, որը ցանկանում եք սովորել, ապա «կիսվեք ձեր կրթության նպատակներով ձեր ընտանիքի, ընկերների և ղեկավարների հետ, որպեսզի նրանք կարողանան աջակցել և խրախուսել ձեզ»:[7] Սա Անձնական Զարգացման ուղին է:

Տեխնոլոգիաների հետ մեկտեղ դուք ականատես եք լինում գիտելիքի պոռթկմանը: Դուք շարունակ ռմբակոծվում եք ձայներով, տեսանյութերով և սոցիալական ցանցերով: Ընտրություն կատարեք և թույլ մի տվեք, որ տեղեկատվության այս հեղեղը շեղի ձեզ կամ դանդաղեցնի ձեր առաջընթացը: Բարձրացեք, երիտասարդ կանայք: *Դուք* եք որոշում ձեր նպատակները: *Դուք* եք որոշում, թե ինչ է մտնում ձեր միտքը և սիրտը:

Ամենակարևոր գիտելիքը դուք ստանում եք դասարանից դուրս: Շրջապատեք ձեզ օրինակելի

կանանցով, ովքեր կարող են ձեզ ուսուցանել տնարարության, երաժշտության, արվեստի, ընտանեկան պատմության, սպորտային, գրելու և խոսելու հմտություններ: Ծանոթացեք նրանց հետ և խնդրեք ավագ ընկեր լինել ձեզ համար: Երբ որևէ նոր բան եք սովորում, ուսուցանեք դա Միացյալի ժամին կամ դարձեք դաստիարակ այլ երիտասարդ կանանց համար՝ ձեր Պատվավոր Մեղվի պահանջների շրջանակում:

Իմ հիանալի մայրիկից բացի ես կյանքում շատ դաստիարակներ եմ ունեցել: Առաջին անգամ դաստիարակման ընթացքի հետ ես ծանոթացա ինը տարեկան հասակում: Երեխաների խմբի իմ ուսուցիչը ինձ սովորեցրեց ասեղնագործել «Ես կբերեմ ավետարանի լույսը իմ տուն» նկարը, որը կախված էր իմ սենյակում իմ դեռահաս տարիներին: Ուսուցիչս ուղղություն տվեց, ուղղեց ինձ և միշտ խրախուսում էր: Հետո ես ունեցա այլ դաստիարակներ: Մեր ծխի երկու հիանալի կարուհիներ սովորեցրեցին ինձ կարել: Նրանց ուղղորդության, համբերատարության և խրախուսման շնորհիվ ես 14 տարեկանում մասնակցեցի զգեստ կարելու մրցույթի և մրցանակի արժանացա: Այդ գործընթացը էլ ավելի մեծացրեց սովորելու և այլ բնագավառներում հիանալի արդյունքների հասնելու իմ ցանկությունը:

Գիտելիք ձեռք բերելը մեծապես կվարձատրվի, երբ դուք մայր դառնաք: «Մոր կրթության մակարդակը խոր ազդեցություն ունի կրթության գծով նրա երեխաների ընտրությունների վրա»:[8] Մոր կրթությունը տալիս է «բանալի, որը կանգնեցնում է աղքատության ցիկլը»,[9] որովհետև «կրթված կինը . . . միտված է. ծնունդ տալու ավելի առողջ երեխաների, ունենալ ավելի առողջ երեխաներ, լինել ավելի վստահ, ճկուն և ունենա ավելի ամուր մտածելակերպ և դատողություն»:[10]

«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթուղթը մեզ ուսուցանում է, որ «մայրերի հիմնական պարտականությունը իրենց երեխաներին մեծացնելն է»:[11] Ձեր երեխաներին կրթությամբ

ապահովելը այս գործի մասն է կազմում և ձեր սուրբ պարտականությունն է: Ինչպես քաջ մարտիկները, որոնք ուսուցանվեցին իրենց մայրերի կողմից,[12] դուք կլինեք ձեր երեխայի ամենակարևոր ուսուցիչը, այնպես որ ուշադիր եղեք ձեր ուսման ընտրության մեջ: Օրինեք ձեր երեխաներին և ձեր ապագա տունը, սովորելով որքան կարող եք այժմ:

Ուսում փնտրեք հավատքով: Մենք սովորում ենք հավատքով, երբ ջանասիրությամբ հոգևոր գիտելիք ենք ստանում աղոթքի, սուրբ գրությունների ուսումնասիրության և հնազանդության միջոցով, և երբ փնտրում ենք Սուրբ Հոգու առաջնորդությունը, որը վկայում է բոլոր ճշմարտության մասին: Եթե դուք կատարեք գիտելիք ստանալու ձեր մասը, Սուրբ Հոգին կլուսավորի ձեր միտքը: Եթե դուք աշխատեք ձեզ արժանի պահել, Սուրբ Հոգին ուղղություն կտա և լույս կավելացնի ուսման ձեր ընթացքին:

Երբ ես երիտասարդ էի, պարտքով վերցրել էի դահուկներ, որոնք շատ երկար էին, կոշիկները մեծ, և ընկերուհիս ինձ սովորեցնում էր դահուկավարել: Մենք դուրս եկանք գարնանային մի սքանչելի օր՝ պայծառ արև, կատարյալ ձյուն և անամպ կապույտ երկինք: Սովորելու ընթացքում կտրուկ վայր իջնող լանջերի վախը տեղի էր տալիս ոգևորությանը: Եվ թեև ես մի քանի անգամ այդ երկար դահուկներով վար էի ընկնում, վեր էի կենում և շարունակում: Ես սկսեցի սիրել այդ սպորտաձևը:

Շուտով ես հասկացա, որ ոչ բոլոր օրերը և եղանակային պայմաններն էին կատարյալ դահուկավարման համար: Այն օրերին, երբ երկինքը ամպած էր, մենք դահուկավարում էինք հարթ լույսի պայմաններում: Դա առաջանում է, երբ արևի լույսը ցրվում է ամպերի կողմից: Ճերմակ ձյանը նայելիս խորության զգացողությունը վերանում է և դժվար է դառնում դատել լանջի թեքության մասին կամ տեսնել բլրի բարձր մասերը:

Երիտասարդ կանայք, մի գուցե դուք նայեք ձեր ապագային, ինչպես ես էի նայում այդ թեք լանջերին: Երբեմն դուք կմտածեք, որ ապրում եք հարթ լույսի մեջ, չեք տեսնում այն, ինչ ձեր առջևում է: Հավատքով սովորելը ձեզ վստահություն կպարգևի և կօգնի գտնել ճանապարհը անորոշության պահերին:

Մատթեոս 25-րդ գլխում տաս կույսերի առակը մեզ ուսուցանում է, որ հոգևոր պատրաստվածությունը կենսական է և պետք է ձեռք բերվի անհատապես: Դուք կհիշեք, որ բոլոր տաս կույսերը հրավիրված էին

ուղեկցելու փեսային հարսանյաց խնջույքին, սակայն միայն հինգ իմաստուն կույսերն էին պատրաստված, ունենալով յուղ իրենց լապտերում:

«Բայց հիմարներն ասեցին իմաստուններին. Տվեք մեզ ձեր յուղից, որովհետև մեր լապտերները հանգչում են:

Իմաստուններն էլ պատասխանեցին և ասեցին. Մի գուցե մեզ և ձեզ բավական չլինի. Բայց ավելի լավ գնացեք ծախողների մոտ և գնեցեք ձեզ համար:

Եվ երբոր նորանք գնացին գնելու, փեսան եկավ, և պատրաստները նորա հետ հարսանիքը մտան, և դուռն փակվեցավ»:[13]

Կարող եք մտածել, թե եսասիրություն էր, որ հինգ իմաստուն կույսերը չկիսվեցին իրենց յուղով, սակայն այլապես հնարավոր չէր: Հոգևոր պատրաստվածությունը պետք է ձեռք բերվի անհատապես, կաթիլ առ կաթիլ և չի կարող բաժանվել ուրիշներին:

Այժմ ժամանակն է ձեզ համար ջանասիրաբար նվիրվել ձեր հոգևոր գիտելիքի աճին, կաթիլ առ կաթիլ՝ աղոթքի, սուրբ գրությունների ուսումնասիրության և հնազանդության միջոցով: Այժմ է ժամանակը կրթություն ստանալու համար՝ կաթիլ առ կաթիլ: Յուրաքանչյուր առաքինի միտք և արարք նույնպես յուղ է ավելացնում ձեր լապտերում, որակելով ձեզ Սուրբ Հոգու՝ մեր աստվածային ուսուցչի առաջնորդությանը:

Սուրբ Հոգին կառաջնորդի ձեզ այս մահկանացու ձեր ճամփորդության ընթացքում, անգամ, երբ դուք ձեզ զգում եք հարթ լույսի մեջ, չիմանալով, թե ինչ է ձեզ սպասում առջևում: Դուք չպետք է վախենաք: Եթե մնաք այն ուղու վրա, որը տանում է դեպի հավերժական կյանք, Սուրբ Հոգին կուղղորդի ձեզ ձեր որոշումները կայացնելիս և սովորելիս:

Ես վկայում եմ իմ անձնական փորձից, որ, եթե դուք ուսում փնտրեք ոչ միայն ուսումնասիրությամբ, այլ նաև հավատքով, դուք *կառաջնորդվեք* այն ամենում, ինչի կարիքը «Տերն ունի, որ անեք և իմանաք»:[14]

Ես իմ հայրապետական օրհնությունը ստացա, երբ երիտասարդ աղջիկ էի, և ինձ խորհուրդ տրվեց լավ կրթություն ստանալ և կյանքի վաղ տարիներին սովորել այն արժանիքների մասին, որոնք կապված են տնարարության և ընտանիք պահելու հետ: Ես շատ էի ցանկանում ունենալ ընտանիքի օրհնությունը, սակայն այդ օրհնությունը ինձ տրվեց միայն 37 տարեկանում, երբ ես վերջապես ամուսնացա: Ամուսինս դրանից մի քանի տարի առաջ այրի էր դարձել, և այն օրը, երբ մենք կնքվեցինք տաճարում, ես անսպասելիորեն օրհնվեցի ոչ միայն ամուսնով, այլ նաև չորս երեխաներից բաղկացած ընտանիք:

Դրանիք առաջ երկար ժամանակ ես զգում էի, թե դահուկավարում էի հարթ լույսի մեջ, հարցնելով. «Ի՞նչ է ինձ համար պահում ապագան»: Ես աշխատում էի հետևել իմ հայրապետական օրհնության հորդորներին: Ես ջանասիրաբար սովորում էի դպրոցի ուսուցչուհի դառնալու համար և շարունակեցի իմ կրթությունը, դառնալով տարրական դպրոցի տնօրեն: Ես աղոթում էի իմ Երկնային Հորը և հայցում էի Սուրբ Հոգու առաջնորդությունը: Ես հավատարմորեն իմ մեջ պահում էի մարգարեների խոստումը, որն ինձ հավաստիացնում էր, որ եթե ես «մնամ ճշմարիտ և հավատարիմ, պահել իմ ուխտերը, ծառայեմ Աստծուն, սիրում իմ Երկնային Հորը և Տեր Հիսուս Քրիստոսին, ես երբեք չեմ զրկվի որևէ հավերժական օրհնությունից, որ մեր Երկնային Հայրը ունի Իր հավատարիմ զավկաների համար»:[15]

Ես գիտեմ, որ իմ կրթությունը պատրաստել է ինձ կյանքի համար, որի մասին ես պատկերացում անգամ չունեի, երբ երիտասարդ կին էի: Ես կարծում էի, որ սովորում եմ՝ դպրոցում և իմ ապագա երեխաներին ուսուցանելու համար, սակայն ես չգիտեի, որ Տերը պատրաստում էր ինձ նաև անգլերեն ուսուցանելուն Մոնղոլիայում, երբ միսիայում էինք ամուսնուս հետ, և ուսուցանելուն Եկեղեցու երիտասարդ կանանց աշխարհով մեկ, կամ ուսուցանելուն իմ թոռներին գիտելիքի արժեքի մասին՝ բոլոր այն հիանալի օրհնությունները, որոնք ես երբեք չէի պատկերացրել:

Ես վկայում եմ, որ մեր Երկնային Հայրը ճանաչում և սիրում է ձեզ: Նա մեծապես վստահում է ձեզ և աշխատանք ունի, որը միայն *դուք* կարող եք անել: Ես ուզում եմ հավաստիացնել ձեզ, որ դուք *պատրաստված* կլինեք այդ մեծ աշխատանքին, եթե ուսում փնտրեք ուսումնասիրելով և հավատքով: Սրա մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Gordon B. Hinckley, “Reaching Down to Lift Another,” *Liahona,* Jan. 2002, 67.
2. *Երիտասարդներին զորացնելու հասար* (գրքույկ, 2011), 9:
3. Վարդապետություն և Ուխտեր 88.118:
4. Gordon B. Hinckley, *Way to Be! Nine Ways to Be Happy and Make Something of Your Life* (2002), 28.
5. Gordon B. Hinckley, “Seek Learning,” *New Era,* Sept. 2007, 2, 4.
6. Thomas S. Monson, “If Ye Are Prepared Ye Shall Not Fear,” *Liahona*, Nov. 2004, 116.
7. *Երիտասարդներին զորացնելու հասար,* 9:
8. Cheryl Hanewicz and Susan R. Madsen, “The Influence of a Mother on a Daughter’s College Decision,” *Utah Women and Education Project Research Snapshots,* no. 3 (Jan. 2011): 1.
9. Marjorie Cortez, “Mom’s Education Key to Halt Poverty Cycle,” *Deseret News,* Sept. 23, 2011, A1.
10. Olene Walker, “More Utah Women Need to Finish College,” *Salt Lake,* Oct. 30, 2011, O4.
11. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա*, Նոյ. 2010, 129:
12. Ալմա 56.47:
13. Մատթեոս 25.8–10:
14. Henry B. Eyring, “Education for Real Life,” *Ensign,* Oct. 2002, 18.
15. M. Russell Ballard, “Preparing for the Future,” *Ensign,* Sept. 2011, 27.

Էլեյն Ս. Դալտոն
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

Այժմ է ժամանակը՝ վեր կացեք և շողացեք

Որպես Աստծո դուստրեր, դուք ծնվել եք առաջնորդելու:

Երիտասարդ կանանց գրասենյակի իմ պատուհանից իմ առջև բացվում է Սոլթ Լեյքի տաճարի մի հրաշագեղ տեսարան: Ամեն օր ես տեսնում եմ Մորոնի հրեշտակին՝ կանգնած տաճարի գագաթին՝ որպես ոչ միայն իր, այլև մեր հավատքի շողացող խորհրդանիշ: Ես սիրում եմ Մորոնիին, որովհետև ամբարիշտ հասարակության մեջ նա մնաց մաքուր ու շիտակ: Նա իմ հերոսն է: Նա միայնակ կանգնեց: Կարծես, այսօր տաճարի գագաթին կանգնած նա մեզ կոչ է անում՝ քաջություն ունենալ, հիշել, թե ով ենք մենք, և արժանի լինել տաճար մտնելուն,- «վեր կենալ և շողալ»,[1] վեր կանգնել աշխարհի աղմուկից, և ինչպես Եսայիան է մարգարեացել, «գալ Տիրոջ սարը»,[2] - սուրբ տաճար:

Այսօր այստեղ հավաքված են Տիրոջ ընտրյալ դուստրերը: Ողջ աշխարհում չկա ճշմարտությունը և արդարակեցությունը պաշտպանող ավելի ազդեցիկ խումբ, ինչպիսին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու երիտասարդ աղջիկներն ու կանայք են: Ես տեսնում եմ ձեր վեհությունը և գիտեմ, որ դուք աստվածային ինքնություն և ճակատագիր ունեք: Դուք նախաերկրային կյանքում եք առանձնացել: Ձեր տոհմագիծը իր մեջ կրում է ուխտեր և խոստումներ: Դուք ժառանգել եք հավատարիմ հայրապետների՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի հոգևոր հատկանիշները: Այս երեկո այստեղ հավաքված ձեզանից յուրաքանչյուրին մի անգամ Աստծո մարգարեն անվանեց ապագայի «շողացող պայծառ հույս»:[3] Ես համաձայն եմ: Այս մարտահրավերներով լի աշխարհում, ձեր լույսը պայծառ շողում է: Անշուշտ այս «օրերը երբեք չեն մոռացվի»:[4] Սա *ձեր* օրերն են, և *այժմ* է ժամանակը: Ամենուր երիտասարդ կանայք, «վեր կացեք և շողացեք, որպեսզի ձեր լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար»:[5]

«Չափանիշը ճշգրտության և կատարելության չափորոշիչ է»:[6] Մենք պետք է լինենք սրբության չափանիշ, որպեսզի ողջ աշխարհը տեսնի: *Երիտասարդներին զորացնելու համար* նոր խմբագրված գրքույկը պարունակում է ոչ միայն ճշգրիտ ապրելու չափանիշներ, այլև խոստացված օրհնություններ, եթե հետևեք դրան: Այս կարևոր գրքույկում պարունակվող խոսքերը չափանիշ են աշխարհի համար, և այդ չափանիշներով ապրելու դեպքում դուք կիմանաք, թե ինչ պետք է անեք էլ ավելի Փրկչին նմանվելու և խավարի մեջ ընկղմվող աշխարհում երջանիկ լինելու համար: Այդ չափանիշներով ապրելու դեպքում դուք կարժանանաք Սուրբ Հոգու մշտական ընկերակցությանը: Իսկ աշխարհում, որտեղ դուք եք ապրում, դուք այդ ընկերակցության կարիքը կունենաք ճակատագրական որոշումներ կայացնելիս, որոնք ձեր ապագա հաջողության և երջանկության գրավականը կլինեն: Այդ չափանիշներով ապրելը կօգնի ձեզանից յուրաքանչյուրին արժանանալ Տիրոջ սուրբ տաճար մտնելուն և այնտեղ ստանալ օրհնություններ և զորություն, որոնք սպասում են ձեզ, երբ դուք սուրբ ուխտեր կապեք և պահեք:[7]

Երբ մեր դուստրը՝ Էմին, փոքր աղջիկ էր, նա սիրում էր հետևել, ինչպես եմ ես պատրաստվում Եկեղեցի գնալուն: Ինձ մանրակրկիտ զննելուց հետո, նա սանրում էր իր վարսերը և հագնում զգեստը, ապա միշտ խնդրում էր, որ ես իր դեմքին «փայլ» քսեի: «Փայլ» նա անվանում էր այն խիտ կրեմը, որ ես օգտագործում էի կնճիռները կանխելու համար: Ես մի փոքր կրեմ էի քսում Էմիի թշերին և շուրթերին, ապա նա ժպտում էր և ասում. «Այժմ մենք պատրաստ ենք, կարող ենք գնալ»: Էմին չէր հասկանում, որ նա արդեն ուներ այդ «փայլը»: Նրա դեմքը փայլում էր, որովհետև նա մաքուր էր, անմեղ, բարի: Նա ուներ իր հետ Հոգին, և դա ակնհայտ էր:

Ես ուզում եմ, որ այս երեկո այստեղ հավաքված յուրաքանչյուր երիտասարդ աղջիկ իմանա և հասկանա, որ ձեր գեղեցկությունը, ձեր «փայլը», կապ չունի շպարի, խիտ կրեմի, նորաձև հագուստի կամ սանրվածքի հետ: Դա պայմանավորված է ձեր անձնական մաքրությամբ: Երբ ապրում եք չափանիշներով և արժանի եք դառնում Սուրբ Հոգու մշտական

ընկերակցությանը, դուք կարող եք հզոր ազդեցություն ունենալ աշխարհում: Ձեր օրինակը, այսինքն՝ ձեր աչքերի փայլը, կներգործի մյուսների վրա, ովքեր կտեսնեն ձեր «փայլը» և կցանկանան ձեզ նմանվել: Որտեղի՞ց եք ձեռք բերում այդ լույսը: Տերն է լույսը, «և Հոգին լուսավորում է ամեն մարդու, աշխարհով մեկ, որ ականջ է դնում Հոգու ձայնին»:[8] Աստվածային լույսը արտացոլվում է ձեր աչքերի և դեմքի վրա, երբ դուք մոտենում եք ձեր Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Ահա թե ինչպես ենք մենք «փայլ» ստանում: Բացի այդ, դուք բոլորդ էլ կարող եք տեսնել, որ «փայլուն կրեմը» իրականում չի օգնել իմ կնճիռներին, համենայն դեպս:

«Վեր կացեք և շողացեք»՝ սա կոչ է ձեզանից յուրաքանչյուրին՝ առաջնորդել աշխարհը մի հզոր գործում, բարձրացնելով չափանիշը, և առաջնորդելով այս սերունդը առաքինությամբ, մաքրությամբ և տաճարին արժանի լինելով: Եթե ցանկանում եք փոխել աշխարհը, *դուք պետք է տարբերվեք աշխարհից*: Ես միանում եմ Ջոզեֆ Ֆ. Սմիթի խոսքերին, որն ասել է այսօրվա կանանց. «Պետք չէ, որ դուք առաջնորդվեք աշխարհի [երիտասարդ] կանանց կողմից, դուք պետք է ձեր ետևից տանեք . . . աշխարհի [երիտասարդ] կանանց, այն ամենի առումով, ինչը մարդկանց զավակների համար մաքրագործող է»:[9] Այս խոսքերն արդիական են այսօր: Որպես Աստծո դուստրեր դուք ծնվել եք առաջնորդելու:

Աշխարհում, որտեղ մենք ենք ապրում, առաջնորդելու ձեր ունակությունը կպահանջի Սուրբ Հոգու ուղղորդումը և մշտական ընկերակցությունը, որը ձեզ կասի «բոլոր բաները, որ դուք պետք է անեք»,[10] եթե դուք ընդունեք և ապավինեք Նրա առաջնորդությանը և հուշումներին: Եվ քանի որ Սուրբ Հոգին չի բնակվում անմաքուր տաճարներում, մեզանից յուրաքանչյուրը պետք է մանրակրկիտ քննի իր սովորույթները և սիրտը: Մենք բոլորս ինչ-որ բան փոխելու, ապաշխարելու կարիք կունենանք: Ինչպես Մորմոնի Գրքում Լամոնի թագավորի հայրն է ասում. «Ես կհրաժարվեմ իմ *բոլոր* մեղքերից՝ քեզ գիտենալու համար»:[11] Արդյո՞ք մենք՝ դուք և ես, ցանկանում ենք նույնը անել:

Արիզոնայի Քուին Քրիքում մի խումբ երիտասարդներ որոշեցին «վեր կենալ և շողալ» և առաջնորդել իրենց համայնքի երիտասարդներին՝ ապրելով *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկում տրված չափանիշներով: Նրանք իրենց օրագրերում գրի առան այն ամենը, ինչն իրենց կարծիքով խոչընդոտում էր իրենց առաջընթացին, կամ այն, ինչ ցանկանում էին փոխել իրենց կյանքում, և ապա մի փոս փորեցին: Նրանք եկան միասին, պատռեցին օրագրի այդ էջը և գցեցին փոսի մեջ, ճիշտ ինչպես Մորմոնի Գրքում Ամմոնի ժողովուրդը թաղեց պատերազմի իր զենքերը:[12] Ապա նրանք թաղեցին այդ էջերը, և այդ օրը նրանցից յուրաքանչյուրը փոխվելու պարտավորություն ստանձնեց: Նրանք ապաշխարեցին: Նրանք որոշեցին վեր կենալ:

Կա՞ ինչ-որ բան ձեր կյանքում, որ կուզենայիք փոխել: Դուք կարող եք դա անել: Դուք կարող եք ապաշխարել Փրկչի անսահման քավող զոհաբերության շնորհիվ: Նա հնարավոր է դարձրել դա իմ և ձեր համար, փոխվել, կրկին մաքուր

ու անբիծ դառնալ և Նրան նմանվել: Եվ Նա խոստացել է, որ այդ դեպքում Նա այլևս չի հիշի մեր մեղքերը և սխալները:[13]

Երբեմն թվում է՝ անհնար է այլևս շողալ: Դուք այնքան շատ դժվարությունների եք հանդիպում, որ կարող են փակել ամեն լույսի աղբյուր, որը Փրկիչն է: Երբեմն ճանապարհը դժվար է և լինում են պահեր, երբ կարծես խիտ մառախուղն է փակում լույսը: Այդպես եղավ Ֆլորենս Չադվիկ անունով երիտասարդ աղջկա հետ: 10 տարեկանից Ֆլորենսը պարզեց, որ ինքը շնորհալի լողորդ է: Նա լողալով անցավ Անգլիայի նեղուցը 13 ժամ 20 րոպե ռեկորդային ժամանակով: Ֆլորենսը սիրում էր մարտահրավերներ, և հետագայում նա փորձեց լողալ Կալիֆոռնիայի լողափից մինչև Կատալինա կղզի, որը մոտ 34 կմ է: Այդ լողի ժամանակ 15 ժամ լողալուց հետո նա հոգնեց: Խիտ մառախուղը ծածկում էր տեսադաշտը: Մայրիկին, որը նավակով գնում էր իր կողքից, Ֆլորենսն ասաց, որ չի կարողանում այլևս շարունակել: Մայրը և նրա մարզիչը նրան խրախուսում էին, որ շարունակի, սակայն նա միայն մառախուղ էր տեսնում: Նա դադարեցրեց իր լողը, և բարձրանալով նավակի վրա հայտնաբերեց, որ ափին հասնելու համար մնացել է 1.6 կմ: Ավելի ուշ, հարցազրույցի ժամանակ, երբ նրան հարցրեցին, թե ինչու դադարեցրեց լողալը, նա խոստովանեց, որ խնդիրը սառը ջուրը կամ տարածությունը չէր: Նա ասաց. «Ինձ հաղթեց մառախուղը»:[14]

Հետագայում նա փորձեց հաղթահարել այդ տարածությունը, և կրկին խիտ մառախուղ էր: Սակայն այս անգամ նա շարունակեց լողալ և հաջողությամբ հասավ ափ: Երբ նրան հարցրեցին, թե ինչն էր տարբերությունը, նա ասաց, որ խիտ մառախուղի պայմաններում և ողջ լողալու ընթացքում իր մտքում պահում էր ափի եզրագծի պատկերը:[15]

Ֆլորենս Չադվիկի համար ափի եզրագիծն էր նրա նպատակը: Մեզանից յուրաքանչյուրի համար տաճարն է մեր նպատակը: Երիտասարդ կանայք, կենտրոնացեք: Ձեր տեսադաշտից մի կորցրեք ձեր

նպատակները: Թույլ մի տվեք, որ բարոյական աղտոտվածության խիտ մառախուղը և աշխարհի շեղող ձայները ձեզ խանգարեն ձեր նպատակին հասնել, չափանիշներով ապրել, վայելել Սուրբ Հոգու ընկերակցությունը և արժանի լինել սուրբ տաճար մտնելուն: Միշտ ձեր սրտում և մտքում պահեք Փրկչի սուրբ տան՝ տաճարի պատկերը:

Մի քանի շաբաթ առաջ ես կանգնած էի Ռենո Նեվադա Տաճարի սելեստիալ սենյակում: Այդ սենյակ թափանցող լույսը փայլում էր և սենյակն ավելի լուսավոր էր դառնում բյուրեղյա ջահի շնորհիվ, որն, արտացոլելով լույսը, ծիածանագույն երանգներով սփռում էր այն ամենուր: Շունչս պահած ես հասկացա, որ Փրկիչն է «լույսը և կյանքը աշխարհի»,[16] որ *Նրա* լույսը պետք է պահենք և անդրադարձնենք: *Մենք* փոքր բյուրեղներ ենք, որ արտացոլում ենք Նրա լույսը, և դրա համար մենք պետք է լինենք մաքուր և աշխարհի փոշուց զերծ: Այդ օրը տաճարում կանգնած, ես մտքում կրկին լսեցի Մորոնիի կոչը մեզ՝ Սիոնի դուստրերին. «Զարթնի՛ր և ելի՛ր փոշուց»:[17] «Եվ ձեռք մի տուր չար պարգևի, ոչ էլ անմաքուր բանի»:[18] «Զարթնի՛ր և ելի՛ր . . . և հագի՛ր գեղեցիկ հագուստներդ, ո՛վ Սիոնի դուստր . . ., որ հավերժական Հոր ուխտերը, որոնք նա արել է քեզ հետ, ո՛վ Իսրայելի տուն, կատարվեն»:[19]

Տաճարի խոստացված օրհնությունները տարածվում են ոչ միայն ձեր, այլև բոլոր սերունդների վրա: Եթե տաճարը դարձնեք ձեր նպատակը, ձեր բարի ազդեցությունը դուրս կգա ժամանակի և տարածության սահմաններից, և աշխատանքը, որ կատարում եք մահացածների համար, կլինի մարգարեության իրականացում:

Անցյալ գերագույն համաժողովին ես ոգեշնչվեցի, լսելով Երեց Դեյվիդ Ա. Բեդնարին, որը ձեզանից յուրաքանչյուրին կոչ արեց ակտիվորեն զբաղվել ձեր ընտանիքի պատմությամբ և տաճարային աշխատանք կատարել նրանց համար, ովքեր մահացել են առանց Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի օրհնությունները ստանալու:[20] Երբ նա այդ կոչն արեց ձեզ, սիրտս բաբախեց: Վարդապետություն և Ուխտերում մենք կարդում ենք «ուրիշ ընտրյալ հոգիների մասին, որոնք պահվել էին՝ առաջ գալու ժամանակների լրության մեջ, որպեսզի մասնակցեն վերջին օրերի մեծ աշխատանքի հիմնադրմանը, այդ թվում՝ տաճարների կառուցմանը և նրանցում արարողությունների կատարմանը՝ մահացածների փրկագնման համար»:[21] Սա ձեր օրն է և ձեր աշխատանքը սկսվել է: Այժմ է տաճարային երաշխավորագրին արժանանալու և այն ձեռք բերելու ժամանակը: Այդ աշխատանքը կատարելիս դուք կդառնաք փրկիչներ Սիոն սարի վրա:[22]

Երեց Ռասսել Մ. Նելսոնն ասել է ձեր մասին. «Եկեղեցու երիտասարդ կանանց ազդեցությունը քնած հսկայի պես կարթնանա, վեր կելնի և կոգեշնչի երկրի բնակիչներին որպես արդարակեցության հզոր ուժ»:[23] Երիտասարդ կանայք, վեր կացեք և գրավեք ձեր տեղը փառահեղ իրադարձություններում, որոնք կկերտեն ձեր և աշխարհի ապագան: Այժմ է ժամանակը:

«Բարձր լեռան վրա մի դրոշ է բացված: Ազգեր նայեք նրա ծածանումին ազատ»:[24] Երիտասարդ

կանայք, դուք եք դրոշը: Եղեք առաքինի ու մաքուր, փնտրեք Սուրբ Հոգու ընկերակցությունը, թաղեք ձեր մեղքերը և զանցանքները, զգոն եղեք և մի թողեք, որ բարոյական աղտոտվածության մառախուղը փակի ձեր նպատակները: Եղեք տաճարին արժանի այժմ: Կրեք ձեր «փայլը»: Իմ ողջ սրտով ես վկայում եմ, որ Աստված ապրում է, Նա կլուսավորի մեր կյանքը, եթե մենք մոտենանք Նրա Միրելի Որդուն՝ մեր Փրկչին, Հիսուս Քրիստոսին: Եվ ես աղոթում եմ, որ Մորոնիի պես, մենք «վեր կենանք և շողանք, որպեսզի [մեր] լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար»:[25] Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 115.5:
2. Եսայիա 2.3; 2 Նեփի 12.3:
3. Gordon B. Hinckley, "Standing Strong and Immovable," *Worldwide Leadership Training Meeting,* Jan. 10, 2004, 20.
4. Oliver Cowdery, in Joseph Smith—History 1:71, note.
5. Վարդապետություն և Ուխտեր 115.5:
6. Ezra Taft Benson, "Strengthen Thy Stakes," *Tambuli,* Aug. 1991, 4.
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 109.22:
8. Վարդապետություն և Ուխտեր 84.46:
9. *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (1998), 184.
10. 2 Նեփի 32.5:
11. Ալմա 22.18; շեշտադրումն ավելացված է:
12. Տես Ալմա 24.17:
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 58.42:
14. Տես Sterling W. Sill, in Conference Report, Apr. 1955, 117:
15. Տես Randy Alcom, "Florence Chadwick and the Fog," epm.org/resources/2010/Jan/21/florence-chadwick-and-fog: Տես նաև "Florence Chadwick," in *Encyclopedia of World Biography,* vol. 19 (2004): 64–66; "Navigation Information" and "Swim Successes," Catalina Channel Swimming Federation, swimcatalina.com, accessed Mar. 27, 2012: Լրացուցիչ բազմաթիվ պատմություններ կան Ֆլորենս Չադվիկի մասին:
16. 3 Նեփի 9.18:
17. Մորոնի 10.31:
18. Մորոնի 10.30:
19. Մորոնի 10.31:
20. Տես Դեյվիդ Ա. Բեղնար, Երեխաների սրտերը պտիտ շրջվեն, *Լիահոնա*, Նոյ. 2011, 24–27:
21. Վարդապետություն և Ուխտեր 138.53–54:
22. Տես Աբրահամ Ա.21; Վարդապետություն և Ուխտեր 103.9; և *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 472–73:
23. Russell M. Nelson, "Daughters of Zion," *New Era Young Women Special Issue,* YW Nov. 1985, 9.
24. "High on the Mountain Top," *Hymns,* no. 5.
25. Վարդապետություն և Ուխտեր 115.5:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Հավատացեք, հնազանդվեք և համբերեք

Հավատացեք, որ անչափ կարևոր է ավետարանի ճշմարտություններին հավատարիմ և ամուր մնալը: Ես վկայում եմ դրա մասին:

Իմ սիրելի երիտասարդ քույրեր, խոսքս ձեզ հղելու պատասխանատվությունը խոնարհեցնող է: Ես աղոթում եմ աստվածային օգնության համար, որ կարողանամ ինչպես հարկն է օգտագործել նման առիթը:

Մոտ 20 տարի առաջ, դուք դեռևս չէիք սկսել ձեր մահկանացու ճամփորդությունը և գտվում էիք ձեր երկնային տանը: Այնտեղ դուք նրանց հետ էիք, ովքեր սիրում էին ձեզ և մտահոգվում ձեր հավերժական բարօրությամբ: Ի վերջո, երկրային կյանքը անհրաժեշտ դարձավ ձեր առաջընթացի համար: Անշուշտ հրաժեշտի և վստահության խոսքեր ասվեցին: Դուք մարմին ստացաք և դարձաք մահկանացու՝ կտրվելով ձեր Երկնային Հոր ներկայությունից:

Ինչևէ, ուրախ ընդունելություն էր սպասում ձեզ այստեղ՝երկրի վրա: Այդ առաջին տարիները առանձնահատուկ ու թանկ տարիներ էին: Սատանան զորություն չուներ ձեզ գայթակղելու, քանի որ դեռևս պատասխանատվության տարիքին չէիք հասել: Դուք անմեղ էիք Աստծո առաջ:

Շուտով դուք մուտք գործեցիք մի փուլ, որը ոմանք անվանում են «սոսկալի դեռահասներ»: Ես նախընտրում եմ «սքանչելի դեռահասներ»: Ինչպիսի հնարավորությունների ժամանակ է, աճի փուլ, զարգացման շրջան, որը նշանավորվում է գիտելիքի ձեռք բերմամբ և ճշմարտության որոնումներով:

Ոչ ոք դեռահաս տարիները չի անվանել հեշտ: Դրանք հաճախ անապահովության տարիներ են, երբ զգացում է պատում, որ դու այնքան էլ լավը չես, փորձելով քո տեղը գտնել հասակակիցների շրջանում և ընդունվել նրանց կողմից: Սա մի շրջան է, երբ դուք դառնում եք ավելի անկախ, և գուցե ցանկանում եք ավելի շատ ազատություն, քան այժմ ձեր ծնողներն են ցանկանում ձեզ տալ: Դրանք նաև ամենակարևոր տարիներն են, երբ սատանան

կգայթակղի ձեզ և կանի ամեն ինչ, որպեսզի հրապուրելով շեղի այն ուղուց, որը տանում է ձեզ ետ՝ դեպի այն երկնային տունը, որտեղից եկել եք, ձեր սիրելիների և ձեր Երկնային Հոր մոտ:

Ձեր շուրջն աշխարհը համալրված չէ այն ամենով, որպեսզի ձեզ տրամադրի անհրաժեշտ օգնությունը այս դավաճանություններով լի ճանապարհը հաղթահարելու համար: Մեր հասարակության մեջ այսօր շատերն են կարծես դուրս եկել ապահով ու խաղաղ նավամատույցից:

Թույլատրելիությունը, անբարոյականությունը, պոռնոգրաֆիան, թմրանյութերը, հասակակիցների ճնշումները, այս և շատ ավելին, պատճառ են դառնում տարուբերվելու մեղքի ծովի վրա և հարվածվելու կորսված հնարավորությունների, զրկված օրհնությունների և խորտակված երազանքների սրածայր խութերին:

Արդյոք կա՞ դեպի ապահովություն տանող ուղի, ահարկու կործանումից փախուստ: Բարձրաձայն պատասխանն է՝ *այո*: Խորհուրդ եմ տալիս ձեզ՝ նայեք Տիրոջ փարոսին: Ասել եմ և կրկին կասեմ՝չկա մշուշ այնքան խիտ, գիշեր այնքան մութ, հողմ այնքան ուժեղ, ծովագնաց այնքան կորած, որին Տիրոջ փարոսը չկարողանա փրկել: Այն երևում է կյանքի փոթորիկների միջից: Այն կանչում է՝ *«Այստեղ ապահով է: Այս կողմն է տան ճանապարհը»*: Այն ուղարկում է լույսի ազդանշաններ, որոնք հեշտությամբ են երևում և երբեք չեն մարում: Այդ ազդանշանները ձեզ կուղեկցեն ետ՝ դեպի ձեր երկնային տուն:

Ես այսօր ուզում եմ խոսել Տիրոջ փարոսի երեք կարևոր ազդանշանների մասին, որոնք կօգնեն ձեզ վերադառնալ այն Հոր մոտ, որը անհամբեր սպասում է ձեր հաղթական տունդարձին: Այդ երեք ազդանշանները՝ *հավատալ, հնազանդվել* և *համբերել*:

Առաջինը, ես նշում եմ հիմնական և կարևոր ազդանշանը՝ *հավատալ*: Հավատացեք, որ դուք Երկնային Հոր դուստրն եք, որ Նա սիրում է ձեզ և դուք այստեղ փառահեղ նպատակի համար եք եկել՝ ձեռք բերելու ձեր հավերժական փրկությունը: Հավատացեք, որ անչափ կարևոր է ավետարանի ճշմարտություններին հավատարիմ և ամուր մնալը: Ես վկայում եմ դրա մասին:

Իմ երիտասարդ ընկերներ, հավատացեք Երիտասարդ Կանանց թեմայի խոսքերին, որոնք դուք ամեն շաբաթ արտասանում եք: Խորհեք այդ խոսքերի նշանակության մասին: Դրանցում ճշմարտություն կա: Ձգտեք միշտ ապրել ըստ այդ արժեքների: Հավատացեք, ինչպես սահմանում է ձեր թեման, որ եթե դուք ընդունեք այդ արժեքները և գործեք ըստ դրանց, դուք պատրաստ կլինեք ամրացնելու ձեր տունը և ընտանիքը, կապելու և պահելու սուրբ ուխտերը, ստանալու տաճարային ծեսերը և, ի վերջո, վայելելու վեհացման օրհնությունները: Սրանք ավետարանի սքանչելի ճշմարտություններն են, և դրանց հետևելով, դուք ավելի երջանիկ կլինեք ձեր կյանքում այստեղ և ապագայում, քան եթե անտեսեք դրանք:

Ձեզանից շատերին ավետարանի ճշմարտություններն ուսուցանվել են օրորոցից: Դուք ուսուցանվել եք սիրող ծնողների և հոգատար ուսուցիչների կողմից: Նրանց հաղորդած ճշմարտությունները օգնել են ձեզ վկայություն ձեռք բերել. դուք հավատացել եք այն ամենին, ինչ ուսուցանվել եք: Թեև այդ վկայությունը կարող է շարունակ հոգևոր սնուցում ստանալ և ուսումնասիրությամբ աճել, աղոթելով առաջնորդության համար և ամեն շաբաթ հաճախելով Եկեղեցու ժողովներին, ձեզանից է կախված վկայությունը կենդանի պահելը: Սատանան իր ողջ ուժով կփորձի կործանել այն: Ողջ կյանքի ընթացքում դուք պետք է սնուցեք այն: Վառվող կրակի նման, ձեր վկայությունը, եթե մշտապես չսնուցվի, կսկսի մարել վերածվելով առկայծող ածուխների, և ապա լիովին կհանգչի: Դուք դա չպետք է թույլ տաք:

Ձեր կիրակնօրյա ժողովներին և շաբաթվա երեկոյան միջոցառումներին հաճախելուց բացի, երբ հնարավորություն ունենաք

մասնակցելու սեմինարիային՝ լինի վաղ առավոտյան, թե ազատ դասաժամերով, բաց մի թողեք այդ առիթը: Ձեզանից շատերը այժմ հաճախում են սեմինարիա: Ինչպես մյուս բաները կյանքում, այն ինչ կվերցնեք սեմինարիայի դասընթացից, կախված կլինի ձեր վերաբերմունքից և ուսուցանվելու ձեր պատրաստակամությունից: Եղեք խոնարհ և ուսումնատենչ: Ես երախտապարտ եմ, որ հնարավորություն եմ ունեցել դեռահաս տարիքում հաճախելու վաղ առավոտյան սեմինարիայի, քանի որ այն մեծ դեր է խաղացել իմ զարգացման և իմ վկայության զարգացման վրա: Սեմինարիան կարող է կյանքեր փոխել:

Մի քանի տարի առաջ ես տնօրենների խորհրդի անդամ էի մի հրաշալի մարդու հետ, որը շատ հաջողակ էր կյանքում: Ինձ վրա մեծ տպավորություն էր թողել նրա ազնվությունը և նրա հավատարմությունը Եկեղեցուն: Ես իմացա, որ նա վկայություն էր ձեռք բերել և Եկեղեցուն էր միացել սեմինարիայի շնորհիվ: Նա ամուսնացել էր մի կնոջ հետ, որն իր ողջ կյանքում Եկեղեցու անդամ էր եղել: Նա ոչ մի եկեղեցու չէր պատկանում: Տարիների ընթացքում, չնայած իր կնոջ ջանքերին, նա ոչ մի հետաքրքրություն չէր ցուցաբերում եկեղեցու հանդեպ: Հետո նա սկսեց իր երկու դուստրերին մեքենայով տանել վաղ առավոտյան սեմինարիայի դասերին: Նա մեքենայի մեջ սպասում էր մինչև երեխաները ավարտում էին դասը, ապա նրանց տանում էր դպրոց: Մի օր անձրևում էր, և դուստրերից մեկն ասաց. «Հայրի՛կ, արի ներս, սրահում կարող ես սպասել»: Նա ընդունեց հրավերը: Դասարանի դուռը բաց էր, և նա սկսեց լսել: Հոգին դիպչեց նրա սրտին: Մինչև այդ ուսումնական տարվա վերջ նա այցելեց սեմինարիա իր դուստրերի հետ, որի արդյունքում դարձավ անդամ և ողջ կյանքում ակտիվ մնաց Եկեղեցում: Թող որ սեմինարիան կառուցի և ամրացնի ձեր վկայությունը:

Կլինեն ժամանակներ, երբ դուք կդիմակայեք խնդիրների, որոնք կվտանգեն ձեր վկայությունը կամ գուցե արհամարհեք այն՝ այլ հետաքրքրությունների հետամուտ լինելով: Ես խնդրում եմ ձեզ ամուր պահեք այն: Դա ձեր և միայն ձեր պատասխանատվությունն է՝ վառ պահել վկայության կրակը: Ջանք է պահանջվում, սակայն դա ջանք է, որի համար դուք երբեք չեք զղջա: Ես հիշում եմ Ջուլի դե Ազիվեդո Հենքսի գրած երգի խոսքերը: Իր վկայության մասին նա գրել է.

Փուփոխական քամիների միջով,
Պարուրված ցավի ամպերով
Պաշտպանում եմ այն իմ կյանքով:
Ես կարիք ունեմ ջերմության, և՝
լույսի,
Թեև փոթորիկը մոլեգնի,
Կանգնած անձրևի տակ
տեղատարափ
Ես մնում եմ
Կրակին պահապան:[1]

Հավատացեք, և ապա վառ պահեք ձեր վկայության կրակը՝ ինչ էլ որ լինի:

Հաջորդը, երիտասարդ աղջիկներ, *հնազանդ եղեք*: Հնազանդվեք ձեր ծնողներին: Հնազանդվեք Աստծո օրենքներին: Դրանք տրվել են մեզ սիրող Երկնային Հոր կողմից: Դրանց հնազանդվելու դեպքում մեր կյանքը կլինի ավելի լիարժեք ու ավելի թեթև: Մեր դժվարություններն ու խնդիրները կլինեն հեշտ տանելի: Մենք կստանանք Տիրոջ խոստացված օրհնությունները: Նա ասել է. «Տերը պահանջում է սիրտն ու պատրաստակամ միտքը. և պատրաստակամն ու հնազանդը կճաշակեն Սիոնի հողի բարիքն այս վերջին օրերին»:[2]

Դուք միայն մեկ կյանք ունեք: Այն որքան կարող եք անախորժություններից զերծ պահեք: Դուք կգայթակղվեք, երբեմն էլ նրանց կողմից, ում ընկեր եք համարել:

Մի քանի տարի առաջ ես զրուցեցի մի Համաստեղության խորհրդատուի հետ, որն ինձ պատմեց իր դասարանի մի երիտասարդ աղջկա հետ տեղի ունեցած դեպքի մասին: Այդ աղջիկը բազմիցս գայթակղվել էր՝ հեռանալ ճշմարիտ ուղուց և գնալ մեղքի ճանապարհով: Իր դպրոցական ընկերների կողմից մշտապես հորդորվելու արդյունքում, ի վերջո, նա համաձայնեց շեղվել ճիշտ ուղուց: Ծրագրվեց, որ նա կասի իր ծնողներին, որ մասնակցելու էր Երիտասարդ Կանանց երեկոյան միջոցառմանը: Սակայն այնտեղ մնալու էր մինչև իր ընկերուհիները և նրանց հետ ժամադրված տղաները գային և նրան տանեին իրենց հետ: Այնուհետև նրանք մասնակցելու էին մի երեկույթի, որի ժամանակ ոգելից խմիչք էր մատուցվելու, իսկ մասնակիցների պահվածքը լինելու էր լրիվ հակառակը նրա, ինչ այդ աղջիկը գիտեր, որ ճիշտ է:

Ուսուցիչը աղոթել էր ոգեշնչման համար, որպեսզի օգներ իր աղջիկներին, հատկապես այդ աղջկան, որը անորոշ էր ավետարանի հանդեպ իր պարտավորվածության մեջ: Ուսուցիչը ոգեշնչում ստացավ այդ օրը նախատեսված թեմայի փոխարեն աղջիկների հետ խոսել բարոյապես մաքուր մնալու մասին: Երբ նա սկսեց կիսվել իր մտքերով և զգացումներով, երիտասարդ աղջիկն անընդհատ ստուգում էր ժամացույցը, որպեսզի չուշանա պայմանավորված ժամից: Սակայն որքան զրույցը շարունակվեց, այնքան նրա սիրտը շարժվեց, նրա գիտակցությունը արթնացավ և նրա վճռականությունը վերականգնվեց: Երբ ժամանակը եկավ, նա անտեսեց անընդմեջ իրեն կանչող մեքենայի ձայնային ազդանշանները: Նա ողջ երեկոն անցկացրեց իր ուսուցչի և մյուս աղջիկների հետ: Աստծո հաստատված ուղուց շեղվելու գայթակղությունը կասեցվեց: Սատանան պարտվեց: Երիտասարդ աղջիկը մնաց վերջում շնորհակալություն հայտնելու ուսուցչին դասի համար, որը օգնեց իրեն խույս տալ հնարավոր ողբերգական ելք ունեցող ժամանցից: Ուսուցչի աղոթքը պատասխանվեց:

Հետագայում ես իմացա, որ այդ երեկո իր ընկերներին, դպրոցի ճանաչված աղջիկներին և տղաներին, չմիանալու իր որոշման համար, այդ աղջիկը ամոթանք էր ստացել նրանց կողմից և ամիսներ շարունակ ոչ մի ընկեր չէր ունեցել

Մինեապոլիս, Մինեսոտա, ԱՄՆ

դպրոցում: Նրանք չէին կարողացել ընդունել, որ նա չէր ցանկացել անել այն, ինչ իրենք էին անում: Նրա համար անչափ դժվար և միայնակ շրջան էր, սակայն նա հաստատակամ մնաց և, ի վերջո, գտավ ընկերներ, որոնք նույն չափանիշներն ունեին: Այժմ, տարիներ անց, նա տաճարային ամուսնություն է կնքել և ունի չորս գեղեցիկ երեխա: Որքան այլ կարող էր լինել նրա կյանքը: Մեր որոշումները կերտում են մեր ճակատագիրը:

Թանկագին երիտասարդ աղջիկներ, թող որ ձեր ամեն մի որոշումը հետևյալ քննությունն անցնի. «Ի՞նչ է դա տալիս ինձ: Ի՞նչ է դա ինձ համար»: Եվ թող ձեր վարքագիծը շեշտի ոչ թե՝ «Ի՞նչ կմտածեն մյուսներն իմ մասին», այլ՝ «Ի՞նչ կմտածեմ ինքս իմ մասին»: Թող որ ձեզ վրա ներգործի այդ մեղմ, ցածր ձայնը: Հիշեք, որ ձեր հաստատման ժամանակ իշխանություն կրողը ձեռնադրել է ձեզ և ասել. «Ստացիր Սուրբ Հոգին»: Բացեք ձեր սրտերը և ձեր հոգիները, ճշմարտության մասին վկայող այդ հատուկ ձայնը լսելու համար: Ինչպես Եսայիա մարգարեն է խոստացել. «Քո ականջները լսելու են մի խոսք . . . որ ասէ. Սա է ճանապարհը՝ սորանով գնացեք»[3]:

Մեր օրերի ընդհանուր միտումը թույլատրելիությունն է: Ամսագրերը և հեռուստատեսության շոուները ցուցադրում են ֆիլմերի աստղերին, մարզական աշխարհի հերոսներին, նրանց, ում երիտասարդները ցանկանում են նմանվել, և որոնք անտեսելով Աստծո օրենքները մեղսավոր կյանք են վարում, կարծես թե առանց վատ հետևանքների: Մի հավատացեք դրան: Վճարելու, այսինքն՝ հաշիվը հավասարակշռելու ժամանակ կա: Ամեն մոխրոտիկ ունի իր կեսգիշերը, եթե ոչ այս, ապա հաջորդ կյանքում: Դատաստանի օրը բոլորի համար է լինելու: Դուք պատրա՞ստ եք: Դուք գո՞հ եք ձեր ապրելակերպից:

Եթե որևէ մեկը սայթաքել է իր ճանապարհին, ես խոստանում եմ ձեզ, որ ետդարձի ճանապարհ կա: Այդ ընթացքը կոչվում է ապաշխարություն: Մեր Փրկիչը մահացավ, որ ձեզ և ինձ տա այդ օրհնված պարգևը: Ուղին դժվար է, իսկ խոստումը՝ իրական: Տերն ասել է. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինին, ձյունի պես պիտի սպիտականան»:[4] «Եվ ես [դրանք] այլևս պիտի չհիշեմ»:[5]

Իմ սիրելի երիտասարդ քույրեր, դուք ունեք ազատ կամքի թանկ պարգևը: Խնդրում եմ՝ ընտրեք հնազանդվելը:

Վերջինը, *համբերեք*: Ի՞նչ է նշանակում համբերել: Ես սիրում եմ այս սահմանումը՝ *քաջարի դիմակայել*: Քաջությունը գուցե անհրաժեշտ է հավատալու համար, երբեմն այն անհրաժեշտ կլինի, որ դուք հնազանդվեք: Դրա կարիքն անշուշտ կունենաք, համբերելով մինչև այն օրը, երբ դուք կհեռանաք այս մահկանացու կյանքից:

Տարիների ընթացքում ես խոսել եմ բազմաթիվ մարդանց հետ, ովքեր ասել են ինձ. «Ես այնքան շատ խնդիրներ ունեմ, այնպիսի իրական հոգսեր: Ես կքված եմ կյանքի դժվարությունների տակ: Ի՞նչ կարող եմ անել»: Ես նրանց տվել եմ, և այժմ տալիս եմ ձեզ այս հատուկ խորհուրդը՝ երկնային առաջնորդություն փնտրեք օրեցօր: Ապագայի մասին մտահոգվելը դժվար է, պահի մասին հոգ տանելը՝ հեշտ: Մեզանից յուրաքնաչյուրը կարող է ճշգրիտ լինել միայն մեկ օր, ապա ևս մեկ օր, հետո ևս մեկ օր, մինչև որ կապրենք Հոգով առաջնորդված, Տիրոջը մոտ գտնվող կյանք, բարի գործերով և արդարակեցությամբ լի կյանք: Փրկիչը խոստացել է. «Ինձ նայեք և համբերեք մինչև վերջ, և դուք կապրեք. քանզի նրան, ով համբերում է մինչև վերջ, ես կտամ հավերժական կյանք»:[6]

Այս նպատակով եք եկել մահկանացու կյանք, իմ երիտասարդ ընկերներ: Չկա ավելի կարևոր բան, քան այն նպատակը, որին ձգտում եք հասնել, այսինքն՝ հավերժական կյանքը ձեր Հոր արքայությունում:

Դուք շատ թանկ դուստրերն եք մեր Երկնային Հոր՝ մեր օրերում ուղարկված երկիր նպատակի համար: Դուք պահվել եք մինչև այս ժամը: Հրաշալի, փառահեղ բաներ են պահված ձեզ համար, եթե միայն հավատաք, հնազանդվեք և համբերեք: Թող որ սա լինի ձեր օրհնությունը, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի, մեր Փրկչի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Julie de Azevedo Hanks, “Keeper of the Flame,” *Treasure the Truth* (compact disc, 1997).
2. Վարդապետություն և Ուխտեր 64.34:
3. Եսայիա Լ.21:
4. Եսայիա Ա.18:
5. Երեմիա ԼԱ.34:
6. 3 Նեփի 15.9:

Դարձնելով համաժողովը մեր կյանքի մասը

Այս վարժությունները և հարցերը կարող եք օգտագործել ընտանեկան քննարկում սկսելու կամ անհատապես խորհելու համար:

Ստորև նշված էջերի համարները ելույթների առաջին էջերի համարներն են:

Երեխաների համար

- Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը խոսում է երկու կարևոր բառերի մասին, որոնք նա ցանկանում է, որ մենք հիշենք, երբ զայթակղվում ենք որևէ մեկի հանդեպ ոչ բարի վերաբերմունք դրսևորել (էջ 70): Դուք հիշո՞ւմ եք, թե որոնք են այդ խոսքերը: Խոսեք ձեր ծնողների հետ վարքագծի այն տեսակների մասին, որոնք նա առաջարկում է մեզ դադարեցնել: Մտածեք, թե ինչպես դուք կարող եք ավելի նմանվել Հիսուս Քրիստոսին մյուսների հանդեպ ձեր վերաբերմունքի միջոցով:
- Երեց Ռասսել Մ. Նելսոնը խոսում է մեր ֆիզիկական մարմինների բազմաթիվ զարմանալի ունակությունների մասին (էջ 77), իսկ Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը ուսուցանում է, որ մեր Երկնային Հայրը սիրում է մեզ, անգամ, երբ մեր մարմինները կատարյալ չեն (էջ 80): Ինչպե՞ս եք զգում մարմին ունենալով: Մտածեք այն տարբեր գործողությունների մասին, որոնք կարող է կատարել ձեր մարմինը: Երբ ասում եք ձեր աղոթքները, մտածեք, թե ինչ կարող եք ասել Երկնային Հորը, շնորհակալություն հայտնելով Նրան այդ պարգևի համար:

Երիտասարդների համար

- Դուք ճանաչո՞ւմ եք մարդկանց, ովքեր տալիս են այն երեք հարցերը, որոնք նշում է մարգարեն իր ելույթի մեջ կիրակի առավոտյան նիստի ժամանակ (էջ 90). «Որտեղի՞ց ենք մենք եկել: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ւր ենք մենք գնում այս կյանքից հետո»: Կարդացեք այս հարցերին նրա պատասխանները և մտածեք, թե ինչպես դուք կարող եք կիսվել այս ճշմարտություններով մարդկանց հետ, ովքեր դեռ չգիտեն դրանց մասին:
- Որոշ մարդիկ չեն հասկանում, որ Վերջին Օրերի Սրբերը հավատում են և հետևում են Հիսուս Քրիստոսին: Կարդացեք Երեց Դալլին Հ. Օուքսի «Զոհաբերություն» ելույթը և մտածեք այս նախադասության մասին. «Ծառայության և զոհաբերության մեր կյանքը Տիրոջը և մեր մերձավորին ծառայելու մեր պարտավորվածության ամենաճիշտ արտահայտությունն են»

(էջ 19)։ Ինչպե՞ս է ձեր ապրելաձևը խոսում Փրկչի վերաբերյալ ձեր վկայության մասին։

- Երեց Քվենթին Լ. Քուքը ուսուցանել է. «Երբ մեկը համահունչ չէ հավատքի երգի հետ, նա համահունչ չէ Հոգու հետ» (էջ 41)։ Մտածեք այն մասին, թե ինչպես է հնչում չլարված գործիքը և ինչը կարող է պատճառ դառնալ, որ գործիքը լարից ընկնի։ Ի՞նչ որոշակի բաներ դուք կարող եք անել, որպեսզի համահունչ լինեք հավատքի երգի հետ։
- Այս համաժողովի մի քանի խոսնակներ խոսեցին իրենց ընտանիքների մասին, ներառյալ ընտանիքների մասին, որտեղ ոչ բոլորն են անդամ, որտեղ մեկ ծնող կա միայն և որոնք տարբեր տեսակի դժվարությունների են հանդիպում։ Ի՞նչ են սովորել այդ խոսնակները իրենց ընտանիքներից և ինչն են սկսել գնահատել։ Ի՞նչ եք սիրում և գնահատում դուք ձեր ընտանիքներում։ Ինչպե՞ս կարող եք օգնել ձեր ընտանիքի անդամներին և բարձրացնել նրանց։

Չափահասների համար

- Նախագահ Բ ոյդ Կ. Փաքերն ուսուցանեց. «Ծնող լինելու մեծ հայտնագործություններից մեկն այն է, որ մենք մեր երեխաներից շատ ավելին ենք սովորում այն մասին, թե իրականում ինչն է ավելի կարևոր, քան երբևէ սովորել ենք մեր ծնողներից» (էջ 6)։ Եթե դուք ծնող եք, մտածեք այն կարևոր դասերի մասին, որոնք դուք սովորել եք ձեր երեխաներից, կամ, եթե ծնող չեք, մտածեք այն դասերի մասին, որոնք սովորել եք ձեզ ծանոթ երեխաներից։ Կիսվեք այդ դասերով և հանգամանքներով ձեր ամուսնու, ընկերոջ, երեխաների կամ մյուսների հետ։
- Մենք կարող ենք ազատվել չարից, եթե դիմենք սուրբ գրությունների ուսմունքներին, սովորեցնում է Երեց Լ. Թոմ Փերին (էջ 94)։ Ինչպե՞ս են սուրբ գրությունների ուսմունքներն օգնել ձեզ ազատվել։ Ինչպե՞ս են դրանք օգնել ձեզ ընտրել ճիշտը։
- Մի քանի ելույթներ կենտրոնացել են ուխտերի, հատկապես տաճարային ուխտերի շուրջ։ Մտածեք Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի խոսքերի մասին. «Հայելու մեջ ինքներդ ձեզ հետ զրուցեք և հարցրեք. «Որտե՞ղ եմ ես կանգնած՝ ապրելով ըստ իմ ուխտերի» (էջ 34)։ Մտածեք ձեր պատասխանի մասին և թե ինչ դուք կարող եք անել, որպեսզի ավելի հավատարիմ ապրեք ձեր ուխտերին և հրավիրեք մյուսներին կապել և պահել ուխտերը։
- Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը (էջ 31), Երեց Նիլ Լ. Անդերսենը (էջ 111) և մյուսները խոսեցին աշակերտության և Քրիստոսի մոտ գալու ընթացքի մասին։ Ինչպիսի՞ն է եղել աշակերտության ձեր ուղին։ Ի՞նչ եք դուք սովորել այս և այլ ելույթներից՝ Փրկչի մոտ շարունակ գալու մասին։
- «Մեր հիմնական առաջադրանքը, - ուսուցանեց Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը, - Հիսուս Քրիստոսի ավետարանը, Նրա վարդապետությունն ուսուցանելն է ողջ աշխարհում» (էջ 86)։ Վերընթերցեք Երեց Քրիստոֆերսոնի և Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմի ելույթները (էջ 13) և մտածեք, թե ինչ է իրենից ներկայացնում Հիսուս Քրիստոսի ավետարանը։ Ի՞նչ հնարավորություններ դուք ունեք այն ուսուցանելու համար ձեր տանը, ձեր կոչումները կատարելիս և ձեր կազմակերպություններում ուսուցանելիս։ ■

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գերագույն համաժողովի խոսնակները ուսուցանեցին մեզ սուրբ գրություններից։ Կարող եք ուսումնասիրել սուրբ գրությունները, որոնց առավել շատ հղում է կատարվել.

- Հովհ. ԺԳ.35
- 2 Նեփի 2.11
- Վարդապետություն և Ուխտեր 18.10*; 68.25–28*; 88.118; 115.5; 121.37
- Մովսես 1.39*

** Սեմինարիայի սուրբ գրությունների սերտման հատվածներ*

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից փորձառությունների ընտրանի, որը կարող է օգտագործվել անհատական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների կամ այլ ուսուցանման ժամանակ: Համարը ելույթի առաջին էջի համարն է:

ԽՈՍՆԱԿ	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Նախագահ Բոյդ Կ. Փաքեր	(6) Միսիոներները հույսի ուղերձ են պարգևում վշտահար ծնողներին: (6) Բոյդ Կ. Փաքերը մեծացել է հավատացյալ ծնողների միջավայրում, թեև նրա հայրը քիչ ակտիվ էր Եկեղեցում:
Շերիլ Ա. Էսփլին	(10) Շերիլ Ա. Էսփլինի թոռնուհին աղոթում է, որ իր եղբայրը բարի լինի:
Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմ	(13) Երիտասարդ Դոնալդ Լ. Հոլսթրոմը լսում է Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյին Հոնոլուլույի Թաբերնաքլում:
Երեց Փոլ Ե. Քոլիքեր	(16) Մերժված միսիոներները խրախուսում են միմյանց, ինչը հուզում է տղամարդու սիրտը:
Երեց Դալլին Հ. Օուքս	(19) Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հարցնում է նոր անդամին, թե արդյոք նա ցանկանում է այդքան մեծ զոհաբերություն կատարել ավետարանի համար: (19) Բրազիլացի միսիոների 16-ամյա եղբայրը աշխատում է իր ընտանիքը պահելու համար:
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար	(48) Դեյվիդ Ա. Բեդնարի հայրը հարցնում է, թե ինչու քահանայություն կրողները չեն կատարում իրենց տնային ուսուցումը:
Եպիսկոպոս Ռիչարդ Ս. Էդգլի	(52) Ռիչարդ Ս. Էդգլին, լինելով ցցի նախագահության անդամ, կանչում է քիչ ակտիվ կնոջը լինել ցցի միսիոներ: (52) Փրկարարներն աղոթում են Երկրորդ Համաշխարհային պատերազմի բանտարկյալների համար, որոնց գնում են փրկելու:
Ադրիան Օչոա	(55) Երիտասարդ քահանան հարավային Աֆրիկայում խրախուսում է մեկ այլ քահանայի վերադառնալ եկեղեցի: (55) Երիտասարդ քահանան Չիլիյում կարողանում է մկրտել իր ընկերոջը:
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն	(66) Ծովահետևակայինը Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ օրհնություն է տալիս իր վիրավոր ընկերոջը: (66) Որպես եպիսկոպոս Թոմաս Ս. Մոնսոնը ամեն ամիս անձնական նամակներ է գրում բանակում ծառայողներին: (90) Առողջական խնդիրների մասին լսելուց հետո կինը որոշում է փոխել իր կյանքը: (90) Անհավատի կնոջ մահը փոխում է նրա անհավատությունը:
Երեց Լ. Թոմ Փերի	(94) Եկեղեցու անդամը կիսվում է ավետարանով օդանավում իր հարևանի հետ:
Երեց Օ. Վինսենթ Հալեք	(101) Օ. Վինսենթ Հալեքի ծնողները ծոմ են պահում և աղոթում իրենց երեխաների համար:
Երեց Լարի Յ. Վիլսոն	(103) Լարի Յ. Վիլսոնի դուստրը վատ է զգում կիրակի օրը ֆուտբոլ խաղալու համար:
Երեց Դեյվիդ Ֆ. Էվանս	(106) Երիտասարդը միանում է Եկեղեցուն, տեսնելով իր ընկերների և բնակարանակցի օրինակը:
Երեց Նիլ Լ. Անդերսեն	(111) Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը երեք տարի պահում է փուչիկը, որպեսզի վերադարձնի այն քաղցկեղից փրկված աղջկան: (111) Սենթելուսների ընտանիքի երեք երեխաները փրկվում են Հաիթիի երկրաշարժից հետո:
Էնն Մ. Դիբ	(117) Երիտասարդ կինը խրախուսում է համադասարանցուն դադարել հայհոյելը: (117) Երիտասարդ կինը պահում է Իմաստության Խոսքը չնայած ճնշմանը:
Էլեյն Ս. Դալտոն	(123) Ֆլորենս Չադվիքը լողալով հասնում է վերջնակետին, չնայած խիտ մառախուղին:
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն	(126) Հայրը դարձի է գալիս դեպի ավետարանը՝ իր դստեր հետ սեմինարիա հաճախելուց հետո: (126) Երիտասարդ կինը հաղթահարում է գայթակղությունը Միացյալին հաճախելու շնորհիվ:

Մեր ժամանակների ուսմունքները

Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության չորրորդ կիրակի օրվա դասերը կնվիրվեն «Մեր ժամանակների ուսմունքներին»: Յուրաքանչյուր դաս կարելի է պատրաստել վերջին գերագույն համաժողովի մեկ կամ մի քանի ելույթներից (տես ստորև տրված սխեման): Ցցերի և շրջանների նախագահները կարող են ընտրել, թե որ ելույթները պետք է օգտագործվեն, կամ նրանք կարող են հանձնարարել այդ պատասխանատվությունը եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին: Ղեկավարները Մելքիսեդեկյան Քահանայության եղբայրներին և Սփոփող Միության քույրերին պետք է շեշտեն միևնույն ելույթները նույն կիրակի օրերին ուսումնասիրելու կարևորությունը:

Նրանց, ովքեր հաճախում են չորրորդ կիրակի օրվա դասերին, խրախուսում ենք ուսումնասիրել և իրենց հետ դասարան բերել վերջին գերագույն համաժողովի ամսագիրը:

Առաջարկություններ ելույթներից դաս պատրաստելու համար

Աղոթեք, որպեսզի Սուրբ Հոգին լինի ձեզ հետ, երբ ուսումնասիրում և ուսուցանում եք ելույթ(ներ)ը: Դուք կարող եք դասը պատրաստել, օգտագործելով այլ նյութեր, սակայն համաժողովի ելույթները հաստատված են ծրագրով: Ձեր առաջադրանքն է օգնել մյուսներին սովորել և ապրել ավետարանով, ինչպես ուսուցանվում է Եկեղեցու վերջին գերագույն համաժողովում:

Վերանայեք ելույթները, գտնելու համար այն սկզբունքներն ու վարդապետությունները, որոնք համապատասխանում են դասարանի անդամների կարիքներին: Ինչպես նաև ելույթներից գտեք պատմություններ, սուրբ գրությունների հղումներ և սահմանումներ, որոնք կօգնեն ձեզ ուսուցանել այդ ճշմարտությունները:

Ծրագիր կազմեք, որով կարող եք ուսուցանել սկզբունքներն ու վարդապետությունները: Ձեր ծրագիրը պետք է ընդգրկի հարցեր, որոնք կօգնեն դասարանի անդամներին.

- Ելույթ(ներ)ից գտնել սկզբունքներ և վարդապետություններ:
- Խորհել դրանց իմաստի մասին:
- Կիսվել իրենց հասկացողությամբ, մտքերով, փորձառությամբ և վկայություններով:
- Կիրառել այդ սկզբունքներն ու վարդապետություններն իրենց կյանքում: ■

ԴԱՍԵՐԸ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՄԻՍՆԵՐԸ	ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ ՕՐՎԱ ԴԱՍԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ
Ապրիլ 2012-հոկտեմբեր 2012	2012թ. ապրիլի գերագույն համաժողովի ելույթները *
Հոկտեմբեր 2012-ապրիլ 2013	2012թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ելույթները *

** Ապրիլի և հոկտեմբերի չորրորդ կիրակի օրվա դասերը, ելույթները կարող են ընտրվել նախկին կամ վերջին համաժողովի ելույթներից: Այս ելույթները շատ լեզուներով մատչելի են conference.lds.org կայքում:*

Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Քերոլ Մ. Սթեֆենս
Առաջին Խորհրդական


Լինդա Ք. Բըրթըն
Նախագահ

Լինդա Շ. Ռիվս
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ

Մերի Ն. Քուք
Առաջին Խորհրդական

Էլեյն Ս. Դալտոն
Նախագահ


Էնն Մ. Դիբ
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ


Ջին Ա. Սթիվենս
Առաջին Խորհրդական

Ռոզմարի Մ. Վիքսոմ
Նախագահ


Շերիլ Ա. Էսփլին
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Լարի Մ. Գիբսոն
Առաջին Խորհրդական

Դեյվիդ Լ. Բեք
Նախագահ

Ադրիան Օչոա
Երկրորդ Խորհրդական

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Դեյվիդ Մ. Մակքոնկի
Առաջին Խորհրդական

Ռասսել Տ. Օսգաթորփ
Նախագահ

Մեթյու Օ. Ռիչարդսոն
Երկրորդ Խորհրդական

182-րդ ամենամյա Գերագույն Համաժողովին փոփոխություններ կատարվեցին Յոթանասունի, Եպիսկոպոսության և Սփոփող Միության ղեկավարների մեջ

«Ենք չենք կարող բոլորս միասին լինել մեկ տանիքի տակ,- ասաց Եկեղեցու Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, 182-րդ ամենամյա Գերագույն Համաժողովի բացման նիստում՝ 2012թ. մարտի 31-ին,- սակայն այժմ մենք հնարավորություն ունենք մասնակցելու այս համաժողովին հեռուստատեսության, ռադիոյի, կաբելային հաղորդակցման, արբանյակային հեռարձակման և համացանցի, անգամ շարժական սարքերի շնորհիվ: Մենք հավաքվում ենք մեկ հոգու նման, խոսելով տարբեր լեզուներով, ապրելով տարբեր երկրներում, սակայն բոլորս պատկանում ենք մեկ հավատքի, մեկ վարդապետության և մեկ նպատակի»:

Այդ խոսքերը վերաբերում էին ավելի քան 100000 մարդկանց, ովքեր մասնակցեցին գերագույն համաժողովի նիստերին Համաժողովների Կենտրոնում Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, ԱՄՆ, մարտի 31-ապրիլի 1-ը, և միլիոնավոր մարդկանց, ովքեր դիտեցին կամ լսեցին նիստերը հեռուստատեսության, ռադիոյի և համացանցի հեռարձակումներով: Անդամները և աշխարհում շատ-շատերը դիտել են և կդիտեն 94 լեզուներով հաղորդվող ուղիղ և ձայնագրված հեռարձակումները:

Նույնիսկ նախքան գերագույն համաժողովի սկսելը, Եկեղեցու շատ անդամներ օգտագործելով այս ժամանակակից տեխնոլոգիաները հրավիրել էին մյուսներին մասնակցել համաժողովին: Մարտին ներկայացված տարբեր լեզուներով նոր վիջեթները, բաներները և տեղեկատվական գրաֆիկները կտեղադրվեն conference.lds.org կայքում յուրաքանչյուր գերագույն համաժողովից մի քանի շաբաթ առաջ:

Եկեղեցու ղեկավարության մեջ փոփոխություններ կատարվեցին շաբաթ երեկոյան նիստի ժամանակ: Իրենց ծառայությունից ազատվածների թվում էին Նախագահող Եպիսկոպոսության և Սփոփող Միության գերագույն նախագահությունները: Երեց Սթիվեն Ե. Մնոուն ազատվեց Յոթանասունի Նախագահությունից, 37 Տարածքային Յոթանասունականներ ևս ազատվեցին: Հաստատվածների և ազատվածների լրիվ ցուցակը տես էջ 27-ում:

Նախագահող Եպիսկոպոսություն են կանչվել Գարի Է. Սթիվենսոնը՝ Նախագահող Եպիսկոպոս, Ժերալդ Կոսեն՝ Առաջին Խորհրդական, և Դին Մ. Դեյվիսը՝ Երկրորդ Խորհրդական: Սփոփող Միության նոր գերագույն նախագահություն են կանչվել Լինդա Ք. Բըրթընը՝ նախագահ, Քերոլ Մ. Սթեֆենսը՝ առաջին խորհրդական, և Լինդա Շ. Ռիվսը՝ երկրորդ խորհրդական:

Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզը Յոթանասունի Առաջին Քվորումից կանչվել է ծառայելու Յոթանասունի Նախագահություն:

Յոթանասունի Առաջին Քվորում են կանչվել՝ Երեց Լարի Էքո Հոքը, Երեց Ռոբերտ Ս. Գեյը և Երեց Սքոթ Դ. Վայթինգը: Յոթանասունի Երկրորդ Քվորումից Առաջին Քվորում են կանչվել Երեց Քրեյգ Ա. Քարդոնը և Երեց Սթենլի Գ. Էլիսը:

Եպիսկոպոս Հ. Դեյվիդ Բըրթընը և նրա խորհրդականները Նախագահող Եպիսկոպոսությունում միասին ծառայել են ավելի քանի 16 տարի: Չնայած եղել են Նախագահող Եպիսկոպոսներ, որ ավելի երկար են ծառայել, ոչ մի Նախագահող Եպիսկոպոսություն այդքան երկար միասին չի ծառայել:

Ծառայության նոր կանչվածների կենսագրականները կարդացեք 135 էջից սկսած: ■

Տարբեր լեզուներով գերագույն համաժողովի տեսքստային, ձայնա և տեսաարխիվների համար, այցելեք՝ conference.lds.org:

Եկեղեցու ղեկավարության մեջ փոփոխություններ տեղի ունեցան շաբաթ երեկոյան նիստին: Ծառայության կանչվածների թվում էին Նախագահող Եպիսկոպոսության և Սփոփող Միության գերագույն նախագահությունները: Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզը կանչվեց Յոթանասունի Նախագահություն, Տարածքային 40 Յոթանասունականներ ևս կանչվեցին:

Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզ

Յոթանասունի Նախագահությունից

«Աշխարհում յուրաքանչյուր ոք Աստծո զավակն է, և Նա հավասարապես սիրում է Իր բոլոր զավակներին», - ասաց Յոթանասունի Նախագահություն նոր կանչված Երեց Ռիչարդ Ջոն Մեյնզը: Նա նշեց, որ դա ավետարանի առաջին սկզբունքն է, որ գալիս է իր միտք, երբ նա խորհում է իր միջազգային ծավալուն ծառայության շուրջ, ներառյալ հանձնարարականները Ուրուգվայում, Պարագվայում, Մեքսիկայում, Էկվադորում, Պերույում և Ֆիլիպիններում:

«Հավերժական օրհնությունները, որ գալիս են Հիսուս Քրիստոսի ուսուցանած սկզբունքները ընդունելու և ապա դրանցով ապրելու արդյունքում, ի վերջո վեհացում կպարգևեն Երկնային Հոր բոլոր զավակներին, անկախ նրանից, թե որտեղ են նրանք ապրում կամ ինչպիսի դժվարություններ են հաղթահարում այս փորձնական վիճակում», - ավելացրեց նա:

Երեց Մեյնզը, որը ծնվել է 1950թ. հոկտեմբերին Բերքլիում, Կալիֆոռնիա, ԱՄՆ, Ստան և Բեթի Մեյնզերի ընտանիքում, իր միջազգային ծառայությունը սկսել է 1969թ., երբ մինչև 1971թ. նա լիաժամկետ միսիա ծառայեց Պարագվայում և Ուրուգվայում:

1974թ. օգոստոսին Մանթի Յուտա Տաճարում նա ամուսնացավ Նենսի Փուրինթոնի հետ, որին հանդիպել էր Այդահոյի առողջարանում աշխատելիս: Նրանք ունեն չորս զավակ:

Այդ նույն տարին Երեց Մեյնզն ավարտեց Բրիգամ Յանգ Համալսարանի բիզնես կառավարում ֆակուլտետը և ավելի ուշ մագիստրոսի կոչում ստացավ Գլոբալ Կառավարման Թանդերբրդ դպրոցից: Նա աշխատել է որպես սեփականատեր և գլխավոր տնօրեն մի ընկերությունում, որը մասնագիտացել էր արտադրության ավտոմատացման գծով:

1989-1992թթ. Երեց Մեյնզը ծառայել է որպես Մեքսիկա Մոնտերեյ Միսիայի նախագահ: 1997թ. նա կանչվել է որպես Գերագույն Իշխանություն: Որից հետո նա ծառայել է Հարավային Ամերիկայի հյուսիս-արևմտյան տարածքում, Հարավային Ամերիկայի Արևմտյան և Ֆիլիպինների Տարածքային նախագահություններում: Նա նաև ծառայել է Եկեղեցու Քահանայության Գործադիր Խորհրդում, որպես Միսիոներական բաժանմունքի գործադիր տնօրենի օգնական, և որպես Ընտանիքի պատմության բաժանմունքի գործադիր տնօրեն:

2012թ. հունվարի 20-ին նա կանչվեց ծառայելու Յոթանասունի Նախագահությունում, փոխարինելով Երեց Սթիվեն Ի. Մնոուին, որը կանչվեց որպես Եկեղեցու Պատմաբան և Արձանագրող: ■

Երեց Քրեյգ Ա. Քարդոն

Յոթանասունից

Երեց Քրեյգ Ալեն Քարդոնը, որը վերջերս Յոթանասունի Երկրորդ Քվորումից կանչվեց Առաջին Քվորում, իր կյանքի ամեն լավ բանում տեսնում է Հոգու ազդեցությունը:

«Մայրս և հայրս ինձ փոքրուց օգնել են ընկալել Հոգու ձայնը, հասկանալու համար իմ զգացմունքները, - հիշում է նա: - Տիրոջ հետ այդ հաղորդակցումը մատչելի է բոլորին, ովքեր ջանասիրաբար փնտրում են այն, որը և կարևոր է այս մեծ աշխատանքում»:

Իտալիայում միսիա ծառայելուց հետո, Երեց Քարդոնն ամուսնացավ Դեբորա Լուիս Դանայի հետ 1970թ. նոյեմբերին Մեսա Արիզոնա Տաճարում: 13 տարի անց Երեց Քարդոնը դարձավ Իտալիայի Հռոմ Միսիայի նախագահը: Այդ ժամանակ նրանց ութ երեխաներից յոթը ծնվել էին, նրանք ունեին ինը ամսականից 11 տարեկան յոթ երեխա:

«Միայն դա ձեզ շատ բան կասի Քույր Քարդոնի մասին,- ասում է Երեց Քարդոնը,- Նրա հավատը, սերը, համբերատարությունը և բարությունը հրաշալի օրինություն են եղել ինձ համար, իմ ընտանիքի և նրան ճանաչողների համար»:

2006-2011թթ. Երեց Քարդոնը ծառայել է Աֆրիկայի Արևմտյան Տարածքի Նախագահությունում, փորձառություն, որը նա նկարագրում է որպես «բացառիկ օրհնություն, երբ աշխատում ես մարդկանց մեջ, ում քնքշորեն սիրում ես»:

Կյանքում Երեց Քարդոնը իր ժամանակի մեծ մասը նվիրել է բարեգործական աշխատանքին տեղական և միջազգային ընտանիքի և երիտասարդական կազմակերպություններում:

Երեց Քարդոնը ծնվել է 1948թ. դեկտեմբերին, Վիլֆորդ Փրատ և Վիլեյթ Ալեն Քարդոնների ընտանիքում, Մեսա, Արիզոնայում, ԱՄՆ: Արիզոնայի պետական Համալսարանի հաշվապահություն մասնագիտությամբ բակալավրի կոչում ստանալուց հետո նա տարբեր բիզնեսներով է զբաղվել: Հետագայում Հարվարդի Համալսարանի Քենեդի դպրոցից նա ստացավ Պետական Կառավարման Մագիստրոսի կոչում:

Գերագույն Իշխանություն կանչվելուց առաջ նա ծառայել է որպես երեցների քվորումի նախագահ, ցցի միսիոներ, միսիայի նախագահ, եպիսկոպոս, ցցի նախագահ, ավետարանի վարդապետության ուսուցիչ և ինստիտուտի հրահանգիչ:

«Անկախ անհատական պայմաններից, Հիսուս Քրիստոսի շնորհը բավական է բոլորի համար, ովքեր գալիս են Նրա մոտ»: ■

Երեց Լարի Էքո Հոք

Յոթանասունից

Այն օրից ի վեր, երբ 1972թ. Երեց Լարի Էքո Հոքը լսեց Երեց Սպենսեր Վ. Քիմբալի (1895–1985) ելույթը, որտեղ նա ասում էր, որ մտովի տեսնում է բնիկ ամերիկացիներին որպես կիրթ ղեկավարներ, նա իր կյանքը նվիրեց «մարդկանց բարձրացնելուն»:

Փաունի ազգի ներկայացուցիչ Երեց Էքո Հոքը ծնվել է 1948թ. օգոստոսին Քոդիում, Վայոմինգ, ԱՄՆ, Էրնստ և Ջեյն Էքո Հոքերի ընտանիքում: Նա մեծացել է Ֆարմինգտոնում, Նյու Մեքսիկո, ԱՄՆ, որտեղ 1962թ. նա և իր ընտանիքը ուսուցանվեցին և մկրտվեցին ՎՕՍ միսիոներների կողմից:

17 տարեկանում, երբ նրա աչքին հարվածեց բեյսբոլի գնդակը, նա խոստացավ Տիրոջը, որ կկարդա Մորմոնի Գիրքը, եթե չկորցնի տեսողությունը: Նրա տեսողությունը վերականգնվեց, և նա ամեն օր 10 էջ կարդաց երեք ամիս:

«Դա իմ ունեցած ամենահզոր հոգևոր փորձառությունն էր, երբ Սուրբ Հոգին վկայեց ինձ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է,- ասաց Երեց Էքո Հոքը,- Այդ փորձառությունը ուժ տվեց ինձ իմ կյանքի ընթացքում՝ օգնելով զարգանալ»:

Նա ընդունվեց Պրովոյի Բրիգամ Յանգ Համալսարան ֆուտբոլային կրթաթոշակով, և ֆիզիկական կրթության և կենդանաբանության գծով աստիճաններ ստացավ: 1970թ. նա երկու տարվա ծառայությունից հետո պատվով զորացրվեց Միացյալ Նահանգների ռազմածովային կորպուսից: 1973թ. նա ավարտեց Յուտայի Համալսարանը ստանալով իրավագիտության դոկտորի կոչում:

Երեց Էքո Հոքը ծառայել է որպես իրավաբան, նահանգի օրենսդիր, նահանգի գլխավոր իրավաբան, ԲՅՀ իրավագիտության պրոֆեսոր, և Հնդկացիների մասով ներքին գործերի վարչության քարտուղարի օգնական, պաշտոն, որից նա կազատվի, որպեսզի ընդունի Յոթանասունի Առաջին Քվորումում ծառայելու կանչը:

1968թ. դեկտեմբերին Սոլթ Լեյքի Տաճարում Երեց Քիմբալը կատարեց Երեց Էքո Հոքի և նրա կնոջ, Թերի Փրայզի, ամուսնությունը: Կինը եղել է իր կողքին, երբ նա ծառայել է որպես ուսուցիչ, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական և ցցի նախագահ: Նրանք վեց զավակների ծնողներ են: ■

Երեց Սթենլի Գ. Էլիս

Յոթանասունից

Երեց Սթենլի Գարելդ Էլիսը գիտեր, որ ոչ ոք չի կարող գիտական ճանապարհով ապացուցել Աստծո գոյությունը, սակայն Հարվարդի Համալսարանում նա սովորեց, որ կարող է ապացուցել Աստծո գոյությունը՝ փորձարկելով Նրա խոստումները: Առաջին կուրսեցի էր, որ գումարը վերջացավ, և նա սկսեց աշխատել իր ծախսերը հոգալու համար: Թեև նա կասկածում էր, որ կարող է տասանորդ վճարել և հոգալ նաև իր բոլոր ծախսերը, նա որոշեց «փորձել» Տիրոջը (տես Մաղաքիա Գ.10):

«Առաջինը ես իմ տասանորդը վճարեցի, և հրաշք կատարվեց»,- ասաց Յոթանասունի Երկրորդ Քվորումից Առաջին Քվորում վերջերս կանչված Երեց Էլիսը: «Ես կարողացա ծայրը ծայրին հասցնել մինչև մյուս աշխատավարձը: Եվ այդպես շարունակվեց ամեն երկու շաբաթը մեկ ողջ կիսամյակի ընթացքում: Փորձելով Տիրոջը ես ամրապնդեցի իմ վկայությունը, որ Նա իրական է, և Նա պահում է Իր խոստումները»:

Երեց Էլիսը ծնվել է 1947թ. հունվարին Բըրլիում, Այդահո, ԱՄՆ, Սթեֆան և Հեյզել Էլիսների ընտանիքում, և մեծացել է ագարակում ու ֆերմայում: Հարվարդում մեկ տարի սովորելուց հետո, 1966–1968թթ. նա ծառայեց Բրազիլիայի միսիայում: Իր վերադարձից հետո, նա ամուսնացավ Քեթրին Քլոֆերի հետ 1969թ. հունիսին Լոս Անջելես Կալիֆորնիա տաճարում: Նրանք ունեն ինը զավակ:

Հարվարդն ավարտելուց հետո, որտեղ նա ստացավ կառավարման գծով բակալավրի աստիճան, նա իրավագիտության աստիճան ստացավ Բրիգամ Յանգ Համալսարանից: Երեց Էլիսն աշխատել է հարկային պլանավորման ոլորտում և դարձել ֆինանսական խորհրդատվական ընկերության գլխավոր գործադիր տնօրեն:

Նախքան Յոթանասունի Առաջին Քվորում կանչվելը, Երեց Էլիսը ծառայել է Հյուսիսային Ամերիկայի Հարավարևմտյան տարածքի, Բրազիլիայի Հյուսիսային տարածքի նախագահություններում, և Սահմանների և ղեկավարների փոփոխման հանձնախմբում: 1999-2002թթ. նա ծառայել է որպես Բրազիլիայի Սան Պաուլո Հյուսիսային Միսիայում: Նա նաև եղել է ցցի նախագահ, ցցի նախագահության խորհրդական, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոսության խորհրդական, երեցների քվորումի նախագահ և ծխի ու ցցի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ: ■

Երեց Ռոբերտ Ք. Գեյ

Յոթանասունից

Եկեղեցական իր կոչումներում Երեց Ռոբերտ Քրիստոֆեր Գեյը հաճախ է խոսում Հիսուս Քրիստոսի ուղերձի մասին որպես «փրկության ավետարանի»:

«Դա ենք մենք տեսել և զգացել մեր ողջ կյանքում»,- ասում է Երեց Գեյը ի նկատի ունենալով իրեն և կնոջը՝ Լայնետ Նիլսոն Գեյին: «Մենք երկրպագում ենք փրկության Աստծուն՝ հոգևոր, ֆիզիկական, մտավոր և էմոցիոնալ առումով: Քրիստոսի Քավության շնորհիվ մեր բեռը թեթևանում է:»

Երեց Գեյը մեծագույն բավարարվածություն ստանում է մարդասիրական ծառայությունից, որն ինքը և Քույր Գեյը օրինվել են մատուցելու թե արտասահմանում, և թե տանը: Օրինակ, 2004–2007թթ. Ակրա Գանա Միսիայում որպես նախագահ ծառայելուց առաջ և հետո նա և Քույր Գեյը աշխատել են Աֆրիկյան գյուղերում և այլուր կառուցելով դպրոցներ և բժշկական կլինիկաներ, և օգնելով զարգացնել գրագիտության և միկրովարկերի ծրագրերը: Կազմակերպությունները, որ նրանք հիմնել են մյուս գործընկերների հետ միասին, օգնել են բարձրացնել միլիոնավոր մարդկանց ողջ աշխարհում:

Երեց Գեյը, որը ծնվել է 1951թ. սեպտեմբերին Լոս Անջելեսում, Կալիֆորնիա, ԱՄՆ, Բիլ և Մերի Գեյերի ընտանիքում, իր կնոջ հետ ծանոթացել է ընդհանուր դպրոցական ընկերոջ միջոցով, որին հետագայում նրանք օգնեցին Եկեղեցի գալ: Նրանք ամուսնացան Լոս Անջելես Կալիֆորնիա տաճարում 1974թ. ապրիլին, և ունեն յոթ զավակ:

Երեց Գեյը բակալավրի կոչում է ստացել Յուտայի Համալսարանից և դոկտորի աստիճան՝ Հարվարդի Համալսարանից, որտեղ նա նաև տնտեսագիտություն է դասավանդել:

Ներգրավված լինելով մասնավոր կապիտալի սեկտորում ավելի քան 25 տարի, Երեց Գեյն աշխատել է միջազգային մակարդակով ներդրումներ կատարելով և բիզնեսներ զարգացնելով:

Յոթանասունի Առաջին Քվորում կանչվելիս նա ծառայում էր որպես Հյուսիսային Ամերիկայի Հարավարևելյան Տարածքի Յոթանասունական: Բացի դա, 1971–1973թթ. նա լիաժամկետ միսիա է ծառայել Իսպանիայում: Երեց Գեյը ծառայել է նաև որպես եպիսկոպոսի խորհրդական, բարձրագույն խորհրդական քահանայապետերի խմբի ղեկավար, Ավետարանի Վարդապետության ուսուցիչ, ծխի միսիայի ղեկավար և ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ: ■

Երեց Սքոթ Դ. Վայթինգ

Յոթանասունից

Երեց Սքոթ Դուեյն Վայթինգը հավատում է, որ կյանքում Աստծուն ծառայելու իր հնարավորությունները հիմնված են մի քանի կարևոր որոշումների վրա:

Երեց Վայթինգը ծնվել է 1961թ. ապրիլին Դուեյն և Բեվերլի Վայթինգների ընտանիքում, մեծացել է Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, ԱՄՆ: Նրա կարծիքով, միսիայում ծառայելու որոշումը իր առաջին կարևոր որոշումն էր, որից անմիջապես հետո որոշում կայացրեց, թե որքան ժամանակով պետք է ծառայեր: Այդ ժամանակ Երեց Վայթինգը պետք է ընտրեր 18 ամիս ծառայել, թե երկու տարի: «Վեց ամիս ավել ծառայելու իմ որոշումը կարևոր դեր ունեցավ ավելի ուշ Եկեղեցում ծառայելու իմ պատրաստվածության վրա»,- ասաց նա:

Ճապոնիայի Հյուսիսային Տոկիո Միսիայում իր ծառայությունն ավարտելուց հետո, նա հանդիպեց իր ապագա կնոջը, Ջերի Օլսոնին ընդհանուր ընկերոջ միջոցով: Նրա հետ ամուսնանալու ընտրությունը մյուս կարևոր որոշումն էր: Նրանք կնքվեցին Սոլթ Լեյքի Տաճարում 1984թ. ապրիլին:

Բրիգամ Յանգ Համալսարանի ճապոներենի գծով բակալավրի աստիճան ստանալուց հետո, ավելի ուշ Երեց Վայթինգը ստացավ իրավագիտության դոկտորի կոչում Խաղաղօվկյանոսյան Համալսարանի Մակ Ջորջ Իրավագիտության դպրոցից:

Մյուս կարևոր որոշումը, որ կայացրեց Երեց Վայթինգը այն էր, որ նա ընդունեց Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի կողմից տրված որպես եպիսկոպոս ծառայելու կանչը: Երեց Բալլարդը հարցրեց նրան, թե կկարողանա արդյոք կատարել իր պարտականությունները: Երեց Վայթինգը խոսք տվեց Առաքյալին և պահեց իր խոստումը, թեպետ ավելի եկամտաբեր աշխատանքի հնարավորություններ եղան, որի համար պետք էր տեղափոխվել:

Ծառայությունն օգնեց նրան զարգացնել խանդավառություն՝ «գնալով քիչ ակտիվ անդամների տները և օգնելով նրանց նորացնել իրենց ուխտերը կամ ուխտեր կապել Աստծո հետ»:

Վայթինգներն ունեն հինգ զավակ: Յոթանասունի Առաջին Քվորումի իր կանչից առաջ նա աշխատում էր Հավայան կղզիներում անշարժ գույքի ներդրումային ընկերությունում: Երեց Վայթինգը ծառայել է որպես երեցների քվորումի նախագահ, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, ցցի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական: ■

Եպիսկոպոս Գարի Է. Սթիվենսոն

Նախագահող Եպիսկոպոս

Եպիսկոպոս Գարի Էվան Սթիվենսոնն ասում է, որ իր կյանքի մեծ մասն անցկացրել է դիտարկելով կարևոր աշխատանքը, որ եպիսկոպոսները կատարում են ողջ աշխարհում: Նա նշեց, որ հայրը իր պատանեկության տարիների եպիսկոպոսն էր, և նրա ծառայությունը խորապես ազդել է իր վրա:

Տարբեր առիթներով Եպիսկոպոս Սթիվենսոնի հայրը խնդրել է իրեն միասին այցելել իրենց ծխում ապրող 60-ից ավել այրիներին: Եպիսկոպոս Սթիվենսոնը իր հորից Քրիստոսանման ծառայության և կարիքավորների մասին հոգ տանելու դասեր է սովորել: Այդ դասերը, նա ասաց, կծառայեն իրեն Եկեղեցու Նախագահող Եպիսկոպոսի իր կոչման մեջ:

«Եկեղեցու եպիսկոպոսները իսկապես իմ հերոսներն են,- ասաց նա,- ամեն օր նրանք մեծ ազդեցություն ունեն Եկեղեցու անդամների, հատկապես երեխաների և երիտասարդների վրա»:

Եպիսկոպոս Սթիվենսոնը ծնվել է 1955թ. Էվան Ն. և Վերա Ջին Սթիվենսոնների ընտանիքում, որը սերվել է Յուտայի Քաշ Հովտի պիոներների տոհմից:

Պատանի հասակում նա ընդունեց Ճապոնիայում միսիա ծառայելու կանչը: Այդ առաջադրանքը Եպիսկոպոս Սթիվենսոնի մեջ արմատավորեց երկակի սեր՝ Ասիայի և ավետարանով կիսվելու հանդեպ, որը մնաց ողջ կյանքի ընթացքում:

Իր միսիայից վերադառնալով նա ընդունվեց Յուտայի Պետական Համալսարան: Այնտեղ հանդիպեց (և անմիջապես սիրահարվեց) Լիսա Ջին Հիգլիին: Նրանք ամուսնացան 1979թ. ապրիլին Այդահո Ֆոլս Այդահո Տաճարում: Սթիվենսոններն ունեն չորս որդի:

Եպիսկոպոս Սթիվենսոնը ստացել է բիզնես կառավարման աստիճան և ավելի ուշ դարձել սպորտային սարքավորումներ արտադրող ընկերության համահիմնադիր և ծառայել որպես այդ ընկերության նախագահ:

Նա ծառայել է Եկեղեցու տարբեր կոչումներում, ներառյալ խորհրդական ցցի նախագահությունում, եպիսկոպոս և նախագահ Ճապոնիայի Նագոյա Միսիայում (2004–2007թթ.): Նա Յոթանասունի Առաջին Քվորում կանչվեց 2008թ. և Ասիայի Հյուսիսային Տարածքում ծառայեց որպես խորհրդական և նախագահ: ■

Եպիսկոպոս Ժերալդ Կոսե

Նախագահող Եպիսկոպոսության Առաջին Խորհրդական

Նախագահող Եպիսկոպոսության Առաջին Խորհրդական վերջերս կանչված Եպիսկոպոս Ժերալդ Ժան Կոսեն իր մանկությունից միշտ երջանկություն է զտել Եկեղեցու ծառայության մեջ: Նա ասաց, որ դա հրաշալի բան էր, որովհետև Ֆրանսիայի Բորդո քաղաքի իր փոքր ճյուղում ամեն ոք պետք է աշխատեր գործող պահել միավորը: Բացի Ահարոնյան Քահանայության քվորումներում ծառայելը, նա 12 տարեկանում ծառայել է որպես Երեխաների խմբի դաշնակահար, 14 տարեկանում՝ Կիրակնօրյա Դպրոցի նախագահությունում խորհրդական, իսկ 16 տարեկանում՝ Կիրակնօրյա Դպրոցի նախագահ:

«Եկեղեցում ծառայելն օգնեց ինձ վկայություն ձեռք բերել»,- ասաց նա: Նրա հայրը, որը մի քանի անգամ ծառայել է որպես ճյուղի նախագահ և եպիսկոպոս, կարևոր դեր է խաղացել Եպիսկոպոս Կոսեի կյանքում դրական փորձառություն ունենալու համար:

«Երբ ես դեռահաս էի, նա ինձ ներգրավում էր տնային ուսուցման կամ կարիքավոր ընտանիքների այցելության գործում,- ասաց Եպիսկոպոս Կոսեն: - Նրան դիտելը գուցե սովորելու ամենալավ փորձառությունն էր քահանայության ղեկավար լինելուն պատրաստվելիս»:

Ավելի ուշ, Եպիսկոպոս Կոսեն ծառայել է որպես ծխի գործավար, երեցների քվորումի նախագահ, քահանայապետերի խմբի ղեկավար, եպիսկոպոսի խորհրդական, ցցի նախագահի խորհրդական, ցցի նախագահ, Տարածքային Յոթանասունական և վերջերս որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամ:

Եպիսկոպոս Կոսեն ծնվել է Ֆրանսիայի Բորդո քաղաքում, 1963թ. մայիսին, Ժան և Մարի-Բլանշ Կոսեների ընտանիքում: Նա երիտասարդ տարիքում մեկ տարի ծառայել է Ֆրանսիայի օդային ուժերում, որտեղ նշանակվել է ՆԱՏՕ-ի զորքերում:

1987թ. նա մագիստրոսի կոչում է ստացել ESSEC-ից: Իր կարիերան սկսել է ռազմավարական խորհրդատվությունից՝ վեց տարի աշխատելով խորհրդատվական ֆիրմայի Փարիզյան և Լոնդոնյան գրասենյակներում: Ավելի ուշ նա աշխատել է Եվրոպայում մանրածախ առևտրի մեծ ընկերությունում, իսկ 2008թ. Յոթանասունի Առաջին Քվորում կանչվելուց առաջ նա աշխատել է որպես Ֆրանսիայի սննդի ամենամեծ բաշխող ընկերության գլխավոր տնօրեն և խորհրդի անդամ:

Նա և Վալերի Լուսիեն Բաբինն ամուսնացել են 1986թ. օգոստոսին Բերն Շվեյցարիա Տաճարում: Նրանք ունեն հինգ զավակ: ■

Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիս

Նախագահող Եպիսկոպոսության Առաջին Խորհրդական

Երբ Եկեղեցու Նախագահը խնդրում է Եպիսկոպոս Դեյվիսին մանրամասներ հայտնել ապագա տաճարի տեղանքի մասին, օրինակ որքան ժամանակում կարելի է մոտակա ավտոբուսի կանգառից ոտքով հասնել տաճար, Եպիսկոպոս Դեյվիսը լոկ փաստեր չի կրկնում: Նա անձամբ անցնելով այդ ճանապարհը գիտի, թե ինչ կզգա պատրոնը:

«Ինչպե՞ս եք դա անում»,- մի անգամ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հարցրեց նրան:

Նախագահող Եպիսկոպոսությունում որպես Երկրորդ Խորհրդական վերջերս կանչված Եպիսկոպոս Դին Մայրոն Դեյվիսն իր կյանքն ապրել է անմնացորդ նվիրումով և մանրամասների վրա ուշադրությունը կենտրոնացնելով:

Եպիսկոպոս Դեյվիսը ծնվել է 1951թ. սեպտեմբերին Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, ԱՄՆ, Օլիվեր Թ. և Մայրա Դեյվիսների ընտանիքում: Նա մեծացել է մի ընտանիքում, որտեղ սերն ու աշխատանքն էին առաջնորդող սկզբունքները: Եթե նա ցանկանում էր մի բան, նա պետք է վաստակեր դա: Երբ մայրիկին ուղղված համառ խնդրանքները միևնույն է չէին օգնում հասնել ցանկալի խաղալիքին, նա մտածում էր իր տարբերակների մասին: Նա դեռևս հիշում է հարևանի բարձր խոտածածկի վրայով խոտ կտրող հին մեքենան հրելիս իր ֆիզիկական լարումը և արդյունքում ունեցած բավարարվածությունը:

1970–1972թթ. Ուրուգվայ/Պարագվայ Միսիայում ծառայելուց հետո, նա վերադարձավ տուն և 1973թ. հունիսին Սոլթ Լեյքի Տաճարում ամուսնացավ իր մանկության ընկերուհու Դարլա Ջեյմսի հետ: 1976թ. Եպիսկոպոս Դեյվիսը գյուղատնտեսական տնտեսագիտություն գծով բակալավրի կոչում է ստացել Բրիգամ Յանգ Համալսարանից, իսկ ավելի ուշ մասնագիտական խորացված դասընթաց է անցել Սթենֆորդի և Հյուսիսարևմտյան համալսարաններում:

Տարիներ շարունակ նա և նրա կինը իրենց հինգ զավակների հետ ապրել են վեց նահանգներում, քանի որ նա իր կարիերան զարգացրեց անշարժ գույքի ոլորտում: Նա նաև ծառայել է որպես ցցի նախագահ, ցցի նախագահություններում խորհրդական, հինգ բարձրագույն խորհուրդներում, եպիսկոպոսություններում և ծխի տարբեր հանձնարարականներում: 1998–2001թթ. նա ծառայել է որպես Պուերտո Ռիկո Սան Խուան Միսիայի նախագահ: Իր վերջին կանչից առաջ նա աշխատում էր Եկեղեցու Հատուկ Նախագծերի բաժանմունքում որպես գլխավոր տնօրեն:

Իր քաղած դասերից մեկն է՝«Տերը սիրում և առաջնորդում է Իր զավակներին»: ■



Լինդա Ք. Բըրթըն

Ստիպող Միության Գերագույն Նախագահ

Լինդա Քյար Բըրթընը դեռահաս տարիքում Նոր Զելանդիայի Քրայսթչըրչում Եկեղեցու մի ժողովի ժամանակ հանկարծ հստակ գիտակցեց. «Ես գիտեի, որ ավետարանը ճշմարիտ է,- հիշում է նա:- Ես նաև հասկանում էի, որ միշտ իմացել եմ դա»: Այդ վկայությունը այժմ կօգնի նրան որպես Ստիպող Միության գերագույն նախագահ ծառայելիս:

Քույր Բըրթընը ծնվել է Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, ԱՄՆ, Մարջորի Ս. և Մորիս Ա. Քյարերի ընտանիքում: Նա 13 տարեկան էր, երբ իր ընտանիքը հեռացավ Յուտայից, որպեսզի իր հայրը նախագահեր Նոր Զելանդիայի Հարավային Միսիայում: Քույր Բըրթընը, վեց զավակներից երկրորդը, այցելեց Նոր Զելանդիայի Եկեղեցու Քոլեջը և շփվեց խաղաղօվկյանոսյան տարածքի Վերջին Օրերի Սուրբ դեռահասների հետ: Նա վերադարձավ Սոլթ Լեյք Սիթի ոչ միայն տարբեր մշակույթների և սովորույթների, այլև հատկապես Տիրոջ և իր ընտանիքի հանդեպ սիրով լցված:

Քույր Բըրթընը հաճախում էր Յուտայի Համալսարան, երբ հանդիպեց և ամուսնացավ Քրեյգ Պ. Բըրթընի հետ 1973թ. օգոստոսին Սոլթ Լեյքի Տաճարում: Զույգը որոշեց չհետաձգել ընտանիք կազմելը, նրանց վեց զավակներից առաջնեկը ծնվեց գրեթե մեկ տարի անց:

Ամուսնու հետ աշխատելով, նա կարողացավ մնալ տանը երեխաների հետ, մինչ ամուսինը իր կարիերան էր ստեղծում անշարժ գույքի շուկայում: Վաղ ֆինանսական խնդիրները զույգին սովորեցրեց վստահությամբ նայել ապագային, «որովհետև մենք գիտեինք, որ ինչ-որ բարդ բան էինք կատարել Տիրոջ օգնությամբ»,- բացատրում է նա:

Ընտանիքը փոքր արձակուրդներ էր վերցնում և միասին անցկացնում այդ ժամանակները: Քույր Բըրթընը ծառայել է Երիտասարդ Կանանց մոտ, Երեխաների Խմբում և Կիրակնօրյա Դպրոցում և Երեխաների Միության և Ստիպող Միության գերագույն խորհուրդներում: Նա ծառայել է ամուսնու հետ միասին, երբ 2007–2010թթ. ամուսինը նախագահեց Կորեայի Արևմտյան Մեուլ Միսիայում: Միսիայի ընթացքում Քույր Բըրթընը հասկացավ, ճիշտ ինչպես տարիներ առաջ Նոր Զելանդիայում, որ սերն անցնում է լեզվի և մշակույթի սահմանը:

Նա հուսով է, որ իր նոր նշանակման մեջ կրկին կկիրառի Կորեայում իր ընկերուհուց սովորածը՝ «Նրանք կզգան քո սերը»: ■

Քերոլ Մ. Սթեֆենս

Ստիպող Միության Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

Քերոլ Մանզել Սթեֆենսը միշտ հարգանք է տածել սուրբ բաների հանդեպ: Այդ ակնածանքը սկսել է փոքր տարիքից, երբ իր ընտանիքը կնքվեց տաճարում այն բանից հետո, երբ մայրը դարձի եկավ դեպի ավետարանը:

«Ես չէի հասկանում այն ամենը, ինչ տեղի էր ունենում»,-ասաց Ստիպող Միության գերագույն նախագահության նորընտիր առաջին խորհրդականը: «Սակայն ես գիտեի, որ դա հատուկ բան էր: Ես բավականին մեծ էի հիշելու համար, որ տաճարը սուրբ վայր էր»:

Քույր Սթեֆենսը ծնվել է 1957թ. մարտին Կարլ Լ. և Ֆորիսթ Մանզելների ընտանիքում: Նա ինը երեխաներից երրորդն էր և մեծացել է Օգդենում, Յուտա, ԱՄՆ: Նա լավ է հիշում ինչպիսի օրինակ են իր ծնողները եղել ծառայության, զոհաբերության և ինչ է նշանակում ընտանիքն ու Եկեղեցին իրենց առաջնահերթությունը համարել:

«Ավետարանը ամեն ինչ էր նրանց համար, և նրանք ցույց տվեցին մեզ օրինակով, թե ինչ է Քրիստոսանման ծառայությունը,- ասում է նա,- Նրանք ուսուցանեցին մեզ, թե ինչ է նշանակում իսկական ծառայությունը»:

Տարբեր պաշտոններում ծառայելիս ծնողները ներգրավում էին իրենց երեխաներին: Այդ ժամանակներում էր, որ նրանք զարգացրեցին ընկերասիրություն միմյանց հանդեպ, մի բան որ ինքն ու իր ամուսինը՝ Մարտին Սթեֆենսը փորձել են անել իրենց վեց զավակների հետ:

Նա և Մարտինը հանդիպել են Օգդենի Վեբեր Պետական Համալսարանում, Յուտա, որտեղ նա սովորում էր նախադպրոցական կրթություն բաժնում: Նրանք ամուսնացել են 1976թ. ապրիլին Լոգան Յուտա Տաճարում: Քույր Սթեֆենսը ասաց, որ տարիների ընթացքում ինքն ու ամուսինը եղել են հրաշալի թիմ, աջակցելով միմյանց իրենց տարբեր հանձնարարություններում, ներառյալ նրա կոչումները որպես ցցի և ծխի Ստիպող Միության նախագահ, խորհրդական և ուսուցիչ, ծխի Երիտասարդ Կանանց նախագահ, ծխի Երեխաների Խմբի խորհրդական, ուսուցիչ, և պատանի սկաուտների ղեկավար, սեմինարիայի ուսուցիչ և Եկեղեցու ծառայության միսիոներ:

«Բոլոր գործերում մենք գտել ենք մեծ ուրախություն և երջանկություն,- ասում է նա,- մենք ընդգրկում ենք երեխաներին և թոռներին մեր ծառայության մեջ: Միասին ծառայելու շնորհիվ մենք զարգացրել ենք ընտանեկան ամուր հարաբերություններ»: ■

Լինդա Ծ. Ռիվս

Ստիպող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական

Լինդա Շեֆիլդ Ռիվսը մանկուց սովորել է իր քաջարի նորադարձ մայրիկից՝ դժվար պահերին Աստծուն դիմել և ձգտել զերազանցության, ինչպես սովորեցրել է իրեն հայրը:

«Իմ կյանքի վաղ շրջանում ես ամուր վկայություն եմ ունեցել դժվարությունների պատճառով, որոնք օգնեցին ինձ հոգևոր առումով արագ հասունանալ»,- նա ասաց:

Քույր Ռիվսը ծնվել է 1951թ. օգոստոսին Լոս Անջելեսում, Կալիֆորնիա, ԱՄՆ, Էլբերտ Ջոլի և Բարբարա Վելշ Շեֆիլդների ընտանիքում: Նա հիշում է, որ 13 տարեկանում Երիտասարդ Կանանց ճամբարում նայեց աստղազարդ երկնքին և պարզ սրտառուչ աղոթք ասաց. «Հայր, Դու այդտե՞ղ ես»:

«Ես պարուրվեցի Նրա Հոգով, Նրա ներկայության և իրականության գիտելիքով և իմ հանդեպ Նրա սիրով»,- ասում նա:

Քույր Ռիվսը հանդիպեց Մելվին Քեմփ Ռիվսին Պասադենայի իր ծխում: Միսիայից հետո Բրիգամ Յանգ Համալսարանում սովորելիս նրանք ժամադրվեցին: Նրանք ամուսնացան 1973թ. հունիսին Լոս Անջելես Կալիֆորնիա Տաճարում և դարձան 13 երեխաների ծնողներ:

Փորձությունների մեջ Քույր Ռիվսը կառչել է Քավության մասին իր վկայությունից, հատկապես երբ 2005թ. իր 17-ամյա դուստրը, Էմիլի Միշելը ավտովթարի զոհ դարձավ:

«Դժբախտությունը մեծ ուսուցիչ է,- ասաց նա,- Դժբախտությունը զորացնում է մեզ և պատրաստում է հետագա ծառայությանը արքայությունում, մեր տանը և մեր համայքնում, դառնալու գործիք Տիրոջ ձեռքերում»:

Ստիպող Միության գերագույն նախագահություն իր կանչից առաջ Քույր Ռիվսը ծառայել է իր ամուսնու հետ, երբ 2008–2011թթ. նա նախագահում էր Կալիֆորնիա Ռիվերսայդ Միսիայում: Նա ծառայել է որպես ցցի Ստիպող Միության նախագահ, ծխի Երիտասարդ Կանանց նախագահ, Երեխաների Խմբի խմբավար և Կիրակնօրյա Դպրոցի ուսուցիչ:

1974թ. Քույր Ռիվսը ավարտել է ԲՅՀ-ն՝ ստանալով հատուկ կրթության գծով բակալավրի աստիճան: Նա շատ հետաքրքրություններ ունի, որոնք են՝ արվեստ, երաժշտություն, լուսանկարչություն, ընտանիքի պատմություն և միսիոներական աշխատանք: Նա չի վախենում արտահայտել իր միտքը, հատկապես երբ դա վերաբերում է որևէ մեկի հետ Հիսուս Քրիստոսի ավետարանով կիսվելուն: ■

1971թ.-ից սկսած ձայնա և տեսագրություններն ավելացվում են համաժողովի արխիվին

Հիթեր Վիթլ Ռիգլի
Եկեղեցու նորությունները և իրադարձությունները

Որպեսզի անդամներն ավելի լավ կարողանան օգտվել անցյալում և ներկայում տրված սիրելի մարգարեների և առաքյալների խորհրդից, LDS.org. կայքի գերագույն համաժողով բաժնին Եկեղեցին ավելացնում է ձայնա և տեսաարխիվներ:

Մինչև 2012թ. հունիսը անգլերեն լեզվով առցանց արխիվները կունենան 1971թ-ից մինչ այժմ բոլոր գերագույն համաժողովների ձայնա և տեսագրությունները: Նախկինում, 1971թ.-ից սկսած միայն համաժողովների տեքստն է մատչելի եղել, 2002թ.-ից սկսած միայն անգլերեն լեզվով տեսագրություններն էին առկա: Նաև մինչև 2012թ. հունիսը Եկեղեցին կտրամադրի 2008թ.-ից սկսած համաժողովների ելույթների ձայնա և տեսագրությունները ավելի քան 70 լեզուներով:

«Մինչ Եկեղեցու անդամների մեծամասնությունը այցելում են LDS.org-ի գերագույն համաժողովի բաժին կարդալու, դիտելու և լսելու վերջին համաժողովի ելույթները, շատ անդամներ հետաքրքրված են նաև անցած համաժողովներով,- ասում է Յոթանասունից Երեց Պատրիկ Քիրոնը,- Այս նախաձեռնության նպատակն է համաժողովի ելույթները շատ ավելի մատչելի դարձնել Եկեղեցու անդամներին ողջ աշխարհում»:

Եկեղեցին նաև համաժողովի արխիվներին ավելացնում է երաժշտությունը: Ներկայումս, անդամները կարող են լսել 2008թ.-ից սկսած Մորմոնական Թաբերնաքլի Երգչախմբի կատարումները **LDS.org**-ի կայքում՝ սեղմելով յուրաքանչյուր համաժողովի բաժնի վերևում **Show Music**-ի վրա: Նոր երաժշտական արխիվը (GCmusic .lds.org) թույլ է տալիս բազմաթիվ արխիվների և համաժողովների որոնումներ:

Ծրագրեր են պատրաստ, որոնք թույլ են տալիս արխիվները մատչելի դարձնել ոչ միայն LDS.org կայքում, այլև Եկեղեցու շարժական սարքերի ծրագրերում, որոնք են՝ Gospel Library app և այլ միջոցները, ներառյալ՝ Mormon Channel-ը Roku-ում և YouTube-ում: ■

2008թ.-ից սկսած բոլոր համաժողովների նիստերի երաժշտությունը կարելի է այժմ լսել կամ բեռնել GCmusic.lds.org-ից:

Օժանդակների ուսուցողական հավաքներ առցանց անգլերենով և իսպաներենով

Օգնելու համար ղեկավարներին սովորել իրենց պարտականությունները և ներկայացնել նյութերը, որոնք կարող են օգտագործվել քահանայության և օժանդակների ղեկավարների ուսուցման նպատակով, մարտի վերջին Եկեղեցու չորս օժանդակների գերագույն նախագահությունները ուսուցում կազմակերպեցին ցցերի և ծխերի օժանդակների ղեկավարների համար: (Երիտասարդ Տղամարդկանց ղեկավարների համար ուսուցումը տեղի կունենա մայիսի 10-ին): Բոլոր հինգ օժանդակների համար թե ուղիղ և թե ըստ պահանջի վեբ հեռարձակումներ կլինեն անգլերենով և իսպաներենով: Մարտին տեղի ունեցած ուսուցման չորս նիստերի ամփոփումները տրված են այստեղ նրանց համար, ովքեր չունեն մուտքի թույլտվություն:

Երեխաների Միություն

Երեխաների Միության նպատակն է օգնել երեխաներին դարձի ճանապարհին, ասաց Ռոզմարի Վիքսոմը, Երեխաների Միության գերագույն նախագահը, Երեխաների Միության ղեկավարների ուսուցողական հավաքի ժամանակ՝ մարտի 28 և 29-ին:

«Մենք ուզում ենք, որ [Եկեղեցու երեխաները] զգան, սիրեն, գործեն,- ասաց նա,- Մենք ցանկանում ենք, որ նրանք վկայություն ունենան . . .Վկայություն նշանակում է հայտարարություն: Մենք ցանկանում ենք մեկ քայլ առաջ գնալ: Դարձի գալ նշանակում է գործել: Մենք ցանկանում ենք, որ այդ երեխաներն իրենց կյանքում ունենան և զգան դարձի գալու սերմերը»:

Քույր Վիքսոմը և նրա խորհրդականներ Ջին Ա. Սթիվենսը և Շերիլ Ա.

Էսփլին ծխերի և ցցերի Երեխաների Խմբերի ղեկավարներին ասացին, որ նրանք կարող են օգնել ծնողներին ցանել դարձի գալու այդ սերմերը: Քույր Վիքսոմն ասաց, որ դարձի գալու գործընթացը սկսվում է շատ վաղ տարիքից: «Այն սկսվում է տանը, որտեղ ծնողները սիրում են Տիրոջը իրենց ողջ սրտով, ողջ հոգով և ողջ զորությամբ: Եվ ապա նրանք ուսուցանում են իրենց զավակներին»:

Նա ասաց, որ երեխաները կհասկանան, թե ինչ է նշանակում դարձի գալ, «միայն թե մենք ժամանակ տրամադրենք և ուսուցանենք նրանց»: Եվ նա ավելացրեց, եթե ծնողները և Երեխաների ղեկավարները չեն սովորեցնում նրանց, «աշխարհը կսովորեցնի»:

Երեխաների Խմբի գերագույն խորհրդի անդամները նաև ելույթներ ունեցան ավետարանի սկզբունքները երաժշտության միջոցով ուսուցանելու և Երեխաների Խմբի ղեկավարների համար նախատեսված նյութերի մասին, որոնք գտնվում են LDS.org կայքում:

Սփոփող Միություն

«Դուք ղեկավարում եք մեծ աշխատանք»,- մարտի 27 և 28-ի օժանդակների ուսուցման նիստին Սփոփող Միության ղեկավարներին ասաց Ջուլի Բ. Բեքը, որը ազատվեց Սփոփող Միության գերագույն նախագահի պաշտոնից շաբաթ երեկոյան նիստի ժամանակ: «Սա Տիրոջ գործն է. . . Մենք շատ կարևոր պատասխանատվություն ենք կրում»:

Քույր Բեքը խոսեց մի քանի թեմաների շուրջ, ինչպիսիք են՝ Սփոփող Միության նպատակները, կանանց կարևոր դերը իրենց ընտանիքներում, ուսուցումը (հատկապես Եկեղեցու նոր քույրերին), հանձնախմբերում աշխատանքը և ղեկավարության սկզբունքները:

Հավատարիմ մնացեք հիմունքներին,- ասաց Քույր Բեքը: «Սա պարզ աշխատանք է, և ապա Տերը մտքեր է ի հայտ բերում: Եթե մենք պարզենք, թե ինչ պետք է անենք, Նա կօգնի մեզ հայտնությունը վերածել գործի: Մենք ողջ ընթացքում հայտնություն կստանանք»:

Իրենց ուսուցանման ողջ ընթացքում Սփոփող Միության նախագահությունը և գերագույն խորհուրդը կենտրոնացել էին պատասխաններ փնտրելով *Handbook 2: Administering the Church*-ում, ինչպես նաև *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունն ու աշխատանքը* գրքում:

Կիրակնօրյա Դպրոց

Ղեկավարների ուսուցման գրադարանը (Leadership Training Library), որը նոր հնարավորություն է LDS.org կայքում, Կիրակնօրյա Դպրոցի օժանդակ ղեկավարների ուսուցման հավաքի ուշադրության կենտրոնում էր, որը տեղի ունեցավ մարտի 28-ին:

Գրադարանից տարբեր տեսագրությունների մասեր ցուցադրվեցին, որպեսզի ամրապնդեին Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահ Ռասսել Թ. Օսգաթորփի ծավալած քննարկումը հավաքի չորս հիմնական թեմաների շուրջ.

- Ծխի կամ ցցի Կիրակնօրյա Դպրոցի ղեկավարի դերը:
- Ինչպես օգնել մյուսներին հասկանալ Կիրակնօրյա Դպրոցի նախագահության դերը ծխի և ցցի բոլոր կազմակերպություններում ուսուցումը բարելավելու գործում:
- Ինչպես ավելի արդյունավետորեն խորհրդակցել միասին որպես նախագահություն:
- Ինչպես կողմնորոշել ուսուցիչներին և մշտական արդյունավետ օգնություն տրամադրել:

«Ղեկավարների ուսուցման գրադարանը, կլինի ամենակարևոր գործիքներից մեկը, որը կօգնի ձեզ ուսուցանել այլ օժանդակների և Կիրակնօրյա Դպրոցի անդամներին իրենց պատասխանատվությունների մասին»,- ասաց Դեյվիդ Մ. Մակքոնկին՝ Կիրակնօրյա գերագույն նախագահության առաջին խորհրդականը: «Գրադարանը պատրաստվել էր Եկեղեցու բոլոր օժանդակների, Յոթանասունի անդամների, Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների կողմից: Սա մի նախագիծ է, որը անցել է երկար տարիներ և ընդգրկել է շատ մայրցամաքներ»:

Գրադարան կարելի է մուտք գործել LDS.org կայքից, նախ հիմնական էջում սեղմելով **Menu**-ի վրա և ապա սեղմելով **Leadership Training Library**, որը գտնվում է **Service** սյունակում:

Երիտասարդ Կանայք

«Չափանիշները չեն փոխվել, աշխարհն է փոխվել»,- ասաց Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ Էլեյն Ս. Դալտոնը Երիտասարդ Կանանց ուսուցման հավաքի ժամանակ, որը տեղի ունեցավ մարտի 27 և 28-ին: Նա քաջալերեց ղեկավարներին «փոխել աշխարհը»՝ առաքինի ապրելակերպի լավ օրինակ ծառայելով:

«Ձեր կոչումները պատահական չեն,- ասաց նա,- Ձեր տեսքը, հագուստը և ժպիտը կազդեն այդ երիտասարդ կանանց վրա . . . ուղղակի լինելով նրանց հետ և ուսուցանելով նրանց կին լինելու և ավետարանով ապրելու ուրախությունը . . . Մենք պետք է համեստ լինենք: Մենք պետք է զգոն լինենք: Մենք պետք է ուսուցանենք օրինակով և մեծ սիրով»:

Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության խորհրդականներ Մերի Ն. Քուքը և Էն Մ. Դիբը նշեցին, որ կարևոր է «թույլ տալ Դափնիներին ղեկավարել»: Խորհրդականներն օգտագործեցին Երիտասարդ Կանանց ճամբարը, որը այս տարի նշում է իր 100-ամյակը, որպես հնարավորության օրինակ, որպեսզի թույլ տրվի Դափնիներին ղեկավարել, սակայն ասացին, որ ղեկավարների համար պարտավորություններ հանձնելու մշտական հնարավորություններ կան, որպեսզի ներգրավվեն երիտասարդ կանանց:

Ելույթ ունեցողները նաև ուշադրությունը կենտրոնացնում են տարբեր միջոցների վրա, որոնք են՝ վեբ կայքերը, հոդվածները, տեսագրությունները, ձեռնարկներն ու *Երիտասարդներին զորացնելու համար*- գրքույկի խմբագրված տարբերակը, որոնք մատչելի են ղեկավարներին՝ գաղափարներ և օգնություն քաղելու համար: ■

Տրամադրվել է Church News-ի կողմից

Հաշմանդամների մասնագետների համար նոր տեղեկություն է ավելացվել LDS.org կայքում

Մելիսա Մերիլ
Եկեղեցու նորությունները և իրադարձությունները

Զուլի Բրինքը Ինդիանայից, ԱՄՆ, մեծացրել է դստերը, որը խուլ է և տարիներ շարունակ ծառայել է որպես իր ցցի ամերիկյան նշանների լեզվի թարգմանիչ: Էլեյն Էլիսոնը Արիզոնայից, ԱՄՆ, երկար տարիներ աշխատել է հանրային դպրոցում ուսուցիչ, որտեղ նա ուղղակիորեն և անուղղակիորեն շփվել է հաշմանդամ աշակերտների հետ: Նա նաև զարմուհի ունի դաունի սինդրոմով և մտերիմ ընկերներ, ովքեր տառապել են բազմակի սկլերոզից և խորացող նեյրոդեգեներատիվ կամ Լու Գերիգի հիվանդությունից:

Ոչ Քույր Բրինքը, ոչ էլ Քույր Էլիսոնը իրենց չեն համարում հաշմանդամության բնագավառում «գիտակներ», չնայած նրանք երկուսն էլ ծառայում են որպես ցցի հաշմանդամների մասնագետներ, կոչում, որի մասին 10 լեզուներով նոր տեղեկություն է ավելացվել LDS.org կայքի Serving in the Church բաժնում: (Կոչումը կարող է իրականում գոյություն ունենալ ցցի կամ ծխի մակարդակով, կամ անհրաժեշտության դեպքում՝ երկուսում էլ:)

Թեպետ ծխի կամ ցցի հաշմանդամների մասնագետի կանչի մասին հակիրճ հիշատակվում է *Handbook 2: Administering the Church,*-ում, որոշ ղեկավարների հետաքրքրում է այն հարցը, թե ինչ է իրենից ներկայացնում այդ կոչումը:

«Կան իրավիճակներ, որտեղ ծխի ղեկավարները գուցե չտեսնեն կարիքը կամ տեսնելու դեպքում չիմանան, ինչ պետք է անել տվյալ կարիքը բավարարելու համար»,- ասաց Քրիստոֆեր Ֆիլիպսը՝ Եկեղեցու Հաշմանդամների ծառայության տնօրենը: «Կան շատ իրավիճակներ, որտեղ հաշմանդամների մասնագետը կարող է օգտակար լինել, սակայն բոլորը չէ, որ գիտեն այս կոչման մասին:

Այս նոր առցանց Եկեղեցում ծառայելու (Serving in the Church) բաժինը մանրամասն չի նկարագրում ինչ է այս կոչումն իրենից ներկայացնում,- շարունակում է նա,- սակայն այն տալիս է մտքեր և միջոցներ, որպեսզի այս պաշտոնում ծառայող անձը կարողանա օգնել ղեկավարներին, ուսուցիչներին և ընտանիքներին հաշմանդամության խնդիրների հետ կապված հարցերում»:

10 լեզուներով տեղեկությունը, թե ինչպես կարող են մասնագետներն օգնել ծխի և ցցի ղեկավարներին, կարող եք գտնել LDS.org կայքում.

- Գտեք և ծանոթացեք ծխի կամ ցցի հաշմանդամների և նրանց ընտանիքների հետ:
- Հաշմանդամ անդամներին ընդգրկեք ժողովներին և միջոցառումներին:
- Արձագանքեք հաշմանդամության վերաբերյալ ծնողների, ղեկավարների և այլ անձանց հարցերին և մտահոգություններին:
- Գտեք ծառայելու իմաստալից հնարավորություններ հաշմանդամ անդամների համար:
- Պարզեք ընտանիքների հատուկ կարիքները (ներառյալ խնամքի կարիքները), և անհրաժեշտության դեպքում պարզեք համայնքի, ծխի և ցցի առկա միջոցները՝ կարիքավորներին օգնելու համար:

Կարևոր է նշել, որ միայն հաշմանդամների մասնագետը չէ, որ պետք է այս ամենը կատարի: Նրա դերն է՝ օգնել մյուս ղեկավարներին ավելի լավ հասկանալ և ծառայել հաշմանդամներին: Ինչպես նաև հաշմանդամների մասնագետը «օգնում է հաշմանդամ անհատներին և ծնողներին հարմար ձևով փոխանակվել տեղեկությամբ ծխի անդամների և ղեկավարների հետ»: ■

LDS.org կայքում 10 լեզուներով զետեղված նոր տեղեկությունը օգնում է նրանց, ովքեր կանչվել են որպես ցցի հաշմանդամների մասնագետներ, զորացնելու Եկեղեցու հաշմանդամ անդամներին:

Հաշմանդամների մասնագետների մասին ամբողջ հոդվածը կարդալու համար այցելեք՝ news.lds.org:

Հայտարարվեցին միջազգային արվեստի ցուցահանդեսի հաղթողները, Ցուցահանդեսը բացված է

2012թ. մարտի 16-ին, ուրբաթ օրը, Արվեստի Միջազգային ինն երորդ մրցույթի ցուցահանդեսի բացմանը աշխարհի տարբեր մասերից նկարիչները հավաքվել էին ստանալու մրցանակները իրենց ՎՕՍ-թեմայով աշխատանքների համար:

Վաստակավոր Մրցանակներ շնորհվեցին 20 նկարիչների, որոնց աշխատանքները համարվեցին «ակնառու», իսկ 15 նկարիչներ ստացան Գումարային Մրցանակներ, այսինքն՝ այս մրցույթը հովանավորող Եկեղեցու Պատմության Թանգարանը գնեց այդ գործերը իր հավաքածուի համար:

Ներկա էր Եկեղեցու Պատմաբան և Արձանագրող՝ Յոթանասունական Երեց Մարլին Կ. Ջենսենը, որը մրցանակները ներկայացնելուց առաջ հակիրճ իր խոսքը հղեց:

Ցուցահանդեսը բացվեց 2012թ. մարտի 16-ին և կտևի մինչև 2012թ. հոկտեմբերի 14-ը, Սոլթ Լեյք Սիթիի Եկեղեցու Պատմության Թանգարանում, Յուտա, ԱՄՆ:

Այս տարվա թեման էր՝ *Հայտնի դարձրեք Նրա հրաշալի գործերը* (ՎԵՈՒ 65.4): Մրցույթին մասնակցեցին 1 149 գործեր, ներառյալ քանդակագործություն, ծածկոցներ և այլ մանրագործություն, թղթե աշխատանքներ և նկարներ: Թանգարանը կցուցադրի 198 աշխատանքներ:

Արվեստի և ձեռագործ նմուշների թանգարանի վարիչ Ռիտա Ռ. Բայթի խոսքով գործերը գնահատվել են ըստ գեղարվեստական արժանիքների եւ թեմատիկ համապատասխանության: Աշխատանքները արտացոլում են

Ես կուղակեմ նրանց խոսքերն աշխարհին (Հակոբոս Ուսուցիչը), *Էլսփեթ Քեյթլին Յանգ, Միացյալ Նահանգներ*

լրատվամիջոցների և մշակութային ավանդույթների բազմազանությունը, բերելով վկայություն Տիրոջ զարմանահրաշ գործերի մասին, ասաց նա, որոնք հաճախ օգտագործում են խորհրդանիշներ ներկայացնելու և ուսուցանելու համար:

Օրինակ, ուկրաինացի Վալենտինա Մուսիենկոյի *Կիև Ուկրաինա Տաճարը,* որը հաղթեց Գումարային Մրցանակ, գունավոր թղթով վերարտադրում է տաճարում առկա որոշ խորհրդանիշներ:

Վաստակավոր Մրցանակի հաղթող Կանադայի Ալբերտայից Բրենդոն Դենիել Հարթին նեկայացրել է իր նախատատիկի յուղաներկ դիմանկարը՝ (*Մայր իշխանություն*), ներկայացնելով ընտանիքի պատմության և սերունդների կապը:

Ալեքսանդրա Գոմեզ Խավեսը Բոգոտայից, Կոլումբիա, ասաց, որ մրցույթը վկայություն բերելու միջոց է: Նա ստեղծել էր իր Վաստակավոր Մրցանակ շահող աշխատանքը՝ *Կենդանի ջրեր,* իր մայրիկի օգնությամբ, որը մահացել էր ցուցահանդեսի բացումից օրեր առաջ:

«Մարդիկ տեսնելով այս արվեստի գործը . . . կտեսնեն վկայությունը, որ Հիսուս Քրիստոսը և Նրա ավետարանը կենդանի ջրի աղբյուր են,- ասաց նա,- Այս գործում նրանք կտեսնեն ողջ սերը, որ մայրը կարող է ուսուցանել իր զավակներին, որովհետև այս մայրը վերցնում է սափորը և ուսուցանում իր դստերը՝ ուսուցանել ավետարանը»:

Այս ցուցահանդես այցելությունն անվճար է, և հովանավորներին խրախուսում ենք բերել իրենց ընտանիքները: Նրանք կարող են քվերարկել իրենց սիրելի աշխատանքների համար, և Այցելուների ընտրած վեց մրցանակներ կտրվեն սեպտեմբերին՝ ըստ հովանավորների քվեների:

Շուտով, Եկեղեցու Պատմության անգլերեն կայքում մարդիկ կկարողանան դիտել հարցազրույցներ մրցույթին մասնակցած 11 տարբեր նկարիչների հետ: Այդ տեսագրությունները նաև կցուցադրվեն թանգարանում:

Եկեղեցու Պատմության թանգարանը նաև ծրագրում է կազմակերպել առցանց ցուցահանդես history.lds.org/artcompetition. կայքում:

Ցուցահանդեսի մասին լրացուցիչ տեղեկության համար, այցելեք history.lds.org կամ զանգահարեք 801-240-4615: ■

Պահանջվում են հոդվածներ

Տղամարդիկ. Երիտասարդ տղամարդիկ դրական օրինակների կարիք ունեն, ոչ միայն ծնողների, այլև ղեկավարների կողմից: Երբեմն Երիտասարդ Տղամարդկանց լավ ղեկավարը, Կիրակնօրյա Դպրոցի ուսուցիչը կամ սքաուտ ղեկավարը կարող է փոխել ամեն ինչ: Երբ դուք երիտասարդ էիք, ձեր ծխում կա՞ր ղեկավար, որը փոխեց ձեր կյանքը ընկերանալով ձեզ հետ և լավ օրինակ ծառայելով: Պատմեք մեզ այդ անձնավորության մասին: Խնդրում ենք ձեր փորձառության մասին գրեք 500 բառից ոչ ավել, վերնագրեք այն՝ «Լավ օրինակ» (“Good Example”), և ուղարկեք հետևյալ հասցեով՝ liahona@ldschurch.org մինչև մայիսի 31, 2012թ.: ■

Գերեզմանը, Լինդա Քըրլի Քրիսչենսեն

«Եվ Հովսեփը [Փրկչի] մարմինն առնելով մաքուր կտավով պատանեց.
Եվ դրավ իր նոր գերեզմանի մեջ, որ վեմի մեջ փորել էր» (Մատթեոս 27.59–60):
Տիրոջ մարմինը գերեզմանում մնաց երեք օր, և ապա Նա հարություն առավ: Հիսուս Քրիստոսը առաջին մարդն էր երկրի վրա,
որ հարություն առավ: Նրա Քավության շնորհիվ բոլոր մարդիկ հարություն պիտի առնեն (տես Ա Կորնթացիս 15.3–4, 20–22):

«Որքան օրհնված ենք մենք, իմ եղբայրներ և քույրեր, որ ունենք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը մեր կյանքում և մեր սրտերում: Այն տալիս է կյանքի մեծագույն հարցերի պատասխանները: Այն իմաստ, նպատակ և հույս է հաղորդում մեր կյանքին», - ասաց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը 182-րդ ամենամյա գերագույն համաժողովի փակման նիստին: «Մենք ապրում ենք անհանգիստ ժամանակներում: Ես հավաստիացնում եմ ձեզ, որ մեր Երկնային Հայրը մտահոգ է մեր խնդիրների համար: Նա սիրում է մեզանից յուրաքանչյուրին և ցանկանում է օրհնել և օգնել մեզ»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021048520 1 9